Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1909
1910
1911
1912

1873
2.5

84
7 - 60

011

84
7-60

Ա. ՏԻՄԱ

ՊՐԱԺԼՕՆ ԴԵՐԿՈՄՍ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՀԱՏՈՐ ՎԵՑԵՐՈՐԴ

ՏԷՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՏԻԳՐԱՆ ՑԱՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ.
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ
— 1874 —

431 գ.

ՊՐԱԺԼՕՆ ԳԵՐԿՈՄՍ

Ա.

ՖՕՆԴԷՆՊԼՕԻ ԾԱՌԱՍՏԱՆԻՆ ՅԱՒԵՐԺԱՀԱՐՍՈՒՆՔ

Թագաւորը պահ մը կայ առաւ իր յաղթանակը վայելելու, որ, ինչպէս ըսինք, կարելի եղածին չափ կատարեալ էր։

Յետոյ իշխանութեան կողմը դարձաւ որպէս զի ըստ կարգի ա-նոր վրայ ևս զմայլի։

Երիտասարդները թերևս աւելի աշխուժու, աւելի եռանդագին, աւելի խանդով կ'սիրեն քան թէ հասուն մարդիկ, սակայն իրենց երիտասարդութեան և կայտառութեան համեմատութեամբ կ'տա-ծեն միանգամայն միս զգայումները, այնպէս որ գրեթէ միշտ ի-րենց ինքնասիրութիւնը սիրոյ հաւասար դնելով, չհասնիր այն կատարելութեան աստիճանին զոր կրնան ստանալ երբեմն հինգ տարեկան մարդիկ և կանայք։

Ուրեմն Լուի կ'խորհէր Հանրիէդի վրայ ինքն իր վրայ խորհե-լէն ետև, և Հանրիէդ շատ կ'խորհէր ինքն իր վրայ առանց եր-բէք թագաւորին վրայ խորհելու։

Բայց այս արքայական սիրոյ և ինքնասիրութեան զոհն էր մի-այն Կիշ կոմսը։

Ուստի ամէն մարդ կրցաւ գիտել խեղճ աղատորդւոյն վրդովմ-ու վշտահարութիւնը, և այս վշտահարութիւնը մանաւանդ, այն-քան աւելի նշանաւոր էր որչափ որ երբէք սեմնուած չունէր որ իր թևերն ընկնին, իր գլուխը ծանրանայ, իր աչերն իրենց բո-ցը կորուսեն։ Անոր վրայ ոչ ոք անհանգիստ կ'լինէր երբ վայել-չութեան և ճաշակի վրայ էր խնդիրը։

Ուստի շատերը՝ Կիշի պարտութիւնը վերագրեցին իր պալատական Ճարպիկութեան։

Բայց ուրիշներ ալ, և հեռատես աչքերն արքունիքը կ'դանուին, բայց ուրիշ մարդիկ ալ գիտեցին անոր դեղնութիւնն ու տկարութիւնը, և այս դեղնութիւնն ու տկարութիւնն ո՛չ կեղծել և ոչ պահելու կարող էր, և իրաւամբ հետեցուցին որ Կիշ ողբալի կատակերգութիւն մը չէր խաղար։

Այս տառապանքը, այս յաջողութիւնները, այս մեկնութիւնները ծափահարութեանց աղմկին մէջ շփոթեցան, կորան։

Բայց՝ երբ թագուհիներն իրենց գոհութիւնը յայտնեցին և հանդիսատեսներն իրենց խանդը, երբ թագաւորն իր օթեակը դարձաւ որ հագուստը փոխէ, մինչդեռ արքայազն Ֆիլիպ՝ ըստ սովորականին կնկան զգեստ հագած՝ ըստ կարգի կ'պարէր, Կիշ սթափելով՝ իշխանուհւոյն մօտեցաւ, որ թատրին խորը նստած՝ երկրորդ մուտքին կ'սպասէր և բազմութեան մէջ առանձնայնը էր, որպէս թէ կանխաւ կ'մտածէր իր նկարագրական ներգործութիւնը։

Դիւրին է իմանալ որ այս ծանր խորհրդածութեամբ համակուած՝ իր բոլորտիքն անցած դարձած բաները բնաւ չտեսաւ կամ չտեսնելու զարկաւ։

Ուստի Կիշ՝ իշխանուհին նկարէն թիւի մը մօտ միայնակ դտնելով, անոր մօտ դնաց։

Իր պատուոյ նաժիշտներէն երկու հոգի իբրև յաւերժահարս հագուած՝ տեսնելով Կիշին մօտենալն առ յարգանս ընկրկեցան։

Ուստի Կիշ շրջանին մէջ տեղ յառաջացաւ և Նորին արքայական Բարձրութիւնը բարևեց։

Բայց Նորին արքայական Բարձրութիւնը, այս բարևը տեսնելով թէ ոչ, գլուխն անգամ չդարձուց։

Հէք երիտասարդին երակներէն սարսուռ մ'անցաւ. չէր յուսար բնաւ այսչափ անտարբերութեան, ինք որ բան մը չէր տեսած, ինքն որ բան մը չէր խմացած, ինքն որ, հետևապէս, չէր կարող բան մը դուշակել։

Ցաստի՝ գիտելով որ իր ողջոյնն անպատասխանի կ'մնար, քայլ

մ'ևս առաւ, և ձայնով մը զոր ընդունայն հանդարտ պահելու կը ջանար, ըսաւ.

— Պատիւ ունիմ իմ խորին յարգանքս իշխանուհւոյդ մատուցանելու։

Այս անգամ իշխանուհին իր աչերը կոմսին կողմը դարձնելու հաճեցաւ։

— Ա՛հ, Պ. Կիշ — ըսաւ նա — դո՞ւ ես. բարի լոյս։

Եւ ապա գլուխը դարձուց։

Քիչ մնաց որ կոմսին համբերութիւնը գլխի հատնէր։

— Ձեր Բարձրութիւնը քիչ մ'առաջ աքանչելի կերպով պարեց — ըսաւ նա։

— Այդպէս կարծես — ըսաւ Հանրիէդ թոյլօրէն։

— Այո՛, այդ անձն որու դերը կ'խաղաք, Ձեր Բարձրութեան կատարելապէս կ'յարմարի։

Իշխանուհին բոլորովին գլուխը դարձուց և Կիշին նայելով իր պայծառ ու անքթիթ աչքով,

— Ի՞նչպէս — հարցուց նա։

— Անտարակոյս։

— Բացատրէ՛ մտքդ։

— Դիցուհի մը կ'ներկայացնէք, դեղանի, արհամարհոտ և թեթև դիցուհի մը — ըսաւ նա։

— Պոմպոնի՞ վրայ է խօսքդ, կոմս։

— Ձեր Բարձրութեան ներկայած դիցուհւոյն վրայ կ'խօսիմ։

Իշխանուհին պահ մը կեցաւ կարկամ շրթունքով։

— Բայց դու ինքդ, պարոն — ըսաւ նա — միթէ կատարեալ պարող մը չէ՞ս։

— Ո՛հ, ես, իշխանուհի, ես այն անձերէն եմ որ աչքի չեն զարներ, և կ'մոռցուին երբ դիպուածով աչքի զարնեն։

Եւ Կիշ այս խօսից վրայ հառաչեց, հառաչ՝ որ մարդու էութեան յատին ջիլերը կ'սարսռեն, սիրտն անձկութեամբ և դողահար, գլուխը կրակի մէջ, աչքն երերուն, հեալով ողջոյն տուաւ և վարագոյրին ետին քաշուեցաւ։

Իշխանուհին՝ իբրև պատասխանի տեղ՝ իր ուսերը բարձրացուց։

Եւ որովհետև իր պատուոյ նաժիշտները՝ առ խոհեմութեան քաշուեր էին, ինչպէս որ ըսինք, աչքով զանոնք կանչեց։

Ասոնք Դոնէյ-Շարանդ և Մօնղալէ օրիորդներն էին։

Իշխանուհւոյն այս նշմայրին վրայ՝ երկուքն ալ շտապով մօտեցան։

— Միթէ լսեցիք, օրիորդներ — հարցուց իշխանուհին։

— Ի՞նչ բան, տիկին։

— Ինչ որ Պ. Կիշն ըսաւ։

— Ո՛չ։

— Արդարև, զարմանալի բան մ՚է — շարունակեց իշխանուհին կարեկցութեան ձայնով — թէ աքսորն որչափ թմրեր է այս խեղճ Կիշին միտքը։

Եւ աւելի բարձրաձայն ըսաւ՝ որպէս զի դժբաղդ երիտասարդին ականջէն բառ մ՚անգամ չվրիպի։

— Նախ կէշ պարեց — շարունակեց նա — ապա միայն չնչին խօսքեր ըրաւ։

Յետոյ իշխանուհին ոտք ելաւ, քրթմնջելով այն եղանակն որով պիտի պարէր։

Կիշ ամէն բան իմացեր էր։ Այս սլաքն իր սրտին խորը մտաւ և զայն պատռեց։

Այն ատեն իր սրտմտութենէ հանդիսին կարգն ընդմիջելու վտանգն աչքն առնլով՝ խոյս տուաւ, իր Վէրոնի աղջոր հաղուստը պատռելով, իր ճամբուն վրայ թափեց որթոյ ուռերը, թուղթերը, նշենոյ տերևներն և իր աստուածութեան բոլոր մանր արուեստական ստորոգելիները։

Քառորդ մ՚ետք՝ թատրը դարձաւ։ Բայց դիւրին էր հասկնալ որ բանականութեան հզօր ճգումն էր որ յիմարութեան յաղթելով՝ զինքը ստիպեր էր վերադառնալու, և կամ թերևս, սիրտն այսպէս շինուած է, իր սիրաը խորտակողէն աւելի երկար ժամանակ հեռու մնալու անկարելիութիւնն էր։

Իշխանուհին իր պարը նոյն պահուն կ՚աւարտէր։

Տեսաւ նա կոմսը, բայց բնաւ անոր չնայեցաւ, և կոմսը զայրացած ու կատղած ըստ կարգի իր կռնակն անոր դարձուց երբ

նա իր յաւերժահարսերով և հարիւրաւոր շողոքորթներով շրջապատուած անցաւ։

Նոյն միջոցին՝ թատրոնին միւս ծայրը՝ լճակին մօտ՝ կին մ՚էր նստած, թատրոնին մէկ պատուհանին վրայ աչերը սևեռելով։

Այս պատուհանէն լուսոյ կոհակները կ՚ելնէր։

Այս պատուհանն արքայական օթեկին պատուհանն էր։

Կիշ թատրոնէն ելնելով, Կիշ հով առնլու երթալով, որու շատ կ՚փափաքէր, Կիշ այս կնկան քովէն անցաւ և զանի բարևեց։

Այս կինն ալ երիտասարդը տեսնելով՝ ոտք ելեր էր իբրև զարմացած կին մ՚այնպիսի խորհուրդներով համակուած զորս ինքնիրեն պահել կ՚ուզէր։

Կիշ զանի ճանչեց և կայ առաւ։

— Բարի իրկուն, օրիորդ — ըսաւ նա աշխուժիւ։

— Բարի իրկուն, կոմս։

— Ա՛հ, օրիորդ Լա Վալիէր — շարունակեց Կիշ — որչափ երջանիկ եմ քեզ տեսնելուս։

— Ես ալ նոյնպէս, կոմս, այս դիպուածը յաջող դիպուած մ՚է — ըսաւ նորատի օրիորդը քաշուելու համար շարժում մ՚ընելով։

— Ո՛հ, ոչ, ոչ, մի՛ թողուր զիս — ըսաւ Կիշ իր ձեռքը դէպ անոր տարածելով — վասն զի քիչ մ՚առաջ ըսած աղջոր խօսքերուդ հակառակ պիտի վարուիս։ Կեցիր, կ՚աղաչեմ, ամենագեղեցիկ գիշեր մ՚է այս։ Դու աղմկէն խոյս կ՚տաս, դո՛ւ. դու քու առանձին ընկերութիւնդ կ՚սիրես, դո՛ւ. Էհ, լաւ կ՚իմանամ այդ ընթացքդ, ամէն սրտի տէր կանայք այդպէս կ՚ընեն։ Երբէք չպիտի տեսնուի մէկն որ այս աղմկալի զուարճութեանց մրրկէն ձանձրանայ։ Ո՛հ, օրիորդ, օրիորդ։

— Բայց ի՞նչ ունիս, կոմս — հարցուց Լա Վալիէր կերպ մը երկիւղով — շատ վրդոված կ՚երևիս։

— Ե՞ս, ոչ, ոչ։

— Ուրեմն, կոմս, ներէ ինձ այս տեղ մատուցանել իմ շնորհակալութիւնս զոր առաջին անգամ ընելու միտքս դրեր էի։ Գիտեմ որ քու պաշտպանութեանդ պարտաւոր եմ այն պաշտօնը զոր իշխանուհւոյն պատուոյ աղջկանց հետ կ՚վարեմ։

— Ա՛հ, այո՛, կ'յիշեմ և ուրախ եմ այս մասին, օրիորդ։ Միթէ դու մէկը կ'սիրես։

— Ե՞ս։

— Ո՛հ, ներէ՛, ըսածս չգիտեմ, ներում կ'խնդրեմ հաղար անգամ։ Տիկինն իրաւունք ունէր, շատ իրաւունք. այս բարբարոսական աքսորը բոլորովին միտքս տակնուվրայ ըրաւ։

— Բայց կարծեմ թէ թագաւորը քեզ աղէկ ընդունեց, կոմս։

— Այդպէս կարծես . . . աղէկ ընդունեց . . . կարելի է . . . այո՛ . . .։

— Անշուշտ աղէկ ընդունեց, վասն զի վերջապէս, առանց առնրմէ հրաման առնլու կ'վերադառնաս։

— Իրաւ է, և կարծեմ թէ ճիշտ կ'խօսիս, օրիորդ։ Բայց միթէ այս կողմերը Պրաժլօն դերկոմսը չտեսա՞ր։

Լա Վալիէր այս անունը լսելուն սարսուռ զգաց։

— Ինչո՞ւ համար այդ հարցումը կ'ընես — հարցուց նա։

— Ո՛հ, Աստուած իմ, արդեօք վերսալին վիրաւորեցի՞ քեզ — ըսաւ Կիշ կոմսը։ — Եթէ վիրաւորեցի, արդարև շատ դժբաղդեմ, կարեկցութեան արժանի եմ։

— Այո՛, շատ դժբաղդ, շատ կարեկցութեան արժանի ես, կոմս, վասն զի կ'երևի թէ սոսկալի տառապանք մ'ունիս։

— Ո՛հ, օրիորդ, ինչո՞ւ համար անձնուէր քոյր մը, ճշմարիտ բարեկամ մը չունենամ։

— Բարեկամներ ունիս, Պ. Կիշ, և Պրաժլօն դերկոմսը, որուվրայ քիչ մ'առաջ կ'խօսէիր, կ'երևի ինձ որ այս բարեսիրտ բարեկամներէն մին է։

— Այո՛, այո՛, արդարև, այն իմ բարի բարեկամներէս մին է։ Մնաս բարեաւ, օրիորդ, մնաս բարեաւ, ընդունէ իմ յարգանքս։

Եւ խենթի պէս ճակի կողմէն փախաւ։

Իր սև ստուերն երկնալով կ'սահէր լուսաւոր դեղձերուն և ջրին շողշողուն լայն դիպակներուն մէջ։

Լա Վալիէրն անոր նայեցաւ քիչ մ'ատեն դթալի։

— Այո՛, այո՛ — ըսաւ — կ'տառապիմ և կ'սկսիմ իմանալ թէ ինչո՞ւ համար կ'տառապիմ։

Այն ինչ խօսքը կ'աւարտէր, երբ իր ընկերուհիները, օրիորդք Մոնդալէ և Դոնէյ-Շարանդ վազելին եկան։

Իրենց սպասաւորութիւնն աւարտեր էին, յաւերժհարսի զգեստները հաներ էին, այս գեղեցիկ գիշերուան, նոյն երեկոյեան յաջողութենէ զուարթութիւն զգալով կ'դառնային իրենց ընկերուհին գտնելու։

— Է՛հ, ինչ արդէն — ըսին անոր։ — Կարծէինք թէ ամենէն առաջ մենք պիտի գտնուէինք ժամադրութեան։

— Ես քառորդէ մ'ի վեր ասա՛ եմ — պատասխանեց Լա Վալիէր։

— Միթէ պարը քեզ չզուարճացո՞ց։

— Ո՛չ։

— Հապա բոլոր թատրոնը։

— Եւ ոչ իսկ թատրոնը։ Իբրև տեսարան՝ աւելի շատ կ'սիրեմ անտառներունը, որու խորն ասդիս անդին կ'փայլ ելլս մ'որ կարմիր աչքի պէս կ'անցնի, մերթ բաց, մերթ գոց։

— Բանաստեղծուհի մ'է այս Լա Վալիէրը — ըսաւ Դոնէյ-Շարանդ։

— Այսինքն անտանելի — ըսաւ Մոնդալէ։ — Ամէն անգամուն որ քիչ մը ծիծաղելու կամ բանով մը զբօսնելու պատեհ աւիթ մը կ'ներկայի, Լա Վալիէր կ'արտասուէ, ամէն անգամուն որ լալու պէտք կայ, կորսուած պաճուճանքի, վիրաւոր ինքնասիրութեան, անօգուտ զարդարանքի համար, Լա Վալիէր կ'ծիծաղի։

— Ո՛հ, ես իմ մասիս, չեմ կարող այս բնաւորութիւնն ունենալ — ըսաւ Դոնէյ-Շարանդ օրիորդը։ — Ես կին եմ, և կին մ'որ ինչպէս որ պէտք է. ո՞վ որ զիս կ'սիրէ, զիս կ'գգուէ, ո՞վ որ կ'գգուէ, իր գգուանքովն ինձ հաճելի է, և ո՞վ որ ինձ հաճելի է . . .։

— Լա՛ւ, բայց խօսքդ երբ պիտի աւարտես — ըսաւ Մոնդալէ։

— Շատ դժուարին է — պատասխանեց օրիորդ Դոնէյ-Շարանդ քահ քահ խնդալով։ — Լմնցո՛ւր ինձի համար խօսքս, դու որ այնչափ խելք ունիս։

— Իսկ քեզ, Լուիզ, միթէ հաճելի գտնուող կա՞յ — ըսաւ Մոնդալէ։

— Այդ և ոչ մէկու կ'պատկանի — ըսաւ Նորատի օրիորդն ոտք ելնելով լօռուտ նստարանէն, ուր մնացեր էր պարեկին տեսած բոլոր ժամանակը։ — Այժմ, օրիորդներ, խորհուրդ ըրէք այս իրկուն առանց տեսչի և պահապանի զբօսնելու։ Երեք հոգի ենք, իրարմէ կ'ախորժինք, աքանչելի օդ մը կ'ընէ. նայեցէք վարը, նայեցէք ինչպէս լուսինը մեղմիկ վեր կ'ելնէ և արծաթափայլ կ'լուսաւորէ շաղանակենիներուն և կաղնիներուն կատարները։ Ո՛հ, այս ինչ աղուոր Ճեմելիք է, ո՛հ, ինչ աղուոր ազատութիւն. հապա անտառներուն նուրբ խոտը, հապա ձեր բարեկամութեան ինձ ըրած աղուոր շնորհը. իրարու թև մտնենք և մեծ ծառերուն կողմը դիմենք։ Ամենքը՝ այս միջոցին՝ վարը զբաղմունքի մէջ են որ հանդիսաւոր Ճեմելիքի մը համար զարդարուին. ձիերը կ'թամբեն, կառքերը կ'լծեն, թագուհւոյն ջոքիներն ու իշխանուհւոյն չորս հատ սպիտակ զամբիկները։ Մենք, շուտով այնպիսի վայր մ'երթանք որ աչք մը մեզ չգտնէ, որ մեր հետքին ոչ ոք չհետևի։ Կ'յիշեմ, Մօնդալէ, Շավէրնիի և Շանսլօրի պուրակները, Պլուայի անվերջանալի կաղամախիները։ Այն տեղ ինչ յոյսեր իրարու հաղորդած ենք։

— Նաև շատ մը դաղտնիք։

— Այո՛։

— Ես — ըսաւ օրիորդ Դօնէյ–Շարանդ — ես նաև շատ կը խորհիմ. բայց զգոյշ եղիք . . .։

— Բայց բան մը չըսիր — գոչեց օրիորդ Մօնդալէ, այնպէս որ Դօնէյ–Շարանդի մտածածը միայն Ամէնախս գիտէ։

— Սուս — գոչեց օրիորդ Լա Վալիէր — ոտքի ձայներ կ'լսեմ որ սա կողմէն կ'գան։

— Է՛հ, շուտ, շուտ, եղէգներու մէջ մտնենք — ըսաւ Մօնդալէ — ծռէ, Ամէնախս, քանի որ դու այնչափ երկայն ես։

Օրիորդ Դօնէյ–Շարանդ իրօք խոնարհեցաւ։

Գրեթէ նոյն պահուն տեսան իրօք երկու աղատորդիներ որ կը յառաջանային, գլուխնին ծռած, թև թևի անցուցած, և եղերքին զուգահեռական ծառուղւոյն բարակ աւազին վրայ կ'քալէին։

Նանայք պահուեցան, աննշմարելի եղան։

— Պ. Կիշն է — ըսաւ Մօնդալէ՝ Շարանդ օրիորդին ականջին։

— Պ. Պրաժլօնն է — ըսաւ այս վերջինը Լա Վալիէրի ականջին։

Երկու երիտասարդները շարունակ կ'մտենային վաւվուն ձայնով մը խօսակցելով։

— Քիչ մ'առաջ այս կողմերն էր նէ — ըսաւ կոմսը։ — Եթէ միայն գինքը տեսնէի, պիտի ըսէի թէ երևոյթ մ'էր, բայց ես անոր հետ խօսեցայ։

— Այսպէս, միթէ ստոյգ ես։

— Այո՛. բայց ո՞ պիտէ, կարելի է անոր երկիւղ ազդեցի։

— Ի՞նչ կերպով։

— Է՛հ, Աստուած իմ, սակաւին խենթի պէս էի գիտցած բանիդ համար, այնպէս որ ըսածներէս բան մը չհասկըցած և վախցած պիտի լինի։

— Ո՛հ — ըսաւ Պրաժլօն — մի՛ անհանգիստ լինիր, բարեկամդ իմ։ Բարեսիրտ է նա, քեզ պիտի ներէ, խելք ունի, վիճակդ հասկըցած պիտի լինի։

— Այո՛, բայց եթէ իմացաւ, պէտք եղածէն աւելի իմացաւ . . .։

— Վերջը՞։

— Եւ եթէ խօսի։

— Ո՛հ, կոմս՛, դու Լուիզը չես ճանչեր — ըսաւ Ռաուլ։ — Լուիզ ամէն առաքինութիւններն ունի, և պակասութիւն մը չունի։

Եւ երիտասարդներն այս ըսելով անցան, և, երբ կ'հեռանային, իրենց ձայնը քիչ քիչ անլսելի եղաւ։

— Ինչպէս, Լա Վալիէր — ըսաւ օրիորդ Դօնէյ–Շարանդ — Պ. Պրաժլօն քու վրադ խօսելով Լուիզ ըսաւ։ Ինչո՞ւ անունդ տուաւ։

— Մենք միասին մեծցած ենք — պատասխանեց Լա Վալիէր օրիորդը. — երբ փոքր էինք զիրար կ'ճանչէինք։

— Ասկէ զատ՝ Պ. Պրաժլօն նշանածդ է, ամէն մարդ գիտէ այդ բանը։

— Ո՛հ, ես այդ չգիտէի, ես։ Միթէ իրա՞ւ է, օրիորդ։

— Այսինքն — պատասխանեց Լուիզ կարմրելով — այսինքն Պ. Պրաժլօն պատիւ ըրաւ ինձ նշանուելու առաջարկել. . . բայց . . . :

— Բայց ի՞նչ:

— Բայց կ'երևի թէ թագաւորը . . . :

— Լաւ ուրեմն :

— Թագաւորն այս ամուսնութեան չհաւանիր:

— Է՛հ, ինչո՞ւ համար թագաւորը, ի՞նչ գործ ունի այս բանիս մէջ թագաւորը — գոչեց Օր դառնութեամբ : — Մի թէ թագաւորն այս բաներուս խառնուելու իրաւունք ունի՞, Աստուած իմ . . . : « Բո՜-լէդէ+ը Բո՜-լէդէ+ է, ինչպէս կ'ըսէր Մազարէն, բայց սէրը սէր է » : Ուստի եթէ Պ. Պրաժլօնը կ'սիրես, և նա քեզ կ'սիրէ, կարդուեցէք: Ե՛ս, ես իմ հաւանութիւնս կ'տամ:

Ամէնախս սկսաւ ծիծաղիլ:

— Ո՛հ, ես լրջաբար կ'խօսիմ — պատասխանեց Մօնդալէ — և իմ խորհուրդս թագաւորին խորհրդէն աւելի կ'աժէ, կարծեմ: Այնպէս չէ՞, Լուիզ:

— Նայինք, նայինք, այս պարոններն անցան գայլն — ըսաւ Լա Վալիէր. — ուստի այս առանձնութենէ օգուտ քաղելով մարգաղետնէն անցնինք և անտառը մտնենք:

— Եւ առաւել անոր համար — ըսաւ Ամէնախս — որ ահա լոյսեր կ'տեսնեմ որ դղեկէն և թատրոնէն կ'ցայտեն, և կարծես թէ նշանաւոր դնդի մ'առջևէն կ'երթան:

— Վազե՛նք — ըսին երեքը միաբան:

Եւ շնորհալի կերպով իրենց մեսաքսէ շրջազգեստներուն երկայն տտուտները բառնալով՝ թեթևակի անցան այն վայրէն որ լճակը ծառաստանին հովանաւոր մասէն կ'զատէ:

Մօնդալէ՝ եղնի պէս թեթև, Ամէնախս փոքրիկ մատակ գայլի պէս հրավառ, չոր խոտին վրայ կ'ոստոստէին, և երբեմն յանդուգն Ակդէօն մը պիտի կարենար տեսնել կիսաստուերին մէջ իրենց զուտ և ժպիրհ սրունքն որ կ'նկարուէին մնդուսէ թանձր իկոճկէններու ուրուագրին ներքև:

Լա Վալիէր՝ աւելի քնքուշ և պատկառոտ լինելուն՝ թողու-

ր իր շրջազգեստը ծփայ գետինը. նոյնպէս իր ոտնին տկարութենէ ուշանալով՝ շնորհ խնդրելու պարտաւորեցաւ :

Եւ՝ եռին մնալով՝ իր երկու ընկերուհիները ստիպեց որ սպասեն :

Նոյն պահուն՝ մարդ մը՝ նորաբոյս ուռիներով լի փոսի մը մէջ պահուած՝ սոյն փոսին պատին վրայ յանկարծ ելաւ և սկսաւ դղեկին ուղղութեամբը վազել :

Միւս կողմէն երեք կանայք ծառաստանին սահմանը հասան, որու բոլոր ուղիներն իրենց ծանօթ էին :

Փոսերուն շուրջը ծաղկաւէտ անցքեր կ'բարձրանային. զոյգ պատնէշներ այս կողմէն կ'պահպանէին պտղատողները ձիերու և կառքերու արշաւանին դէմ :

Արդարև՝ ճամբաներու հաստատ հողին վրայ՝ հեռուէն կ'լսուէր թագուհիներուն և իշխանուհւոյն կառաց գլորումը : Շատ մը ձիաւորներ կ'հետևէին անոնց Վիրգիլիոսի նուագաւոր ոտանաւորներու այնչափ լաւ նկարագրեալ ձայնով :

Քանի մը հեռաւոր նուագարաններ այս ձայնին կ'պատասխանէին, և երբ ներդաշնակութիւնները կ'դադրէին, սոխակը, զոռողութեամբ փքացած երգիչը՝ կ'ղրկէր այն գունդին որոց հովանոյն ներքև գումարուելը կ'զլար՝ ամենախրթին, ամենաքաղցր և ամենագիտուն երգեր :

Երգիչին շուրջը կ'փայլէին՝ խոշոր ծառերու սև երեսկնվրայ՝ ներդաշնակութեան զլայուն բուի մ'աչքերը :

Այնպէս որ բոլոր արքունեաց այս հանդէսը նոյնպէս անտառներու խորհրդաւոր բնիկներու հանդէսն էր. վասն զի իրօք եղնի իր ձարխոտին մէջ մտիկ կ'ընէր, փասեանն իր ձիւղին վրայ, աղուէսն իր որջին մէջ :

Բոլոր այս գիշերային բնակներուն կեանքը դիւրին էր դուշակել այն յանկարծական շարժումներէն որ տերևներուն մէջ կը կատարուէին :

Այն ատեն անտառներու յաւերժհարսունք թեթև ճիկ մը կը հանէին, յետոյ իսկոյն իրենց երկիւղը փարատելով, կ'ծիծաղէին և իրենց ընթացքը կ'շարունակէին :

Եւ այսպէս հասան անոնք արքայական կաղնիին, պատկառելի

մեացորդ մ՝այն կաղնիին որ իրեն երիտասարդութեան տեսն ըսեր էր Հանրի Բի հառաչները Բուպլիէի գեղեցիկ Անահտայ համար, և վերջէն Հանրի Դի հառաչներն Էսդրէի գեղանի Կապրիէլին համար։

Այս կաղնիին ներքև մամուռ և գալարի հաւաքեր էին պարտիզպանները, այնպէս որ երբէք այսպիսի բոլորաձև աթոռի մը վրայ թագաւորի մը վաստակաբեկ անդամները հանգիստ չէին առած։

Ծառին կոճղն անհարթ յենակ մը կ՝յօրինէր, բայց բաւական լայն էր չորս անձի համար։

Դէպ՝ի կոճղը շեղող ոստերուն ներքև՝ ձայները կ՝կորսուէին դէպ՝ի երկին սահելով։

Բ

ԱՐՔԱՅԱԿԱՆ ԿԱՂՆԻԻՆ ՆԵՐՔԵՒ Ի՞ՆՉ ԿԱՆՑՆԷՐ

Օդին անուշութեան, տերևներուն լռութեան մէջ՝ այս նորատի կանանց համար յորդոր մը կար իսկոյն թեթև խօսակցութիւնն աւելի ծանր խօսակցութեան մը վերածել։

Նոյն իսկ Մօնդալէ՝ որու բնաւորութիւնն ամենէն աւելի զուարթ էր, առաջինն էր այս տրամադրութիւնն ունեցողը։

Նա սկսաւ խոշոր հառաչ մը հանելով.

— Ի՞նչ ուրախութիւն — ըսաւ նա — որ այս տեղ կ՝գտնուինք աղատ, միայնակ, և անկեղծ լինելու իրաւունքով Նոյն իսկ մեզի համար։

— Այո՛ — ըսաւ օրիորդ Դօնէյ–Շարանդ — վասն զի արքունիքը, որչափ փայլուն լինի, միշտ ստուտ մը կ՝պահէ թաւշի ծալքերուն կամ անդամանդներու կրակին ներքև։

— Ես — պատասխանեց Լա Վալիէր — ես երբէք չեմ ստուտ խօսիր. երբ չեմ կարող ճշմարտութիւնն ըսել կ՝լռեմ։

— Դու երկայն ժամանակ շնորհ չպիտի գտնես, սիրելիդ իմ — ըսաւ Մօնդալէ — այս վայրս Պլուայի չնմանիր, ուր ամէն սրտնեղութիւնն ու փառասիրութիւնը կ՝յայտնէինք պառաւ տան տիրուհոյն։ Ասի այնպիսի օրեր ունէր որ կ՝յիշէր թէ նորահասակ եղած էր։ Այն օրերն ո՛վ որ տան տիրուհոյն հետ խօսէր անկեղծ բարեկամուհի մը կ՝գտնէր։ Տան տիրուհին թագաւորին հօրեղբօր հետ ունեցած սէրը մեզի կ՝պատմէր, և մենք՝ կ՝պատմէինք անոր ուրիշներու հետ ունեցած սէրը, և կամ իր վրայ երբեմն դարձած բանբասանքը։ Խեղճ կին, այնչափ անմեղ էր և կ՝ծիծաղէր, ինչպէս և մենք. ո՞ւր է այժմ։

— Ա՛հ, Մօնդալէ, ծիծաղասէր Մօնդալէ — գոչեց Լա Վալիէր — ահա վերստին կ՝հառաչես դու. անտառները քեզ կ՝ներշնչեն, և այս իրկուն գրեթէ բնաւոր ես։

— Օրիորդնե՛ր — ըսաւ Աթէնաիս — պէտք չէ որ Պլուայի ապարանին վրայ այդչափ ցաւ յայտնէք իբր թէ ձեր տան մէջ երջանիկ չէք։ Արքունիք մը վայր մ՝է ուր մարդիկ և կանայք կ՝գան խօսակցելու այնպիսի բաներու վրայ զորս մայրեր և խնամակալներ, և մանաւանդ խոստովանահայրեր կ՝արգիլեն։ Արքունիքն՝ այս բաներն իրարու կ՝ըսեն մարդիկ թագաւորին և թագուհիներուն արտօնութեամբը, միթէ այս ախորժելի չէ՞։

— Ո՛հ, Աթէնաիս — ըսաւ Լուիզ կարմրելով։

— Աթէնաիս այս իրկուն աղատաբան է — ըսաւ Մօնդալէ — օգուտ քաղենք։

— Այո՛, օգուտ քաղենք, վասն զի այս իրկուն իմ սրտիս ամենէն ներքին դաղտնիքը դիւրին պիտի լինի ձեզ քաղել։

— Ո՛հ, թէ որ Պ. Մօնթէսպան հոս լինէր — ըսաւ Մօնդալէ։

— Միթէ կարծես թէ Պ. Մօնթէսպանը կ՝սիրեմ — մրմնաց նորատի աղուոր աղջիկը։

— Կարծեմ թէ գեղեցիկ է։

— Այո՛, և այս թեթև առաւելութիւն մը չէ իմ աչքիս։

— Կ՝նայիս ուրեմն։

— Աւելին պիտի ըսեմ, այս տեղ տեսնուած մարդոց մէջ ամենէն գեղեցիկն ու ամենէն . . .։

— Ի՞նչ ձայն է այն — ըսաւ Լա Վալիէր մամուռ նստարանին վրայ յանկարծական շարժում մ՚ընելով։

— Այծեամ մը պիտի լինի որ տունկերուն մէջ կ՚փախչի։

— Ես միայն մարդիկներէ կ՚վախնամ — ըսաւ Աթէնաիս։

— Երբ որ Պ. Մոնթէսպանի չեն նմանիր։

— Այդ հեգնութեան վերջ տուր . . . Պ. Մոնթէսպան մանր մունր հոգ կ՚տանի ինձի, բայց ասկից բան մը չելներ։ Այս տեղ միթէ Պ. Կիշը չունինք որ իշխանուհւոյն հետ աչք ունք կ՚ընէ։

— Խե՛ղճ, խե՛ղճ տղայ — ըսաւ Լա Վալիէր։

— Ինչո՞ւ համար խեղճ . . . : Կարծեմ թէ իշխանուհին բաւական գեղեցիկ և մեծ տիկին մ՚է։

Լա Վալիէր գլուխն օրեց վշտագին։

— Երբ մարդ կ՚սիրէ, սիրածն ոչ գեղանի և ոչ մեծ տիկինն է. սիրելի բարեկամուհիք, երբ մարդ կ՚սիրէ սիրելւոյն միայն սիրտն ու աչքը կ՚սիրէ։

Մոնդալէ սկսաւ մեծաձայն ծիծաղիլ։

— Սիրտ, աչք, ոչ, անուշ խօսքեր են — ըսաւ նա։

— Ես ինձի համար կ՚խօսիմ — պատասխանեց Լա Վալիէր։

— Ազնիւ զգացումներ — ըսաւ Աթէնաիս պաշտպան դէմքով մը — բայց պաղ։

— Միթէ դու չունիս այդ զգացումները, օրիորդ — ըսաւ Լուիզ։

— Անտարակոյս, օրիորդ. բայց կ՚շարունակեմ։ Ինչպէս կարելի է ցաւիլ մարդու մը վրայ որ իշխանուհւոյն պէս աղուոր կնոջ իր համակրական հոգերը կ՚յայտնէ։ Եթէ անհամեմատութիւն կայ, կոմսին կողմէն է։

— Ո՛հ, ոչ, ոչ — ըսաւ Լա Վալիէր — իշխանուհւոյն կողմէն է։

— Բացատրէ միտքդ։

— Պիտի բացատրեմ։ Իշխանուհին սէրն ինչ է իմանալու անդամ փափաք չունի։ Կ՚խաղայ նա այս զգացումով իբրև տղեկներ որ փամփուշտներու հետ կ՚խաղան, որու մէկ կայծը պալատ մը կրնայ բռնկել։ Կ՚փայլի այս միայն, ահա այս միայն պէտք է

իրեն։ Արդ՝ ուրախութիւն և սէր հիւս մ՚է որով իր կեանքը հիւսել կ՚ուզէ։ Պ. Կիշ պիտի սիրէ այս անուանի կինը. այս կինը զանի չպիտի սիրէ։

Աթէնաիս արհամարհական կերպով քահ քահ մը ձգեց։

— Բայց ո՞վ կ՚սիրէ այժմ։ Ո՞ւր են քիչ մ՚առաջ ըսած ազնիւ զգացումներդ։ Միթէ կնկան մ՚առաքինութիւնը կարեւոր դաւի մը մերժման մէջ չէ՞։ Բարեկաղմ և վեհանձն սրտով կին մը պէտք է որ մարդկան նայի, ինքզինքն անոնց սիրել մինչև անդամ պատուել տայ, և զոնէ իր կենաց մէջ մի անգամ ըսէ. «Ա՛ռ»։ Կ՚երեւի ինձ որ, եթէ չլինէի ինչ որ եմ, ասի տուէի նուազ կ՚ատէի քան թէ մուսները։

— Ուրեմն — գոչեց Լա Վալիէր ձեռներն իրարու կցելով — այդ է Պ. Մոնթէսպանի խոստացածդ։

— Է՛հ, ճշմարիտ է, անոր ինչպէս նաև ուրիշի։ Ի՞նչ, միթէ չըսի՞ քեզի որ անոր վրայ տեսակ մը կատարելութիւն կ՚տեսնեմ, բայց այս չբաւէր։ Սիրելիդ իմ, կինը կին է, այսինքն թագուհի մ՚որչափ ատեն որ բնութիւնը մեզ այս շնորհը կ՚ընէ այս թագաւորութեան վրայ իշխելու, տասն հինգ տարեկանէն մինչև երսունը հինգ։ Եթէ կ՚ուզես եռաբէն սիրա ունեցիր, երբ միայն այս կ՚մնայ քեզի։

— Հօ, հօ — մրմնջեց Լա Վալիէր։

— Կատարեալ խօսք — գոչեց Մոնդալէ — ահա տիրուհի կին մը։ Աթէնաիս, դու շատ հեռու պիտի գնաս։

— Միթէ չե՞ս հաւանիր խօսքիս։

— Ո՛հ, ոտքով ու ձեռքով — ըսաւ Հեգնարան աղջիկը։

— Կատակ կ՚ընես, այնպէս չէ՞, Մոնդալէ — ըսաւ Լուիզ։

— Ո՛չ, ոչ, բոլոր Աթէնաիսի ըսածներուն կ՚հաւանիմ, միայն . . . :

— Ի՞նչ միայն։

— Լա՛ռ, չեմ կարող 'ի գործ դնել ըսածը։ Ես կատարեալ սկզբունքներ ունիմ։ Ես խորհուրդներ կ՚երկնեմ, որոց մեծ Հօրանտիոյ իշխանին և Սպանիոյ թագաւորին խորհուրդներն մանկական խաղեր են, յետոյ, երբ գործադրութեան ժամը հասնի, ոչ ինչ չեմ ըներ։

— Միթէ կ'վհատի՞ս — ըսաւ Ամէնայիս արհամարհանքի։

— Անարժանապէս։

— Ողբմելի՛ բնութիւն — վրայ բերաւ Ամէնայիս։ Բայց զոնէ կ'ընտրե՞ս։

— Իրաւ որ . . . իրաւի, ո՛չ։ Բաղկն ինձ ամէն բանի մէջ հաւկառակ գալու կ'ախորժի. կայսրներ կ'երազեմ, և կ'զանեմ. . . ։

— Օ՛ր, Օ՛ր — գոչեց Լա Վալիէր — զթայլիր, աղուոր խօսք մ'ըսելու հաճոյից մի՛ զոհեր անոնք որ այնչափ անձնուիրութեամբ քեզ կ'սիրեն։

— Ո՛հ, այդ մասին շատ փոյթ չունիմ. զիս սիրողները բաւական երջանիկ են որ զիրենք չեմ վնասեր, սիրելիդ իմ։ Վա՜յ ինձի թէ որ տկարութիւն մ'ունիմ, բայց վա՜յ անոնց եթէ անոնց վրայ վրէժս կ'լուծեմ։ Ճշմարիտը, վրէժս կ'առնում։

— Օ՛ր։

— Իրաւունք ունիս — ըսաւ Ամէնայիս — և կարելի է նոյն նպատակին հասնիս։ Այդ բանը պչրասէր լինիլ կ'նշանակէ, դիտէք, օրիորդներ։ Մարդիկ՝ որ շատ բաներու մասին յիմար են, մանաւանդ այս մասին յիմար են որ պչրասիրութեան բաւին ներքև՝ կ'շփոթեն կնկան մը հպարտութիւնն ու իր փոփոխամտութիւնը։ Ես հպարտ եմ, այսինքն անաւիկ. հետամուտներուն հետ խստիւ կ'վարուիմ, բայց զանոնք պահելու բնաւ մեծամտութիւնը չունիմ։ Մարդիկ կ'ըսեն թէ պչրասէր եմ, վասն զի ինքնասիրաբար կարծեն թէ անոնց կ'կարօտիմ։ Ուրիշ կիներ, Մօնպալէ, օրինակի համար, ողբանօք ընկճուած են, պիտի 'ի կորուստ մատնուէին առանց բնաղդումի բարեյաջող շարժառիթին որ շուտով փոխուելու կ'մղէ զանոնք և պատժելու այն մարդիկն որոց նուէրն երբեմն կ'ընդունէին։

— Գիտական վիճաբանութիւն — ըսաւ Մօնպալէ զմայլելով։

— Զզուելի — մրմռաց Լուիզ։

— Ի շնորհս այս պչրասիրութեան, վասն զի այս է ճշմարիտ պչրասիրութիւնը — շարայարեց օրիորդ Գոնէյ–Շարանդ — սիրողը՝ որ ժամ մ'առաջ գոռոզութեամբ փքացած էր, մէկ վայրկեանի մէջ կ'նիհարնայ և իր ինքնասիրութեան ուռեցքը կ'իջնէ։

Արդէն յաղթողն հովեր կ'առնուր, այժմ կ'ընկրկի, նա վայրիկ մ'ևս մեզ պիտի պաշտպանէր, վերստին կ'երկրպագէ։ Ասկից սա կ'հետևի որ փոխանակ նախանձոտ, նեղնչ, սովորական, միշտ դաղդոջուն, միշտ ցանկասէր, միշտ հնազանդ սիրող մը պիտի ունենանք, սա պատճառաւ միայն որ նա միշտ նոր սիրուհի մը կ'գտնէ։ Ահա, և այս մասին համոզուեցէք, օրիորդներ, թէ ինչ կ'ուժէ պչրասիրութիւնը։ Ահա այսպէսով կանանց մէջ թագուհի կ'գտնայ կին մը, երբ 'ի վերուստ ընդունած չէ այն մեծագին ձիրքն որով սրտին ու մտքին սանձ կ'դնէ։

— Ո՛հ, որչափ ճարտարամիտ ես — ըսաւ Մօնպալէ — և որչափ լաւ կ'իմանաս կանանց պարտաւորութիւնը։

— Ես առանձին երջանկութիւն մը կ'պատրաստեմ — ըսաւ Ամէնայիս համեստութեամբ — ինքզինքս կ'պաշտպանեմ ամէն տկար սիրահարներուն դէմ՝ զօրեղներու բռնութեան դէմ։

Լա Վալիէր բառ մ'անգամ չըսաւ։

— Միթէ նա մեղի հաւան չէ՞։

— Ես և ոչ իսկ ձեր ըսածը կ'ըմբռնեմ — ըսաւ Լուիզ։ — Այնպիսի էակներու պէս կ'խօսիք որպէս թէ այս երկրիս երեսն ապրելու սահմանուած չեն։

— Եւ այդ երկիրդ, արդարև շատ սիրուն է — ըսաւ Մօնպալէ։

— Երկիր մ'ուր մարդ կինը կ'խնկարկէ որպէս զի շուարեալ տապատ գեղինը կործանէ, և երբ կործանի նա, զանի կ'նախատէ — ըսաւ Ամէնայիս։

— Ո՞վ կ'ըսէ քեզ որ կործանի — ըսաւ Լուիզ։

— Ա՛հ, առասիկ նոր տեսութիւն մը, սիրելիդ իմ. խնդրեմ ցոյց տուր ինձ թէ ի՞նչ հնար ունիս չյաղթուելու, երբ կ'թողուս որ սէրը քեզ մղէ տանի։

— Ո՛հ — գոչեց նորատի օրիորդն իր նամէտ աչունքը սև երկնից ամբառնալով — ո՛հ, թէ որ գիտնայիր թէ ինչ է սիրտ մը, պիտի բացատրէի և ձեզ պիտի համոզէի. սիրող սիրտ մը 'ի վեր է քան ձեր բոլոր պչրասիրութիւնը, 'ի վեր քան ձեր բոլոր հպարտութիւնը։ Երբէք կին մը չսիրուիր, ես այսպէս կարծեմ, և Աստուած ձայնս կ'լսէ, երբէք մարդ մը չսիրեր մա-

լորադին՝ բայց միայն երբ կ'զգայ թէ սիրուած է։ Թոյլ տուէք կատակերգութեան ծերունիներուն որ հաւատան թէ պչրասէրներէ կ'սիրուին։ Պատանի մը գիտէ սէրը, գիտէ, և երբէք չպատրեր. եթէ պչրասիրին համար տենչ մը, բոյ մ'ունի և կատաղութիւն, կ'նայիք որ ասպարէզը ձեզի բացարձակ կ'թողում, մէկ խօսքով՝ պչրասէրը կրնայ զանի խենթ դարձնել երբէք զանի սիրահար չպիտի դարձնէ։ Գիտէք որ, սէրը, իմ գիտցած սէրս, անդադար, բացարձակ, լիուլի զոհողութիւն մ'է. բայց երկու միացեալ սիրտերու միայն զոհողութիւնը չէ միայն, այլ երկու հոգիներու կատարեալ անձնուրացութիւնն է, որով 'ի մի հոգի կը դառնան։ Եթէ ես երբէք սիրեմ, պիտի աղերսեմ իմ սիրողս որ զիս աղատ և մաքուր պահէ. պիտի ըսեմ անոր, և նա ևս պիտի ըմբռնէ, թէ իմ ըրած մերժման վրայ հոգիս կ'խորտակի, և այն, այն որ զիս պիտի սիրէ, իմ զոհողութեանս վշտալի մեծութիւնն զգալով, ինքն ալ ինձի պէս անձնուէր պիտի լինի, զիս պիտի յարգէ, չպիտի աշխատի զիս կործանելու որպէս զի կործանեցէս ետև զիս նախատէ, ինչպէս որ քիչ մ'առաջ կ'ըսէիք նզովելով սէրը զոր ես կ'ըմբռնեմ։ Աւասիկ, ես այսպէս կ'սիրեմ։ Այժմ, եթէ կարող էք, ըսէք ինձ որ սիրողս զիս պիտի քամահէ, երբէք չեմ հաւատար, միայն թէ վատազգի մարդ մը չլինի, և իմ սիրաս կ'երաշխաւորէ զիս որ այս տեսակ մարդ չպիտի ընտրեմ։ Իմ ակնարկս անոր զոհողութիւնները պիտի վճռէ, կամ այնպիսի առաքինութիւններ պիտի իրեն հարկ դնէ անոր զոր երբէք չպիտի կարծեր թէ կրնար ունենալ։

— Բայց, Լուիզ — դոչեց Մօնդալէ — այդ կ'ըսես բայց 'ի գործ չես դներ ընաւ։

— Ի՞նչ ըսել կ'ուզես։

— Ուաւլ քեզ կ'պաշտէ, քեզ կ'երկրպագէ։ Խեղճ տղան այդ առաքինութեանդ զոհ մ'է, այնպէս որ իմ պչրասիրութեանս կամ Ամէնախի հպարտութեան անդամ չպիտի լինէր։

— Այդ միայն պչրասիրութեան նրբութիւն մ'է — ըսաւ Ամէնախս — և օրիորդ Լուիզ առանց գիտնալու զայն 'ի գործ կ'դնէ, ինչպէս որ ինձ կ'թուի։

— Ո՛հ — ըսաւ Լա Վալիէր։

— Այո՛, այդ բնազդում կ'կոչուի. կատարեալ զգայնութիւն, զգացումներու գողտրիկ ընտրութիւն, խանդալից կրից յարատև ցոյցեր որ բանի մը չեն եզրիր։ Ո՛հ, այդ շատ ճարտար և աղուտ ընթացք մ'է։ Հիմակ որ կ'մտածեմ՝ այդ հնարն իմ հպարտութենէն նախագաս պիտի համարէի մարդկան դէմ մաքառելու համար, վասն զի երբեմն համոզման հաւատացնելու առաւելութիւնն ունի. բայց՝ այժմէն՝ առանց իմ գրութիւնս լիովին դատապարտելու, Մօնդալէի պարզ պչրասիրութենէ գերազանց կը համարիմ զայն։

Երկու նորատի աղջիկները սկսան ծիծաղիլ։

Լա Վալիէր լռութիւն պահեց և գլուխը ցնցեց։

Յետոյ, պահ մ'ետքը.

— Եթէ այդ ձեր ըսածներուն քառորդը միայն մարդու առջև ըսէիք — պատասխանեց նա — կամ եթէ համոզուած լինէի թէ այդ է բուն իսկ ձեր համոզումը, սա տեղս ամօթէս և ցաւէս պիտի մեռնէի։

— Լաւ, մեր, գողտրիկ տատրակ — պատասխանեց օրիորդ Դօնէյ-Շարանդ. — վասն զի եթէ այս տեղ մարդիկ չկան, գէթ երկու կանայք կան, քու բարեկամուհիներդ, որ կ'յայտնեն քեզի թէ դու իսկ և իսկ պչրուհի մ'ես բնազդումով, անմեղ պչրուհի մը, այսինքն աշխարհիս մէջ գտնուած պչրուհիներուն ամենէն վատանդաւորը։

— Ո՛հ, օրիորդներ — պատասխանեց Լա Վալիէր կարմրելով և լալու պատրաստ գտնուելով։

Երկու ընկերուհիները սկսան նորէն քահ քահ ծիծաղիլ նոր աւելի գտնելով ծիծաղելու։

— Լաւ, Պրաժլօնի նոր տեղեկութիւններ պիտի հարցնեմ։

— Պրաժլօնի՞ — ըսաւ Ամէնախս։

— Է՛հ, այո՛, այն Կեսարի պէս արիասիրտ պատանւոյն, Փուքէի պէս նրբամիտ և մտայի, այն հէք տղուն որ տասն երկու տարիէ վեր քեզ կ'ճանչէ, քեզ կ'սիրէ, և սակայն, եթէ խօսքիդ հաւատանք, և ոչ իսկ մատիդ ծայրը համբուրած է։

— Բացատրէ՛ մեզի այդ անդթութիւնը, դու սրտի տէր կլին — ըսաւ Ամէնախս Լա Վալիէրի։

— Մէկ բառով պիտի բացատրեմ զայն. առաքինութիւն։ Արդեօք առաքինութիւնն ալ պիտի ուրանա՞ք։

— Նայինք, Լուիզ, մի՛ սուտ խօսիր — ըսաւ Օր անոր ձեռքը բռնելով։

— բայց ի՞նչ կ՚ուզէք որ ըսեմ ձեզի — պոչեց Լա Վալիէր։

— Ի՛նչ որ կ՚ուզես ըսէ։ Բայց ի՞նչ որ խօսիս ընդունայն է, ես քու վրադ կարծիքս չեմ փոխեր։ Բնազդումով պչրուհի, անմեղ պչրուհի, այսինքն, ըսի և վերստին կ՚ըսեմ, ամէն պչրուհիներէն վսանդաւորն ես։

— Ո՛հ, ո՛չ, շնորհ, մի՛ կարծէք այդպէս։

— Ինչպէ՞ս, տասն երկու տարի բացարձակ խստութիւն։

— Ո՛հ, տասն երկու տարի է, բայց ես հինգ տարու էի։ Փոքրիկ աղջկան մ՚ընտանութիւնը նորատի աղջկան մը համար հաշուի չառնուիր։

— Լաւ, տասն եօթ տարեկան ես. տասն երկուքի տեղ՝ երեք տարի։ Երեք տարիէ վեր՝ հաստատապէս և լիովին անգութ եղեր ես։ Քեզի դէմ ունիս Պլուայի համր հովանիները, այն ժամադրութիւններն որոց մէջ աստղերը կ՚համրեն, ասպիներու ներքև գիշերային նիստերը, իր քսան տարիքը քու տասն չորս տարիքիդ խօսելով, իր աչաց կրակը քեզ խօսելով։

— Այո՛, այո՛, բայց այս այսպէս է։

— Օ՛ն անդը, անկարելի՛ բան։

— Բայց, Տէր իմ Աստուած, ինչո՞ւ համար անկարելի պիտի լինի։

— Մեզի հաւատալի բաներ ըսէ, սիրելիդ իմ, քեզի պիտի հաւատանք։

— Բայց վերջապէս, բան մը ենթադրէ։

— Ի՞նչ է, նայինք։

— Լմնցուցէք, թէ ոչ ուզածէդ աւելի ենթադրութիւններ պիտի ընենք։

— Ենթադրենք, ուրեմն, ենթադրենք թէ սիրել կարծէի, մինչդեռ իրօք չեմ սիրեր։

— Ինչպէ՞ս, միթէ չե՞ս սիրեր։

— Ի՞նչ ընեմ, եթէ ուրիշներուն պէս սիրելու սահմանուած չեմ, իրօք չեմ սիրեր. վասն զի տակաւին իմ սիրելու ժամս հասած չէ։

— Լուի՛զ, Լուի՛զ — ըսաւ Մոնդալէ — զլոյշ եղիր, հիմակ պիտի դարձնեմ քեզ փոքր ինչ առաջ ըսած խօսքդ։ Ռաուլ այս պիտի դարձնեմ քեզ փոքր ինչ առաջ ըսած խօսքդ։ Ռաուլ այս տեղ չէ, անոր բացակայութեան ատեն մի՛ զարներ անոր. գթատեղ չէ, անոր բացակայութեան ատեն մի՛ զարներ անոր. գթասէր եղիր. և թէ աւելի մօտէն քննելով, կարծես թէ զանի չեմ սիրեր, ուզղակի անոր ըսէ. հէ՛ք պատանի։

Եւ սկսաւ ծիծաղիլ։

— Օրիորդ Լա Վալիէր քիչ մ՚առաջ Պ. Կիշին վրայ կ՚ցաւէր — ըսաւ Ամէնախս — միթէ միայն համար անտարբերութեան բացատրութիւնը կարելի չէ՞ գտնել միւսին համար ունեցած կարեկցութեան մէջ։

— Օրիորդնե՛ր, ձգմեցէ՛ք զիս — ըսաւ Լա Վալիէր տրտմութեամբ — ձգմեցէ՛ք զիս քանի որ իմ միտքս չէ՛ք հասկընար։

— Հօ՛, հօ՛ — պատասխանեց Մոնդալէ — սրտնեղութիւն։ Վիշտ, արտասուք. Լուիզ, կ՚ծիծաղինք իրաւ, բայց հաւաստի եմ, որ զիր քու կարծած հրեշներդ չենք. նայէ՛ զուռոզ Ամէնախսի, ինչպէս որ զինքը կ՚անուանեն, չսիրեր նա Պ. Մոնթէսպանը թէև, բայց յուսահատի պիտի եթէ Պ. Մոնթէսպան զինքը չսիրէ։։։։ Նայէ՛ ինձ, Մալիքօրնի վրայ կ՚ծիծաղիմ. բայց այն խեղճ Մալիքօրնն որու վրայ կ՚ծիծաղիմ, քաջ գիտէ որ կ՚ուզէ իմ ձեռքս շրթանցը տանիլ։ Ասկէ զատ՝ մեզնէ ամենէն տարուօքը քսան տարու չկայ։։։ ինչ սպագայ։

— Խենդեր, ինչ խենդեր էք — մրմռայ Լուիզ։

— Իրաւ է — ըսաւ Մոնդալէ — և դու միայն իմաստուն խօսքեր ըսիր։

— Անտարակոյս։

— Ա՛հաւանիմ — պատասխանեց Ամէնախս։ — Այսպէս, ճշմարիտ է որ չես սիրեր այն խեղճ Պրաժլօնը։

— Կարելի՛ է — ըսաւ Մոնդալէ — գեռ բոլորովին ստոյգ չէ։

Բայց ինչ և է, մտիկ ըրէ, Ամէնախս. եթէ Պ. Պրաժլօն ա-

զատ մնայ, քեզի իրրև բարեկամուհի, խորհուրդ մը պիտի տամ։

— Ի՞նչ խորհուրդ։

— Այսինքն անոր լաւ նայիս Պ. Մոնթէսպանի համար որոշում մ'ընելէդ առաջ։

— Ո՛հ, թէ որ զսրծն այսպէս կ'մեկնես, սիրելիդ իմ, Պ. Պրաժլօն չէ միայն որու նայելու ախորժ ղղայ մարդ։ Եւ, օրինակի համար, Պ. Կիշ իր արժէքն ունի։

— Այս իրկուն չփայլեցաւ — յարեց Մոնդալէ — և ստոյգ տեղէ իմացայ որ իշխանուհին զանի զբաղելի դատեր է։

— Բայց Պ. Սէնդ-Էնյան, փայլեցաւ, և ստոյգ եմ որ զանի պարելու ատեն տեսնողներէն շատերը շուտով չպիտի մոռնան։ Այնպէս չէ՞, Լա Վալիէր։

— Ինչո՞ւ համար այդ հարցումդ ինձի կ'ուղղես։ Ես զանի չտեսայ, ես զանի չեմ ճանչեր։

— Ինչպէ՞ս, Պ. Սէնդ-Էնյանը չտեսար, զանի չե՞ս ճանչեր։

— Ո՛չ։

— Արի, մեր դուռդրութենէն աւելի վայրագ առաքինութիւն մը մի՛ կեղծեր. աչք ունիս, այնպէս չէ՞։

— Պատուական աչքեր։

— Ուրեմն այս իրկուն բոլոր մեր պարողները չտեսա՞ր։

— Այո՛, դրեթէ տեսայ։

— Ահա դրեթէ մ'որ անոնց շատ պատիւ չբերեր։

— Ես եղածը ձեզի կ'ըսեմ։

— Լաւ ուրեմն, նայինք, բոլոր այս աղատորդիներուն մէջ զոր դրեթէ տեսեր ես, ո՞րը նախադաս կ'սեպես։

— Այո՛, ո՞րն — ըսաւ Մոնդալէ — Պ. Սէնդ-Էնյա՞նը, Պ. Կիշը, Պ. . . .։

— Ոչ զոք նախադաս կ'սեպեմ, օրիորդներ. հաւասարապէս լաւ կ'զանեմ։

— Ուրեմն այս փայլուն հանդիսին մէջ, բոլոր այս արքունեայ մէջ, որ աշխարհիս մէջ առաջինն է, ոչ ոք քեզի հաճելի չեր ընդա՞ւ։

— Ես այդ չեմ ըսեր։

— Ուրեմն, խօսէ։ Նայինք, քու տեսլականդ մեզի յայտնէ։

— Տեսլական չէ։

— Ուրեմն գոյութիւն ունի։

— Իրաւի, օրիորդներ — գոչեց Լա Վալիէր նեղը մնալով — ես բան մը չեմ հասկընար։ Ի՞նչ, դուք ալ ինձի պէս սիրատ մ'ունիք, դուք ինձի պէս աչք ունիք, և ինձի Պ. Կիշին, Պ. Սէնդ-Էնյանի, Պ. . . . չպիտեմ որու վրայ խօսք կ'ընէք երբ թագաւորն այն տեղն էր։

Այս խօսքը զոր արտորնօք, վրդովեալ և հրաւառ ձայնով արտասանեց՝ իսկոյն այնպիսի բացագանչութեան մը պատճառ տուին երկու կողմէն որ նորատի աղջիկը վախցաւ։

— Թագաւո՛ր — գոչեցին միաբերան Մոնդալէ և Ամէնախս։

Լա Վալիէր իր գլուխը ձեռացը մէջ պահեց։

— Ո՛հ, այո՛, թագաւո՛ր, թագաւո՛ր — մրմռաց նա — միթէ տեսած էք երբէք թագաւորին նման էակ մը։

— Իրաւունք ունէիր քիչ մ'առաջ ըսելու որ պատուական աչեր ունիս, օրիորդ. վասն զի հեռուն, շատ հեռուն կ'նայիս։ Աւաղ, թագաւորն անոնցմէ չէ որոց վրայ մեր խեղճ աչերն իրաւունք ունենան սևեռելու։

— Ո՛հ, իրաւ է, իրաւ է — գոչեց Լա Վալիէր։ — Ներելի չէ ամէն աչաց արևուն նայիլ դէմ առ դէմ, բայց ես պիտի նայիմ, եթէ ասով կուրանամ իսկ։

Նոյն պահուն՝ և որպէս թէ Լա Վալիէրի բերնէն ելնող խօսքերը պատճառ լինէին, տերևներու և շշշունի ձայն մը մօտակայ թփին ետևէն լսելի եղաւ։

Նորատի օրիորդներն ոտք ելան ահաբեկ։ Բայցորոշ տեսան որ տերևները կ'շարժին, բայց առանց տեսնելու զանոնք շարժող առարկան։

— Ո՛հ, գայլ մը կամ վարազ մը — գոչեց Մոնդալէ։ — Խոյս տանք, խոյս տանք։

Եւ երեք նորատի օրիորդներն ոտք ելան անտեսանելի սարսափէ մը բռնուած և խոյս տուին իրենց առջևն ելնող առաջին ծառուղիէն, և մինակ անտառին ծայրը կայ տուին։

Այն տեղ՝ շնչասպառ, իրարու յենած՝ իրենց սրտին դողը փոխադարձ զգալով, փորձ փորձեցին սթափելու, բայց քանի մը վայրկենէն հաղիւ կարող եղան ինքզինքնին պտնելու։ Վերջապէս՝ գլխին կողմէն լոյսեր տեսնելով, արոշեցին դէպ այն լուսերը դիմել։

Լա Վալիէր յոգնած դադրած էր։

Օր և Ամէնախս զանի կ՚բռնէին։

— Ո՛հ, աղէկ աղատեցանք — ըսաւ Մօնպալէ։

— Օրիորդներ, օրիորդներ — ըսաւ Լա Վալիէր — կ՚վախնամ որ գայլէ յոտագոյն բան մը չլիներ մեր տեսածը։ Իմ մասիս, ես խորհածս կ՚ըսեմ, լաւ ես ունէի վայրի կենդանիի մը ողջ ողջ կուլ երթալ, քան թէ իմ խօսքս լսած լինէին։ Ո՛հ, խենթ, ո՛րչափ խենթ եմ։ Ի՞նչպէս կարող եղայ մտածել, ինչպէս կարող եղայ այսպիսի բաներ ըսել։

Եւ այս ըսելով եղէգնի պէս գլուխը ծռեց. զգայ որ ոտները կ՚կթոտին, և լիովին ոյժէ ընկնելով, սահեցաւ՝ և իր ընկերուհիներուն գրկէն անկենդան սահեցաւ ծառուղիին գալարին վրայ։

Գ.

ԹԱԳԱՒՈՐԻՆ ՄՏԱՏԱՆՋՈՒԹԻՒՆԸ

Թողունք հէք Լա Վալիէրն իր ընկերուհիներուն մէջ տեղը գրեթէ մարած՝ և արքայական կաղնիին շրջակայքը դառնանք։

Երեք օրիորդներն այն ինչ քսան քայլ ըրեր էին խոյս տալով, որ իրենց ահ աղդող աղմուկը թփին մէջ սասարկացաւ։

Այս կերպարանը՝ թփին ոստերը հեռայնելով աւելի որոշակի երևան ելաւ անտառին ծայրը, և նոյն վայրն անբնակ տեսնելով՝ քահ քահ մը ձգեց։

Աւելորդ է ըսել որ այս կերպարանը Նորատի և գեղանի աղատորդւոյ մը կերպարանն էր, որ իսկոյն ուրիշ անձի մը նշան ըրաւ և այս ալ ըստ Լարդի դուրս ելաւ։

— Լաւ ուրեմն, Վեհափառ — ըսաւ միւս կերպարանն երկչոտութեամբ յառաջանալով — արդեօք Ձեր Վեհափառութիւնը մեր Նորատի սիրուհիները փախցո՞ց։

— Է՛հ, Տէր վկայ, այո՛ — ըսաւ թագաւորը — կարող ես աղատութեամբ երևիլ, Սէնդ-Էնյան։

— Բայց, Վեհափառ, զգուշացիք, պիտի ճանչցուիք։

— Բայց ըսի քեզի որ խոյս տուին։

— Ահա յաջող հանդիպում մը, Վեհափառ տէր, և եթէ Ձեր Վեհափառութեան խորհուրդ մը տալ ներելի լինէր ինձ, պիտի ըսէի որ անոնց ետևէն երթանք։

— Հեռուէն։

— Վա՜յ, դիւրաւ պիտի բռնուէին, մանաւանդ եթէ պիտնային թէ որո՞նք են գիրենք հալածողները։

— Ինչպէ՞ս, բացատրէ նայիմ, պարոն իմաստակ։

— Իրաւի, անոնց մէջ մէկը կայ որու հաճելի կ՚երևիմ, և միւսն որ ձեզ արևուն նմանցուց։

— Այդ ալ մեծագոյն պատճառ մ՚է որ պահուած մնանք, Սէնդ-Էնյան։ Արևը գիշերը չերևիր։

— Իրաւ որ, Վեհափառ, դուք հետաքրքիր չէք։ Եթէ ես ձեր տեղը լինէի, պիտի փափաքէի իմանալ թէ ո՞ք են երկու յաւերժահարսունք, երկու գրիպդները, երկու համագրիպներն որ մեր վրայ այնչափ լաւ գաղափար ունին։

— Ո՛հ, ես առանց անոնց ետևէն վազելու պիտի ճանչեմ, ապահով եղիր։

— Եւ ի՞նչպէս պիտի ճանչէք։

— Թշուառական, անոնց ձայնէն։ Արքունեաց մէջէն են, և այն որ իմ վրայ կ՚խօսէր չքնաղ ձայն մ՚ունէր։

— Ա՛հ, ահա Ձեր Վեհափառութիւնը շողոքորթութենէ կը ներգործուի։

— Զպիտի ըսուի որ դու ալ այս միջոցը կ՚գործածես։

— Ո՛հ, ներեցէք, Վեհափառ տէր, անմիտ եմ։

— Նայինք, եկուր, և իմ ըսած տեղս փնտուենք։

— Հապա այն սէրը զոր ինձ գաղտնի յայտնեցիք, Վեհափառ, միթէ արդէն մոռցա՞ք։

— Ո՛Հ, ինչ կ'ըսես, ոչ։ Ի՞նչպէս կ'ուզես որ մոռնամ օրիորդ Լա Վալիէրի աչաց պէս աչեր։

— Ո՛Հ, միսը չքնաղ ձայն մ'ունի։

— Ո՞ւն է։

— Այն որ արևը կ'սիրէ։

— Գ. Սէնդ-Էնյան։

— Ներեցէք, Վեհափառ։

— Սակայն չեմ սրդոզիր եթէ կարծես թէ որչափ անուշ ձայնները նոյնչափ դեղեցիկ աչքերը կ'սիրեմ։ Ես կ'ճանչեմ քեզ, դու սոսկալի շաղակրատ մ'ես, վաղը քու վրադ ունեցած վստահութիւնս պիտի վճարեմ։

— Ի՞նչ կերպով։

— Կ'ըսեմ թէ վաղն ամէն մարդ պիտի իմանայ որ այս փոքրիկ Լա Վալիէրի վրայ համակրութիւն ունիմ. բայց զգոյշ եղիր, Սէնդ-Էնյան, քեզի միայն յայտնեցի իմ գաղտնիքս, և եթէ մէկն այս մասին ինձի խօսի, իսկոյն պիտի հասկընամ թէ ո՞վ մատնեց իմ գաղտնիքս։

— Ո՛Հ, այդ ինչ տաք տաք կ'խօսիք, Վեհափառ տէր։

— Ո՛չ, բայց դու կ'իմանաս միտքս, չեմ ուզեր այս հէք աղջկան պատիւը վատնել։

— Վեհափառ տէր, անհոգ եղիք։

— Մի թէ կ'խոստանաս ինձ։

— Վեհափառ, բոլորովին կ'ապահովեմ ձեզ։

— Լաւ — մտածեց Թագաւորն ինքնիրեն ծիծաղելով — վաղն ամէն մարդ պիտի իմանայ որ այս գիշեր Լա Վալիէրի եաւէն վազեցի։

Ապա ձամբէն խոտորելու փորձելով.

— Բայց նայէ, մոլորեցանք — ըսաւ նա։

— Ո՛Հ, շատ վատնդաւոր չէ այս խոտորումը։

— Այս գունէն ուր կ'երթուի։

— Ի Ռօն-Բուէն, Վեհափառ։

— Այն տեղն ուր կ'դիմէինք երբ որ կանանց աղաղակներ լսեցինք։

— Այո՛, Վեհափառ, և այն խօսակցութեան վախճանն որու մէջ պատիւ ունեցայ լսել իմ անուանս արտասանիլը Ձեր Վեհափառութեան անուան մօտ։

— Այդ կիտին ստէպ կ'ակնարկես, Սէնդ-Էնյան։

— Թող Ձեր Վեհափառութիւնն ինձ ներէ. բայց սաստիկ ուրախ եմ իմանալով որ կին մը կայ ինձ մտածող, թէև ես չգիտեմ, և ասոր համար բան մ'ըրած չեմ։ Ձեր Վեհափառութիւնն այս գոհունակութիւնս չկրնար հասկընալ, գոնէ որ ձեր աստիճանով և արժանեօք ուշադրութիւն կ'դրաւէք և սէր կ'ազդէք։

— Շատ լաւ, բայց այնպէս չէ, Սէնդ-Էնյան, եթէ կ'ուզես հաւատա ինձ — ըսաւ Թագաւորը Սէնդ-Էնյանի թևին վրայ ընտանեբար յենլով, և այն ձամբան բռնելով որ դէպ 'ի դղեակը տանիլը դիտէր — բայց այս անմեղ վստահութիւնը, կնկան մը այս անշահախնդիր նախասպասութիւնն առ իս, կնկան մ'որ թերևս իմ աչքիս երբեք չպիտի զարնէ . . . միով բանիւ, այս խորհրդաւոր արկածը զիս կ'գրգռէ, և արդարև՝ եթէ այսչափ Լա Վալիէրի հոգը չունենայի . . .։

— Ո՛Հ, թող այդ մասին Ձեր Վեհափառութիւնը չվհատի, դեռ բաւական ժամանակ ունինք։

— Ի՞նչպէս։

— Կ'ըսեն թէ Լա Վալիէր շատ խստաբարոյ է։

— Սէնդ-Էնյան, հեռաքրքրութիւնս կ'շարժես, զանի դանելու մեծ փափաք ունիմ, արի, երթանք։

Թագաւորը կ'ստիպէր, այսչափ քիչ փափաքած չունէր իրաւ, բայց դեր մ'ունէր խաղալու։

Եւ սկսաւ աշխուժիւ քալել։ Սէնդ-Էնյան հետևեցաւ անոր դոյզն ինչ հեռու մնալով։

Յանկարծ Թագաւորը կայ առնլով պալատականն անոր օրինակին հետևեցաւ։

— Սէնդ-Էնյան — ըսաւ նա — մի թէ հառաչներ չեմ լսեր։

— Եմ։

— Այո՛, մոլիկ ըրէ։

— Իրաւ է, և կարծեմ թէ աղաղակներ ալ կ'լսեմ։

— Սա կողմէն է — ըսաւ Թագաւորը շաւիղ մը ցոյց տալով։

— Կարծես թէ լայի ձայներ են, կնկան հեծկլտանքներ — ըսաւ Պ. Սէնդ-Էնյան։

— Վալէնք։

Եւ Թագաւորն իր մտերմին հետ՝ խստորնակ Ճամբայ մը բռնելով խոտին վրայ սկսան վազվզել։

Քանի կ'յառաջանային, աղաղակներն աւելի որոշակի կ'զարնէին ականջի։

— Յօղնութիւն, յօղնութիւն — կ'ըսէին երկու ձայներ։

Երկու նորատի երիտասարդները սկսան աւելի շուտ վազել։

Քանի ընդ առաջ կ'երթային, հառաչներն աղաղակներ կ'դառնային։

— Յօղնութիւն, յօղնութիւն — կ'կրկնէին անոնք։

Եւ այս աղաղակները Թագաւորին և իր ընկերին քայլերը կ'ըշտապէին։

Յանկարծ՝ փոսի մը ծայրը՝ տերևաշատ ուռիներուն ներքև՝ կին մը տեսան ծունր դրած՝ որ ուրիշ մարած կին մը կ'բռնէր։

Անկից քանի մը քայլ հեռու՝ երրորդ մ'օղնութիւն կ'կոչէր Ճամբուն մէջ տեղը։ Այն երկու երիտասարդները տեսնելով, որոց ասպիճանը կ'անգիտէին, կնկան աղաղակներն որ օղնութիւն կ'կոչէին աւելի սաստկացան։

Թագաւորն իր ընկերէն առաջ անցաւ, փոսին վրայէն ցատկեց, և խմբին մօտ գտնուեցաւ այն միջոցին որ, դղեկին կողմը տանող ծառուղիին ծայրը՝ տասն երիտասարդ չափ անձինք կ'յառաջանային, նոյն աղաղակները լսած լինելով, որոնք արդէն Թագաւորին և Սէնդ-Էնյանի ականջին զարնելով այն կողմը դիմեր էին։

— Ի՞նչ կայ ուրեմն, օրիորդներ — հարցուց Լուի։

— Թագաւո՛ր է — գոչեց Մօնպալէ սաստիկ զարմանքէն Լա Վալիէրի գլուխը վար ձգելով, որ բոլորովին խոտին վրայ ընկաւ։

— Այո՛, Թագաւորը։ Բայց այդ պատճառ մը չէ ընկերուհիդ երեսի վրայ թողու։ Ո՞վ է այն։

— Վէհափառ, օրիորդ Լա Վալիէրն է։

— Օրիորդ Լա Վալիէ՛ր։

— Որ քիչ մ'առաջ մարեցաւ . . . ։

— Ա՛հ, Աստուած իմ — ըսաւ Թագաւորը — խե՛ղճ աղջիկ։ Շո՛ւտ, շո՛ւտ, վիրաբոյժ մը կանչեցէ՛ք։

Բայց՝ որչափ եռանդագին որ Թագաւորն այս խօսքն արտասանեց, դարձեալ ինքնիրեն այնչափ զգուշութիւն չընելովը, փոքր ինչ պաղ երևցան ինչպէս նաև նոյն խօսքին հետ ըրած շարժումը, Պ. Սէնդ-Էնյանի, որ այս մեծ սէրն որով Թագաւորը համակուած էր՝ անոր բերնէն խորհրդարար իմացեր էր։

— Սէնդ-Էնյա՛ն — շարունակեց Թագաւորը — հսկէ օրիորդ Լա Վալիէրի վրայ, կ'աղաչեմ քեզ։ Վիրաբոյժ մը կոչէ։ Էս պիտի երթամ իր նաժիշտներուն մէկուն պատահած այս դիպուածն իշխանուհւոյն իմացնելու։

Արդարև՝ մինչդեռ Սէնդ-Էնյան օրիորդ Լա Վալիէրը դղեակը փոխադրելու կ'զբաղէր, Թագաւորն ընդ առաջ կ'սրանար՝ այս առթիւ իշխանուհւոյն մօտենալու բարեպատեհ ժամ մը սպասելով և այս պատրուակաւ անոր խօսելու։

Բարեբաղդօրէն կառք մը կ'անցնէր. կառապանը կեցուցին, և անոր մէջ գտնուող անձինքը, այս դիպուածն իմանալով՝ փութացին իրենց տեղը Լա Վալիէր օրիորդին տալու։

Կառքին արագընթաց շարժումէն հով մը գոյանալով՝ հիւանդն իսկոյն ինքզինքին եկաւ։

Երբ դղեակը հասաւ, թէև տկար էր, բայց կարող եղաւ կառքէն վար իջնել, և Աթէնսիսի ու Մօնպալէի օղնութեամբը սենեակը հասնիլ։

Լա Վալիէրը գեղնայարկին կից սրահներուն մէջ նստեցուցին։

Ապա՝ ըստ որում այս դիպուածը մեծ տպաւորութիւն մը չէր ըրած շրջապայողներուն վրայ, շրջապայութիւնը նորէն սկսան։

Նոյն պահուն՝ Թագաւորն իշխանուհին դաեր հովանոցի մը ներքև, անոր մօտ նստեր էր և իր ոտքը կամայուկ մը կ'փնտռէր աթոռին տակ իշխանուհւոյն ոտքը։

— Զգուշացէ՛ք, Վէհափառ — ըսաւ անոր Հանրիէդ մեղմիկ — անտարբեր մարդ մը չէ՛ր երևիր։

— Բա՛բէ — պատասխանեց Լուի ԺԴ նոյն ձայնով — կ՚վախնամ որ իմ ուժէս վեր դաշնադրութիւն մ՚ըրած լինիմ քեզի հետ։

Ապա՝ բարձրաձայն.

— Մինթէ դիպուածն իմացար — ըսաւ անոր։

— Ի՞նչ դիպուած։

— Ո՛հ, Աստուած իմ, քեզ տեսնելով կ՚մոռնայի որ յատկապէս զայն պատմելու համար քովդ եկայ։ Սակայն սատիկ յուզեց զիս այդ դիպուածը. քու պատուոյ օրիորդներէդ մին, խե՛ղճ Լա Վալիէր, այն ինչ մարեցաւ ընկաւ։

— Ա՛հ, հէ՛ք աղջիկ — ըսաւ իշխանուհին հանդարտութեամբ — և ի՞նչ պատճառաւ։

Ապա՝ մեղմիկ.

— Բայց չէք մտածեր, Վեհափառ, որ մտադիր էք հաւատացնել թէ այն աղջիկը կ՚սիրէք, և այս տեղ կ՚կենաք, մինչդեռ նա վարը մեռնելու վրայ է։

— Ա՛հ, տիկին, տիկին — ըսաւ թագաւորը հառաչելով — դու ո՛րչափ հանգիստ ես այդ դերդ խաղալու ատեն, և ինչպէս ամէն բան կ՚մտածես։

Եւ ոտք ելաւ։

— Իշխանուհի՛ — ըսաւ թագաւորը բաւական բարձր ձայնով որպէս զի ամէն մարդ լսէ — ներէ՛ ինձ որ հեռանամ. իմ մտատանջութիւնս մեծ է, և ես անձամբ ստուգել կ՚ուզեմ թէ արդեօք պարտաւորուած հոգը տարին նաժիշտիդ։

Եւ թագաւորը մեկնեցաւ որ Լա Վալիէրի քովն երթայ, մինչդեռ բոլոր հանդիսականները թագաւորին սա խօսքը կերպ կերպ կ՚մեկնէին. «Իմ մտատանջութիւնս մեծ է»։

Դ

ԹԱԳԱՒՈՐԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Ճամբուն վրայ՝ Լուի Սէնդ-Էնյանի հանդիպեցաւ։

— Լաւ ուրեմն, Սէնդ-Էնյան — հարցուց նա կեղծեօք — հիւանդն ի՞նչպէս է։

— Բայց, Վեհափառ — կրկնեց Սէնդ-Էնյան — ամենապարտ կ՚խոստովանիմ որ չեմ գիտեր։

— Ի՞նչպէս չես գիտեր — ըսաւ թագաւորը, իր համակրութեան առարկայ եղող անձին նկատմամբ այս յարգանաց պակասութեան վրայ դժարիլ ցոյց տալով։

— Վեհափառ, ներեցէք ինձ, բայց մը երեք խօսուն օրիորդներէն միոյն հանդիպեցայ, և կ՚խոստովանիմ որ այն միտքս առաւ։

— Ա՛հ, զո՛վ գտար — ըսաւ թագաւորն աշխուժիւ։

— Այն օրիորդն որ այնքան նպաստաւոր կերպով իմ վրայ խօսելու կ՚հաճէր, և իմս գտնելով, ձերինը կ՚փնտռէի, Վեհափառ, երբ Վեհափառութեանդ հանդիպելու երջանկութիւնն ունեցայ։

— Քաջ է, բայց ամէն բանէ առաջ, օրիորդ Լա Վալիէր — ըսաւ թագաւորն իր խաղացած դերին հաւատարիմ։

— Ո՛հ, ինչ սրտաշարժ աղջիկ է այն — ըսաւ Սէնդ-Էնյան — և ո՛րչափ մեծ ճոխութիւն էր իր մարմրուքը, քանի որ Վեհափառութիւնդ անոր հոգ կ՚տանէր։

— Հապա, քու գեղեցկիդ անունն ի՞նչ է, Սէնդ-Էնյան, միթէ դաղտնի՞ք մ՚է։

— Վեհափառ, այս պարտ էր դաղտնիք մը լինիլ, և մանաւանդ մեծ դաղտնիք մը, բայց գիտէք որ Վեհափառութեանդ համար դաղտնիք չկայ։

— Ուրեմն անունն ըսէ։

— Դոնէյ-Շարանդ օրիորդն էր։

— Գեղանի՞ է։

— Զափազանց, այո՛, Վեհափառ, և ճանչեցի ձայնն որ այնպէս իմ անունս կ՚արտասանէր գորովալիր։ Այն ատեն անոր մատ դայի, ամբոխին մէջ կարելի եղածին չափ անոր հարց ու փորձ ըրի, և ըսաւ նա, առանց բանէ մը կասկածելու, թէ քիչ մը առաջ երկու բարեկամուհիներուն հետ մեծ կաղնիին տակն էր,

երբէ՞ դայլի կամ գողի մը երեւումը զերեզնք ահաբեկելով՝ փախստական վաներ էր։

— Բայց այն երկու բարեկամուհեաց անուններն ինչ են։

— Վեհափառ — ըսաւ Սէնդ-Էնյան — հրաման ըրէք որ զիս Պասդիլ դնեն։

— Ինչո՞ւ համար։

— Վասն զի եսասէր եմ և յիմար։ Այնքան հիացեր էի այն ըրած յաղթանակիս և յաջող դիւտիս վրայ, որ բերանս չկրցայ բանալ։ Ակիկ զսա՝ օրիորդ Լա Վալիէրի վրայ միայն հոգ ունենալդ տեսնելով՝ չկարծեցի որ Վեհափառութիւնդ ըսածին այնչափ կարևորութիւն պիտի ցուցնէ. այս ևս ըսեմ որ օրիորդ Շարանդ արտօրինօք ձգեց զնայ օրիորդ Լա Վալիէրին մօտ երթալու համար։

— Օ՛ն, յուսամ որ քեզի չափ բաղդաւոր լինիմ, Սէնդ-Էնյան, եկուր։

— Իմ թագաւորս փառասիրութիւն ունի, ինչպէս որ կ՚տեսնեմ, և չներեր որ տարած որ և է յաղթանակը ձեռքէն հանէ։ Լաւ, կ՚խոստանամ որ երթամ պիտի խղճի մտօք խուզարկելու, և այս ալ կայ որ երեք Շնորհայ մոյն միջոցաւ, մխիթարուն անունը կրնանք իմանալ, և անուամբ՝ զաղանիքը։

— Ո՛հ, ես ալ — ըսաւ թագաւորը — բաւական ունիմ անոր ձայնը լսել զինքը ճանչնալու համար։ Օ՛ն, խօսքը կարենք այս տեղ, և զիս խեղճ Լա Վալիէրի մօտ տար։

— Է՛հ, բայց — մտածեց Սէնդ-Էնյան — աւասիկ սէր մ՚որ կ՚ուրուագրի, և այս պզտիկ աղջկան համար՝ տարօրինակ բան է։ Երբէք այսպիսի բան մը չէի կարծեր։

Եւ որովհետև՝ այս մտածելով՝ թագաւորին ցոյց տուեր էր այն սրահն ուր տարեր էին Լա Վալիէրը՝ թագաւորը ներս մտեր էր։

Սէնդ-Էնյան անոր ետևէն գնաց։

Ածուներուն վրայ նայող մեծ պատուհանի մը մօտ՝ ցած սրահի մը մէջ, Լա Վալիէրը մեծ թեւաթոռի մը վրայ դրուած՝ գլխերային հոտաւէտ օդը կ՚ծծէր լիաշունչ։

Իր անսեղմ կուրծքէն՝ տանթիլները ճմրթուած կ՚լայնէին՝ իր

ուսերուն վրայ ցրուած գեղձան գեղեցիկ մազերուն դանդուրներուն մէջ։

Աչքը նուաղուն էր, այն ինչ մարած հրով լի, խոշոր արտասուօք լի, կ՚ապրէր միայն մեր երազներուն այն աղուոր անուրջներուն պէս որ քնացողին դոց աչաց առջևէն զունատ և ցնորական կ՚անցնին, իրենց թևերը բանալով առանց շարժելու, իրենց շրթունքն՝ առանց ձայն մը հանելու։

Լա Վալիէրի այս անփայլ գունատութիւնն աննկարագրելի հրապոյր մ՚ունէր. մազի և մարմնոյ տառապանքն աղնիւ վշտաց ներդաշնակութիւն մը տուեր էր անոր անուշ կերպարանին, իր թևերուն և իրանին անշարժութիւնն աւելի մեռելի մը նման կ՚ցուցնէր քան թէ կենդանի էակի մը. կարծես թէ ոչ ընկերուհիներուն փսփսուքը կ՚լսէր և ոչ շրջականերէն վեր ելնող հեռաւոր շշուկը։ Ինքն իրեն կ՚խօսակցէր, և իր երկար ու նուրբ ձեռները կ՚սարսռէին ատեն ատեն իբրև անտեսանելի սեղմանց հպումէն։ Թագաւորը ներս մտաւ, առանց անոր գլուխն իմանալու, այնքան ընկղմած էր նա իր մտախոհութեան մէջ։

Հեռուէն տեսաւ այս պաշտելի դէմքն որու վրայ հրավառ լուսինն իր արծաթափայլ ճրագին յստակ լոյսը կ՚թափէր։

— Աստուա՛ծ իմ — գոչեց նա ակամայ երկիւղով մը — մեռած է նա։

— Ո՛չ, ո՛չ, Վեհափառ — ըսաւ Մօնդալէ մեղմիկ — աւելի աղէկ է, ընդ հակառակն։ Այնպէս չէ՞, Լուիզ, միթէ աւելի աղէկ չէ՞ս։

Լա Վալիէր պատասխան մը չտուաւ։

— Լուիզ — շարունակեց Մօնդալէ — թագաւորն է որ կ՚հաճի քու առողջութեանդ վրայ հարցնել։

— Թագաւո՛ր — գոչեց Լուիզ յանկարծ կանգնելով որպէս թէ բոցավառ աղբիւր մ՚իր սիրտը կ՚ողողէր — թագաւորն իմ որպիսութեանս հո՞գ կ՚տանի։

— Այո՛ — ըսաւ Մօնդալէ։

— Ուրեմն թագաւորն անո՛ւ է — ըսաւ Լա Վալիէր, առանց իր չորս գին նայիլ համարձակելու։

— Այս ձայնը, այս ձայնը — ըսաւ Լուի աշխուժիւ Սէնդ-Էնյանի ականջին։

— Է՛հ, բայց — պատասխանեց Սէնդ-Էնյան — Վեհափառութիւնդ իրաւունք ունի, Արևուն սիրուհին է։

— Սուս — ըսաւ թագաւորը։

Յետոյ Լա Վալիէրի մօտենալով,

— Անհանգիստ ես, օրիորդ։ Քիչ մ՚առաջ քեզ մարած իսկ տեսայ պուրակին մէջ։ Ի՞նչ պատճառաւ պատահեցաւ այդ բանը։

— Վեհափառ — թոթովեց խեղճ օրիորդը դողդողալով և անգոյն — ճշմարիտը, չեմ կրնար ըսել։

— Շատ քաջեցիր — ըսաւ թագաւորը — և կարելի է յողնութիւնը . . . ։

— Ո՛չ, Վեհափառ — պատասխանեց Մօնդալէ աշխուժիւ իր բարեկամուհւոյն կողմէ — յողնութիւնը չկրնար լինիլ, վասն զի գիշերուան մէկ մասն արքայական կաղնիին ներքև նստած անցուցինք։

— Արքայական կաղնիի՛ն ներքև — վրայ բերաւ թագաւորը սարսուելով։ — Զէի սխալած և ճիշտ այդպէս էր։

Եւ կոմսին համաձայնութեան ակնարկ մը նետեց։

— Ա՛հ, այո՛ — ըսաւ Սէնդ-Էնյան — արքայական կաղնիին ներքև, Դօնէյ-Շարանդ օրիորդին հետ։

— Ուստի՞ գիտես այդ բանը — հարցուց Մօնդալէ։

— Բայց շատ պարզ կերպով մ՚իմացայ. օրիորդ Դօնէյ-Շարանդ ըսաւ ինձ։

— Ուրեմն ձեզի ըսած պիտի լինի նաև Լա Վալիէրի նուաղման պատճառը։

— Ճշմարիտը, գայլի և գողի մը խօսք ըրաւ, ո՞րն է մոռցայ։

Լա Վալիէր մտիկ կ՚ընէր անքթիթ աչօք, շնչասպառ սրտով, որպէս թէ ճշմարտութեան մէկ մասն արդէն կ՚զգար, իր ուշադրութիւնը կրկնապատկելով։ Լուի այս դիրքն ու վրդովը՝ շարունակող երկիւղի մը հետևանքը սեպեց։

— Բանէ մը մի՛ վախնար, օրիորդ — ըսաւ նոր այլայլութիւնմ՚զգալ սկսելով, զոր չէր կրնար սքօղել — այն գայլն որ այնչափ ահ ազդեց ձեզի, պարզապէս երկոտանի գայլ մ՚էր։

— Մարդ մ՚էր, մարդ մ՚էր ուրեմն — գոչեց Լուիզ — ուրեմն մեզի գաղտնի մտիկ ընող մարդ մը կար։

— Լաւ ուրեմն, օրիորդ, ի՞նչ վնաս կայ եթէ ձեզ մտիկ ընող կ՚գտնուէր։ Արդեօք չլսուելու չափ բաներ ըսիք, ըսա՛ քեզ։

Լա Վալիէր իր երկու ձեռքն էրարու զարկաւ և իսկոյն ճակատին տանելով՝ ջանաց անոր կարմրութիւնը ծածկելու։

— Ո՛հ — հարցուց նա — յանուն երկնից, ո՞վ պահուած էր, ուրեմն ո՞վ լսեց մեր խօսքը։

Թագաւորն առաջ անցաւ անոր մէկ ձեռքը բռնելու։

— Ես էի, օրիորդ — ըսաւ նա անուշ յարգանօք խոնարհութիւն մ՚ընելով — արդեօք քեզի երկիւղ տուի, ակամայ։

Լա Վալիէր մեծ աղաղակ մ՚արձակեց. երկրորդ անգամ ևս բոլորովին ուժաթափ մնաց, և պաղ, ողբաղին, յուսահատ՝ վերստին իր թեւաթոռին մէջ ընկաւ մնաց։

Թագաւորը ժամանակ գտաւ իր թեւը տարածելու, այնպէս որ կիսովին զանի բռնելու կարող եղաւ։

Թագաւորէն և Լա Վալիէրէն երկու քայլ հեռի կեցած՝ Դօնէյ-Շարանդ և Մօնդալէ օրիորդներն անշարժ կեցած և որպէս թէ քար կտրեր էին Լա Վալիէրի հետ իրենց ունեցած խօսակցութիւնը յիշելով, և ոչ իսկ անոր օգնութեան հասնելու փոյթ ունէին՝ թագաւորին ներկայութենէ արգիլուած լինելով, թագաւորը՝ որ մէկ ծունկը գետինը դրած՝ Լա Վալիէրի մարմինն իր թեւովը կ՚բռնէր։

— Միթէ լսեցիք, Վեհափառ — մրմռաց Աթէնաիս։

Բայց թագաւորը պատասխան չտուաւ. իր աչերը Լա Վալիէրի կիսովին գոցուած աչաց վրայ սևեռած էր. անոր կախուած ձեռքն իր ձեռաց մէջ բռներ էր։

— Թշուառակա՛ն — պատասխանեց Սէնդ-Էնյան, որ իր կողմէ կ՚յուսար տեսնել Շարանդ օրիորդին նուաղումը, և որ թեւերը քաց կ՚յառաջանար — և ոչ իսկ ձեր խօսքէն բառ մը կորուսինք։

Բայց հպարտ Աթէնաիս այնպէս շուտով մարող կին չէր. սոսկալի ակնարկ մը ձգեց Սէնդ-Էնյանի վրայ և խոյս տուաւ։

Մօնդալէ՝ աւելի սրտոտ լինելուն՝ դէպ՚ի Լուիզ դիմեց աշ-

խուժիւ, և զանի թագաւորին ձեռքէն ընդունեց, որ արդէն խելքը կ'թոցընէր հողեվարին հոսաւէտ մաղերով իր երեսը ծածկուած տեսնելով։

— Քաջ է — ըսաւ Սէնդ-Էնյան — ահա արկած մը, և եթէ ամենէն առաջ պատմողն ես չլինիմ, անբաղդ մէկը պիտի սեպուիմ։

Թագաւորն անոր մօտ գնաց, դողդոջուն ձայնով և ղայրագին ձեռնով։

— Կոմս — ըսաւ նա — և ոչ բառ մը պիտի հանես բերնէդ։

Խեղճ թագաւորը կ'մոռնար որ ժամ մ'առաջ նոյն մարդուն մի և նոյն հրամանը կ'տար, հակառակ փափաքով մը, այսինքն կ'ուզէր որ այդ մարդը խորհրդապահ չլինէր։

Հետևապէս այս յանձնարարութիւնն առաջինին պէս աւելորդ էր։

Կէս ժամ ետք՝ ամենքը Ֆոնդէնպլօի մէջ գիտէին թէ օրիորդ Լա Վալիէր արքայական կաղնիին ներքև՝ Մոնդալէի և Շարանդի հետ խօսակցութիւն մ'ունեցեր էր, և թէ այս խօսակցութեան մէջ իր սէրն առ թագաւորն խոստովաներ էր։

Շատեր գիտէին նաև որ թագաւորը Լա Վալիէրի վիճակի մասին զգացած անհանգստութիւնը յայտնելէն ետև՝ դեղներ և դող ելեր էր դեղանի նուաղեալն իր թևին մէջ ընդունելով. ուստի բոլոր պալատականներն համոզուած էին որ նոյն ժամանակուան ամենէն երևելի դէպքը վեր ելեր էր, թէ Նորին Վեհափառութիւնն օրիորդ Լա Վալիէրը կ'սիրէր, և թէ հետևապէս իր եղբայրը Ֆիլիպ կրնար հանդիսա ննջել։

Իրօք՝ մայր թագուհին իսկ՝ այս յեղակարծ փոփոխութենէ ուրիշներուն չափ զարմանալով, փութաց յայտնելու նորատի թագուհւոյն և Օրլէանեան Ֆիլիպին։

Միայն տարբեր լեզու բռնեց այս երկու կողմին գործը բացատրելու ատեն. իր հարսին ըսաւ.

— Նայէ անդամ մը, Թերեզ, միթէ չափազանց անիրաւ չէիր թագաւորը մեղադրելով. աւասիկ այսօր կ'ըսեն թէ ուրիշ սիրուհի մը գտեր է, ինչու համար այսօրուանն երէկուանէն աւելի ճշմարիտ պիտի լինէր, և երէկուանն այսօրուանէ։

Եւ Ֆիլիպին ըսաւ, արքայական կաղնիին արկածը պատմելով.

— Քանի անմիտ ես այդ նախանձոտ բնաւորութեամբդ, սիրելիդ իմ Ֆիլիպ։ Ստուգուած է որ թագաւորն այս փոքրիկ Լա Վալիէրի համար խելքը թռուցեր է։ Զգուշացիր այս բանը կնկանդ յայտնելու. թագուհին անորմէ շուտ մը կրնայ իմանալ։

Այս վերջին մտերմական յայտարարութիւնն իր անմիջական արձագանգն ունեցաւ։

Ֆիլիպ՝ վստահ՝ յաղթական՝ գնաց իր կինը գտնելու, և որովհետև տակաւին կէս գիշեր չէր, և հանդէսը մինչև առաւօտեան ժամն երկու պիտի տևէր, անոր ընծայեց թևը պտըտելու համար։

Բայց քանի մը քայլ առնլէն ետք՝ առաջին ըրած բանն եղաւ իր մօրն անհնազանդ գտնուիլը։

— Մի գուցէ թագուհւոյն ըսես թագաւորին վրայ դարձած խօսքերը — ըսաւ նա խորհրդաբար։

— Եւ ինչ կ'պատմեն — հարցուց իշխանուհին։

— Կ'պատմեն թէ եղբայրս տարօրինակ սիրով մը բորբոքեր է։

— Որո՞ւ համար։

— Փոքրիկ Լա Վալիէրի համար։

Մութ էր, իշխանուհին կրնար անտես ժպտիլ։

— Ա՜հ — ըսաւ նա — և ո՞րչափ ատենէ վեր սկսած է այս սէրը։

— Քանի մ'օրէ վեր, ըստ երևոյթին։ Բայց դեռ մութ էր, և այս իրկուն միայն բոյն երևան եկաւ։

— Թագաւորը լաւ ճաշակ ունի — ըսաւ իշխանուհին — ըստ իս այն փոքրիկ աղջիկը չքնաղ է։

— Այնպէս կ'երևի ինձ որ կ'ծաղրես, սիրելիդ իմ։

— Ե՞ս, և ինչպէս։

— Ինչ և է, այս տրիփը, եթէ ոչ Լա Վալիէրի ուրիշի մը երջանկութիւն պիտի պատճառէ։

— Բայց — վրայ բերաւ իշխանուհին — ճշմարիտը, այնպէս կ'խօսիս, Ֆիլիպ, որպէս թէ իմ պատոյ օրիորդիս սրտին խորը կարդացած լինիս։ Ո՞վ կ'ըսէ թէ թագաւորին սիրոյն պատասխանելու պիտի հաւանի նա։

— Եւ ուստի՞ գիտես դու որ չպիտի պատասխանէ։

— Նա Պրաժլօն դերկոմսը կ'սիրէ։

— Ա՛հ, այդպէս կարծես։

— Մինչև անդամ նշանուած է։

— Այո՛, ժամանակաւ էր։

— Հիմակ չէ՞։

— Բայց չգիտես որ երբ Թագաւորին հաւանութիւնն եկան խնդրելու ամուսնութեան համար, Թագաւորը հրաման տալու մերժեց։

— Մերժե՞ց։

— Այո՛, թէև նոյն իսկ Լա Գէր կոմսն անձամբ եկաւ այս հրամանը խնդրելու, թէև Թագաւորը զանի կ'պատուէ, գիտես, և մեծ համարում ունի վրան, վասն զի երբեմն դահակալութեան ժամանակ մեծ դեր խաղաց, նոյնպէս շատ ատենէ վեր պատահած քանի մը դիպպոյ մէջ։

— Լաւ ուրեմն, խեղճ սիրահարները քիչ մ'ատեն պէտք է սպասեն որ Թագաւորն իր միտքը փոխէ. դեռ դեռատի են, ժամանակ ունին։

— Ա՛հ, սէրս — ըսաւ Գիլլիպ ինքն ալ ըստ կարգի ծիծաղելով — կ'նայիմ որ գործին ամենէն աղուր մասը չգիտես։

— Ո՛չ, չգիտեմ։

— Ինչ որ չափազանց Թագաւորին սիրտը շարժեց։

— Թագաւորին սիրտը չափազանց շարժեցա՞ւ։

— Այո՛, սիրտը։

— Բայց ի՞նչ բանէ, զրուցէ, շուտ ըսէ, նայիմ։

— Շատ վիպասանական արկածէ մը։

— Գիտես արդէն թէ որչափ կ'սիրեմ այդ տեսակ արկածներ, և դեռ չես խօսիր — ըսաւ Իշխանուհին անհամբերութեամբ։

— Լաւ ուրեմն, ահա ըսեմ. . . ։

Եւ Գիլլիպ կանգ մ'առաւ։

— Մտիկ կ'ընեմ։

— Արքայական կաղնիին ներքև. . . գիտե՞ս ուր է արքայական կաղնին։

— Փոյթ չէ. արքայական կաղնիին ներքև, կ'ըսէիր, ապա՞։

— Լաւ, օրիորդ Լա Վալիէր ինքզինքն առանձին կարծելով իր երկու բարեկամուհիներուն հետ, Թագաւորին համար ունեցած սէրն անոնց գաղտնապէս յայտնեց։

— Ա՛հ — ըսաւ Իշխանուհին անհանգիստ լինիլ սկսելով — իր սէրը Թագաւորին համար։

— Այո՛։

— Եւ ե՞րբ անցաւ այդ բանը։

— Ժամ մը կայ։

Իշխանուհին սարսուռ մ'ընդցաւ։

— Եւ միթէ այդ սէրն ո՛չ ոք չէր գիտեր։

— Ո՛չ ոք։

— Եւ ո՞չ իսկ Նորին Վեհափառութիւնը։

— Եւ ո՛չ իսկ Նորին Վեհափառութիւնը։ Այն փոքրիկ օրիորդն իր գաղտնիքն իր սրտին խորը կ'պահէր, երբ յանկարծ զայն չկրնալով պահել վեր հանեց։

— Եւ այդ անհեթեթ լուրն ուստի՞ առիր։

— Բայց ամէն մարդ գիտէ։

— Ամէն մարդ ուստի՞ գիտէ ուրեմն։

— Նոյն իսկ Լա Վալիէրի բերնէն, որ այս սէրը Մոնդալէի և Դոնէյ-Շարանդի կ'խոստովանէր։

Իշխանուհին լռեց և յանկարծական շարժմամբ իր երկանը ձեռքը թողուց։

— Ժամ մը կայ որ այս խոստովանութիւնը կ'ընէր — հարցուց Իշխանուհին։

— Գրեթէ ժամ մը։

— Եւ միթէ Թագաւորն այս բանիս տեղեակ է։

— Բայց ահա Ճիշտ այս կիտին մէջն է խնդրոյն վիպասանական կողմը։ Թագաւորը Սէնդ-Էնյանի հետ արքայական կաղնիին ետին էր, և այս հետաքրքրալի խօսակցութիւնը լսեց առանց բառ մ'անդամ կորուսելու։

Իշխանուհին այնպէս իմն զգաց որ սրտին հարուած մը կ'զարնեն։

— Բայց ես այնուհետև թագաւորը տեսայ — ըսաւ անզգուշաբար — և ինձ այս մասին խօսք մ՚անգամ չըրաւ։

— Տէր կենդանի — ըսաւ Ֆիլիպ յաղթանակող ամուսնոյ մը պէս միամիտ — ՝ի հարկէ պիտի զգուշանար այդ մասին քեզի բան մ՚ըսելու, քանի որ ամենուն կ՚ապսպրէր որ քեզի չպատմեն։

— Ի՞նչ հրամեցիր — զոչեց իշխանուհին զայրացած։

— Ըսի որ խնդիրը քեզնէ գաղտնի պահել կ՚ուզէին։

— Եւ ինչո՞ւ համար ուրեմն այդ բանն իզնէ գաղտնի կ՚պահէին։

— Առ ահի որ բարեկամութիւնդ չյորդորէ քեզ նորատի թագուհւոյն բան մ՚ըսելու, և այս է բոլոր պատճառը։

Իշխանուհին գլուխը ծռեց. կարեվէր վիրաւորուած էր։

Այն ատեն հանգստութիւն չունեցաւ մինչև որ թագաւորը չգտաւ։

Որովհետև թագաւոր մ՚իր տէրութեան մէջ բնականապէս ամենէն ետքը կ՚իմանայ թէ իր վրայ ինչեր կ՚խօսին, ինչպէս որ սիրող մ՚իր սիրուհւոյն վրայ խօսուած բաներն ինք միայն չգիտէ, երբ թագաւորը հանդիպեցաւ իշխանուհւոյն որ զինքը կը սիրտէր, փոքր ինչ այլայլած՝ այլ միշտ փութաջան և շնորհալի՝ զանի դիմաւորեց։

Իշխանուհին սպասեց որ ամենէն առաջ թագաւորը խօսի Լա Վալիէրի վրայ։

Ապա՝ ըստ որում չէր խօսեր.

— Հապա այն փոքրիկ աղջիկն ի՞նչպէս է — հարցուց նա։

— Ո՞ր պզտիկ աղջիկը — հարցուց թագաւորը։

— Լա Վալիէր. . . . : Մի՞թէ չըսի՞ք ինձ, Վեհափառ, որ մրրած է։

— Միշտ դէշ վիճակի մէջ է — ըսաւ թագաւորն ամենամեծ անտարբերութիւն կեղծելով։

— Բայց այդ բանը պիտի վնասէ հանելիք շշուկիդ, Վեհափառ տէր։

— Ո՞ր շշուկին։

— Թէ անոր վրայ հոգ կ՚տանիք։

— Ո՛հ, յուսամ որ նոյն բանը պիտի տարածուի — պատասխանեց թագաւորն անուշադիր։

Իշխանուհին դէռ ևս սպասեց. կ՚ուզէր նա իմանալ թէ արդեօք թագաւորը պիտի խօսի՞ իրեն արքայական կաղնիին ներքև անցած դարձածին վրայ։

Բայց թագաւորը խօսք մ՚անգամ չըսաւ այս մասին։

Իր կողմէն ալ՝ իշխանուհին՝ սոյն արկածին վրայ բերանը չբացաւ, այնպէս որ թագաւորն անորոմ հեռացաւ առանց ամենևին գաղտնիքն ըսելու։

Իշխանուհին այն ինչ տեսաւ որ թագաւորը կ՚հեռանայ՝ որ Սէնդ-Էնյանը փնտռեց։ Սէնդ-Էնյանը գտնելը դիւրին էր, հեռաւորդ նաւերուն կ՚նմանէր որոնք միշտ մեծ նաւերուն ետևէն կ՚երթան։

Սէնդ-Էնյան Ճիշտ իշխանուհւոյն ուղած մարդն էր իշխանուհւոյն գտնուած մտքի տրամադրութեան մէջ։

Աւելի արժանաւոր ականջ մը կ՚փնտռէր որպէս զի դէպքը մանրամասն պատմէ։

Հետևաբար և ոչ իսկ բառ մը խնայեց իշխանուհւոյն։ Յետոյ երբ աւարտեց.

— Խոստովանէ — ըսաւ իշխանուհին — որ այս շատ աղուոյ վէպ մ՚է։

— Վէպ, ոչ երբէք, հապա՝ պատմութիւն։

— Խոստովանէ, թէ վէպ կամ պատմութիւն, նոյնը քեզի պատմած են ինչպէս որ կ՚պատմես ինձ, բայց դու ներկայ չէիր։

— Տիկին, պատուոյս վրայ կ՚ըսեմ որ անդ էի։

— Եւ մի՞թէ կարծես թէ այդ սիրոյ յայտարարութիւնը թագաւորին վրայ ներգործութիւն ըրած է։

— Ինչպէս որ Շարանդ օրիորդին իմ՚ վրայ — պատասխանեց Սէնդ-Էնյան։ — Տիկին, խնդրեմ, մտիկ ըրէք, օրիորդ Լա Վալիէր թագաւորն արևուն նմանցուց, մի՞թէ գթութիւն չէ՞ այս։

— Թագաւորն այդպիսի շողոքորթութիւններէ չըմնուիր։

— Տիկին, թագաւորն որչափ մարդ նոյնչափ արև է; և զինքն աչքս տեսայ քիչ մ՚առաջ երբ Լա Վալիէր անոր դիրկն ընկաւ։

— Լա Վալիէր թագաւորին գիրկն ընկաւ։

— Ո՛հ, ամենաշնորհալի պատկեր մ՚էր այն, երևակայեցէք որ Լա Վալիէր կռնակի վրայ ընկած էր և թէ . . . ։

— Լաւ ուրեմն, ինչ տեսար, խօսէ, ըսէ նայիմ։

— Տեսայ ինչ որ տասն ուրիշ անձեր նոյն պահուն ինձի պէս տեսան, երբոր Լա Վալիէր անոր գիրկն ընկաւ, քիչ մնայ թագաւորը պիտի մարէր։

Իշխանուհին թեթև ճիկ մը հանեց, իր խուլ բարկութեան միակ նշանը։

— Շնորհակալ եմ— ըսաւ նա ջլաձիգ յուզմամբ ծիծաղելով — սքանչելի վիպարան մ՚ես դու, Պ. Սէնդ-Էնյան։

Եւ առանձին, հեղձամղձուկ դէպ՚ի դղեակը վազեց իշխանուհին։

Ե

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՊՏՈՑՏՔ

Ֆիլիպ արքայազնն՝ իշխանուհիէն հեռացեր էր խիստ ուրախ գլուարթ, և որովհետև նոյն օրը շատ յոգներ էր, իր սենեակը դարձեր էր, ամէն մարդիկը թողլով որ ըստ հաճոյս իրենց գիշերն անցընեն։

Իր սենեակը վերադառնալով՝ արքայազուն իր գիշերային հագուստը դնելու մեծ հոգ սարեր էր, որ իր գոհունակութեան անդուսպ եռանդէն աւելի ևս կ՚սաստկանար։

Ուստի՝ մինչդեռ իր սենեկապանները կ՚աշխատէին, պարեկին գլխաւոր եղանակներն երգեց, ինչպէս որ վիներն ածեր և թագաւորը պարեր էր։

Ցետոյ իր դերձակները կոչեց, հետևեալ օրուան զգեստները բերել տուաւ, և որովհետև շատ գոհ էր անոնցմէ՝ ընծաներ բաշխեց անոնց։

Վերջապէս՝ երբ Լօրէն ասպետն՝ անոր ներս մտնելը տեսնելով ըստ կարգի ներս մտաւ, արքայազունը մեծ բարեկամական ցոյցեր ըրաւ Լօրէն ասպետին։

Ասի իշխանին բարև տալէն ետև՝ պահ մը լուռ կեցաւ, իբրև հրացանաձիգ պարապլուխ մ՚որ կ՚դիտէ հասկընալու համար թէ ո՞ր կողմէ պիտի սկսի կրակը, ապա որպէս թէ որոշում մ՚ըրած է,

— Միթէ զարմանալի բան մը դիտեցիք, տէր իմ— ըսաւ նա։

— Ո՛չ, ի՞նչ է այդ։

— Այս է՝ 'ի վերին երեսս նորին վեհափառութեան ըրած դէշ ընդունելութիւնը կիշին։

— Ի վերին երեսս։

— Այո՛, անտարակոյս, վասն զի իրօք անոր ներեց։

— Բայց ես այդ չտեսայ, ես — ըսաւ իշխանը։

— Ինչպէս, միթէ չտեսա՞ք որ փոխանակ զանի յաքսոր վերադարձնելու, ինչպէս որ բնական էր, անոր հրաման առաւ պարեկին մէջ իր դերը խաղալու՝ տարօրինակ գիմադրութեանը չնայելով։

— Եւ միթէ կարծես թէ թագաւորը դէշ ըրաւ, ասպետ — հարցուց արքայազունը։

— Միթէ դուք ալ իմ կարծիքս չունիք, իշխան։

— Ո՛չ բոլորովին, սիրելի՛ իմ ասպետ, և կ՚հանիմ թագաւորն որ թշուառի մը դէմ զայրոյթ չցցուց, թշուառ մ՚որ աւելի յիմար է քան թէ չարամիտ։

— Ճշմարիտը — ըսաւ ասպետը — ըստ իս, կ՚խոստովանիմ որ այս մեծանձնութիւնը զիս չափազանց կ՚հիացնէ։

— Եւ ինչո՞ւ համար — հարցուց Ֆիլիպ։

— Վասն զի ես կարծէի թէ թագաւորն աւելի նախանձոտ պիտի գտնեմ— պատասխանեց ասպետը չարամտութեամբ։

Քանի մը վայրկենէ վեր Ֆիլիպ կ՚դիտէր որ իր մտերմին խօսքին ներքև դրդիչ բան մը կար. այս վերջին բառը վառօդին կրակ դրաւ։

— Նախանձո՞տ — գոչեց արքայազունը — նախանձո՞տ, ի՞նչ կ՚նշանակէ այդ բառը. ի՞նչ բանէ նախանձոտ, կամ որմէ՞ նախանձոտ, խնդրեմ, ըսէ նայիմ։

Ասպետը գիտեց որ չարանենդ բան մը փախեր էր բերնէն ինչպէս որ երբեմն կ'փախչի էր։ Ուստի փորձեց զայն ուղղելու, քանի որ կարող էր ընելու։

— Իր իշխանութեան նախանձոտ — ըսաւ նա կեղծ միամտութեամբ մը — ինչ բանէ կ'ուզէք որ թագաւորը նախանձի։

— Ա՛հ — ըսաւ արքայազունը — շատ լաւ։

— Արդեօք զո՞ւք խնդրեցիք այս սիրելի Կիշի ներողութիւնը — շարունակեց ասպետը։

— Եւ՞, ճշմարիտը ո՛չ — ըսաւ արքայազունը — Կիշ մտացի և արիասիրտ պատանի մ'է, բայց իշխանուհւոյն հետ թեթև վարուեցաւ, և անոր ո՛չ բարիքն և ո՛չ չարիքը կ'ուզեմ։

Ասպետը փորձ փորձեր էր թոյնը թափել Կիշի վրայ՝ ինչպէս որ թագաւորին վրայ փորձեր էր. բայց կարծեց գիտել որ ժամանակը ներողութեան ժամանակ է, և մինչև անգամ կատարեալ անտարբերութեան, և թէ՝ խնդիրը պարզելու համար, պէտք պիտի լինէր իրականութիւնն արքայազնին աչքին զարնել։

Այս խաղով երբեմն ուրիշները կ'այրէ մարդ՝ բայց ստէպ ինքզինքը կ'այրէ։

— Շատ աղէկ, շատ աղէկ — ըսաւ ասպետն իւրովին — Վարդին պիտի ասեմ. իմ մէկ ամիսուան մէջ երբեմն նա մէկ օրուան մէջ պիտի կատարէ, վասն զի՝ թոռ մեղք չհամարէ Աստուած, կամ լաւ ևս թոռ Աստուած անոր մեղք չսեպէ, կարծեմ թէ նա իրեն աւելի նախանձոտ է։ Ասկից զատ՝ ինձ պէտք եղածը Վարդ չէ, այլ գեղեցիկ մը, և այս ամէն բանի մէջ ես տեսած չունիմ։ Արդարև ծանրակշիռ բան մ'է որ Կիշ վերադառնայ երբոր զանի վնասած էին, բայց ամէն ծանրակշիռ բան կ'վերնայ երբ մտածենք որ Կիշ դարձաւ այն միջոցին որ իշխանուհին անորմէ երես կ'դարձնէ։ Իրօք՝ իշխանուհին այժմ թագաւորին հոգն ունի, այս ակներև է. բայց՝ ոչ միայն չեմ կարող, և հարկ չկայ խածատել թագաւորը, այլ իշխանուհին թագաւորին համակրութիւն չպիտի զգայ, եթէ՝ ինչպէս որ կ'ըսուի, թագաւորն իշխանուհին զանց ընէ։ Ասկից սա կ'հետևի որ պարտաւոր ենք հանդարտ մնալ և՝ նոր սիրային արկածի մը սպասել, քանի որ այս պիտի որոշէ հետևանքը։

Եւ այս ըսելով՝ ասպետը տարածուեցաւ այն թևաթոռին վրայ, ուր կ'նստէր արքայազնին հրամանատ՝ անոր ներկայութեան, և ուրիշ չարահնար խօսքեր ընելու պէտք չտեսնելով՝ այնպէս պատահեցաւ որ Լօրէն ասպետն այլ ևս խելք չունէր ուրիշ բանի համար։

Բարեբաղդօրէն՝ արքայազունն այն ատեն զուարթ բնութեանը մէջ էր, ինչպէս որ ըսինք, և փոյթ չընաւ ասպետին դիտողութիւնները, մինչև որ սպայ և սպասաւոր ճամբելով՝ իր ննջարանն անցաւ։

Ներս մտնելու ատեն Լօրէն ասպետին ապսպրեց որ իր յարդանքը մատուցանէ իշխանուհւոյն և անոր ըսէ թէ՝ լուսինը զով լինելուն՝ արքայազունն որ իր ակռաներուն ցաւէն կ'երկնչէր, այլ ևս ծառաստանը չպիտի իջնէր բոլոր գիշերը։

Ասպետն իշխանուհւոյն սենեակը մտաւ այն միջոցին որ իշխանուհին կ'վերադառնար իր բնակարանը։

Իրրև հուատարիմ բանբեր այս յանձնարարութիւնը կատարեց, և ամենէն առաջ գիտեց անտարբերութիւնը, մինչև անգամ վերդովմունքն որով իշխանուհին իր ամուսնոյն յայտարարութիւնն իմացաւ։

Ասպետը կարծեց թէ ասոր մէջ նոր բան մը կայ։

Եթէ իշխանուհին այդ տարօրինակ կերպարանքով դուրս ելնէր, անոր եռևէն պիտի երթար։

Բայց իշխանուհին ներս կ'մտնէր, ուստի ընելու բան մը չկար. իր կրուկին վրայ շրջրջեց իրրև անգործ արագիլ մը, օդին հարց ու փորձ ըրաւ, նոյնպէս երկրին ու ծովուն, գլուխը ցնցեց և մեքենապէս ասդիս անդին ընկաւ այնպէս որ պարտիզին ճամբան գտնէ։

Այն ինչ հարիւր քայլ առաւ որ երկու երիտասարդաց հանդիպեցաւ որ իրարու թևէ բռնած՝ կ'քալէին, գլխիկոր, ճամբուն վրայի փոքրիկ խիճերն ոտնով գլորելով, և այս անորոշ զբօսանքով իրենց մտածութիւնները կ'շարունակէին։ Այս երիտասարդներն էին Պ. Կիշ և Պրաժլօն։

Ամէն անգամուն պէս՝ ասոնց տեսքը Լօրէն ասպետին վրայ

ընդաբոյս ներհակութիւն մ՚ազդեց։ Բայց դարձեալ անոնց բարձրէն ուղջոյն մը տուաւ, և փոխարէնը շահով ստացաւ։

Ցեռոյ տեսնելով որ ծառատանն երթալով կ՚ամայանար, Ճրագները մարելու վրայ էին, առաւօտեան քամին փչելու կ՚սկսէր, ձախ կողմը զարկաւ և փոքրիկ բակէն դղեակը մտաւ։ Անոնք աջ կողմը բռնեցին և իրենց ճամբան շարունակեցին դէպ՝ ի մեծ պուրակը։

Այն միջոցին որ ասպետը՝ դաղտնի մուտքը տանող փոքրիկ սանդղէն վեր կ՚ելնէր, կին մը տեսաւ, որու ետևէ ուրիշ կին մը կ՚երթար, և այս կինն երևցաւ այն կամարին ներքև որ պղտիկ դաւթէն մեծ դաւիթը կ՚տանէր։

Այս երկու կանայք շտապաւ կ՚քալէին և իրենց մետաքսէ շրջազգեստին շրշունն արդէն մթին դիշերուան մէջ զիրենք կ՚մատնէր։

Այն լոգկին ձևը, այն վայելուչ հասակը, այն խորհրդաւոր և միանգամայն վէս քալուածն որ այս երկու կանայքը կ՚զանազանէին, նա մանաւանդ տարբերակողը, ասպետին ուշը գրաւեցին։

— Ահա երկու կին զոր անտարակոյս կ՚ճանչեմ— ըսաւ իւրովի փոքրիկ գրանդին յետին աստիճանին վրայ կայ առնլով։

Եւ ապա՝ երբ իր որսորդ բարակի բնազդումով անոնց հետևելու կ՚պատրաստուէր, իր սպասաւորներէն մին՝ որ անոր ետևէն կ՚վազէր քանի մը վայրկենէ վեր, զինքը կեցուց.

— Պարոն — ըսաւ — սուրհանդակն եկաւ։

— Լաւ, լաւ — պատասխանեց ասպետը։ — Ժամանակ ունինք, վաղը կ՚նայիմ։

— Բայց ստիպողական նամակներ կան զորս թերևս կարդալու մեծ հաճոյք պիտի զգաք, ասպետ։

— Ա՛հ — ըրաւ ասպետը — և ուստի՞ են այդ նամակները։

— Մին Անկլեայէն կ՚գայ, և միւսը Քալէէն. այս վերջինը յատուկ սուրհանդակ մը բերաւ, կ՚երևի թէ շատ կարևոր է։

— Քալէէ՞ն։ Եւ ո՞վ կ՚գրէ ինձ Քալէէն, չեմ իմանար։

— Կարծեմ թէ ձեր բարեկամ Վարդ կոմսին զիրն է, ինչպէս որ հասցէէն հասկըցայ։

— Ո՛հ, ուրեմն վեր պիտի ելնեմ— գոչեց ասպետն խկոյն իր լրտեսութեան խորհուրդը մոռնալով։

Եւ իրօք վեր ելաւ, մինչդեռ երկու անծանօթ կանայք իրենց մտած բակին դիմացը գտնուող բակին ծայրը հասնելով անհերևոյթ կ՚լինէին։

Մենք այս կանանց պիտի հետևինք, թողլով որ ասպետը բոլորովին իր գրակցութեամբ զբաղի։

Հովանոցին ներքև հասնելով՝ առաջինը փոքր ինչ շնչասպառ կայ առաւ և իր գլխանոցը վերցնելով զգուշութեամբ,

— Միթէ տակաւին հեռո՞ւ ենք այն ծառէն — ըսաւ նա։

— Ա՛հ, այո՛, իշխանուհիս, հինգ հարիւր քայլէն աւելի կայ. բայց, իշխանուհիս, պահ մը կեցէք. այս կերպով չպիտի աւելի քալէք։

— Իրաւունք ունիս։

Եւ իշխանուհին, վասն զի նոյն ինքն էր, ծառի մը կռթնեցաւ։

— Նայինք, օրիորդ — ըսաւ նա պահ մը շունչ առնլէն ետև — իմնէ բան մը մի՛ պահեր, ճշմարտութիւնն ըսէ ինձ։

— Ո՛հ, տիկին, ահա արդէն սաստիկ կ՚խօսիք — ըսաւ նորատի օրիորդն այլայլեալ ձայնով մը։

— Ո՛չ, սիրելիդ իմ Ամէնահիս, սիրտդ հանդարտ պահէ, ես քեզի չեմ սաստեր բնաւ։ Ասոնք իմ գործերս չեն, ՚ի հարկէ։ Անհանգիստ ես, թէ արդեօք արքայական կաղնիին ներքև ծանր բան մ՚ըսիք, կ՚վախնաք որ արդեօք թագաւորը վիրաւորած են, և ես ինքս ալ ապահով լինիլ կ՚ուզեմ թէ արդեօք ձեր ըսածները լսած են։

— Ո՛հ, այո՛, տիկին, թագաւորը մեզի շատ մօտ էր։

— Բայց՝ վերջապէս՝ այնչափ բարձր չէիք խօսեր և անշուշտ ձեր ըսածներէն խօսք մը կորսուած է։

— Տիկին, կարծէինք թէ բոլորովին միայնակ էինք։

— Եւ միթէ երբ՞ հոգի էիք։

— Այո՛, Լա Վալիէր, Մօնդալէ և ես։

— Այնպէս որ դու անձամբ թագաւորին վրայ թեթև կերպով խօսեցար։

— Կ՚վախնամ որ այդպէս է։ Բայց դարձեալ կ՚յուսամ որ Ձեր Բարձրութիւնը շնորհ կ՚ընէ զիս արդարացնելու Նորին Վեհափառութեան առջև, այնպէս չէ՞, տիկին։

— Եթէ հարկ կայ, կ'խոստանամ քեզի։ Սակայն, ինչպէս որ կ'ըսէի, լաւ ևս է չարիքին առաջը չերթալ և մանաւանդ աղէկ մը ստուգել թէ արդեօք չարիք մ'եղած է։ Մութ գիշեր է, և սա անտառներու ներքև մթագոյն է։ Թագաւորը քեզ ճանչցած չպիտի լինի։ Եթէ խօսքը մենք բանանք, քեզ մատնած պիտի լինինք։

— Ո՛հ, տիկին, տիկին, թէ որ օրիորդ Լա Վալիէրը ճանչեցին, գիս ալ ճանչած են։ Այս ևս կայ որ Պ. Սէնդ-Էնյան այս մասին կասկած մը չթողուց։

— Բայց վերջապէս՝ կ'երևի թէ շատ անպատեհ բաներ կ'ըսէիք թագաւորին վրայ։

— Ամենևին, տիկին, ամենևին։ Ուրիշ մ'է որ շատ անպատեհ բաներ գիտէ, և այն միջոցին իմ խօսքերս իրեն խօսքերուն հետ հակապատկեր մ'ըրած պիտի լինին։

— Այն Մօնդալէն որչափ թեթևամիտ է — ըսաւ իշխանուհին։

— Ո՛հ, Մօնդալէն չէ։ Մօնդալէն բան մը չըսաւ, այլ ըսողն էր Լա Վալիէր։

Իշխանուհին դող ելաւ որպէս թէ արդէն այս բանս կատարեալապէս չպիտէր։

— Ո՛հ, ո՛չ, ո՛չ — ըսաւ նա — թագաւորը բան մը լսած չպիտի լինի։ Բայց դարձեալ հիմակ փորձը պիտի ընենք քանի որ ասոր համար վար իջանք։ Ցոյց տուր ինձ կաղնին։

Եւ իշխանուհին ճամբայ ընկաւ։

— Միթէ գիտես թէ ուր է — շարունակեց նա։

— Բա՛ր, այո՛, իշխանուհիս։

— Եւ պիտի կարենամ գտնել։

— Աչքս գոց կրնամ գտնել։

— Ուրեմն սքանչելի է։ Ձեր գտնուած նստարանին վրայ պիտի նստիս, այն նստարանին վրայ ուր կ'գտնուէր Լա Վալիէր, և նոյն ձայնով ու նոյն իմաստով պիտի խօսիս, ես թփին մէջ պիտի պահռըտիմ, և եթէ լսուի ձայնդ, քեզի պիտի գամ յայտնելու։

— Այո՛, տիկին։

— Ուստի եթէ իրօք այնչափ բարձր խօսեցաք որ թագաւորը ձեզ լսեց, լաւ ուրեմն . . . ։

Ամէնախս սկսուած խօսքին վերջը մնատանջութեամբ սպասել կ'երևէր։

— Լաւ ուրեմն — ըսաւ իշխանուհին խեղդուկ ձայնով մը անշուշտ արագ արագ քալելուն — լաւ ուրեմն, ձեզ պիտի պաշտպանեմ. . . ։

Եւ իշխանուհին աւելի շուտ քալել սկսաւ։

Յանկարծ նա կայ առաւ։

— Միտքս բան մը կ'գայ — ըսաւ նա։

— Ա՛հ, աղէկ բան մը պիտի լինի անշուշտ — պատասխանեց օրիորդ Դօնէյ-Շարանդ։

— Մօնդալէ ձեր երկուքին չափ շփոթած պիտի լինի։

— Ո՛չ այնչափ, վասն զի անոր յանցանքը նուազ է, քանի որ աւելի քիչ խօսեցաւ։

— Փոյթ չէ, նա ձեզ պզտիկ ստով մը կրնայ օգնել։

— Ո՛հ, մանաւանդ երբ իմանայ որ դուք, իշխանուհիս, մեր հոգը կ'տանիք։

— Լա՛ւ, կարծեմ թէ մեզի պէտք եղածը գտայ, աղջիկս։

— Ի՞նչ երջանկութիւն։

— Պէտք է ըսէք որ երեքնիդ ալ գիտէք որ թագաւորն այս ծաւին կամ թփին ետևը ներկայ էր, չգիտեմ ուրն է, նոյնպէս Պ. Սէնդ-Էնյանի ներկայութիւնը գիտէիք։

— Լա՛ւ, իշխանուհիս։

— Վասն զի, պէտք չէ անգէտ լինիս, Ամէնախս, որ Սէնդ-Էնյան իրեն համար քու արտասանած մէկ քանի գոյութիւն խօսքդ մեծ բանի տեղ կ'գնէ։

— Է՛հ, իշխանուհիս, քաջ կ'գիտէք որ մեր խօսքը լսուեր է — գոչեց Ամէնախս — քանի որ Սէնդ-Էնյան լսեր է։

Իշխանուհին թեթև խօսք մ'ըսեր էր՝ ուստի շրթերը խածաւ։

— Ո՛հ, քաջ գիտէք թէ ինչ մարդ է Սէնդ-Էնյան — ըսաւ նա — թագաւորին շնորհը խելքը գլխէն առեր է, և բերանը բացած խենթ ու խելաւ կ'խօսի, երբեմն իսկ կ'հնարէ։ Բայց խնդիրն այս չէ։ Թագաւորը լսեց թէ ոչ։ Առասիկ խնդիրը։

— Լաւ ուրեմն, իշխանուհիս, ճիշտը կ'ուզէք, Թագաւորն ամէն բան լսեց — ըսաւ Ամէնախս յուսահատ։

— Ուրեմն ըսածս ըրէ. երեքնիդ ալ աղատ համարձակ պնդեցէք, կ'իմանամ, երեքնիդ ալ, վասն զի եթէ միոյն վրայ կասկածին, միւսներուն համար ալ պիտի կասկածին, պնդեցէք, ըսի, որ երեքնիդ ալ գիտէք թէ Թագաւորն ու Սէնդ-Էնյան, այն տեղ ներկայ էին և թէ 'ի շնորհս ունկնդիրներուն զուարճանալ ուզեցիք։

— Ա՛հ, իշխանուհիս, 'ի շնո՛րհս Թագաւորին, երբէք այդ չպիտի իշխենք ըսելու։

— Բայց կատակ, պարզ կատակ, անմեղ հեղնութիւն մ'է, ներելի կանանց որոց մարդիկ խաղ խաղալ կ'ուզեն։ Այս կերպով ամէն բան կ'պարզուի։ Ինչ որ Մօնդալէ ըսաւ Մալիքօրնի վրայօք, կատակ էր, ինչ որ ըսիր Սէնդ-Էնյանի մասին, կատակ, ինչ որ Լա Վալիէր ըսաւ . . . ։

— Նորէն ըսելու պատրաստ է։

— Միթէ ստոյգ ես։

— Այո՛, կրնամ երդնուլ։

— Լաւ, այդ ալ պատճառ մ'է որ խնդիրը կատակի կ'դառնայ. Պ. Մալիքօրն բարկանալու բան մը չպիտի ունենայ, Պ. Սէնդ-Էնյան պիտի շփոթի, անոր վրայ պիտի ծիծաղին՝ փոխանակ ձեր վրայ ծիծաղելու։ Վերջապէս Թագաւորը պիտի պատժուի իրեն անարժան հետաքրքրութեան համար։ Եթէ փոքր ինչ Թագաւորին վրայ ալ ծիծաղին այս պարագայիս մէջ, չեմ կարծեր որ սրդողի։

— Ա՛հ, տիկին, ճշմարիտը բարութեան և խելքի կողմէ հրեշտակ մ'էք։

— Այդպէս կ'պահանջէ իմ շահս։

— Ի՞նչպէս։

— Կ'հարցնես թէ ի՞նչ շահ ունիմ իմ պատոյ աղջկանց խնայելով բառախաղը, անախորժ ընթացքներ և գրպարտութիւններ։ Ափսո՛ս, գիտես, աղջիկս, արքունիքն այսպիսի ոնոտի բաներու համար ներողամտութիւն չունի։ Բայց ահա բաւական ատենէ վեր կ'քալենք, միթէ արդէն չհասա՞նք։

— Տակաւին յիսուն վաթսուն քայլ ունինք առնելու։ Զախ կողմը դառնանք, տիկին, խնդրեմ։

— Այդպէս օրիորդ Մօնպալէի մասին ստոյգ ես — ըսաւ իշխանուհին։

— Ո՛հ, այո՛։

— Ի՞նչ որ կամենաս պիտի ընէ՞։

— Ամէն բան։ Շատ պիտի ուրախանայ։

— Իսկ Լա Վալիէրի գալով . . . — յարեց իշխանուհին։

— Ո՛հ, Լա Վալիէրի համար դժուարին պիտի լինի, իշխանուհիս. վասն զի սուտ խօսիլ չսիրեր։

— Սակայն եթէ ստելու մէջ շահ ունենայ . . . ։

— Կ'վախնամ որ այդ նկատումն ալ իր միտքը փոխելու չպիտի զօրէ։

— Այո՛, այո՛ — ըսաւ իշխանուհին — արդէն խմացուցեր էին ինձ այդ բանը. շատ փափկասուն անձ մ'է, տեսակ մը պչրողներէն որ զԱստուած սուաջ կ'քշեն անոր ետևը պահուելու համար։ Բայց եթէ չուզեր սուտ խօսիլ, ինչպէս արքունեաց ծաղը պիտի լինի, որչափ պիտի բարկացնէ Թագաւորն այն իրեն ծիծաղելի և անվայելուչ խոստովանութեամբը. այն ատեն օրիորդ Լա Պոմ Լը Պլան տը Լա Վալիէր Թոդ պատրաստ պտնուի երբ զինքն իր ապարակը զրկեմ, որպէս զի այն տեղը՝ 'ի Դուբէն կամ 'ի Պլէսլուա, չգիտեմ ուր, կարենայ համարձակ զգացում ծախել և հովուական վէպեր շինել։

Այս խօսքերն այնպիսի ուժգնութեամբ և խստութեամբ արտասանեց իշխանուհին որ օրիորդ Դօնէյ-Շարանդ ահաբեկ մնաց։

Հետևապէս՝ ինքն իր մասին առաջադրեց որչափ որ պէտք էր սուտ խօսիլ։

Ահա այս լաւ տրամադրութեամբ էր որ իշխանուհին և իր ընկերուհին արքայական կաղնիին մօտ հասան։

— Աւասիկ հասանք — ըսաւ Դօնէյ-Շարանդ։

— Հիմա պիտի նայինք թէ կ'լսուի՞ — պատասխանեց իշխանուհին։

— Լռութիւն — ըսաւ նորատի օրիորդն իշխանուհին կեցնելով այնպիսի արագութեամբ որով կ'մոռնար քաղաքավարական կերպերը։

Իշխանուհին կայ առաւ։

— Կ'նայիք որ կ'լսուի — ըսաւ Աթէնաիս։

— Ի՞նչպէս կ'լսուի։

— Մտիկ ըրէք։

Իշխանուհին շունչը բռնեց, և իրօք սա խօսքը լսուեցան օդին մէջ ծփող քաղցր և տխուր ձայնով մ'արտասանուած։

— Ո՛հ, դերկոմս, ես քեզի կ'ըսեմ, կ'ըսեմ քեզ որ մոլորագին կ'սիրեմ զանի, կ'ըսեմ թէ մահու չափ կ'սիրեմ։

Այս խօսքը լսելով իշխանուհին դող ելաւ և իր լօգկին ներքև խնդալին շառաւիղ մ'իր դէմքը լուսաւորեց։

Ըստ կարգի՝ ինքն ալ իր ընկերուհին կեցուց, և թեթեւակի քսան քայլ ետ ետ տանելով զանի, այսինքն ձայնէն չլսուելու չափ հեռու.

— Այդ տեղ կեցէ՛ք — ըսաւ նա — որ ոչ ոք մեր վրայ հասնի, սիրելիդ իմ Աթէնաիս։ Կարծեմ թէ այս խօսակցութեան առարկան դուն ես։

— Ե՞ս, իշխանուհիս։

— Այո՛, դու . . . կամ լաւ ևս ձեր արկածը։ Ես երթամ պիտի մտիկ ընելու, եթէ երկուքնիս միասին գնանք թերևս մեզ երևան հանեն։ Գնա Մօնդալէն առ և անոր հետ դարձէ՛ք անտառակին ծայրն ինձ սպասելու։

Ապա՝ ըստ որում Աթէնաիս կ'վարանէր.

— Գնա՛ — ըսաւ իշխանուհին ձայնով մ'որու դէմ որ և է դիտողութիւն անընդունելի էր։

Ուստի Աթէնաիս իր աղմկալի կոճկէնները ժողվեց, և անտառակը մէջ տեղէն կտրող շաւղէ մը՝ մարդադեռինը հասաւ։

Իսկ իշխանուհին՝ մայատին մէջ սքլեցաւ՝ հսկայական շաղգանակենի մը կոնակը տալով, որու մէկ բունն աթոռի մը բարձրութեամբ կտրած էին։

Նոյն վայրն անձկութեամբ և երկիւղով լի կեցած ըսաւ նա.

— Նայինք, նայինք, քանի որ ասկից կ'լսուի, մտիկ ընենք ինչ պիտի ըսէ իմ վրայ Պ. Պրաժլօնին այն սիրահարն որ Կիշ կոմս կ'անուանի։

Զ

ԻՇԽԱՆՈՒՀԻՆ ՓՈՐՁՈՎ ԿԻՄԱՆԱՑ ՈՐ ԿԱՐԵԼԻ Է՝ ՄՏԻԿ ԸՆԵԼՈՎ, ԽՕՍՈՒԱԾԸ ԼՍԵԼ

Պահ մը լռութիւն տիրեց իբր թէ դիշերային բոլոր խորհրդաւոր շշուկները դադրեցան որպէս զի իշխանուհւոյն պէս լսեն այս պատանեկան և սիրային սրտակցութիւնը։

Խօսելու կարգը Ռաուլինն էր. մեծ կաղնիին կոճղին վրայ ծուքաբար կռթնեցաւ և իր անուշ ու ներդաշնակ ձայնով պատասխանեց.

— Ափսո՛ս, սիրելիդ իմ Կիշ, այդ մեծ դժբաղդութիւն մ'է։

— Ո՛հ, այո՛ — գոչեց Կիշ — շատ մեծ։

— Կիշ, չես լսեր ըսածս կամ լաւ ևս չես հասկընար։ Ըսի որ մեծ դժբաղդութիւն մ'է քեզի, չէ թէ սիրելը, այլ սէրդ ծածկել չդիտնալդ։

— Ինչպէ՞ս — գոչեց Կիշ։

— Այո՛, բան մը կայ որ չես դիտեր, այսինքն այժմ միայն բարեկամիդ, անձի մ'որ լաւ ևս ունի սպաննուիլ քան թէ դաղտնիքդ մատնել, չես դիտեր, կ'ըսեմ, որ չէ թէ միայն բարեկամիդ այլ առջևդ ելնողին կ'յայտնես սէրդ։

— Առջևս ելնողի՞ն — գոչեց Կիշ — մթէ յիմա՞ր ես, Պրաժլօն, ինձի այդպիսի բաներ ըսելու։

— Բայց այս այսպէս է։

— Անկարելի՛ բան։ Ի՞նչպէս և ի՞նչ կերպով կարող եմ այս աստիճան անխոհեմ դաւնալու։

— Ըսել կ'ուզեմ, բարեկամդ իմ, որ աչքդ, շարժուածներդ, հառաչանքդ ակամայ քեզի դէմ կ'խօսին, թէ ամէն ծայրայեղ սէր մարդս ինքնիրեն դուրս կ'հանէ։ Այն ատեն այս մարդն ինքնիշխան չէ. յիմարութեան մ'ենթակայ որ իր նեղութիւնը ծա-

ուերուն, ձիերուն, օդին զրուցել կ'տայ, երբ իր ձայնը լսող մտացի էակ մը չգտնէ։ Արդ՝ եղկելի՛ բարեկամս, սա կէտը լաւ յիշէ. շատ քիչ կ'պատահի որ մէկը չգտնուի դիմացդ այնպիսի բաներ լսելու որ պէտք չէ լսուին։

Կիշ խորունկ հառաչ մը հանեց։

— Ահա — շարունակեց Պրաժլօն — այս միջոցիս ինձ յաւ կը պատճառես. այս տեղ դառնալէդ 'ի վեր՝ հարիւր անգամ և հարիւր տեսակ կերպով անոր համար սէրդ պատմեցիր, և սակայն՝ եթէ բերանդ իսկ չբանայիր, քու վերադարձդ միայն արգէն սոսկալի անխոհեմութիւն մ'էր։ Ուստի սա կ'հեռեցնեմ թէ՝ եթէ աւելի զոյշ չլինիս, օրին մէկը մեծ փոթորիկ մը պիտի ծագի։ Այն ատեն ո՞վ պիտի ազատէ քեզ։ Ըսէ, պատասխանէ ինձ. ո՞վ պիտի ազատէ նաև զանի։ Վասն զի որչափ որ անմեղ է քու սիրոյդ մասին, քու սէրդ թշնամեացը ձեռքն ամբաստանութիւն մը պիտի լինի անոր դէմ։

— Աւա՜ղ, Աստուած իմ — մրմռաց Կիշ։

Եւ խորին հառաչ մ'այս խօսքին ձայնակից եղաւ։

— Այդ պատասխանել չէ բնաւ, Կիշ։

— Անշուշտ։

— Լաւ ուրեմն, նայինք, ի՞նչ պատասխան ունիս։

— Կ'պատասխանեմ թէ, այն օրը, բարեկամդ իմ, աւելի մեռած մարդ չպիտի սեպուիմ որչափ որ եմ այսօր։

— Զեմ հասկընար խօսքդ։

— Այո՛, այսչափ տանջանք զիս մաշեցին։ Ես այսօր խոհուն և գործուն էակ մը չեմ. այսօր մարդ մը չեմ արժեր, թէև միջակ մարդ մը լինի այն. ուստի կ'տեսնես որ այսօր իմ յետին ոյժս սպառեցաւ, իմ յետին յոյսերս մարեցան, և մաքառելէն կ'դադրիմ։ Երբ մարդ բանակն է, ինչպէս որ երբեմն միասին գտնուած ենք, բանակը, և առանձին իբրև յաւաջամարտիկ կը խոյանայ, երբեմն հինգ վեց համբարապաններու կ'հանդիպի, և թէև մինակ, կ'մարտնչի. յետոյ վեց, եօթ, ութ տաս հոգի ևս կ'հասնի շեղակի, մարդը ձին կ'խթէ, եթէ ձի ունի, կամ լաւ ևս ունի սպաննուիլ, քան թէ խոյս տալ։ Լա՜ւ, ես այս վիճակին մէջն եմ. նախ ինքզինքիս դէմ մաքառեցայ, յետոյ Պըքինկհէմի դէմ։ Այժմ թագաւորն եկաւ. չպիտի ոգորիմ անոր դէմ, և ոչ իսկ, կ'փութամ ըսելու, եթէ թագաւորը քաշուի անդամ, և ոչ իսկ այն կնկան բնաւորութեան դէմ։ Ո՛հ, քանի կ'զգամ որ մի անգամ այս սիրոյ լծին տակ ընկնելէն ետև՝ պէտք է որ սպանուիմ։

— Բնաւ անոր յանդիմանութիւններ ընելու իրաւունք չունիս, այլ ինքզինքիդ դէմ։

— Ինչո՞ւ համար։

— Ինչպէս, դու գիտես թէ իշխանուհին քիչ մը թեթև է, թէ նոր բաներու շատ հակամէտ է, գովեստի զգայուն, եթէ գովեսաը կոյր մը կամ աղայ մ'իսկ ըսէ, և ինքզինքդ մաշելու չափ կրաճ կ'ատնես։ Նայէ, կնկան, սիրէ զանի. վասն զի որու սիրան որ ուրիշ տեղ բռնուած չէ, չէ կարող զանի տեսնել առանց սիրելու։ Բայց զանի սիրելով հանդերձ՝ յարգէ անոր մէջ նախ իր երկան ասպիճանը, ապա նոյն ինքը, և ապա վերջապէս քու յատուկ ապահովութիւնդ։

— Եւ ի՞նչ բանի համար։

— Սա պատճառաւ որ այս կնկան համար կրած տառապանքս տեսնելով՝ դու զիս կ'մեղադրես, վասն զի անոր վրայ մոռացած լաւ բաներս ինձ կ'ըսես և թերևս այնպիսի բաներ որ մաքէդ չեն անցնիր։

— Ո՛հ — ըրաւ Ռաուլ — դու կ'սխալիս, Կիշ, մոռացածս միշտ չեմ ըսեր, և այն ատեն բան մը չեմ ըսեր. բայց՝ երբ կ'խօսիմ, ոչ կեղծել և ոչ խաբել գիտեմ, և զիս մտիկ ընողը կրնայ հաւատալ։

Նոյն պահուն՝ իշխանուհին՝ վիճն երկնցած, ականջն ու աչքերը խոշոր խոշոր բացած և մթուն տեսնելու ջանալով. նոյն պահուն իշխանուհին անյաղուրդ կ'շնչէր ոստերուն մէջ պարտող ամենէն թեթև շրշիւնը։

— Ո՛հ, ուրեմն ես քեզնէ լաւ կ'ճանչեմ զանի — գոչեց Կիշ։

— Թեթև չէ նա, այլ անապաշտ. նոր բաներու սիրահար չէ նա, այլ անյոյշ է և թերահաւատ. պարզապէս գովեստներու զգա-

յուն չէ, այլ նրբութեամբ և անդթութեամբ պչրող է։ Մահաբե՛ր պչրասէր մը։ Ո՛հ, այո՛, դիտեմ։ Ահա, հատա՛, Պրաժլօն, դժոխոց ամէն տանջանքը կ'քաշեմ. քաջասիրտ, խանդաղին սիրող վատնդը, իմ ուժէս և արիութենէս դեր 'ի վեր վատնդ մը կ'տեսնեմ այս սիրոյս մէջ։ Բայց քաջ դիտցի՛ր, Ռաուլ, յաղթութիւն մը կ'վերապահեմ ինձ որ անոր շատ արտասուաց առիթ պիտի լինի։

Ռաուլ իր բաբեկային երեսը նայեցաւ, և որովհետև ասի՝ դրեթէ այլայլութենէ հեղձամղձուկ եղած՝ իր դլուխը ծառին կոճղին կ'դնէր։

— Յաղթութի՛ւն մը — հարցուց նա — և ի՞նչ է այն։

— Ի՞նչ։

— Այո՛։

— Օր մ'անոր պիտի մօտենամ, օր մ'անոր պիտի ըսեմ, «Ես նորատի էի, ես սիրով մոլեդնած էի, սակայն բաւական կը յարդէի քեզ, և եթէ ոտքդ ընկնէի, ճակատս անոր փոշին կը քսէի և կ'մնայի որչափ ատեն որ հայուածքդ ինս մինչև ձեռքդ չվերցնէր։ Կարծեցի թէ նայուածքդ կ'հասկընամ, ոտք ելայ, և այն ատեն, թէև ես, եթէ հնարին էր, քեզ առաւել ևս սիրելէն ուրիշ բան չըրի, այն ատեն ինս տապաստ դեռին զարկիր ըստ հաճոյս, անսիրտ կին, անհաւատարիմ կին, անսէր կին։ Արժանի չես դու, թէև արքայական տոհմէ, արժանի չես ուղիղ մարդու մը սիրոյն. և ես մահուամբ պիտի պատժեմ զինքս չափէն աւելի քեզ սիրելուս, և պիտի մեռնիմ քեզ ատելով»։

— Ո՛հ — դոչեց Ռաուլ ահ ու դող զգալով երիտասարդին խօսքին մէջ երևցած ճշմարտութեան խորունկ զգացումն — ո՛հ, ես աղէկ ըսեր էի, Կիշ, որ դու խեղթ ես։

— Այո՛, այո՛ — դոչեց Կիշ իր մտքը շարունակելով — քանի որ այս տեղ ալ պատերազմ չունինք, վաղը, դէպ 'ի հիւսիս պիտի դնամ, բանակը պիտի մնանեմ, և անշուշտ Հունդարացի մը, Խուվաթ մը, Թիւրք մը ինս դնդակով մը պիտի սպանէ ողորմասիրութեամբ։

Կիշ խօսքը չաւարտեց, կամ լաւ ևս, խօսքն աւարտելու ատեն՝ շշուկ մ'իրեն դող աղդեց և Ռաուլն իսկոյն ոտքի վրայ կանդնելու դրդեց։

Իսկ Կիշ իր խօսքովն ու մտքովը համակուած նստած մնաց՝ իր դլուխն երկու ձեռացը մէջ ճնշելով։

Մացառները բացուեցան և կին մ'երևցաւ երկու երիտասարդաց առջև՝ դունատ և խուովեալ։ Մէկ ձեռքով ոստերը կ'հեռացնէր, որպէս զի երեսին չդարնեն, և մուս կողմէն իր ուսոց վրայ ծածկած լոգկին կնդուղը կ'վերցնէր։

Անոր նամէտ և լուսաճաճանչ աչքը, անոր արքայական քալուածքը, անոր վեհապետական շարժման վեհութիւնը տեսնելով, և այս ամէն բանէ աւելի, իր սրտին բախումն զգալով՝ Կիշ ճանչեց իշխանուհին, և աղաղակ մ'արձակելով՝ իր ձեռքը քունքէն աչացը տարաւ։

Ռաուլ՝ դողդոջուն, շփոթած՝ իր դլխարկը ձեռքին մէջ կը դարձնէր, քանի մ'անորոշ յարդական խօսքեր թոթովելով։

— Պարո՛ն Պրաժլօն — ըսաւ իշխանուհին — խնդրեմ չնորհ ըրէ նայելու թէ արդեօք նաժիշտներս վաղը ծառուղիներուն կամ հովանոցներուն մէջ կ'դտնուին։ Եւ դու, կո՛մս, կեցիր, յոգնած եմ, թեդ ինձի պիտի տաս։

Եթէ կայծակն եղկելի երիտասարդին առջևն ընկնէր այնչափ չպիտի ահաբեկէր որչափ այս խիստ և պաղ խօսքը։

Դարձեալ, որովհետև՝ արդէն ըսածին պէս՝ արիասիրտ էր, որովհետև՝ սրտին խորն ամէն որոշումներն ըրած էր, Կիշ կանդառաւ, և Պրաժլօնի վարանումը տեսնելով՝ համբերատարութեամբ և յետին շնորհակալութեամբ լի ակնարկ մ'անոր ուղղեց։

Փոխանակ իշխանուհւոյն անմիջապէս պատասխան տալու, քայլ մ'առաւ դէպ 'ի դերկոմսը, և իշխանուհւոյն խնդրած ձեռքն անոր կարկառելով՝ իր անկեղծ բարեկամին ձեռքը սեղմեց հառաչով մը, որով կարծես թէ բարեկամութեան կ'նուիրէր իր սրտին խորը դտնուած ամէն կենդանի զգացում։

Իշխանուհին՝ թէև հպարտ, թէև սպասել չդիտէր, սպասեց, իշխանուհին սպասեց որ այս համր խօսակցութիւնը լմննայ։

Իր ձեռքը՝ իր արքայական ձեռքն օդին մէջ մնաց և երբ Ռաու-

ուլ մեկնեցաւ, առանց բարկութեան, բայց ոչ առանց այլայլութեան նոյն ձեռքը Կիշին ձեռքին մէջ ընկաւ։

Միայնակ էին մթին և անձայն անտառին մէջ, և միայնակ Ռաուլին քայլը կ'լսուէր որ հովանաւոր շաւիղներէ արտօրինօք կ'հեռանար։

Անտառին աերևաշէն խիտ և հոտաւէտ կամարը կ'տարածուէր իրենց գլխին վրայ, որուն ճեղքերէն ասդիս անդին քանի մ'աստղերու փայլիլը կ'նշմարէին։

Իշխանուհին մեղմիկ քաշեց տարաւ Կիշը հարիւր քայլի չափ հեռու այն անխոհեմ ծառէն որ լսեր և թողեր էր որ լսեն նոյն իրիկունն այնչափ բաներ, և մնաւոր ցանցառի մ'առաջնորդելով որու չորս դին բաւական հեռաւորութիւն կ'երևէր,

— Քեզ այս տեղ կ'բերեմ — ըսաւ նա դողդոջուն — վասն զի վարը մեր դանուած տեղն ամէն բան կ'լսուէր։

— Ամէն բան կ'լսուի, կ'ըսէք, իշխանուհիս — կրկնեց երիտասարդը մեքենապէս։

— Այո։

— Ասկից ի՞նչ կ'հեռաւի — մրմռաց Կիշ։

— Սա կ'հեռաւի որ բոլոր ձեր խօսածը լսեցի։

— Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ, այդ միայն պակաս էր իմ դժբաղդութեանս — թոթովեց Կիշ։

Եւ իր գլուխը ծռեց յոգնած լուղակին պէս որ կոհակին ներքև կ'ընկղմի։

— Այսպէս — ըսաւ իշխանուհին — զիս ըսածիդ պէս կ'դատես։

Կիշ դունատեցաւ, գլուխը դարձուց և բան մը չպատասխանեց. կ'զգար որ քիչ մ'ևս և պիտի նուաղէր։

— Այո, շատ քաջ է — շարունակեց իշխանուհին խիստ անուշ ձայնով մը — այդ աղատախօսութիւնն աւելի կ'սիրեմ որ զիս կ'վերաւորէ, քան թէ շողոքորթութիւն մ'որ զիս պիտի պատրէ։ Այսպէս ուրեմն, Պ. Կիշ, քու կարծեօքդ պչրասէր և անարդ եմ։

— Անարդ — գոչեց պատանին — անարդ, դո՞ւք։ Ո՛հ, երբեք այսպէս բան մը, երբէք ըսած չեմ որ աշխարհիս մէջ ինձի համար ամենէն թանկագին բանն անարդ լինի, ո՛չ, ո՛չ, այդ բանը չըսի։

— Կին մ'որ իր վառած կրակէն մաշող երիտասարդ մը կը տեսնէ և այն կրակը չմարեր, ըստ իս, անարդ կին մ'է։

— Ո՛հ, ի՞նչ փոյթ ձեզի ըսածս — վրայ բերաւ կոմսը։ — Ի՞նչ եմ ես, Տէր Աստուած, ձեր քովը, և ի՞նչ հոգ կ'ընէք թէ կամ թէ չկամ։

— Պարոն Կիշ, դու ինչպէս մարդ՝ ես ալ կին մ'եմ, և ճանչելով քեզ ինչպէս որ կ'ճանչեմ, երբէք չեմ ուզեր որ իմ պատճառաւ մահու վտանգն ընկնիս. քեզի հետ բնաւորութիւնս և ընթացքս կ'փոխեմ։ Քեզի հետ չէ թէ անկեղծ, վասն զի միշտ եմ, այլ ճշմարիտ պիտի լինիմ։ Ուստի կ'պաղատիմ քեզ, կոմս, այլ ևս չսիրել զիս և բոլորովին մոռնալ որ քեզի խօսք մը կամ ակնարկ մ'ուղղած լինիմ։

Կիշ դարձուց գլուխը, իշխանուհւոյն վրայ խանդագին ակնարկ մը ձգելով։

— Դո՞ւք — ըսաւ — դուք ինքզինքնիդ արդարացնէք, դուք կը պաղատիք, դո՞ւք։

— Այո, անտարակոյս, քանի որ ես չարիք ըրի, պէտք է որ չարիքը դարմանեմ։ Այսպէս, կոմս, ահա այսպէս որոշուած է։ Դու ինձ պիտի ներես, իմ պչրասիրութիւնս, իմ թեթևամտութիւնս։ Մի՛ ընդհատեր խօսքս։ Ես քեզի պիտի ներեմ, ես, զիս պչրասէր և թեթևամիտ անուանելուդ, և կարելի է աւելի ծանր բան մը. և այդ մահու դաղափարդ պիտի թողուս, և ընտանիքիդ պիտի մնաս, նոյնպէս պիտի վերադահիս թագաւորին և կանանց ասպետ մը՝ զոր ամէն մարդ կ'յարգէ և շատերը կ'սիրեն։

Եւ իշխանուհին այս վերջին բառն այնպիսի անկեղծութեան և դորովոյ ձայնով մ'արտասանեց, որ կարծես թէ երիտասարդին սիրտն իր կուրծքէն դուրս պիտի պայթէր։

— Ո՛հ, իշխանուհի՛, իշխանուհի՛ . . . — թոթովեց նա։

— Դարձեալ մտիկ ըրէ ինձ — շարունակեց նա։ — Երբ որ իմանէ հրաժեշտ տաս, նախ առ հարկի, երկրորդ իմ աղաչանքս կատարելու համար, այն ատեն լաւ ևս պիտի դատես զիս, և

ստոյգ եմ որ այդ սիրոյն տեղ պիտի գնես, ներէ այս յիմարութեանս, անկեղծ բարեկամութիւն մը զոր ինձ ընծայելու պիտի ներկայիս, և որ, կ'երդնում քեզ, սրտովին պիտի ընդունուի իմ կողմէ։

Կիշ, քրտնաթոր ճակատով, մահ 'ի սիրտ, երակացը մէջ սարսուռ, քալելով շրթերը կ'խածնէր, ոտնով կ'զարնէր գետինը, և մէկ խօսքով, բոլոր վիշտերը կ'խեղդէր։

— Իշխանուհի — ըսաւ — այդ ձեր ընծայածն անկարելի է, և այդպիսի դաշն մը չեմ ընդունիր երբէք։

— Ինչպէս — ըսաւ իշխանուհին — ուրեմն բարեկամութիւնս կ'մերժես . . . ։

— Ո՛չ, ո՛չ, չէ թէ բարեկամութիւնդ, տիկին, լաւ ես ունիմ սիրովս մեռնիլ քան թէ բարեկամութենէ։

— Կո՛մս։

— Ո՛հ, իշխանուհի — գոչեց Կիշ — այնպիսի ծայրագոյն վայրկենի հասած եմ որ ուրիշ պատիւ չունիմ, ուրիշ յարգանք մը չունիմ քան թէ ուղիղ մարդոյ մը պատիւն ու յարգը պաշտելի կնկան մը համար։ Վռնտեցէք զիս, անիծեցէք զիս, բերան տուէք զիս, արդարացի պիտի լինի ըրածնիդ. ձեզնէ դանդատեցայ, բայց եթէ այդպէս դառնապէս դանդատեցայ պատճառն այն է որ ձեզ կ'սիրեմ. ձեզի ըսի որ պիտի մեռնիմ, պիտի մեռնի՛մ. կենդանի մնալովս՝ զիս պիտի մոռնաք, մեռած՝ չպիտի մոռնաք զիս, այս մասին ստոյգ եմ։

Եւ սակայն այն որ կանգուն և բոլորովին մտախոհ ու երիտասարդին պէս վրդոված կ'երևէր, պահ մը դլուխը դարձուց, ինչպէս որ քիչ մ'առաջ պատանին դարձուցեր էր։

Ապա, պահ մը լռութիւն պահելէն ետև,

— Մինթէ այդչափ շատ կ'սիրես զիս — հարցուց նա։

— Ո՛հ, խենթի պէս կ'սիրեմ, մեռնելու չափ կ'սիրեմ, ինչպէս որ կ'ըսէիք։ Մեռնելու չափ՝ թէ զիս վռնտէք, թէ զիս տակաւին մտիկ ընէք։

— Ուրեմն անյոյս հիւանդութիւն մ'է այդ — ըսաւ իշխանուհին զուարթ դէմքով մը — հիւանդութիւն մը զոր պէտք է մեղմ

դարմաններով ամոքել։ Արի, տուր նայիմ ձեռքդ . . . սառած է . . . ։

Կիշ ծունր դրաւ, իր բերանը կցելով իշխանուհւոյն չէ թէ մէկ այլ երկու հրատապ ձեռաց վրայ։

— Օ՜ն, սիրէ ուրեմն զիս — ըսաւ իշխանուհին — քանի որ ուրիշ կերպ չես կարող ընել։

Եւ անոր մատներն անզգալի կերպով սեղմեց, զանի վերցնելով՝ կէս մ'իբրև թոպուհի և կէս մ'իբրև սիրուհւոյ մ'ըրածին պէս։

Կիշին բոլոր մարմինը սարսուռ մ'զգաց։

Իշխանուհին զգաց այս սարսուռն որ երիտասարդ'ն երակներն կ'վազէր, և հասկցաւ որ նա ճշմարտապէս կ'սիրէր։

— Թեզդ տուր, կոմս — ըսաւ նա — և դառնանք։

— Ա՛հ, տիկին — ըսաւ անոր կոմսն երերուն, շլացած և աչաց վրայ բոցեղէն ամպ մը տեսնելով — ա՛հ, երբորդ միջոց մը գտաք զիս սպաննելու։

— Բարեբաղդաբար ամենէն երկայն է, այնպէս չէ՞ — պատասխանեց նա։

Եւ զանի դէպ 'ի հովանոցը քշեց տարաւ։

Է

ԱՐԱՄԻՄ ԳՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Երբոր Կիշի գործերն այսպէս յանկարծ կարգի մտան առանց դուշակել կարենալու այս կարգադրութեան պատճառը, Ռաուլ, իշխանուհւոյն հրաւէրը հասկընալով հեռացեր էր որ այս բանակցութիւնը չվրդովէ, թէև բնաւ անոր արդիւնքը չէր կրնար դուշակել, և մարգարէտնին վրայ ցիր ու ցան պտրտող նաժիշտներուն մտեցեր էր։

Նոյն պահուն Լօրէն ասպետը՝ իր սենեակն եկնելով Վարդին

նամակը զարմանօք կ'կարդար, և Վարդ այս գրով կ'պատմէր, կամ լաւ ևս պատմել կ'տար՝ իր սենեկապանին ձեռօք, իր ընտունած սուրի հարուածն 'ի Քալէ, և այս արկածին բոլոր մանր պարագաները, խնդրելով որ Կիշին և Փիլիպ իշխանին հաղորդէ ինչ որ՝ այս դէպքին մէջ, կրնար մանաւորապէս անոնց ամէն մէկուն անախորժելի երևիլ։

Վարդ մանաւանդ կ'ջանար ասպետին ցոյց տալ իշխանուհւոյն սիրոյ բանութիւնն առ Պըքինկհէմ, և գիրը կ'աւարտէր խնայելով թէ այս սէրն անոնց մէջ փոխադարձ էր։

Այս վերջին տունը կարդալուն՝ ասպետն ուսերը վերցուց, և արդարև Վարդ եղելութեանց մասին շատ տգէտ էր, ինչպէս որ գիրքն գիւրին էր տեսնել։

Վարդ տակաւին Պըքինկհէմի սէրը միայն գիտէր։

Ասպետն ուսէն վեր նետեց թուղթը մօտակայ սեղանի մը վրայ, և արհամարհոտ ձայնով մը.

— Ճշմարիտը — ըսաւ — անհաւատալի է. այս խեղճ Վարդը խելացի տղայ մ'է թէև, բայց Ճիշտն ըսելով՝ նամակին մէջ այսպէս չերևիր, այնչափ մարդ կ'հաստատայ շուտով գաւառը։ Կրոնը տանի այս տխմարը, որ պարտաւոր էր ինձ կարևոր բաներ գրել և այսպիսի սնոտիք կ'գրէ։ Այս ողորմելի նամակին տեղ որ ոչ ինչ չնշանակեր, վարը սա ծառերուն ներքև աղոր դաւ մը կրնայի գտնել, որով կնկան մը պատիւը պիտի վտանգէր, թերևս մարդու մը սուրի ըարուած մը տալու գրդէր և Փիլիպ իշխանին ալ երեք օրուան զբօսանք մը պատճառէր։

Ասպետն իր ժամացոյցին նայեցաւ։

— Այժմ — ըսաւ նա — շատ ուշ է։ Առաւօտեան ժամը մէկ. ամէն մարդ անշուշտ թապաւորին մօտ գացած պիտի լինի անոր հետ գիշերն անցընելու։ Մե՛ղք, որսը կորուսինք, և եթէ արտաքոյ կարգի բաղդով մը . . . ։

Եւ այս ըսելով՝ որպէս թէ իր յաջող աստղին վստահելով, ասպետը սրանեղութեամբ պատուհանին մօտեցաւ որ պարտիզին բաւական ամայի մէկ կողմը կ'նայէր։

Իսկոյն՝ որպէս թէ իր հրամանին ներքև չար ոգի մ'ունէր,

ասպետը տեսաւ մթադոյն մեսաքսէ լոգիկ մը հագած կին մ'ոտաւ հետ մարդ մը կար, որ դէպ 'ի դղեակը կ'դառնար, և Ճանչեց անոր ձեն որ կէս ժամ առաջ իր աչքին զարկեր էր։

— Է՛հ, Աստուած իմ — մտածեց նա ձեռները զարնելով — Աստուծոյ պատժին դամ, ինչպէս որ մեր բարեկամ Պըքինկհէմը կ'ըսէ, եթէ այս խորհրդաւոր էակ մը չէ։

Բայց փոքրիկ բակին դուռը հասնելով՝ ասպետը դրեթէ իշխանուհւոյն զարնուեցաւ, որու դեղափայլ դէմքը՝ առանց ծածկելու գլխիքը պատսպարող լոգիկին ներքև՝ չքնաղ յայտնութիւններով դրոշմուած կ'երևէր։

Դժբաղդօրէն իշխանուհին միայնակ էր։

Ասպետը հասկցաւ որ, ըստ որում գլխիքը տեսեր էր հինգ վայրկեան առաջ ազատորդւոյ մը հետ, այս ազատորդին անշուշտ անկից հեռու տեղ մը չպիտի գտնուէր։

Հետեւապէս՝ հաղիւ թէ ժամանակ ունեցաւ իշխանուհին բարեւելու, մէկդի քաշուելով միանգամայն որ նա անցնի. յետոյ՝ երբ՝ Ճանչցուելու վախէն արագութեամբ քալող կնկան պէս քանի մը քայլ առնելուն՝ երբ ասպետը տեսաւ որ իշխանուհին ինքն իրմով շատ մտահոգ էր և չէր կրնար իր ըրածը գիտել, շատ մը պարտէզը սլացաւ, չորս դին նայելով արագօրէն և իր նայուածքով կարելի եղածին չափ աւելի ընդարձակ հորիզոն մը գիտելով։

Ճիշտ պատեհ ժամանակին կ'հասնէր ասպետը. իշխանուհւոյն ընկերացող ազատորդին տակաւին հեռուն կ'երևէր, միայնակ արագօրէն կ'փութար դղեկին մէկ թեւին կողմն որու ետեւը պիտի անհետ լինէր։

Վայրկեան մ'իսկ կորուսել պէտք չէր. ասպետն անոր ետեւէն պնդեց հապճեպ, անծանօթին մօտենալով քայլը ծանրացնել մտադրեց, բայց որչափ որ արագրաց՝ անծանօթը՝ իրմէ առաջ դրանդէն դարձեր էր։

Սակայն բացայայտ էր որ՝ ըստ որում ասպետին փնտռած մարդը ծանր և բոլորովին մտախոհ կ'քալէր՝ և գլուխը վշտի կամ երջանկութեան բեռին ներքև ծռած էր, եթէ անգամ մ'անկիւնը դառնար, ասպետն անվրէպ անոր պիտի միանար, միայն թէ գունէ մը ներս մտած չլինէր։

Այսպէս պիտի պատահէր անշուշտ՝ եթէ՝ անծանօթն անկիւնէն դառնալու միջոցին՝ ասպետն երկու անձանց մէջ չընկնէր, որոնք ներհակ կողմէն անոր դէմ առ դէմ կ՚գտնուէին։

Ասպետն այս երկու գլխաւորներուն խաղ մը խաղալու պատրաստ էր, երբ գլուխն ամբառնալուն՝ պարոն վերատեստ չը ճանչցաւ։

Փուքէ անձի մը հետ էր զոր ասպետն առաջին անգամ կը տեսնէր։

Այս անձը Նորին Մեծութիւնը Վանի եպիսկոպոսն էր։

Այս անձին նշանաւոր ներկայութենէ կայ առնլով, և ըստ պատշաճի ներողութիւն խնդրելու ստիպուած գտնուելով՝ մինչդեռ ինք անոնցմէ կ՚յուսար՝ ասպետը քայլ մ՚ետ դնայ, և որովհետև Պ. Փուքէ՝ եթէ ոչ ամենուն բարեկամութիւնը գէթ յարգը կը վայելէր, որովհետև թաղաւորն անգամ, թէև թշնամի էր քան բարեկամ Փուքէի, իբրև կարևոր մարդ անոր հետ կ՚վարուէր, ասպետը թաղաւորին ընելիքն ըրաւ, բարեւեց Պ. Փուքէն, որ բարեսէր քաղաքավարութեամբ մը գլխնքը կ՚բարեւէր, տեսնելով որ այս աղատորդին անզգուշութեամբ և առանց որ և է վատ մտքի իրեն զարնուեր էր։

Յետոյ՝ գրեթէ անմիջապէս՝ տեսնելով որ Լօրէն ասպետն է այն, անոր քանի մը մարդավարական խօսքեր ուղղեց որոյ ասպետը կամայ ակամայ պատասխանեց։

Որչափ որ կարճ տեւեց այս տրամախօսութիւնը՝ Լօրէն ասպետը դժնդակ սհաճութեամբ տեսաւ փոքր առ փոքր որ իր անծանօթ մարդն 'ի մթան կ՚կորսուէր և բոլորովին կ՚անհետանար։

Ասպետը կամայ ակամայ համբերեց, և հետևապէս բոլորովին Պ. Փուքէի քով վերադարձաւ։

— Ա՛հ, պարոն, շատ ուշ կ՚գաք — ըսաւ անոր։ — Այս տեղ բայակայութեանդ վրայ շատ խօսեցան, և Փիլիպ իշխանն ալ կը զարմանար որ՝ թէև թաղաւորը հրատիրած էր ձեզ, չեկեր էիք։

— Անկարելի էր ինձ աւելի կանուխ գալ, պարոն, և երբ գործս լմնցուցի, ելայ գալու։

— Մի՞թէ Բարիզ հանդա՞ռած է։

— Բոլորովին։ Բարիզ իր վերջին տուրքը շատ աղէկ ընդունեց։

— Ա՛հ, կ՚խմանամ, ուզեցիք նախ ապահով լինիլ այս տուրքը վճարելու յօժարութեան վրայ և ապա գալ մեր հանդէսներուն մասնակից լինիլ։

— Բայց դարձեալ ուշ կ՚հասնիմ։ Ուստի, ձեզի պիտի գիմեմ, պարոն, հարցնելու համար թէ արդեօք թաղաւորը դուրսն է թէ ոչ դղեակը, թէ արդեօք այս գիշեր կրնամ զինքը տեսնել թէ ոչ վաղուան սպասել։

— Գրեթէ կէս ժամ կայ որ թաղաւորն աչքէ կորուսինք — ըսաւ ասպետը։

— Կարելի՞ է իշխանուհւոյն մօտ է — հարցուց Փուքէ։

— Իշխանուհւոյն մօտ, չեմ կարծեր. վասն զի հիմակ հանդիպեցայ իշխանուհւոյն որ փոքրիկ սանդղէն կ՚վերադառնար, և միայն թէ այն ազատորդին որու քիչ մ՚առաջ դէմ առ դէմ եկաք նոյն ինք թաղաւորը չլինէր...։

Եւ ասպետը սպասեց, յուսալով որ այսպէս իր հետաքրքրութեան անունը պիտի կարենայ իմանալ։

— Ո՛չ, պարոն, թաղաւորը չէր նա։

Ասպետը՝ յուսախտուր՝ բարեւեց. բայց բարեւելով հանդերձ՝ իր բոլորակիքը վերջին ակնարկ մը նետելով և Պ. Գօլպէրն ակռի մը մէջ տեսնելով։

— Նայեցէք, պարոն — ըսաւ վերատեսչին — ահա վարը ծառերուն ներքև մէկը կայ որ քան զիս աւելի կարող է տեղեկութիւններ հաղորդել ձեզի։

— Ո՞վ է — հարցուց Փուքէ, որու տկար աչքը չէր կարող ստուերները թափանցել։

— Պ. Գօլպէրն է — պատասխանեց ասպետը։

— Ա՛հ, քաջ է։ Սա անձն որ քանի մը ջահակիր մարդոց կ՚խօսի վարը, Գօլպէրն է։

— Նոյն ինքն է։ Վաղուան համար հրամաններ կ՚տայ ճրագավառութեանց պատրաստողներուն։

— Շնորհակալութիւն, պարոն։

Եւ Փուքէ գլխով շարժում մ՚ըրաւ որ կ՚ցուցնէր թէ իր փափաքածն իմացեր է։

Ասպետն ալ իր կողմէ, որ ընդ հակառակն բան մը չէր իմացած, խորունկ բարև մը տալով քաշուեցաւ։

Հաղիւ թէ հեռացաւ որ Գուքէ՝ ունքը պռստելով՝ համբ մտախոհութեան մը մէջ ընկաւ։

Արամիս պահ մ՚անոր նայեցաւ տրամալի արագութեամբ մը։

— Լաւ ուրեմն — ըսաւ անոր — ահա այս մարդուն անունէն անդամ կ՚այլայլիս։ Ի՞նչ, փոքր ինչ առաջ յաղթական և զուարթ էիր, այդպէս հիմակ կ՚տխրիս սոյն միջակ ստուերէն։ Արի, պարան, քու բաղդիդ վրայ հաւատ ունեցիր։

— Ո՛չ — պատասխանեց Գուքէ տրտմագին։

— Եւ ինչո՞ւ համար։

— Վասն զի այս միջոցիս շատ երջանիկ եմ — պատասխանեց նա դողդոջուն ձայնով մը։ — Ա՛հ, սիրելիդ իմ Հէրպլէյ, դու որ այնքան գիտուն ես, գիտնաս Սամոսի մէկ բնաւորի մը պատմութիւնը։ Ի՞նչ կարող եմ նետել ծոմն որ գալիք աղէտից առաջն առնուի։ Ո՛հ, բարեկամդ իմ, վերստին կ՚ըսեմ, չափէն աւելի երջանիկ եմ, այնչափ երջանիկ որ ունեցածէս աւելի բան մը չեմ փափաքիր։ . . . Այսչափ բարձր ելայ . . . դիտես իմ նշանաբանս. quo non ascendam։ Այնքան բարձր ելայ, որ այսուհետև պարտիմ իջնել։ Անհնարին է ինձ բաղդի մը վերադոյն յառաջադիմութեան հաւատալ, որ արդէն մարդկային ակնկալութիւններէ դեր՝ի վեր է։

Արամիս ժպտայ Գուքէի վրայ յառելով իր ամենազգուելի և նուրբ աչքը։

— Եթէ երջանկութիւնդ գիտնայի — ըսաւ նա — թերևս անկմանդ համար երկնչէի, բայց զիս իբրև Ճշմարիտ բարեկամ կը դատես, այսինքն աղէտից առակ կ՚զտնես զիս, և ոչ այլ ինչ։ Արդէն այս մեծ և անգին բան մ՚է, գիտեմ. բայց, յիրաւի, իրաւունք ունիմ անշուշտ խնդրելու քեզնէ որ ատեն ատեն ինձ հաղորդես քեզ հասած բարեբաստիկ բաներն որոց մասնակից պիտի լինիմ, գիտես, ինձի հասած բաներէն աւելի։

— Սիրելիդ իմ Եպիկոսպոս — ըսաւ Գուքէ ծիծաղելով — իմ դաղանիքս շատ կեղծ են և չեմ կրնար եկեղեցականի մը հաղորդել, որչափ որ այս եկեղեցականն աշխարհասէր լինի։

— Վա՛շ, խոստովանութեան ատե՞ն։

— Ո՛հ, շատ պիտի ամօթասպարտ մնամ, եթէ իմ խոստովանահայրս լինիր։

Եւ Գուքէ սկսաւ հառաչել։

Արամիս վերստին անոր նայեցաւ ուրիշ մտաւոր ցոյց մը չցայտնելով՝ իր համբ ժպտէն զատ։

— Օ՛ն — ըսաւ — մեծ առաքինութիւն մ՚է խորհրդասպահութիւնը։

— Լռութիւն — ըսաւ Գուքէ։ — Ահա այն թունալի կենդանին որ զիս Ճանչեց և մեզի կ՚մօտենայ։

— Գօլպէրը։

— Այո՛, հեռացիր քիչ մը, սիրելիդ իմ Հէրպլէյ. չեմ ուզեր որ այս տմարդին մեզ միասին տեսնէ, քեզ թերևս թշնամի դառնար։

Արամիս անոր ձեռքը սեղմեց։

— Ի՞նչ պէտք ունիմ անոր բարեկամութենէն — ըսաւ նա։ — Միթէ դու չկա՞ս։

— Այո՛, բայց կարելի է միշտ քովդ չգտնուիմ — պատասխանեց Գուքէ մաղձոտութեամբ։

— Այդ օրը, եթէ այդ օրն երբէք գայ — ըսաւ Արամիս հանդարտօրէն — Պ. Գօլպէրի բարեկամութենէ հրաժեշտ տալու կամ անոր ատելութեան դիմադրաւելու միջոցները կ՚մտածենք։ Բայց ըսէ ինձ, սիրելիդ իմ Պ. Գուքէ, փոխանակ այս տմարդին հետ խօսակցելու, ինչպէս որ պատիւ կ՚ընես զանի անուանելու, խօսակցութիւն մ՚որուն օգտակարութիւնը չեմ զգար, ինչո՞ւ համար չես գիմեր, եթէ ոչ թագաւորին, դէթ իշխանուհւոյն մօտ։

— Իշխանուհո՞ւն — ըսաւ վերատեսուչն իր յիշատակներէն ուշաթափ։ — Այո՛, անշուշտ, իշխանուհւոյն մօտ։

— Կ՚յիշե՞ս — ըսաւ Արամիս — որ մեզի իմացուցին իշխանուհւոյն վայելած շնորհն երկու երեք օրէ՝ի վեր։ Կարծեմ թէ քու քաղաքականութեանդ և յատակագծիդ կ՚գայ նորին Վեհափառութեան բարեկամուհեայ մօտ անձանձիր յարգանացդ նուէրը մատուցանելու։ Պ. Գօլպէրի նորածին իշխանութիւնը հակակշռե-

լու միջոցն այս է։ Ուստի կարելի եղածին չափ շուտով իշխանուհւոյն քովը գնա և այն դաշնակցուհին շահէ։

— Բայց — ըսաւ Գուքէ — միթէ ստոյգ ես որ այս միջոցիս թագաւորն իր աչքն անոր վրայ ձգած է։

— Եթէ ասեղը դառնար, պէտք էր այս առաւօտէն դառնար։ Գիտես որ ես իմ դաղտնի բաներերներս ունիմ։

— Շատ լաւ, հիմակ պիտի երթամ, և որ և է կերպով ներկայանալու ճամբան պիտի դտնեմ. այս միջոցն ականակուռ զոյդ մ'երփնագոյն հին մատնի մ'է շքեղ։

— Տեսայ զայն, չափազանց պերճ և արքայավայել գոհար մ'է։

Նոյն պահուն պայիկ մը դալով իրենց խօսքն ընդհատեց. այս պայիկը սուրհանդակ մը կ'առաջնորդէր։

— Վերատեսչին ուղղեալ է — ըսաւ բարձրաձայն սուրհանդակը նամակ մը ներկայացնելով Գուքէին։

— Այս ալ պերապատիւ Վանի եպիսկոպոսին համար է — ըսաւ պայիկն Արամիսին նամակ մը յանձնելով։

Եւ որովհետև սպասաւորը ջահ մ'ունէր ձեռքը, վերատեսչին և եպիսկոպոսին մէջ տեղը կեցաւ, որպէս զի երկուքնին ալ միանդամայն կարող լինին կարդալու։

Պահարանին նուրբ և անձուկ ձեռագիրը տեսնելով Գուքէ ուրախութենէ դող եկաւ. անոնք որ կ'սիրեն միայն կամ սիրած են նախ իր մտահոգութիւնը, ապա իր երջանկութիւնը պիտի խնդան։

Նամակը բացաւ աշխուժիւ, որ միայն սա խօսքը կ'պարունակէր.

«Ժամ մը միայն կայ որ քեզնէ հեռայայ, և դար մը կայ որ քեզի չըսի. «Քեզ կ'սիրեմ»։

Այս էր նամակին բոլոր խօսքը։

Իրօք՝ տիկին Պէլիէր ժամէ մ'ի վեր Գուքէէն բաժնուեր էր, երկու օր անոր հետ անցընելէն ետև, և առ ահի որ իր յիշատակը չհեռանայ այն սրտէն որու կարօտ էր, անոր այն կարևոր նամակով սուրհանդակը կ'ղրկէր։

Գուքէ գիրը հոմբուրեց և ափ մ'ոսկի տալով վճարեց։

Իսկ Արամիսին գալով՝ ինչպէս որ ըսինք, ինքն ալ իր կողմէ

կ'կարդար հեռաւեալ տումնակը, բայց աւելի պաղութեամբ և մտածութեամբ։

«Այս իրիկուն՝ թագաւորը տարօրինակ հարուած մը կրեց. կին մը ղինքը կ'սիրէ։ Ըստ դիպուածոյ խմացաւ այս բանս, երբ այն նորատի աղջկան իր ընկերուհեաց հետ ունեցած խօսակցութիւնը մտիկ ըրաւ։ Այնպէս որ թագաւորը բոլորովին այս նոր սիրով զբաղած է։ Կինը կ'կոչուի օրիորդ Լա Վալիէր և բաւական միջակ դեղեցկութիւն մ'ունենալուն չկարծուիր որ այս սէրը մեծ տափանք մը դառնայ։

«Օրիորդ Լա Վալիէրին վրայ ուշ դրէք»։

Խօսք մը չկար իշխանուհւոյն վրայ։

Արամիս ծանրաբար նամակը ծալեց ու գրպանը գրաւ։

Իսկ Գուքէի գալով՝ շարունակ իր նամակին անուշահոտ բուրմունքը կ'վայելէր։

— Տէր իմ — ըսաւ Արամիս Գուքէի թևին դպելով։

— Էյ — ըրաւ Գուքէ։

— Միտքս բան մը կ'դայ։ Կ'ճանչնա՞ս արդեօք փոքրիկ աղջիկ մը Լա Վալիէր անուամբ։

— Իրաւ որ ո՛չ։

— Աղէկ փնտուէ։

— Հա՛, այո՛, կարծեմ թէ իշխանուհւոյն պատուոյ օրիորդներէն մին է այն։

— Կարծեմ այդպէս պիտի լինի։

— Լաւ ուրեմն, ապա՞։

— Լաւ, տէր իմ, պէտք է որ այս իրիկուն, սոյն աղջկան այցելութիւն մ'ընես։

— Բէհ, և ի՞նչպէս։

— Ասկէ զատ՝ պէտք է որ այս աղջկան տաս ականազարդ գոհարներդ։

— Ի՞նչ կ'ըսես։

— Տէր իմ, դիտես որ լաւ խորհրդատու եմ։

— Բայց այդ անակնկալ...։

— Այդ իմ դործս է։ Շուտ մը փոքրիկ Լա Վալիէրի մեծա-

բանք մը, տէր իմ։ Ես տիկին Լա Վալիէրի մօտ երաշխաւոր պիտի մնամ որ այդ բոլորովին քաղաքական մեծարանք մ'է։

— Ի՞նչ կ'ըսես ինձ, բարեկամ — դոչեց Փուքէ աշխուժիւ — և ի՞նչ անուն բերնէդ հանեցիր։

— Անուն մ'որ քեզի պիտի ցոյց տայ, պարոն վերատեսուչ, որ՝ քեզի համար որչափ որ լաւ տեղեկացած եմ, նոյնչափ տեղեկացած եմ ուրիշներուն համար։ Փոքրիկ Լա Վալիէրի մեծարանքդ յայտնէ։

— Որու՞ որ կամիս մեծարանքս պիտի մատուցանեմ — ըսաւ Փուքէ սիրտը դրախտային խնդութեամբ լի։

— Նայինք, նայինք, երկիր իջնիր, եօթերորդ երկնից ուղևորը — ըսաւ Արամիս — աւասիկ Պ. Գօլպէրը։ Ո՛հ, բայց չորս կողմը մարդիկը շատցուց երբ կ'խօսակցէինք. բոլորտիքն առէր են, զինքը կ'դովեն, կ'շնորհաւորեն, ճշմարիտը, զօրութիւն մ'է այս։

Արդարև՝ Գօլպէր կ'յառաջանար՝ պարտիզին մէջ մնացած բոլոր դրանիկներով շրջապատեալ, և ամէն մէկը՝ հանդիսին կայզադրութեան վրայ՝ շնորհաւորութիւններ կ'ուղղէր անոր, և ինքն ալ ասով պայթելու չափ կ'ուռէր։

— Եթէ Լա Փոնդէն այս տեղ լինէր — ըսաւ Փուքէ ժպտելով — ի՞նչ աղօր առիթ պիտի ունենար անոր ըսելու առակը Գորդն որ կովէ ջէ խուշրնալ կ'ուզէ։

Գօլպէր լուսաճաճանչ շրջանակի մը հասաւ. Փուքէ սպասեց անոր անդրդուելի և թեթև մը հեգնալի դիրքով։

Գօլպէր ևս անոր կ'ժպտէր. իր թշնամին տեսեր էր արդէն քառորդէ մ'ի վեր, ուրուան կ'մօտենար։

Գօլպէրի ժպիտը թշնամութեան մը զուշակ կ'երևէր։

— Հօ, հօ — ըսաւ Արամիս ցած ձայնով մը Փուքէին — ասպիրատը դարձեալ քեզնէ քանի մը միլիօն պիտի պահանջէ որպէս զի իր հրախաղութիւններն ու գունաւոր ճրագները վճարէ։

Գօլպէր ամենէն առաջ բարևեց այնպիսի դէմքով մը զոր կը ջանար յարգական ցուցնել։

Փուքէ հազիւ իր գլուխը շարժեց։

— Լաւ ուրեմն, տէր իմ — հարցուց Գօլպէր — ի՞նչ կ'ըսեն աչունքդ։ Միթէ լաւ ճաշակ չունեցա՞ինք։

— Կատարեալ ճաշակ մը — պատասխանեց Փուքէ, առանց այս խօսքին մէջ ամենաթեթև հեգնութիւն դիտելու։

— Ո՛հ — ըսաւ Գօլպէր չարամտութեամբ — դուք ներողամտութիւն կ'ցուցնէք . . . ։ Մենք թագաւորին մարդիկը, աղքատ մարդիկ ենք, և Փոնդէնպլօ Վօի բաղդատելի վայր մը չէ։

— Իրաւ է — պատասխանեց մաղձոտութեամբ Փուքէ, որ այս տեսարանին բոլոր դերասաններուն վրայ կ'տիրապետէր։

— Ի՞նչ ընենք, տէր իմ — շարունակեց Գօլպէր — մեր նեղ միջոցներու համեմատ կարգադրեցինք։

Փուքէ հաւանութեան շարժում մ'ըրաւ։

— Բայց — շարունակեց Գօլպէր — ձեր պերճութեան վայել բան մը պիտի լինէր եթէ ձեր հրաշալի պարտէզներուն մէջ հանդէս մը տայիք, տէր իմ, Նորին Վեհափառութեան . . . . այն պարտէզներուն մէջ որ ձեզի վաթսուն միլիօն ֆրանք ժեցին։

— Վաթսունն երկու — ըսաւ Փուքէ։

— Այդ ալ նոր պատճառ մ'է — վրայ բերաւ Գօլպէր։ — ճշմարիտը փառաւոր բան մը պիտի լինէր։

— Բայց միթէ կարծէք, պարոն — ըսաւ Փուքէ — որ Նորին Վեհափառութիւնն իմ հրաւէրս ընդունելու բարեհաճի։

— Ո՛հ, տարակոյս չունիմ — դոչեց Գօլպէր արտորնօք — և ես կ'երաշխաւորեմ։

— Շատ բարեսիրտ էք — ըսաւ Փուքէ։ — Ուրեմն կարող եմ վստահիլ։

— Այո՛, տէր իմ, այո՛, անտարակոյս։

— Ուրեմն մտածեմ — ըսաւ Փուքէ։

— Ընդունէ՛ք, ընդունէ՛ք — ըսաւ Արամիս մեղմ և շատ ձայնով մը։

— Պիտի մտածէք — կրկնեց Գօլպէր։

— Այո՛ — պատասխանեց Փուքէ — որպէս զի հասկընամ թէ որ օրը կրնամ իմ հրաւէրս տալ Նորին Վեհափառութեան։

— Ո՛հ, այս իրկունն իսկ, տէր իմ, այս իրկունն իսկ։

— Ընդունեցայ — ըսաւ վերատեսուչը։ — Պարոններ, կ'փաւքի ձեզի իմ հրաւէրներս տալ, բայց գիտէք որ, ամեն ուրեք որ թագաւորը կ'երթայ, թագաւորն իր տունն է. ուրեմն նորին Վեհափառութեան գործն է ձեզ հրաւիրելը։

Ամբոխին մէջ խնդագին շշուկ մ'անցաւ։

Գուքէ բարևեց և մեկնեցաւ։

— Թշուառ գուողը — ըսաւ Գօլպէր — դու կ'ընդունիս, և գիտես որ այդ քեզի տաս միլիոնի պիտի նստի։

— Չիս կործանեցիր — ըսաւ Գուքէ մեղմիկ Արամիսին։

— Քեզ ազատեցի — պատասխանեց այն, մինչև Գուքէ դրանդին աստիճաններէն վեր կ'ելնէր և մարդ կ'ղրկէր թագաւորին հարցնելու համար թէ արդեօք այցելութիւն կ'ընդունի։

Ը

ԿԱՐԳԱՊԱՀ ԳՈՐԾԱԿԱՑԱՐ

Թագաւորը՝ ինքն իրեն հետ առանձին զտնուելու և սրտին մէջ անցածը քննելու համար, իր սենեակը քաշուեր էր, ուր Պ. Սէնդ-Էնյան զինքը գտնելու եկեր էր իշխանուհոյն հետ խօսակցութիւնն աւարտելէն ետև։

Այդ խօսակցութիւնն արդէն յիշեցինք։

Մտերիմը, իր կրկնակի կարևորութեան վրայ պարծենալով, և զգալով որ երկու ժամէ 'ի վեր, թագաւորին զաղտնակիցն եղեր էր, սկսեր էր, որչափ որ ակնածու էր, փոքր ինչ բարձրէն բռնել արքունի գործերը, և այն կէտէն ուր կեցեր էր կամ լաւ ևս գիտցածն անոր մէջ նետեր էր, միայն սէր և դաբնեայ պսակներ կ'տեսնէր իր չորս կողմը։

Թագաւորին սէրն առ իշխանուհին, իշխանուհոյնն առ թագաւորն, Կիշլինն առ իշխանուհին, Լա Վալիէրինն առ թագաւորն, Մալիքօրնինն առ Մոնպալէ, Դոնէյ-Շարանդ օրիորդինն ի-

րեն, այսինքն Սէնդ-Էնյանի համար, միթէ Ճշմարտապէս բաւական չէր իր պալատականի գլուխը դարձնելու։

Արդ՝ Սէնդ-Էնյան՝ անցեալ, ներկայ և ապագայ պալատականաց տիպարն էր։

Անկէ զատ՝ Սէնդ-Էնյան ցցուց թէ այնպիսի քաջ նկարագիր և ներամիտ գնհատող էր, որ թագաւորը զանի մտիկ ըրաւ անոր շատ հետաքրքրութիւն յայտնելով, մանաւանդ երբ պատմեց թէ ինչ խանդագին կերպով իշխանուհին իրեն հետ խօսակցելու փափաքեր էր Լա Վալիէր օրիորդին գործոց նկատմամբ։

Թէև թագաւորն Հանրիէդին համար չէր զգար ինչ որ նա հաւաներ էր, դարձեալ իշխանուհոյն կողմէ տեղեկութիւններ ստանալու այս եռանդին մէջ ինքնասիրութեան գոհունակութիւն մը կար որ թագաւորին աչքէն չէր վրիպեր։ Բայց իրեն համար ամէն ինչ այս ինքնասիրութեան վրայ կ'կայանար, և իր սիրտը պահ մը չխորհեցաւ թէ արդեօք իշխանուհին ինչ կ'մտածէ կամ չմտածեր այս արկածին վրայ։

Միայն՝ երբ Սէնդ-Էնյան խօսքը լմնցուց, թագաւորն իր գիշերային հագուստը հագնելու պատրաստուելու ատենն իսկ հարցուց.

— Այժմ, Սէնդ-Էնյան, գիտես, այնպէս չէ՞, թէ ով է այն օրիորդ Լա Վալիէրը։

— Ոչ միայն գիտեմ թէ ինչ է, այլ և ինչ պիտի լինի։

— Ի՞նչ ըսել կ'ուզես։

— Ըսել կ'ուզեմ թէ այն է ինչ որ կին մը կրնայ փափաքիլ լինելու, այսինքն Ձեր Վեհափառութենէ սիրուած. ըսել կ'ուզեմ որ պիտի լինի ինչ որ Ձեր Վեհափառութիւնն ուզէ որ լինի։

— Իմ հարցուցածս այդ չէ. չեմ ուզեր իմանալ թէ ի՞նչ է այսօր և ի՞նչ պիտի լինի վաղը. արդէն ըսիր, այդ իմ գիտնալիք բանս է, այլ ի՞նչ էր երէկ։ Պատասխանէ ուրեմն, ի՞նչ կ'ըսեն անոր վրայ։

— Կ'ըսեն թէ խելօք է։

— Ո՛հ — ըրաւ թագաւորը ժպտելով — այդ աղմուկ մ'է։

— Բուսական հաղուագիտ է այդ յարգունիս, Վեհափառ, և ոչ ոք կ'հաստայ երբ այդ շշուկը կ'տարածեն։

— Կարելի է իրաւունք ունիս, սիրելիդ իմ... և աղնիւ ծնունդ ունի։

— Պատուական. Լա Վալիէր մարքիզին դուստրն է, և այն պատուական Սէն-Ռըմիին խորթ աղջիկը։

— Ա՛հ, այո, իմ մօրաքեռւս վերատեսուչը... Կ՚յիշեմ այդ բանը, և այժմ միտս կ՚գայ. Պլուայէն անցնելու ատեն զանի տեսայ։ Թագուհիներուն ներկայացուցին զինքը։ Նա մանաւանդ ինքզինքս կ՚մեղադրեմ որ այն ատեն անոր արժանի եղած ուշադրութիւնը չընի։

— Ո՛հ, Վեհափառ, վստահ եմ որ կորսուած ժամանակը դարմանելու պիտի փոյթ տանիք։

— Ի՞նչ շշուկ կայ, չըսիր որ ձայն կայ թէ օրիորդ Լա Վալիէր սիրող չունի։

— Բայց գարձեալ, չեմ կարծեր որ Ձեր Վեհափառութիւնը վախ զգայ ուրիշի մ՚ոսոխութենէ։

— Կեցիր նայիմ — գոչեց Թագաւորը յանկարծ շատ ծանր ձայնով մը։

— Ի՞նչ կ՚հրամայէք, Վեհափառ։

— Կ՚յիշեմ։

— Ա՛հ։

— Եթէ նա սիրող չունի նշանած մ՚ունի։

— Նշանած մը։

— Ինչպէս, միթէ այս չգիտէս, կոմս։

— Ո՛չ։

— Դուռ, դու որ լրախնդրակ մարդ մ՚ես։

— Թող Ձեր Վեհափառութիւնը ներէ ինձ։ Եւ միթէ այդ նշանածը կ՚ճանչէք։

— Ի՞նչպէս չէ, իր հայրն եկաւ խնդրելու իրենէ որ ամուսնութեան պայմանագիրն ստորագրեմ, այս է...։

Թագաւորն անշուշտ Պրաժլօն դերկոմսին անունը պիտի արտասանէր, երբոր լռեց ունքը պուստելով։

— Այս է... — կրկնեց Սէնդ-Էնյան։

— Մարքիս եղեր է — պատասխանեց Լուի ԺԴ, փորձ փորձելով պահելու այլայլութիւն մը զոր հաղիւ ուրեմն կ՚սքողէր։

— Արդեօք կարող եմ Ձեր Վեհափառութեան յիշողութեան օգնել — հարցուց Սէնդ-Էնյան կոմսը։

— Ո՛չ, վասն զի ես ինքս անդամ չգիտեմ թէ որու վրայ կ՚ուզէի խօսիլ, արդարև, ո՛չ. անորոշակի կ՚յիշեմ որ պատուոյ օրիորդներէն մին պիտի ամուսնանար...։ Բայց անունը մարքիս եղեր է։

— Արդեօք օրիորդ Դօնէյ-Շարանդի՞ հետ պիտի ամուսնանար — հարցուց Սէնդ-Էնյան։

— Կարելի է — ըսաւ Թագաւորը։

— Այն ատեն փեսան Պ. Մօնթէսպանն էր. բայց օրիորդ Դօնէյ-Շարանդ անոր խօսքը չընաւ, կարծեմ, այնպէս որ հետամուտներուն վախ ալէ։

— Վերջապէս — ըսաւ Թագաւորը — չգիտեմ բան մը, կամ գրեթէ բան մը չգիտեմ օրիորդ Լա Վալիէրի վրայ։ Պ. Սէնդ-Էնյան, կ՚պատուիրեմ քեզի որ անոր վրայ տեղեկութիւններ առնուս։

— Այո՛, Վեհափառ. և երբ պատիւ պիտի ունենամ Ձեր Վեհափառութիւնը տեսնել որպէս զի ստանալիք տեղեկութիւններս ձեզի հաղորդեմ։

— Ե՞րբ ստանաս պիտի։

— Շուտով պիտի ստանամ եթէ այնքան արագ հասնին ինձ տեղեկութիւններ որչափ որ ես Թագաւորս տեսնելու փափաք ունիմ։

— Շատ լաւ խօսեցար։ Աղէկ միտքս ընկաւ, միթէ իշխանուհին այն խեղճ աղջկան դէմ բան մը յայտնեց։

— Ո՛չ ինչ, Վեհափառ։

— Իշխանուհին չարդոզեցա՞ւ։

— Չգիտեմ, միայն, շարունակ ծիծաղեցաւ։

— Շատ լաւ. բայց նախասենեակներու մէջ աղմուկ կ՚լսեմ, կարծեմ։ Անշուշտ կ՚գան ինձ իմաց տալու սուրհանդակի մը դալուստը։

— Ճշմարիտ է, Վեհափառ։

— Գնա տեղեկացիր, Սէնդ-Էնյան։

Կոմսը դուռը վազեց և սպահակին հետ քանի մը խօսք ըրաւ։

— Վեհափառ — ըսաւ նա վերադառնալով — Պ. Փուքէն է որ թագաւորիդ մէկ հրամանին վրայ իսկոյն կ'հասնի, ինչպէս որ կ'ըսէ։ Ինք ներկայացաւ, բայց որովհետեւ ժամանակն անցած է, չկրնար այս իրկուն ունկնդրութիւն մը խնդրելու, այլ բաւական կ'համարի իր ներկայութիւնը հաստատել։

— Պ. Փուքէ։ Ժամն երեքին դրեցի անոր հետեւեալ առտու Փոնդէնպլօ գտնուելու հրաւիրելով. ժամն երկուքին Փոնդէնպլօ կ'հասնի, ինչ եւանդ — գոչեց թագաւորը յոյժ ուրախ լինելով որ այսպէս շուտով իր հրամանին կ'հնազանդին։ — Քանի որ զանի կոչեցի, պէտք է որ ընդունիմ։ Թող ներս բերեն։ Իսկ դու, կոմս, խուզարկութիւններդ ըրէ, վաղը նայինք։

Թագաւորը մատը դրաւ իր շրթերուն վրայ, և Ֆէնդ-Էնյան խոյս տուաւ ուրախ զուարթ, հրաման տալով պահակին որ Պ. Փուքէն ներս հրամցնէ։

Այն ատեն Փուքէ արքայական սենեակը մտաւ։ Լուի ԺԴ ոտք ելաւ զանի ընդունելու համար։

— Բարի իրկուն, Պ. Փուքէ — ըսաւ նա սիրալիր ժպիտով մը։ — Շնորհակալ եմ այդ ժամապահութեանդ համար, թէև իմ բանքերս քեզի ուշ հասած պիտի լինի։

— Երեկոյեան ժամն ինձի, Վեհափառ։

— Այս օրերս շատ աշխատեցար, Պ. Փուքէ, վասն զի իմաց տուին ինձ որ երեք չորս օրէ վեր քու Սէն-Մանտէի գրատունդ դուրս չես ելեր։

— Արդարև՝ երեք օր փակուած մնացի, Վեհափառ — պատասխանեց Փուքէ ծռելով։

— Գիտեմ արդեօք, Պ. Փուքէ, որ շատ բաներ ունէի քեզի ըսելու — շարունակեց թագաւորն իր ամենէն շնորհալի դէմքն առնելով։

— Ձեր Վեհափառութիւնը զիս անչափս կ'պատուէ, և քանի որ այդչափ բարեսիրտ էք ինձի համար, կ'ներէք արդեօք յիշեցնելու ձեր ինձ տուած ունկնդրութեան մը խոստումը։

— Ա՛հ, այո՛, եկեղեցական մ'որ կ'փափաքի ինձ շնորհակալութիւն ուղղել, այնպէս չէ՞։

— Ճիշտ այդպէս, Վեհափառ։ Թերեւս ժամն անյարմար է, բայց բերած մարդուս ժամերն անպիտան են, և որովհետեւ Փոնդէնպլը իր թեմին Ճամբուն վրայ կ'գտնուի . . .։

— Ո՞վ է այդ ուրեմն։

— Վանի յեպիսկոպոսը, որու Ձեր Վեհափառութիւնը նոր պաշտօն մը տալու բարեհաճեցաւ երեք օր առաջ իմ յանձնարարութեանս վրայ։

— Կարելի է — ըսաւ թագաւորը՝ որ առանց կարդալու ստորագրեր էր — և միթէ անտ է։

— Այո՛, Վեհափառ. Վան կարեւոր թեմ մ'է, այս հովուին հօտն իր երկնային քարոզէն պէտք ունին, վայրենիներ են զոր պարտ է յղկել կրթելով, և Պ. Հէրպլէյ այս տեսակ գործերու համար նմանը չունի։

— Պ. Հէրպլէյ — ըսաւ թագաւորն իր յիշողութեան խորը փնտռելով, որպէս թէ այս անունը, երկար ատենէ վեր լսելի, իրեն անծանօթ չլինէր։

— Ո՛հ — ըրաւ Փուքէ աշխուժիւ — Ձեր Վեհափառութիւնը դեռ ևս չճանչեր իր ամենահաւատարիմ և անպիտան ծառաներուն մէկուն անշուք անունը։

— Ո՛չ, կ'խոստովանիմ. . .։ Եւ միթէ վերստին մեկնիլ կ'ուզէ՞։

— Այսինքն այսօր դիրեր առաւ որով թերեւս ստիպուի վերադառնալու, այնպէս որ Բրիտանիա ըսուած անշան երկիրը վերադառնալէն առաջ՝ կ'փափաքի Ձեր Վեհափառութեան ընծայել իր յարգանքը։

— Եւ միթէ կ'սպասէ՞։

— Դուրսն է, Վեհափառ։

— Ըսէ որ ներս գայ։

Փուքէ նշան մ'ըրաւ պահակին որ սրահակին տակը կ'սպասէր։

Դուռը բացուեցաւ, Արամիս ներս մտաւ։

Թագաւորը թողուց որ նա իր յարգական մեծարանքն ըսէ, և երկայն ակնարկ մը նետեց անոր կերպարանքին վրայ, կերպարան մը զոր տեսնելէն ետև ոչ ոք կարող էր մոռնալ։

— Վա՛ն — ըսաւ նա — դու Վանի եպիսկոպոսն ես, պարոն։

— Այո՛, Վեհափառ։

— Վան Բրիտանիա՞ է։

Արամիս ծռեցաւ։

— Ծովո՞ւն մօտ։

Արամիս նորէն խոնարհութիւն ըրաւ։

— Պէլ-Իսլէն քանի մը մղոն հեռի։

— Այո՛, Վեհափառ, կարծեմ վեց մղոնով հեռի է։

— Վեց մղո՞ն, քայլ մ՚է — ըսաւ Լուի ԺԴ։

— Ո՛չ, մեզի պէս խեղճ Բրըտօնները համար, Վեհափառ տէր — ըսաւ Արամիս — ընդ հակառակն, վեց մղոն, հեռաւորութիւն մ՚է, եթէ ցամաքային վեց մղոն են. եթէ ծովային են, անհուն տարածութիւն մ՚է։ Արդ՝ պատիւ ունեցայ թագաւորիդ ըսելու, դեռէն՝ ի Պէլ-Իսլ վեց ծովային մղոն կ՚հաշուեն։

— Կ՚ըսեն թէ Պ. Ֆուքէ այն տեղ խիստ աղուոր տուն մ՚ունի — հարցուց թագաւորը։

— Այո՛, կ՚ըսեն — պատասխանեց Արամիս Ֆուքէին նայելով հանդարտօրէն։

— Ինչպէ՞ս, կ՚ըսե՞ն մի — գոչեց թագաւորը։

— Այո՛, Վեհափառ։

— Ճշմարիտը, Պ. Ֆուքէ, կ՚խոստովանիմ որ բան մը ինս կ՚զարմացնէ։

— Ի՞նչ բան։

— Ի՞նչ, քու վիճակներուդ դլուխը Պ. Հէրպլէյի պէս մարդ մ՚ունենաս, և դու անոր Պէլ-Իսլը չցուցնե՞ս։

— Ո՛հ, Վեհափառ — պատասխանեց եպիսկոպոսը Ֆուքէի ժամանակ չտալով պատասխանելու — մենք, խեղճ Բրիտանացի եպիսկոպոսներ նստուկ կեանք մը կ՚վարենք։

— Պ. Վան — ըսաւ թագաւորը — պիտի պատժեմ՝ Պ. Ֆուքէն իր անհոգութեանը համար։

— Եւ ի՞նչպէս պիտի պատժէք, Վեհափառ։

— Քեզ պիտի փոխեմ։

Ֆուքէ շուրթը խածաւ, Արամիս ժպտեցաւ։

— Վան ի՞նչ կ՚բերէ — շարունակեց թագաւորը։

— Վեց հազար ֆրանք — ըսաւ Արամիս։

— Ա՛հ, Աստուած իմ, այդչափ փոքր գումար մը։ Ըսել է թէ կալուած ունիս, Պ. Վան։

— Բան մը չունիմ, Վեհափառ. մինակ Պ. Ֆուքէ հազար երկու հարիւր ֆրանք կ՚վճարէ ինձ տարին քարոզի համար։

— Օ՛ն, օ՛ն, Պ. Հէրպլէյ, ես այդ գումարէն աւելին կ՚խոստանամ քեզի։

— Վեհափա՞ռ . . .։

— Պիտի հոգդ տանիմ։

Արամիս խոնարհութիւն ըրաւ։

Թագաւորն ալ իր կողմէ գրեթէ յարգանաք բարևեց զանի, ինչպէս որ սովոր էր սակայն վարուիլ թէ եկեղեցական և թէ կանանց դատուն հետ։

Արամիս հասկըցաւ որ իր ունկնդրութիւնն աւարտած է. խիստ պարզ խօսք մը, գեղացի հովուոյ մը վայել ճշմարիտ խօսք մը ըսելէն ետև հրաժեշտ տուաւ։

— Ահա նշանաւոր դէմք մը — ըսաւ թագաւորն անոր հեռանալով նաև աչքն որչափ ատեն որ կրցաւ նայիլ, և մինչև անգամ զանի այլ ևս չտեսնելէն ետև իսկ։

— Վեհափա՞ռ — պատասխանեց Ֆուքէ — եթէ այս եպիսկոպոսը նախնական կրթութիւն առած չլնէր, ոչ եպիսկոպոս մը տերութեանդ մէջ իրեն պէս առաջին պաշտօններու արժանի պիտի չլնէր։

— Գիտուն չէ՞։

— Սուրը ձգեց և շուրջառ առաւ, և այս փոքր ինչ ուշ։ Բայց փոյթ չէ, եթէ Ձեր Վեհափառութիւնը ներէ ինձ վերատին խօսելու Պ. Վանի վրայօք յարմար ժամանակ և տեղ . . .։

— Կ՚աղաչեմ խօսէ։ Բայց անոր վրայ խօսելէն առաջ, քու վրայ խօսինք, Պ. Ֆուքէ։

— Ի՞մ վրայ, Վեհափառ։

— Այո՛, շնորհակալութիւնս ունիմ քեզի ընելու։

— Իրաւի, չեմ կարող Ձեր Վեհափառութեան բացատրել թէ որչափ ուրախութեամբ կ՚ընդունիս։

— Այո՛, Պ. Գուքէ, կ'իմանամ։ Այո՛, քեզի դէմ կանխակալ կարծեօք վարուած եմ։

— Այն ատեն շատ դժբաղդ էի, Վեհափառ։

— Բայց այն կարծիքն անցան։ Միթէ չտեսար . . . ։

— Անշուշտ, Վեհափառ տէր, բայց համբերատար ոգւով ճշմարտութեան աւուր կ'սպասէի։ Կ'երևի թէ այն օրը հասաւ։

— Ա՛հ, միթէ գիտէիր որ երեսէս ընկած էիր։

— Ափսո՛ս, այո՛, Վեհափառ։

— Եւ գիտես ինչու համար։

— Կատարելապէս, Վեհափառ, կարծէիք թէ զոշաքաղ մ'եմ։

— Ո՛հ, ո՛չ։

— Կամ միջակ գրամագէտ մը. վերջապէս Ձեր Վեհափառութիւնը կարծէր թէ ժողովուրդները գրամ չունենալով, թագաւորդ ալ չպիտի ունենայ։

— Այո՛, այդպէս կարծեցի, բայց սխալմունքս ուղղեցի։

Գուքէ խոնարհութիւն ըրաւ։

— Եւ չկա՞յ ապստամբութիւն, չկա՞ն դանդատներ։

— Եւ դրամ— ըսաւ Գուքէ։

— Այս իրաւ է որ անցեալ ամիս շուայլօրէն ստակ տուիր ինձ։

— Տակաւին ունիմ, ոչ միայն Ձեր Վեհափառութեան բոլոր պիտոյից այլ քմածին խորհրդոց համար։

— Փառք Աստուծոյ, Պ. Գուքէ — պատասխանեց թագաւորը ծանրաբար — քեզ նոր փորձի մը չպիտի ենթարկեմ։ Այս օրէն մինչև երկու ամիս չպիտի բան մը խնդրեմ քեզնէ։

— Այդ պայմանաժամէն օգուտ քաղելով հինգ վեց միլիոն պիտի հաւաքեմ որպէս զի եթէ պատերազմ պատահի առաջին ծախսուց բաւեն։

— Հինգ վե՛ց միլիոն։

— Անշուշտ ձեր արքունեաց համար։

— Ուրեմն կարծես թէ պատերազմ պիտի ունենանք, Պ. Գուքէ։

— Կարծեմ որ, եթէ Աստուած արծուին կտուց մը և ճիրաններ տուաւ, պատճառն այն է որ զանոնք գործածէ իր թագաւորական իշխանութիւնը ցոյց տալու համար։

Թագաւորն զգացած հաճոյքէն կարմրեցաւ։

— Այս օրերս շատ ծախսեր ըրինք, Պ. Գուքէ. միթէ զիս չ'պիտի յանդիմանես։

— Վեհափառ, դուք տակաւին քսանամեայ երիտասարդութիւն ունիք, և այս քսան տարուան մէջ մէկ երկիլիոն ունիք ծախս ընելու։

— Մէ՛կ երկիլիոն. այդ շատ է, Պ. Գուքէ — ըսաւ թագաւորը։

— Պիտի տնտեսեմ, Վեհափառ . . . ։ Ասկից զատ՝ Ձեր Վեհափառութիւնն երկու թանկագին մարդ ունի իր քովը. մին Գոլպէրն և միւսն ես։ Մին իր ստակը պիտի վատնել տայ, և այս ես պիտի լինիմ, եթէ սակայն իմ ծառայութիւնս Ձեր Վեհափառութեան հաճելի գայ, միւսը պիտի խնայէ, և այս ալ Պ. Գոլպէրը պիտի լինի։

— Պ. Գոլպէ՛րը — վրայ բերաւ թագաւորը զարմանօք։

— Անտարակոյս, Վեհափառ. Պ. Գոլպէր խիստ քաջ կ'հաշուէ։

Այս գովեստը զոր թշնամին թշնամւոյն վրայ կ'ընէր թագաւորին վստահութիւն և զարմանք ազդեց։

Վասն զի իրօք Գուքէի ոչ ձայնին և ոչ ակնարկին մէջ կար բան մ'որ իր արտասանած խօքին մէկ գիրն անգամ ջնջէ. գովեստ մը չէր տար երկու յանդիմանութիւն ընելու իրաւունք մը ունենալու համար։

Թագաւորը հասկցաւ, և զինաթափ մնալով այսչափ վեհանձնութեան և նրբամտութեան առջև,

— Միթէ Պ. Գոլպէրը կ'գովես — ըսաւ նաև։

— Այո՛, Վեհափառ, կ'գովեմ. վասն զի ոչ միայն արժանիքի տէր մարդ է, այլ և կարծեմ թէ Ձեր Վեհափառութեան շահուց անձնուէր է։

— Արդեօք անոր համար որ ստէպ քու խորհրդոց հակառակ ելաւ — պատասխանեց թագաւորը ժպտելով։

— Ճիշտ այդ բանին համար, Վեհափառ տէր։

— Բայցատրէ ինձ այդ կէտը։

— Շատ պարզ է։ Ես՝ այն մարդն եմ որ պէտք է ձեզի ստակը դանձելու համար, այն ալ դուրս ելնելու համար արդիլող պէտքերցու մարդն է։

— Օ՛ն, օ՛ն, Պ. Վերատեսուչ, կրկնէ, ինձի չպիտի ըսես բան մ՚որ այդ լաւ կարծիքդ ուղղէ։

— Վարչային նկատմամբ, Վեհափառ տէր։

— Այո՛։

— Բայց ամենևին ուրիշ կարծիք չունիմ։

— Իրա՞ւ։

— Պատուոյս վրայ կ՚ըսեմ, Ֆրանսայի մէջ քան Պ. Գօլպէր լաւագոյն գործակատար մը չեմ ճանչեր։

Այս գործակատար բառը 1661ին չունէր այն փոքր ինչ երկրորդական իմաստը, որով կ՚իմացուի այսօր. բայց Պ. Ֆուքէի բերնէն անցնելով զոր Թագաւորն այն ինչ վերատեսուչ անուաններ էր, փոքր ինչ նուաստ և փոքր ինչ իմաստ մ՚առաւ որով Ֆուքէ զարմանալի կերպով իր յատուկ վայրն և Գօլպէրն ալ իրեն յարմար տեղը կ՚ցուցնէր։

— Լաւ ուրեմն — ըսաւ Լուի ԺԴ — բայց դարձեալ այն է որ՝ թէև շատ տնտես, իմ Ֆոնդէնպլօի հանդէսներս կարգադրեց, և կ՚հաւաստեմ քեզ, Պ. Ֆուքէ, որ չարդիլեց բնաւ որ ստակը դուրս ելնէ։

Ֆուքէ ծռեցաւ, բայց առանց պատասխան տալու։

— Միթէ այդ չէ՞ նաև քու կարծիքդ — ըսաւ Թագաւորը։

— Ես կ՚նայիմ՝ որ, Վեհափառ տէր, Պ. Գօլպէր ամէն ինչ չափազանց կարգով տնօրինեց — պատասխան տուաւ Ֆուքէ — և այս նկատմամբ՝ Ձեր Վեհափառութեան բոլոր զովեստից արժանի է։

Այս կրկին բառը գործակատար բառին զուգակշռուն եղաւ։

Ձկար կազմուած մ՚որ Թագաւորին կազմութեան պէս աշխոյժ զգայողութիւն մ՚ունենար, այն ճաշակի նրբութիւնն որ զգայնութեանց ընթացքը կ՚ըմբռնէ և կ՚զգայ նոյն իսկ զգայնութեամբ։

Ուստի Լուի ԺԴ հասկրցաւ որ գործակատարը Ֆուքէի համար չափէն աւելի կարգապահ եղեր է, այսինքն Ֆոնդէնպլօի այնչափ շքեղ հանդէսները կրնային աւելի շքեղ լինիլ։

Ուստի Թագաւորը զգաց որ թերևս մէկը կրնար այս զրօսանաց մէջ թերութիւն մը գտնել. փոքր ինչ նեղացաւ այն դատաւորացիին դէմ որ, իր ամենէն փառաւոր զբօսանքներն հաղած բարիզ կ՚զայ, ուր վայելչադիր մարդն անոր շատ կամ շատ քիչ կ՚նայի։

Ֆուքէի խօսակցութեան այս մասը՝ որ թէև չափաւոր այնքան նուրբ էր, Թագաւորին համարումն աւելցուց այս մարդուն բնաւորութեան և պաշտօնէին կարողութեան մասին։

Ֆուքէ առաւօտեան ժամն երկուքին հրաժեշտ առաւ, և Թագաւորը քիչ մ՚անհանգիստ մնաւ անկողինը, փոքր ինչ շփոթած էր այն ինչ ընդունած քաղաքեալ դասէն, և երկու երկար քառորդ ժամու անցուց հիւսուածքը, օթոցները, ուտելիքը, յաղթական կամարներու ճարտարապետութիւնը յիշելու, նոյնպէս Գօլպէր գործակատարին երևակայած ճրագավառութեան և հրախաղութեանց կարգադրութիւնը։

Այս բանէն սա հետևեցաւ որ Թագաւորը՝ ութ օրէ վեր անցած դարձածը մտքէն անցնելով, այս հանդէսներուն վրայ արատներ գտաւ։

Բայց Ֆուքէ իր քաղաքավարութեամբը, իր շնորհքովն և իր վեհանձնութեամբը՝ Գօլպէրն աւելի ուժգին հարուածեր էր քան թէ այս իր խորամանկութեամբը, չարակամութեամբը, երկայնամիտ ատելութեամբը Ֆուքէն հարուածելու չէր յաջողած։

Թ

ՖՕՆԴԷՆՊԼՕ ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄՆ ԵՐԿՈՒՔԻՆ

Ինչպէս որ տեսանք՝ Սէնդ-Էնյան Թագաւորին սենեկէն դուրս ելեր էր, այն միջոցին որ վերատեսուչը ներս կ՚մտնէր։

Սէնդ-Էնյան ստիպողական պաշտօն մը ստանձնած էր. այսինքն Սէնդ-Էնյան իր ձեռքէն եկածը պիտի ընէր որ իր ժամանակէն օգուտ քաղէ։

Հաղուագիւտ մարդ մ'էր արդարև այն մարդն որ իրրև թագաւորին բարեկամն ընծայեցինք. Թանկագին դրանիկներէն մին էր այն որու ժրաջանութիւնն ու անձանձիր ուշադրութիւնն այն ժամանակէն 'ի վեր ամէն անցեալ և ապագայ մտերմի կասկած կը տար և իր ժամապահութեամբը Տանժօի ստրկութեան կ'հակակշռէր։

Եւ իրաւի Տանժօ թագաւորին մտերիմը չէր միայն, այլ անոր կամակատարը։

Ուստի Սէնդ-Էնյան սկսաւ ստոյգ անդ շրջիլ։

Մտածեց որ իր ստանալիք առաջին տեղեկութիւնները միայն Կիշէն կրնար առնուլ։

Հետևապէս Կիշին ետևէն վազեց։

Կիշ՝ որուն անհերևոյթանալը տեսանք դղեկին մէկ թևին կողմը, և որ կարծես թէ իր տունը կ'մտնէր, բնաւ ներս մտած չէր։

Սէնդ-Էնյան Կիշը փնտռելու ելաւ։

Սէնդ-Էնյան շատ մը դառնալէն, շրջելէն, փնտռելէն ետև՝ բան մը տեսաւ մարդկային կերպարանի նման որ ծառի մը յենած էր։

Այս կերպարանն արձանի մ'անշարժութիւնն ունէր՝ և շատ զլսաղած կ'երևէր պատուհանի մը նայելով՝ թէև այս պատուհանին վարագոյրները կուռակուռ դոցուած էին։

Որովհետև այս պատուհանն իշխանուհւոյնն է, Սէնդ-Էնյան մտածեց որ այս կերպարանը Կիշինը պիտի լինէր։

Յուշիկ մօտեցաւ և դիտեց որ չէր սխալեր։

Կիշ՝ իշխանուհւոյն հետ ունեցած խօսակցութենէ այնպիսի երջանկութեան բեռ մը կ'զգար որ իր ոտքերը բոլոր զօրութեամբը չէր կարող զայն կրել

Սէնդ-Էնյան ալ իր կողմէ գիտէր որ Կիշ բաւական ձեռնտու դտնուեր էր որ Լա Վալիէր իշխանուհւոյն մօտ հաստատուի. պալատական մը գիտէ ամէն բան և ամէն բան կ'յիշէ։ Մինակ՝ միշտ անդիտեր էր թէ ինչ պատճառաւ և ինչ պայմաններով Կիշ իր պաշտպանութիւնը շնորհեր էր Լա Վալիէրի։ Բայց՝ որովհետև շատ հարց ու փորձ ընելով շատ քիչ կ'պատահի որ մարդ

քիչ մը բան չիմանայ Սէնդ-Էնյան ալ կ'յուսար քիչ շատ բան քաղել Կիշին հարց ու փորձ ընելով՝ բոլոր փափկութեամբն և միանդամայն բոլոր թախանձանօքն որ կարող էր գործածել։

Սէնդ-Էնյանի յատակագիծն այս էր.

Եթէ ստանալիք տեղեկութիւնները լաւ լինէին՝ թագաւորին պիտի ըսէր ջերմագին թէ մարդարիտ մը ձեռք ձգած է, և արտօնութիւն պիտի խնդրէր այս մարգարիտն արքայական թագին մէջ դետեղել։

Եթէ տեղեկութիւնները լաւ չլինէին, և այս ալ կարելի բան մ'էր, պիտի քննէր թէ թագաւորն ինչ աստիճան կապուած էր Լա Վալիէրի, և իր տեղեկութիւններն այնպէս մը պիտի ներկայացնէր որ փոքրիկ օրիորդն արքունիքէն արտաքսուի, որպէս զի այս արտաքսման վրայ պարծի այն բոլոր կանանց մօտ որ կրնային թագաւորին սրտին տիրապետելու փափաք ունենալ, իշխանուհիէն սկսելով մինչև թագուհին։

Եթէ տեսնէր որ թագաւորին փափաքն անդրդուելի էր՝ անշահ ծանօթութիւնները պիտի սքօղէր. պիտի իմացնէր Լա Վալլիէրի որ այս անշահ ծանօթագիրներն՝ առանց բացառութեան՝ մտերմին յիշողութեան մէկ գաղտնի գզրոցին մէջ փակուած են, այսպէս վեհանձնութիւն պիտի ծախէր տարաբաղդ օրիորդին, և երախտագիտութեամբ ու երկիւղով զանի շարունակ իրմէ կախեալ էակ մը պիտի ըներ, որպէս զի արքունեաց մէջ իրեն բարեկամուհի մ'ընէ զանի, իրրև դաւադիր իր դաւակցին բաղդը շինելու տրամադիր, իր յատուկ բաղդը շինելու ատեն։

Իսկ եթէ անցեալին ռումբը պայթելու օրը գար, ենթադրելով որ այս ռումբն երբէք չպիտի պայթէր, Սէնդ-Էնյան անհերկիւղ էր որ իր բոլոր զգուշութիւններն առած էր որպէս զի թագաւորին առջև տգէտ ձևանայ։

Նոյն օրն իսկ՝ Լա Վալիէրի մօտ վեհանձնութեան փառաւոր դեր մը խաղալու առիթ պիտի ունենար։

Ահա այս ամէն գաղտիարներովն էր՝ որ կէս ժամու մէջ ընչասիրութեան կրակէն ծաղում առեր էին, Սէնդ-Էնյան՝ աշխարհիս լաւագոյն որդին, ինչպէս պիտի ըսէր Լա Ֆոնդէն, այսինքն

իր երջանկութեան մէջ զանի վրդովելու, երջանկութիւն մ'որ սակայն Սէնդ-Էնյանի անյայտ էր։

Առաւօտեան ժամը մէկ էր երբ Սէնդ-Էնյան Կիշը տեսաւ կանգնուն, անշարժ, ծառի մը կոճղին կոթնած, և այն լուսաւոր պատուհանին վրայ աչերը սևեռած։

Առաւօտեան ժամը մէկին, այսինքն գիշերուան ամենէն անուշ ժամը, այն ժամը զոր պատկերհանները մրտենիով և մեկոններով կ'պսակեն, այն ժամն երբ նկուն են աչունք, դողդոջուն սիրտը, ծանր գլուխը, և անցնող օրուան վրայ վշտալի ակնարկ մը կը նետէ, որ նոր օրուան սիրային բարև մը կ'ուղղէ։

Բայց Կիշին համար այն ժամն անպատում երջանկութեան մը արշալոյսն էր. իր Ճամբուն վրայ կանգնող մուրացկանին դանձ մը տալու չափ տրամադիր կ'դանուէր, բաւական էր որ նոյն միջոցին իր երազները չվրդովէր։

Ճիշտ այս ժամուս էր որ Սէնդ-Էնյան՝ անխորհուրդ կերպով, եսականութիւնը միշտ վատ խորհրդատու է, եկաւ անոր ուսին զարկաւ երբ բառ մը կամ անուն մը կ'մրմնջէր։

— Ա՛հ — դոչեց նա կոշտաբար — ես ալ քեզ կ'փնտռէի։

— Զինս — ըսաւ Կիշ դող ելնելով։

— Այո՛, և կ'դանեմ քեզ ահա լուսնկային երաղող։ Արդեօք դիպուածով բանաստեղծութեան՞ ախտով բռնուեցար, սիրելիդ իմ կոմս, և մթէ ոտանաւորնե՞ր կ'յօրինես։

Երիտասարդը Ճիգ ըրաւ որ ժպտի, մինչդեռ բիւրուբիւր անէծք կ'թափէր Սէնդ-Էնյանի դէմ իր սրտին խորէն։

— Կարելի է — ըսաւ Կիշ. — բայց ինչ բարեբաղդ դիպուած։

— Ա՛հ, ահա ըսածէդ կ'իմանամ որ խօսքս լաւ չլսեցիր։

— Ինչպէ՞ս։

— Այո՛, նախ ըսի որ քեզ կ'փնտռէի։

— Զի՞նս կ'փնտռէիր։

— Այո՛, և քեզ բռնեցի խօսքէդ։

— Ի՞նչ բանով, կ'աղաչեմ։

— Փիլիսի վրայ երդելու ատենդ։

— Իրաւ է, չեմ ուրանար — ըսաւ Կիշ ծիծաղելով — այո՛, Փիլիսը կ'երգեմ։

— Արդէն այն քուկդ է։

— Ի՞մ։

— Անշուշտ քուկդ։ Դու ամէն գեղանի և մտացի կնկան անվեհեր պաշտպանը։

— Սատանայ, ի՞նչ բաներ պատմելու եկար։

— Ինքնայայտ Ճշմարտութիւններ, քաջ գիտեմ։ Բայց կեցիր, ես ալ սիրահարած եմ։

— Դո՞ւ։

— Այո՛։

— Աւելի լաւ, սիրելի կոմս։ Եկուր պատմէ նայիմ ինձ այդ բանը։

Եւ Կիշ՝ վախնալով թերևս փոքր ինչ ուշ, որ Սէնդ-Էնյան այն լուսաւոր պատուհանը չդիտէ, կոմսին թեւը բռնեց և զանի հեռուն տանելու ջանաց։

— Ո՛հ — ըսաւ Սէնդ-Էնյան գիմադրելով — մի՛ տանիր զիս սա սև անտառներու կողմը. այն կողմը շատ խոնաւ է։ Սա լուսնկային մնանք, կ'ուզե՞ս։

Եւ որչափ որ Կիշի թեւին Ճնշման տեղի տուաւ, դարձեալ դղեկին մօտ եղող ածուներուն մէջ կեցաւ։

— Նայինք — ըսաւ Կիշ երկայնմտութեամբ — ուր որ կ'ուզես առաջնորդէ զիս, և հարցուր ինչ որ քեզի հաճելի կ'թուի։

— Ո՛րչափ բարեհամբոյր ես։

Յետոյ մանրերկրորդ մը լռութիւն պահելէն ետև,

— Սիրելի կոմս — շարայարեց Սէնդ-Էնյան — կ'փափաքէի որ ինձ երկու խօսք ըսես, քու պաշտպանած մէկ անձիդ վրայ։

— Եւ զոր դու կ'սիրե՞ս։

— Ո՛չ հա՛ ոչ չէ՞ կ'ըսեմ, սիրելիդ իմ.... Կ'իմանաս որ մարդ չգիտցած տեղն իր սիրտը չտար, և պէտք է կանխաւ ապահովութիւններ ստանալ։

— Իրաւունք ունիս — ըսաւ Կիշ հառաչելով — անգին է, սիրտ մը։

— Նա մանաւանդ իմս փափուկ է, և իբր այն կ'ներկայացնեմ քեզի։

— Ո՛Հ, դու ծանօթ ես արդէն, կոմս։

— Վերջը՞։

— Աւասիկ ըսելիքս. խնդիրն օրիորդ Դօնէյ–Շարանդի վրայ է։

— Ա՛Հ, ինձ նայէ, սիրելիդ իմ Սէնդ–Էնյան, կարծեմ թէ ֆելէքդ կ՚թուցնես։

— Ինչո՞ւ համար։

— Ես երբէք օրիորդ Շարանդը պաշտպանած չեմ։

— Բէ՛Հ։

— Երբէ՛ք։

— Միթէ դու չէիր Շարանդ օրիորդն իշխանուհոյն մօտ գնողը։

— Օրիորդ Դօնէյ–Շարանդ, և այս բանս դու ամենէն աւելի քաջ գիտնալու պարտաւոր էիր, սիրելիդ իմ կոմս, ազնուական տոհմէ լինելուն ամենուն փափաքելի է, և ես առաւել ընդունելի։

— Կ՚ծաղրես զիս։

— Ո՛չ, պատոյս վրայ կ՚ըսեմ, չեմ հասկընար թէ ինչ ըսել կ՚ուզես։

— Ուրեմն այսպէս անոր ընդունելութեան մասնակից չեղար ընաւ։

— Ո՛չ։

— Միթէ չե՞ս ճանչեր զանի։

— Առաջին անգամ տեսայ զանի երբ իշխանուհոյն ներկայացաւ։ Այսպէս՝ ըստ որում զանի չպաշտպանեցի, որովհետև զանի չեմ ճանչեր, չեմ կրնար, սիրելի կոմս, խնդրած տեղեկութիւններդ տալ անոր վրայ։

Եւ Կիշ շարժում մ՚ըրաւ իր խօսակցէն բաժնուելու համար։

— Կեցէ՛ր, կեցէ՛ր — ըսաւ Սէնդ–Էնյան — պահ մը համբերէ, սիրելիդ իմ կոմս, այդպէս շուտով ձեռքէս չպիտի փախչիս։

— Ներէ, բայց կ՚երևի ինձ որ տուն դառնալու ատենն է։

— Սակայն ներս մտնելու վրայ չէիր, երբոր քեզ՝ չէ թէ հանդիպեցայ, այլ գտայ։

— Ուստի, սիրելի կոմս, եթէ տակաւին ինձ բան մ՚ունիս ըսելու՝ պատրաստ եմ քեզ մտիկ ընելու։

— Եւ շատ լաւ կ՚ընես, ճշմարիտը։ Եթէ կէս ժամ աւելի

կամ պակաս մնաս, դարձեալ տանթէ՛ներդ ոչ աւելի ոչ նուազ պիտի խանգարին։ Երդում ըրէ՛ ինձ որ անոր վրայ դէշ տեղեկութիւններ չունէիր ինձ ընելու, և թէ այս դէշ տեղեկութիւնները՝ զոր թերևս ինձ հաղորդէիր՝ քու լուութեանդ պատճառ չեն։

— Ո՛Հ, սիրական օրիորդը, կարծեմ թէ բիւրեղի պէս յստակ է։

— Ուրախութեամբ կ՚ընես զիս։ Սակայն չեմ ուզեր քու առջևդ երևցածիս պէս անտեղեակ մարդու մը դէմքը ցուցնել։ Այս ճշմարիտ է որ իշխանուհոյն պատոյ օրիորդներէն մէկ քանին դու դատար։ Նա մանաւանդ այդ մատակարարութեանդ վրայ երդ մ՚ալ շինեցին։

— Դիտես, սիրելի բարեկամ, որ ամէն բանի վրայ երդ կը շինեն։

— Միթէ գիտե՞ս։

— Ո՛չ, բայց երդէ՛ զայն, պիտի սորվիմ։

— Չեմ կարող ըսել թէ ինչպէս կ՚սկսի, բայց կ՚յիշեմ թէ ինչպէս կ՚լմնայ։

— Լա՛ւ, այդ ալ մեծ բան մ՚է։

Պատոյ օրիորդներու
Կիշն է մատակարար։

— Այդ խմաստը տկար է և ոտանաւորն անշահ։

— Ա՛հ, ինչ կ՚ուզէիր, սիրելիդ իմ, ո՛չ, Ռասին և ոչ Մոլիէր շինած է զանոնք, այլ Գէոյլատ, և մեծ ազնուական մը չէ կարող բանաստեղծի պէս բանահիւսել։

— Իրաւի, ցաւալի է որ մինակ ոտանաւորին վերջը գիտես։

— Կեցէ՛ր, կեցէ՛ր, աւասիկ երկրորդ նուագին սկիզբն որ միաբս կ՚գայ։

Լեցոց նա հանոցը,
Մանդալէն Լ . . . ։

— Անօրէն, հապա Լա Վալիէր — գոչեց Կիշ անհամբեր, և մանաւանդ չգիտնալով թէ Սէնդ–Էնյան խօսքն ուր պիտի բերէր։

— Այո՛, այո՛, այդ է Լա Վալիէրը, գտար յարմար բառը, սիրելիդ իմ։

— Իրաւ որ, աղուոր գիւտ։

— Մօնդալէ և Լա Վալիէր, ճիշտ այդպէս։ Աւասիկ այս երկու փոքրիկ աղջիկներն են քու պաշտպանածներդ։

Եւ Սէնդ-Էնյան սկսաւ ծիծաղել։

— Ուրեմն, երգին մէջ չես գտներ օրիորդ Դոնէյ-Շարանդ — ըսաւ Կիշ։

— Իրաւ որ չեմ գտներ։

— Ուրեմն գոհ ես։

— Անշուշտ, բայց Մօնդալէն կ'գտնեմ — ըսաւ Սէնդ-Էնյան միշտ ծիծաղելով։

— Ո՛հ, զանի ամէն տեղ պիտի գտնես։ Շատ շարժուն օրիորդ մ'է։

— Միթէ կ'ճանչես։

— Ուրիշի միջոցաւ։ Նա պաշտպանութիւն գտած էր Մալիքօրն անուն անձէ մ'որու պաշտպանն էր Մանիքան։ Այս Մանիքանն իշխանուհւոյն պատուոյ օրիորդ առաջարկեց ինձ ընել Մօնդալէն, և արքայազնին մօտ ալ սպայի պաշտօն մ'ուզեց Մալիքօրնի համար։ Ես ալ խնդրեցի. դիտես որ այն չարաճճի Մանիքանին համար մասնաւոր սէր կ'տածեմ։

— Եւ միթէ ստացա՞ր այդ պաշտօնը։

— Մօնդալէի համար, այո՛, ստացայ. իսկ Մալիքօրնի համար այո՛ և ո՛չ. միայն այժմ թոյլ տրուած է իրեն արքունիքը գալու։ Միթէ ա՞յս է բոլոր գիտնալ ուզածդ։

— Կ'մնայ վերջնայանդը։

— Ի՞նչ վերջնայանդ։

— Գտած վերջնայանդդ։

— Լա Վալիէ՞ր։

— Այո՛։

Եւ Սէնդ-Էնյան վերստին սկսաւ իր ծիծաղն որ Կիշը կ'դրդռէր։

— Լաւ ուրեմն — ըսաւ այս վերջինը — իրաւ է որ ես մացուցի զանի իշխանուհւոյն մօտ։

— Հա՛, հա՛, հա՛ — ըրաւ Սէնդ-Էնյան։

— Բայց — շարունակեց Կիշն իր ամենապաղ դէմքով — գիս

շատ գոհ պիտի ընես, սիրելի կոմս, եթէ այս անունը կատակի չես առնուր։ Օրիորդ Լա Պոմ Լը Պլան տը Լա Վալիէր բոլորովին խելօք անձ մ'է։

— Բոլորովի՞ն խելօք։

— Այո՛։

— Բայց ուրեմն նոյն ձայնը չե՞ս լսեր — գոչեց Սէնդ-Էնյան։

— Ո՛չ, մանաւանդ ինձ ծառայութիւն պիտի ընէիր, սիրելի կոմս, եթէ այդ ձայնը քեզի և զայն հանողներուն համար պահես։

— Ա՛հ, բէհ, գործը ծանրէն կ'առնուս։

— Այո՛, օրիորդ Լա Վալիէրն իմ բարի բարեկամներէս մէկէն սիրուած է։

Սէնդ-Էնյան գոչ ելաւ։

— Հօ՛, հօ՛ — ըրաւ նա։

— Այո՛, կոմս — շարունակեց Կիշ։ — Հետևապէս կ'հասկըցնաս, դու որ Ֆրանսայի ամենէն քաղաքավար մարդն ես, չեմ կարող իմ բարեկամիս վիճակը ծաղրելի վիճակ մ'ընել։

— Ո՛հ, սքանչելի է։

Սէնդ-Էնյան իր մատները կ'խածնէր կէս մը սրտմտութենէ և կէս մ'ի դերև ելած հետաքրքրութենէն։

Կիշ անոր աղուոր բարև մը տուաւ։

— Ձիս կ'վռնտես ուրեմն — ըսաւ Սէնդ-Էնյան որ բարեկամին անունն իմանալու համար անչափ փափաք ունէր։

— Ես քեզ չեմ վռնտեր, սիրելի բարեկամ... այլ միայն առ Ֆիլիս իմ ոտանաւորներս կ'ուարտեմ։

— Հապա այդ ոտանաւորները...։

— Քառեակ մ'են։ Կ'իմանաս անշուշտ որ իմ քառեակս նուիրական է։

— Այո՛, Տէր վկայ։

— Եւ որովհետև չորս ոտանաւորներէն չորս ինչպէս շինելու պարտիմ, տակաւին երեք ոտանաւոր ունիմ շինելու և մէկ կարդակէս. ուստի գլուխս պէտք է որ հանդարտ լինի։

— Այդ գիւրին է իմանալ. մնաս բարեաւ, կոմս։

— Սնաս բարեաւ։

— Աղէկ միտքս ընկաւ . . . :

— Ի՞նչ բան :

— Մի թէ դիւրութիւն ունիս :

— Զափազանց :

— Մի թէ վաղն առաւ այդ երեք ու կէս ոտանաւորդ պիտի լմնցնես :

— Կ'յուսամ :

— Լաւ ուրեմն , վաղը տեսնուինք :

— Վաղը , մնաս բարեաւ :

Ակամայ Սէնդ-Էնյան հրաժեշտն ընդունեցաւ , ընդունեց և թափերուն ետև աներևոյթ եղաւ :

Խօսակցութիւնը դղեկէն բաւական հեռու տարեր էր Կիշն ու Սէնդ-Էնյան :

Ամէն չափաբան , ամէն բանահիւս և ամէն երաղող իր ուշադրութեան ժամերն ունի . ուստի Սէնդ-Էնյան՝ Կիշէն բաժնուելուն , հովանոցին սահմանը դտնուելուս , այն տեղն ուր կ'սկսին ուղիներն և ուր աբասիայի և շաղանակենիի մեծ փունջերու ետև իրենց ոդկոյզներն ածելով նորատունկ որթերու կոյտերու ներքև , բակին և արտին մէջ տեղ բաժանման պատը կ'բարձրանայ :

Սէնդ-Էնյան մինակ մնալով շէնքին ճամբան բռնեց , Կիշ ներհակ կողմը դարձաւ : Հետևապէս մին դէպ 'ի ածուները կը դառնար , մինչդեռ միւսը դէպ 'ի պատերը կ'երթար :

Սէնդ-Էնյան հսկայաձև սին , շեփորուկ և դժնիկ ծառերու անթափանցելի կամարին ներքև կ'քալէր , կակուղ աւազի վրայ կոխելով , ստուերին մէջ պահուած և մամլոյ մէջ խեղդուած :

Վրէժ առնլու կ'որոնար , թէև դժուարին կ'երևէր իրեն այս բանս , և միանդամայն բոլորովին յուսահատ էր որ Լա Վալիէրի վրայ պէտք եղածը կրցեր էր իմանալ , թէև յաջողելու համար իր բոլոր ճարտարամտութիւնն և ուղմպիտութիւնն 'ի գործ դրեր էր :

Յանկարծ մարդկային ձայնի դայլայլիկ մը մինչև ականջը հասաւ : Կարծես թէ փսփսուք էր , կնային տրտունջներ էին հարցումներով խառն մեղմիկ ծիծաղներ , հառաչներ , զարմացման

խեղդուկ ճիկներ էին , բայց այս ամենուն վրայ կնկան ձայնը կը տիրապետէր :

Սէնդ-Էնյան կայ առաւ ասպիս անդին թափառելու համար . յետին ծայր զարմանաք հասկցաւ որ ձայները չէ թէ երկրէն այլ ծառերուն դագաթէն կ'դային :

Գլուխը վերցուց ծառուղւոյն ներքև սահելով և պատին կատարին վրայ կին մը տեսաւ՝ ելնարանի մը վրայ դադարած , որ ծառի մը վրայ թառած մարդու մը հետ ձևերով և խօսքով կը հաղորդակցեր , թէև այս մարդուն գլուխը չէր տեսնուեր , վասն զի մարմինը շաղանակի ծառի մը ստուերին մէջ կորսուեր էր :

Ժ

ԼԱՓԻՒՐԻԹՈՍ

Սէնդ-Էնյան տեղեկութիւններ առնլու ելեր էր և արկած մը կ'գտնէր : Այս բարեբաղդութիւն մ'էր :

Հետաքրքիր լինելով իմանալու թէ ինչու համար մանաւանդ ինչ բանի համար այս մարդն ու կինը նոյնպիսի ժամ մ'իրարու հետ կ'խօսակցէին այն տարօրինակ կացութեան մէջ , Սէնդ-Էնյան կրցածին չափ փոքրցաւ և գրեթէ ելնարանին փայտերուն մօտեցաւ :

Այն ատեն՝ կարելի եղածին չափ հանգիստ լինելու համար պէտք եղած միջոցները գործածելով , ծառի մը կոթնեցաւ և մտիկ ըրաւ :

Հետևեալ տրամախօսութիւնը լսեց :

Կինն էր խօսողը :

— Ճշմարիտը , Պ. Մանիքան — կ'ըսէր նա ձայնով մ'որ՝ ըրած յանդիմանութեանցը մէջ պչրասիրութեան զարմանալի շեշտ մ'ունէր — Ճշմարիտը՝ խիստ վատանգաւոր անխոհեմութեան տէր մարդ մ'ես : Եթէ այսպէս մեր խօսակցութիւնը շարունակենք՝ պիտի բռնուինք :

— Շատ հաւանական է — ընդմիջեց մարդը խիստ հանդարտ և մաղձոտ ձայնով մը։

— Լաւ, այն ատեն ինչ պիտի ըսեն։ Ո՛հ, թէ որ մէկը զիս տեսնէր այսպէս՝ ահա կ՚յայտնեմ քեզ որ ամօթէս պիտի մեռնէի։

— Ո՛հ, տղայական բան մ՚ըրած պիտի լինիս և չեմ կարծեր թէ այդպիսի բան մ՚ընես։

— Գոնէ մեր երկուքին մէջ եթէ քարոսն մը գտնուէր, դարձեալ փոյթ չէր, բայց այսպէս զերար ձրիապէս վտանգելը, իրաւի յիմարութիւն մ՚է։ Մնաս բարեաւ, Պ. Մանիքան։

— Լաւ, մարդը կ՚ճանչեմ, հիմակ պէտք է որ կինն ալ ճանչեմ — ըսաւ Սէնդ-Էնյան իւրովի՝ ելնարանին փայտերը փնտռելով՝ երկու սրնքայց ծայրերն որ վայելչապէս երկնագոյն սնդուսէ մուճակներ և մսագոյն մետաքսէ գուլպաներ հագեր էին։

— Ո՛հ, կեցիր, կեցիր, կ՚աղաչեմ, սիրելիդ իմ Մօնդալէ — գոչեց Մանիքան — մի խոյս տար, կ՚աղաչեմ։ Տակաւին ամենակարևոր բաներ ունիմ քեզի ըսելու։

— Մօնդալէ — մտածեց ինքնովին Սէնդ-Էնյան — և այս յերիկ է։ Այն երեք ընկերուհիներն իրենց յատուկ սիրահարներն ունին. միայն ինձ այնպէս թուեր էր որ ասոր սիրողը Մալիքօրն կ՚անուանէր և չէ թէ Մանիքան։

Իր խօսակցին այս կոչման վրայ՝ Մօնդալէ վար իջնելու ատենը կայ առաւ։

Այն ատեն անբաղդ Մանիքան իր ծառին վրայ՝ գստիկոն մը վեր մագլցեց, բռնէ թէ աւելի օգուտ քաղելու բռնէ թէ իր անշահ գրիչ տաղտուկը բառնալու համար։

— Նայինք — ըսաւ — մտիկ ըրէ ինձ. յուսամ թէ գիտես որ դէշ խորհուրդ մը չունիմ։

— Անտարակոյս . . . : Բայց՝ վերջապէս, ինչու համար գրած գիրդ ինձ զրկեցիր, իմ երախտագիտութիւնս գրգռելով։ Ինչու համար այսպիսի ատեն մ՚ինձի հետ ժամադիր կ՚լինիս, մանաւանդ այսպիսի վայր մը։

— Երախտագիտութիւնդ գրգռեցի՝ յիշեցնելով քեզ որ ես իշխանուհոյն մօտ գրի, վասն զի ինձ շնորհած տեսակցութեանդ

յոյժ փափաքելով, ինձ ամենէն ապահով երևցած միջոցը գործածեցի։ Ինչու համար այսպիսի ժամ մը և այսպիսի վայր մը քեզի հետ տեսակցիլ ուզեցի։ Պատճառն այն է որ ժամն ամենէն պատշաճ և վայրը մենական երևցան ինձ։ Արդ՝ քեզի այնպիսի հարցումներ ունիմ ուղղելու որ խոհեմութիւն և առանձնութիւն կ՚պահանջէին։

— Պարո՛ն Մանիքան։

— Ամէն լաւ բան պատուաւոր բան է, օրիորդ։

— Պարո՛ն Մանիքան, կարծեմ թէ աւելի պատշաճ պիտի լինէր եթէ քաշուէի։

— Մտիկ ըրէ ինձ, թէ ոչ իմ բոյնէս քուկդ պիտի ցատկեմ. և զգոյշ եղիր ինձ դիմադրաւ կենալու, վասն զի՝ այս պահուս իսկ՝ շապանակենին մէկ ոստը զիս կ՚նեղէ և անխոհեմութիւններ ընելու կ՚յորդորէ զիս։ Այս ոստին մի՛ հետեւիր և ինձ մի՛ դիր։

— Մտիկ կ՚ընեմ քեզ, կ՚հաւանիմ մնալու, բայց կարճ կասպէ, վասն զի եթէ քեզ գրգռող ոստ մը կայ՝ ես ալ եռանկիւսպէ, վասն զի եթէ քեզ գրգռող ոստ մը կայ՝ ես ալ եռանկիւնաձև ելնարան մ՚ունիմ որ ոտիցս ներբանը կ՚մտնէ։ Իմ սոլերներս ծակուեցան, ահա կանխաւ կ՚իմացնեմ քեզի։

— Բարեկամօրէն ձեռքդ ինձի տուր, օրիորդ։

— Եւ ինչու համար։

— Դուն տուր նայիմ։

— Աւասիկ ձեռքս, բայց ի՞նչ կ՚ընես նայիմ։

— Քեզ դէպ ինձ կ՚քաշեմ։

— Ի՞նչ նպատակաւ։ Կարծեմ թէ մտքդ զիս ծառիդ վրայ բերել չէ։

— Ո՛չ, այլ կ՚փափաքիմ որ պատին վրայ նստիս, այդ տեղ, ահա. տեղը լայն ու աղոր է, և մեծ շնորհ պիտի ընէիր ինձ եթէ ներքիր որ քովդ նստիմ։

— Ո՛չ, բնաւ. եղած տեղդ աղէկ ես, մեզ պիտի տեսնեն։

— Կ՚կարծե՞ս — հարցուց Մանիքան համոզակեր ձայնով մը։

— Ես տոյդ եմ։

— Թող այդպէս լինի. ես իմ ծառիս վրայ կ՚մնամ, թէև այս տեղս շատ անհանգիստ եմ։

— Պարո՛ն Մանիքան, Պ. Մանիքան, խնդրէն կ՚հեռանանք։

— Ճիշտ է։

— Դու ինձ գիր գրեցիր։

— Շատ լաւ։

— Բայց ինչո՞ւ համար գրեցիր։

— Երևակայէ՛ որ այսօր Կիշ մեկնեցաւ՝ ժամն երկուքին։

— Ա՜խ։

— Անոր մեկնելը տեսնելով, անոր հետևեցայ, ինչպէս որ իմ՝ սովորութիւնս է։

— Կ՚նայիմ որ ստոյգ է, քանի որ ասա՛ ես։

— Բայց մտիկ ըրէ . . . . Գիտես, այնպէս չէ՞, որ այն անբաղդ Կիշը Թագաւորին երեսէն շատ ընկեր էր։

— Ափսո՛ս, այո՛։

— Հետևապէս Կիշ ամենամեծ անխոհեմութիւն ըրաւ Փոնդէնպլը դառնալ գտնելու անոնք որ զինքը Բարիզ աքսորեր էին, մանաւանդ անոնք որ զինքը հեռացուցեր էին։

— Բարեյիշատակ Պիւթագորասին պէս կ՚տրամաբանես, Պ. Մանիքան։

— Արդ՝ Կիշ սիրողի պէս կամակոր է. ուստի իմ յանդիմանութեանցս ականջ չկախեց բնաւ։ Աղաչեցի, պողոտեցի զինքը. չուզեց բան մը մտիկ ընել. . . ա՜հ, կրո՛ղ։

— Ի՞նչ ունիս,

— Ներէ՛, օրիորդ, բայց սա անիծեալ ոստն է որու վրայ քեզ խօսելու պատիւն ունեցայ, որ իմ վարտիքս պատռեց։

— Դիշեր է — պատասխանեց Մօնդալէ ծիծաղելով — շարունակենք, Պ. Մանիքան։

— Ուստի Կիշ ձիով հասցնելով ճամբայ ելաւ, ես ալ ետևէն քայլ առ քայլ եկայ։ Կ՚իմանաս անշուշտ՝ որ բարեկամի մը հետ երթալ ծոմն ընկնելն իրեն չափ շուտ վազելով՝ յիմարի կամ խելացնորի գործ է, ուստի թողուցի որ Կիշ առջևէն գնայ և խոհական ծանրութեամբ կ՚ուղևորուի, համոզուած լինելով որ անբաղդ պատանին չպիտի ընդունուի, կամ եթէ ընդունուէր, առաջին քարն ուտելուն պիտի ետ դառնար, և այն ատեն վերադարձն աւելի արագ պիտի լինէր քան թէ չուն, առանց աւելի հեռուն գնալու Րի կամ Մըլէօնէն, և այս ալ բաւական երկայն ճամբայ մ՚էր, կ՚խոստովանիս անշուշտ, տասն մղոն երթ և տասն դարձ։

Մօնդալէ ուսերը բարձրացուց։

— Որչափ որ կ՚ուզես ծիծաղէ, օրիորդ, բայց եթէ փոխանակ պատի մը դարակին վրայ հանդիստ նստելու, ինչպէս որ ես նստեր, ինձի պէս սա ոստին վրայ աշտանակած լինէիր, Օդոստոսին պէս պիտի ընէիր, վար իջնելու պիտի տենչայիր։

— Փոքր ինչ ես համբերէ, սիրելիդ իմ Պ. Մանիքան, վայրկեան մը շուտով կ՚անցնի. արդ կ՚ըսէիր թէ Րիէն և Մըլէօնէն անցեր էիր։

— Այո՛, Րի և Մըլէօնէ անցայ, իմ ընթացքս շարունակեցի, զարմանալով միշտ որ անոր վերադարձը չեմ տեսներ. 'ի վերջէ՝ Փոնդէնպլը հասայ. ամէն տեղ կ՚դիմեմ, ամէն ուրեք Կիշի վրայ տեղեկութիւններ կ՚փնտռեմ, ոչ ոք զանի տեսեր, ոչ ոք անոր խօսեր էր քաղքին մէջ. սրարշաւ եկեր, դղեակը մտեր և անհետացեր եղեր է։ Երեկոյեան ժամն ութէն վեր Փոնդէնպլը կ՚զտնուիմ, բոլոր արձագանքներուն հարցնելով Կիշը, Կիշ չկայ։ Մտատանջութենէս կ՚մաշիմ։ Քաջ կ՚իմանաս որ ես ալ գայլին կոկորդը չեկայ ընկնելու. դղեակը մտնելու ատենս, ինչպէս որ ըրեր է իմ անխոհեմ բարեկամս, շիտակ ճեմելիքն եկայ, և քեզի նամակ մը հասցուցի։ Այժմ, օրիորդ, յանուն երկնից, այս իմ անձկութիւնս փարատէ։

— Այդ դժուարին չպիտի լինի, սիրելիդ իմ Պ. Մանիքան. քու Կիշ բարեկամդ աքանչելի կերպով ընդունուեցաւ։

— Բա՛։

— Թագաւորն անոր գալուստը շնորհաւորեց։

— Թագաւո՞ր, որ զանի աքսորեր էր։

— Իշխանուհին անոր ժպտեցաւ. իսկ արքայազունը կարծես թէ զանի առաջուանէ աւելի կ՚սիրէ։

— Հա՛, հա՛ — ըրաւ Մանիքան — ասկից կ՚իմանամ թէ ինչո՞ւ համար և ի՞նչպէս մնաց։ Միթէ իմ խօսքս չըրա՞։

— Եւ ոչ խակ բառ մը։

— Այդ չվայլեցուցի իրեն։ Այս պահուս ի՞նչ կ՚ընէ։

— Ըստ ամէն հաւանականութեան, կ՚ննջէ նա, կամ, եթէ չննջեր, կ՚երազէ։

— Եւ ի՞նչ ըրին բոլոր երեկոյթը։

— Պարեցին։

— Երեւելի պարեկը։ Կիշն ի՞նչպէս էր։

— Փառաւոր։

— Այդ սիրակա՛ն բարեկամս։ Այժմ, ներէ՛, օրիորդ, բայց կ՚մնայ ինձ իմ բնակարանէս քու բնակարանդ անցնիլ։

— Ի՞նչպէս։

— Քաջ կրնաս հասկընալ, որ այս ժամուս չեմ կարծեր թէ դղեկին դուռը բանան ինձ, իսկ եթէ այս Ճիւղիս վրայ ննջել առաջարկուի ինձ, յօժարակամ կ՚ննջի, բայց բացարձակ կ՚ըսեմ որ դործն անկարելի է ուրիշ որ և է կենդանւոյ քան թուխակի մը։

— Բայց ես, Պ. Մանիքան, ես չեմ կարող այդպէս պատին վրայէն մարդ մը ներս առնուլ։

— Երկու մարդ, օրիորդ — ըսաւ երիտասարդ ձայն մը, բայց այնպիսի վեհերոտ շեշտով մ՚որ կ՚երևէր թէ այն ձայնը հանողն այդպիսի խնդրոյ մ՚անպատեհութիւնը կ՚զդար։

— Աստուա՛ծ իմ — գոչեց Մօնդալէ ջանալով իր ակնարկը մինչև ծառին ստորոտը թափանցելու — ո՞վ կ՚խօսի ինձ։

— Ես, օրիորդ։

— Ո՞վ ես դու։

— Մալիքօրն, քու ամենախոնարհ ծառադ։

Եւ Մալիքօրն այս խօսքերն ըսելով դետնէն ծառին վարի Ճիւղերը բռնեց և պատին հաւասարութեամբ վերի Ճիւղերուն հասաւ։

— Պ. Մալիքօ՛րն . . . բարերա՛ր Աստուած, միթէ երկուքնիդ ալ կատղե՞ր էք։

— Ի՞նչպէս էք, աղէ՞կ էք, օրիորդ — հարցուց Մալիքօրն շատ մը քաղաքավարական ձևերով։

— Այդ պակաս էր ինձ — գոչեց Մօնդալէ յուսահատ։

— Ո՛հ, օրիորդ — մրմնաց Մալիքօրն — կ՚աղաչեմ այդչափ խստաբարոյ մի՛ լինիր։

— Վերջապէս, օրիորդ — ըսաւ Մանիքան — մենք քու բարեկամներդ ենք, և մարդ իր բարեկամաց մահը չփափաքիր։ Արդ՝ եթէ թողուս որ դիշերն այս տեղ անցընենք, մեզ մահուան դատապարտած պիտի լինիս։

— Ո՛հ — ըսաւ Մօնդալէ — Պ. Մալիքօրն ուժեղ է, և պիտի մեռնի դիշեր մ՚ատեղափայլ երկնից ներքև անցընելով։

— Օրիո՛րդ։

— Այդ իր փախստեան արդար պատիժը պիտի լինի։

— Թո՛ղ այդպէս լինի։ Թո՛ղ ուրեմն Մալիքօրն քեզի հետ ուզածին պէս գործը կարգի դնէ, ես, ես՝ պիտի անցնիմ — ըսաւ Մանիքան։

Եւ, ծռելով այն նշանաւոր Ճիւղն որու դեմ այնքան դատն դանդատներ ուղղեր էր, իր ձեռքն ու ոտքը գործածելով յաջողեցաւ անցնիլ և Մօնդալէի քովիկը նստիլ։

Մօնդալէ ուզեց հրել Մանիքանը, Մանիքան ջանաց իր դիրքը բռնել։

Այս վէճն որ քանի մը վայրկեան տևեց, իր նկարչական կողմն ունեցաւ, կողմ մ՚որու մէջ Պ. Սէնդ-Էնյան իր ուզածը դտաւ։

Բայց Մանիքան յաղթանակեց։ Ելնարանին տիրելով՝ անոր վրայ գրաւ ոտքը, յետոյ իր ձեռքը թշնամուհւոյն երկնցուց քաջաբար։

Նոյն պահուն՝ Մալիքօրն՝ Մանիքանի ձգած տեղը շաղանակի ծառին վրայ կ՚տեղաւորուէր, առաջադրելով ինքնին անոր յաջորդելու այժմու բռնած տեղն անցնելով։

Մանիքան և Մօնդալէ քանի մ՚ատենՃան վար իջան, Մանիքան կ՚սնդէր, Մօնդալէ կ՚ծիծաղէր և ինքզինքը կ՚պաշտպանէր։

Այն ատեն լսելի եղաւ Մալիքօրնի ձայնն որ կ՚պաղատէր։

— Օրիո՛րդ — կ՚ըսէր Մալիքօրն — երեսի վրայ մի՛ թողուր զիս, կ՚աղաչեմ։ Իմ դիրքս վտանգաւոր է, և առանց գիսուածի չեմ կարող պատին միւս կողմը հասնիլ. թո՛ղ Մանիքան իր զդեստները պատռէ, փոյթ չէ իրեն համար, վասն զի Պ. Կիշին զդեստներն ունի. բայց ես, ես Մանիքանի զդեստներն անդամ չպիտի ունենամ, քանի որ պիտի պատռին։

— Կ՚մոռցեմ — ըսաւ Մանիքան, Մալիքօրնի ողբերն առ. ոչ ինչ դրելով — կ՚մոռցեմ որ ինձի համար լաւագոյն բան մը եթէ կայ՝ երթալ իսկոյն Կիշը գտնելն է։ Նոթէ ուշանամ կարելի է իր բնակարանը գոց գտնեմ։

— Իմ ալ կարծիքն այդ է — պատասխանեց Մօնդալէ — ուրեմն գնա, Պ. Մանիքան։

— Հազար շնորհ ունիմ քեզի։ Ի կրկին տեսութիւն, օրիորդ — ըսաւ Մանիքան դետինը ցատկելով — քանի՞ բարեսիրտ աղջիկ մ՚ես։

— Պ. Մանիքան, խոնարհ սպասուհիդ եմ։ Հիմակ երթամ պիտի Պ. Մալիքօրնը Ճամբելու։

Մալիքօրն հառաչ մը հանեց։

— Գնա, գնա — շարունակեց Մօնդալէ։

Մանիքան քանի մը քայլ առաւ, ապա ելնարանի ոտքը դալով,

— Աղէկ միտքս ընկաւ, օրիորդ, ըսէ ինձ, ո՞ր կողմն երթալու է Պ. Կիշին բնակարանը։

— Ա՛հ, իրաւ է . . . . Շատ պարզ բան։ Նշդարի հովանոցը կ՚բռնես . . . ։

— Ո՛հ, շատ լաւ։

— Դալարի քառուղին կ՚հասնիս . . . ։

— Լաւ։

— Այն տեղ չորս ծառուղի պիտի գտնես . . . ։

— Սքանչելի՛։

— Մէկը կ՚բռնես կ՚երթաս . . . ։

— Ո՞րը։

— Աջ կողմինը։

— Ա՞ջ կողմինը։

— Ո՛չ, ձախ կողմինը։

— Ա՛հ, սատանայ։

— Ո՛չ, ո՛չ . . . սպասէ նայինք . . . ։

— Դու ալ շատ ապահով չես . . . ուրեմն միտքդ բե՛ր, կ՚աղաչեմ. օրիորդ։

— Մէջ տեղինը բռնէ։

— Զորս հատ կայ։

— Իրաւ է։ Իմ գիտցածս սա է որ չորսէն մէկը կայ որ շիտակ իշխանուհւոյն բնակարանը կ՚տանի, այդ միայն գիտեմ։

— Բայց Պ. Կիշ իշխանուհւոյն բնակարանը չէ՞ կարծեմ, այնպէս չէ՞։

— Փա՛ռք Աստուծոյ, անդ չէ։

— Ուրեմն իշխանուհւոյն տանող Ճամբան ինձ անհոգուտ է, և կ՚փափաքէի զայն փոխել Կիշին բնակարանը տանող Ճամբուն հետ։

— Այո՛, անտարակոյս, այդ ևս կ՚Ճանչեմ, բայց ասկից զայն ցոյց տալն է ինձ անկարելի բան։

— Բայց վերջապէս, օրիորդ, ենթադրենք որ այն երանելի ծառուղին գտայ։

— Այն ատեն հասար անդ։

— Լաւ։

— Այո՛, այն ատեն կ՚մնայ քեզ լափիւրինթոսէն անցնիլ։

— Կրո՛ղ, ի՞նչ կ՚ըսես, ուրեմն լափիւրինթոս մը կայ։

— Բաւական կնճռոտ լափիւրինթոս մը, այո՛. ցերեկն անգամ մարդ անոր մէջ կ՚մոլորի երբեմն. պատ՚ի պատ անվերջ շրջանաներ են. պէտք է նախ աջ կողմն երեք պտոյտ ընել, յետոյ ձախ կողմն՝ երկու շրջան, յետոյ շրջան մ՚ալ . . . մէկ թէ երկու շրջան. կեցիր, նայիմ։ Վերջապէս լափիւրինթոսէն ելնելով՝ մոլաթզենիի ուղի մը պիտի գտնես, և այս մոլաթզենիի ուղին քեզ շիտակ Պ. Կիշին տաղաւարը կ՚տանի։

— Օրիորդ — ըսաւ Մանիքան — այդ սքանչելի ուղեգիծ մ՚է, և տարակոյս չկայ որ այդ ուղեգծին հետևելով՝ անմիջապէս չկորսուիմ։ Հետևապէս փոքրիկ ծառայութիւն մ՚ունիմ քեզնէ խնդրելու։

— Ի՞նչ։

— Այսինքն թեզդ ինձի տաս և զիս առաջնորդես իբրև նոր . . . նոր . . . ։ Սակայն գիտցաբանութիւն մը գիտէի, օրիորդ, բայց գիպուածոց ծանրութենէ զայն մոռցայ։ Ուստի կ՚պաղատիմ, եկուր։

— Եւ զի՞ս, զի՞ս — գոչեց Մալիքօրն — երեսի վրայ կ՚թողուք։

— Է՛հ, պարոն, անկարելի բան է այդ խնդիրդ կատարել — ըսաւ Մօնդալէ Մանիքանի — թերևս այս ժամուս գիս քեզի հետ տեսնեն, և դատէ միանգամ թէ ինչէր չեն ըսեր։

— Խիղճդ քեզի հետ պիտի ունենաս, օրիորդ — ըսաւ Մանիքան վճռաբար։

— Անկարելի՛ բան, պարոն, անկարելի՛ բան։

— Ուրեմն թոյլ տուր որ վար իջնելու համար Մալիքօրնի օգնեմ. շատ մտայի տղայ մ՚է, և սուր հոտառելիք ունի, գիս կրնայ առաջնորդել, և եթէ մոլորինք, երկուքնիս մէկէն պիտի մոլորինք, որով երկուքնիս մէկէն պիտի ազատինք։ Եթէ մեզ երկուքին հանդիպին, այն ատեն բանի մը պիտի նմանինք, մինչ-զեռ, միայնակ՝ սիրողի կամ գողի մը կերպարանք պիտի ունենամ։ Մալիքօրն, եկուր, ահա ելնարանը։

— Պ. Մալիքօրն — գոչեց Մօնդալէ — կ՚արգիլեմ քեզ ծառէդ վար իջնելու, և եթէ իջնես բոլոր բարկութեանս հուրը գլուխդ պիտի թափեմ։

Մալիքօրն՝ որ արդէն ոտքին մէկն երկնցուցեր էր պատին կատարին վրայ, տրտմագին զայն քաշեց։

— Լռութի՛ւն — ըսաւ մեղմիկ Մանիքան։

— Ի՞նչ կայ — հարցուց Մօնդալէ։

— Ոտքի ձայն կ՚լսեմ։

— Ո՛հ, Աստուած իմ։

Արդարև՝ կասկածելի քայլերը յայտնի աղմուկ մը դարձուցին. տերևները բացուեցան, և Սէնդ-Էնյան երևան եկաւ, ծիծաղկոտ և ձեռքը կարկառուն, ամէն մէկն իր զանուած դիրքին մէջ յանկարծ գտնելով. այսինքն Մալիքօրն իր ծառին վրայ և վիզն երկնցած, Մօնդալէ աստիճանին վրայ՝ և ելնարանին փակած, Մանիքան գետինն ու ոտքն ընդ առաջ՝ ճամբայ ելնելու պատրաստ։

— Է՛հ, բարի իրկուն, Մանիքան — ըսաւ կոմսը — բարի եկար, բարեկամդ իմ, այս իրկուն բացակայ էիր և ամենքը քեզ կ՚փնտռէին։ Օրիորդ Մօնդալէ, ձեր . . . ձեր ամենախոնարհ ծառան եմ։

Մօնդալէ կարմրեցաւ։

— Ա՛հ, Աստուած իմ — թոթովեց նա իր գլուխն երկու ձեռացը մէջ ծածկելով։

— Օրիորդ — ըսաւ Սէնդ-Էնյան — մի վրդովիր. ես քու անմեղութիւնդ քաջ կ՚ճանչեմ, և աղեկութիւնդ պիտի խօսիմ։ Մանիքան, հետևէ ինձ։ Հովանոց, քառուղի և Լաֆիրինթոս, ամէն բան ինձ ծանօթ են. ես պիտի լինիմ քու Արիանէդ, ահա քու գիւղաբանական անունդ գտուեցաւ։

— Ճշմարիտ վկայ, իրաւ է, կոմս, շնորհակալութիւն։

— Բայց, այս առթիւ, կոմս — ըսաւ Մօնդալէ — պ. Մալիքօրն ալ առ տար։

— Ո՛չ, ո՛չ — ըսաւ Մալիքօրն։ — Պ. Մանիքան ուզածին չափ քեզի հետ խօսեցաւ, խնդրեմ, կարգն իմն է, օրիորդ. ես ալ անրաւ բաներ ունիմ ըսելու քեզ ապադայիդ վրայօք։

— Կ՚լսեմ — ըսաւ կոմսը ծիծաղելով. — անոր հետ կեցիր, օրիորդ։ Միթէ չգիտես որ այս գիշեր գաղտնեայ գիշեր մ՚է։

Եւ Մանիքանի թևը բռնելով՝ կոմսը զանի արագօրէն տարաւ այն ճամբան զոր Մօնդալէ քաջ գիտէր բայց դէշ կ՚յուցնէր։

Մօնդալէ աչքն անոնց հետևեցաւ որչափ ատեն որ կարող եղաւ զանոնք տեսնելու։

ԺԱ.

ՄԱԼԻՔՕՐՆ Ի՞ՆՉՊԷՍ ՊՕ—ԲԱՆ ՊԱՆԴՈՒԻՆ ԴՈՒՐՍ ՀԱՆՈՒԵՐ ԷՐ

Մինչդեռ Մօնդալէ աչքը կ՚հետևէր կոմսին և Մանիքանի, Մալիքօրն նորատի օրիորդին անուշագրութենէ օգուտ քաղելով առելի հանդիստ դիրք մը բռնելու յաջողեր էր։

Երբոր Մօնդալէ գլուխը դարձուց, Մալիքօրնի գրեց մէջ պատահած տարբերութիւնն անմիջապէս իր աչքին զարկաւ։

Մալիքօրն կապկի մը պէս նստեր էր, ետևը պատին տուած և ոտներն ելնարանին առաջին աստիճանին վրայ դրած։

Վայրի ուռիներն և այծի տերևները շահապետի պէս գլուխը կ'ծածկէին, իսկ որթոյ ոլորածոյ ոստերն աղոր կ'յարմարէին իր նոխազի ոտից ներքև։

Իսկ Մօնդալէի գալով՝ բան մը պակաս չէր զանի կատարուն գրիադ մը սեպելու։

— Ինձ նայէ — ըսաւ աղջիկն աստիճան մը վեր ելնելով — գիտես որ դժբաղդ կ'ընես, դեռ ևս պիտի հալածեմ զիս, գոնէ բռնաւոր։

— Եմ — ըսաւ Մալիքօրն — եմ, բռնաւոր մը։

— Այո՛, զիս անդադար կ'անպատուես, Պ. Մալիքօրն, դու անզգամութեան հրէշ մ'ես։

— Եմ։

— Ի՞նչ բան ունիս 'ի Ֆօնդէնպլօ, ըսէ, միթէ քու տեղդ Օրլէան չէ՞։

— Ի՛նչ բան ունիմ, կ'հարցնես. բայց իմ գործս քեզ տեսնել է։

— Ա՛հ, ի՞նչ աղուոր հարկ։

— Կարելի է քեզի համար հարկ չէ, օրիորդ, բայց անտարակոյս ինձի համար պէտք մ'է։ Իսկ իմ բնակութեանս գալով՝ քաջ գիտես որ զայն թողուցի, և ուրիշ բնակարան չունիմ ապագային մէջ բայց եթէ քու ունեցածդ։ Ուրեմն, քանի որ առայժմ բնակարանդ Ֆօնդէնպլօ է, ես ալ Ֆօնդէնպլօ եկայ։

Մօնդալէ ուսերը բարձրացուց։

— Զիս տեսնել կ'ուզես, այնպէս չէ՞։

— Անտարակոյս։

— Լաւ ուրեմն, զիս տեսար, գոհ ես, գնա։

— Ո՛հ, ոչ — ըսաւ Մալիքօրն։

— Ի՞նչպէս ոչ։

— Միայն քեզ տեսնելու համար չեկայ, եկայ նաև քեզի հետ խօսակցելու։

— Լաւ ուրեմն, վերջէն և ուրիշ տեղ մը քեզի հետ պիտի խօսինք։

— Վերջէն. Ասուած գիտէ, եթէ վերջէն ուրիշ տեղ մը քեզ պիտի գտնեմ։ Ասկէ նպաստաւոր վայր մը չպիտի գտնենք։

— Բայց այս իրկուն չեմ կարող, այս միջոցիս չեմ կարող մնալ։

— Ինչո՞ւ համար։

— Վասն զի այս իրկուն հազար տեսակ բաներ պատահեցան։

— Լաւ, իմ բանս ալ, հազար ու մէկ բան թող լինի։

— Ո՛չ, ոչ, օրիորդ Դօնէյ-Շարանդ մեր սենեակը կ'սպասէ խիստ կարևոր բան մը հաղորդելու համար։

— Միթէ շատ ատենէ 'ի վեր կ'սպասէ։

— Առ նուազն ժամէ մ'ի վեր։

— Ուրեմն — ըսաւ Մալիքօրն հանդարտօրէն — թող քանի մը վայրկեան աւելի սպասէ։

— Պ. Մալիքօրն — ըսաւ Մօնդալէ — ինքզինքդ կ'մոռնաս։

— Այսինքն զիս կ'մոռնաս, օրիորդ, և իմ ալ համբերութիւնս կ'հատնի այս տեղ ինձ խաղալ տուած դերիդ համար, Ճշմարիտը։ Օրիորդ, ութ օրէ վեր՝ ձեր ամենուն մէջ կ'թափառիմ, և անպամ մ'իսկ չհաճեցար գիտելու թէ ներկայ եմ թէ ոչ։

— Այս տեղերը կ'թափառիս, դո՞ւ ութ օրէ 'ի վեր։

— Այո՛, Ճիւաղն մը պէս. այս տեղ հրախաղութիւններէ այրելով՝ որոնք երկու կեղծամս խանձեցին, այն տեղ խեղդուելով երեկոյեան խոնաւութենէ կամ ջրի ժայթքումներէ, միշտ սովալուկ, միշտ յոգնաբեկ՝ առջևս պատ մը գտնելու կամ ծառի մը վրայ ելնելու յուսով։ Ճշմարիտը, այս աղուոր վիճակ մը չէ, օրիորդ, այնպիսի արարածի մը համար որ ոչ սկիւր է, ոչ սաղամանտր, ոչ ջրային սամոյր, բայց քանի որ այն աստիճանի կ'քշես անդթութիւնդ որ իմ մարդկային կացութիւնս ուրանամ, լաւ, ես ալ մարդ լինելս պիտի ցոյց տամ։ Մարդ եմ, Ճշմարիտը, մարդ պիտի մնամ, միայն թէ բարձրագոյն հրամաններ չստանամ։

— Լաւ ուրեմն, նայինք, ի՞նչ կ'փափաքիս, ի՞նչ կ'ուզես, ի՞նչ կ'պահանջես — ըսաւ Մօնդալէ հլու կերպով մը։

— Պիտի ըսեմ արդեօք որ Ֆօնդէնպլօ գտնուիլս չդիտէիր։

— Ես . . . :

— Անկեղծ եղիր :

— Կասկած մ'ունիմ :

— Լաւ ուրեմն, ութ օրէ 'ի վեր՝ չէիր կարող զիս դէթ օրը մի անգամ տեսնել :

— Միշտ արդելք մը պատահեցաւ, Պ. Մալիքօրն :

— Խօսք :

— Հարցուր սա օրիորդներուն եթէ ինձ չես հաւատար :

— Ես երբէք բացատրութիւն չեմ խնդրեր այն բաներուն վրայ զոր ուրիշէն լաւ գիտեմ :

— Հանդարտէ, Պ. Մալիքօրն, այս ընթացքս պիտի փոխեմ :

— Անշուշտ, պէտք է փոխել :

— Գիտես որ, քեզ մերթ կ'տեսնեմ, մերթ բնաւ չեմ տեսներ, գիտես որ քեզի կ'մտածեմ — ըսաւ Մօնդալէ իր փաղաքուշ դէմքովը :

— Ո՛հ, ինձի՛ կ'մտածես . . . :

— Պատուոյս վրայ կ'ըսեմ :

— Միթէ նոր բան մը չկայ :

— Ի՞նչ բանի վրայ :

— Արքայազնին տան մէջ իմ ստանալիք պաշտօնիս վրայ :

— Ա՛հ, սիրելիդ իմ Պ. Մալիքօրն, այս վերջին օրերս շատ դժուար բան էր Նորին արքայական Բարձրութեան մօտենալը :

— Հապա հիմա՞ :

— Հիմակ խնդիրը տարբեր է. երեկուանէ 'ի վեր, այլ ևս նախանձոտ չէ :

— Բա՛հ : Եւ իր նախանձն ինչպէս անցաւ :

— Փոփոխութիւն մը պատահեցաւ :

— Պատմէ նայիմ գործը :

— Այն հանեցին թէ թագաւորն ուրիշ կնկան մը վրայ աչք ձգեր է, և արքայազունն իսկոյն հանդարտեցաւ :

— Եւ այդ ձայնն ո՞վ հանեց :

Մօնդալէ ձայնը մեղմացուց :

— Խօսքը մեր մէջ մնայ — ըսաւ նա — կարծեմ թէ թագաւորն ու իշխանուհին այս մասին համաձայն են :

— Հա՛, հա՛ — ըրաւ Մալիքօրն — այդ միակ միջոց մ'է : Բայց Պ. Կիշ, եղկելի՛ հետամուտը :

— Ո՛հ, նա բոլորովին երեսէ ընկած է :

— Միթէ երարու դիր դրեցիր :

— Աստուած իմ, ո՛չ. ո՛չ այս և ոչ այն կողմին ձեռքը դրիչ մը տեսայ ութ օրէ 'ի վեր :

— Իշխանուհւոյն հետ ինչպէս ես :

— Շատ լաւ :

— Հապա թագաւորին հետ :

— Թագաւորը կ'ժպտի ինձ երբոր կ'անցնիմ :

— Լաւ. հիմակ ըսէ ինձ երկու սիրահարներն որ կնկան վրայ վիճակը ձգեցին որպէս զի զայն իրրև սրահակ գործածեն :

— Լա Վալիէրի վրայ :

— Հօ, հօ, խեղճ աղջիկ : Բայց, բարեկամուհիս, պէտք էր արդիլել այդ բանը :

— Ինչու՞ համար :

— Վասն զի Պ. Ռաուլ Պրաժլօն զանի պիտի սպաննէ կամ ինքզինքը պիտի սպաննէ եթէ կասկած մ'առնու :

— Ռաուլ, այն բարի Ռաուլը, կ'կարծես :

— Կանայք կ'պարծին թէ սէրը կ'ճանչեն — ըսաւ Մալիքօրն — և սակայն կանայք չգիտեն իսկ թէ իրենց յատուկ աչայ կամ սրտին մէջ ինչէր կ'անցնին : Լաւ, ես ահա կ'ըսեմ քեզ թէ Պ. Պրաժլօն այն ասպիճան կ'սիրէ Լա Վալիէրը, որ եթէ խաբելու ելնէ, ինքզինքը կամ զանի պիտի սպաննէ :

— Թագաւորը զանի պիտի պաշտպանէ :

— Թագաւո՞ր — գոչեց Մալիքօրն :

— Անտարակոյս :

— Է՛հ, Ռաուլ թագաւորը պիտի սպաննէ իրրև հեծելազօր մը :

— Տէր ողորմեա — ըսաւ Մօնդալէ — բայց կ'խենթանաս դու, Պ. Մալիքօրն :

— Ես, ո՛չ ամենևին. այս բոլոր ըսածներս, ընդ հակառակն, շատ ծանրակշիռ են, սէրս, և ես իմ մասիս բան մը պիտի ընեմ :

— Ի՞նչ բան :

— Ռաուլին պիտի իմաց տամ այս կատակը։

— Լուսիին, թշուառական — ըսաւ Մօնդալէ վերստին աստիճան մը վեր ելնելով որպէս զի նոյնչափ Մալիքօրնի մօտենայ — այն խեղճ Պրաժլօնին բաւ մ՝անգամ չըսես բնաւ։

— Ինչո՞ւ համար։

— Վասն զի տակաւին բան մը չդիտես։

— Ի՞նչ կայ ուրեմն։

— Սա կայ որ այս իրկուն . . . : Արդեօք մարդ մը մեզ մտիկ կ՝ընէ՞։

— Ո՛չ։

— Սա կայ որ այս իրկուն, արքայական կաղնիին ներքև, Լա Վալիէր բարձր ձայնով և պարզմտութեամբ սա խօսքն ըսաւ. « Ես չեմ կրնար ըմբռնել թէ ինչպէս թագաւոր տեսնելէն ետև՝ կարելի լինի ուրիշ մը սիրել » :

Մալիքօրն ոստում մ՝ըրաւ իր պատին վրայ։

— Ա՛հ, Աստուած իմ — ըսաւ — միթէ այդ խօսքն ի՞նքն արտասանեց, տարաբա՛ղդ աղջիկը։

— Այսպէս խօսեցաւ բառ առ բառ։

— Եւ միթէ այդպէս կ՝մտածէ։

— Լա Վալիէր միշտ մտածածը կ՝ըսէ։

— Բայց այդ վրէժխնդրոտ թիւն կ՝կոչէ. բայց իրաւ որ կանայք օձեր են — ըսաւ Մալիքօրն։

— Հանդարտէ, սիրելիդ իմ Մալիքօրն, հանդարտէ։

— Ո՛չ ամենևին։ Զարիքն արմատէն բառնանք, ընդ հակառակն։ Իմաց տանք Ռաուլին, ժամանակն է։

— Անճարակ մարդ, ընդ հակառակն, ժամանակը չէ — պատասխանեց Մօնդալէ։

— Ի՞նչպէս ժամանակը չէ։

— Լա Վալիէրի այս խօսքը . . . :

— Այո։

— Այն թագաւորին ուղղեալ խօսքը . . . :

— Վերջը՞։

— Լաւ, այն խօսքը թագաւորին ականջը հասաւ։

— Թագաւորն իմացաւ։ Թագաւորին յայտնեցի՞ն։

— Նոյն ինք թագաւորը լսեց։

— Վայ զլխիս, ինչպէս կ՝ըսէր կարտինալը։

— Թագաւորը ճիշտ նոյն միջոցին արքայական կաղնիին ամենէն մօտաւոր մայտին մէջ թաղած էր։

— Ադկիյ սա կ՝հետևի — ըսաւ Մալիքօրն — որ այսուհետև թագաւորին և իշխանուհւոյն յատակագիծը սայլակի պէս պիտի գլորի խեղճ Պրաժլօնին մարմնոյն վրայէն անցնելով։

— Աղէկ ըսիր։

— Սոսկալի բան է այդ։

— Այս այսպէս է։

— Ճշմարիտը — ըսաւ Մալիքօրն պահ մը խորհրդածելէն ետև — խոշոր կաղնիի և մեծ թագաւորի մը մէջ տեղ մեր վատոյժ անձը չչնեն, պիտի փշրուինք, սէրս։

— Ես ալ այդ կ՝ուզէի ըսել քեզի։

— Մենք մեզի մտածենք։

— Ես ալ այդ կարծիքն ունիմ։

— Բայց ուրեմն այդ սիրուն աչերդ։

— Դու ալ քու մեծ ականջներդ։

— Մօտեցիր այդ փոքրիկ բերանդ աղուոր մեծ պաղնիկ մ՝առնլու։

— Աւասիկ — ըսաւ Մօնդալէ, որ իսկոյն հնչող գրամով վճարեց։

— Հիմակ նայինք։ Աւասիկ Պ. Կիշն որ իշխանուհին կ՝սիրէ, աւասիկ Լա Վալիէրն որ թագաւորը կ՝սիրէ, աւասիկ թագաւորն որ կ՝սիրէ իշխանուհին և Լա Վալիէր, աւասիկ արքայազունն որ իրմէ զատ մէկը չսիրեր։ Բոլոր այս սիրային կապակցութեանց մէջ ապուշ մարդ մ՝իր բաղդը կրնայ շինել, ուր մնայ մեզի պէս խոհական մարդիկ։

— Ահա նորէն սքսար երազներ տեսնել։

— Այսինքն իրականութիւններ։ Դու իմ ըսածիս համեմատ վարուէ, սիրուհիս, մինչև այսօր շահաւոր եղար կարծեմ, այնպէս չէ՞։

— Այո։

— Լաւ ուրեմն, անցեալն ապահովութիւն մ'է քեզի ապագային համար։ Միայն, այսուհետև ամէն մարդ այս տեղ ինքզինքին կ'մտածէ, մենք ալ մեզի մտածենք։

— Շատ ճշմարիտ է։

— Բայց մի միայն մեզի։

— Թող այդպէս լինի։

— Պաշտպանողական և յարձակողական դաշնադրութիւն։

— Պատրաստ եմ երդմնելու։

— Երկնայուր ձեռքդ. այդպէս։ Ամէն ինչ Մալիքօրնի համար։

— Ամէն ինչ Մալիքօրնի համար։

— Ամէն ինչ Մօնդալէի համար — պատասխանեց Մալիքօրն ըստ կարգի իր ձեռքը կարկառելով։

— Այժմ ի՞նչ պէտք է ընել։

— Պէտք է անդադար մեր աչքը չորս բանալ, նոյնպէս մեր ականջները, այլոց դէմ զէնքեր հաւաքել, բնաւ ուրիշի ձեռքը զէնք չտալ որ մեզի դէմ չգործածէն։

— Համաձայն։

— Այսպէս որոշուած է։

— Անքակտելի ուխտ։ Հիմակ մեր պայմանադրութիւնն ըրինք, մնաս բարեաւ։

— Ի՞նչպէս, մնաս բարեաւ։

— Անշուշտ։ Դարձիր պանդոկդ։

— Իմ պանդո՞կս։

— Այո՛. միթէ Պօ-Բան պանդոկը չէս օթևանած։

— Մօնդալէ, Մօնդալէ, կ'նայիս որ Ֆոնդէնպլօ դանուիլս կանխաւ գիտէիր։

— Այդ գիտնալէս կ'հետևի թէ արժանիքդ աւելի քու վրադ հոգ ունիմ, ամբերախաւ։

— Հլմ։

— Ուրեմն Պօ-Բան դարձիր։

— Լաւ, այդ է ճիշտ խնդիրը։

— Ի՞նչ խնդիր։

— Անկարելի բան է այն տեղ վերադառնալը։

— Միթէ սենեակ մը չունէիր։

— Այո՛, բայց այժմ չունիմ։

— Այժմ չունիս, և ո՞վ առաւ զայն ձեռքդ։

— Սպասէ . . . : Քու ետևդ վազելէն ձանձրանալով՝ մինչ-դեռ հոդեստաւ պանդոկը կ'դառնայի պատդարակ մը տեսայ որու վրայ չորս դեղացի հիւանդ վանական մը կ'կրէին։

— Վանական մը։

— Այո՛, ծեր ֆրանչիսկեան մը սպիտակ մօրուսով։ Երբ որ այս հիւանդ կրօնաւորին կ'նայէի, զանի պանդոկը կ'մոցնեն, երբ որ զանի սանդղէն վեր կ'հանէին, ես ալ ետևէն կ'երթայի, և երբ որ սանդղին վերի կողմը հասայ, գիտեցի որ զանի իմ սենեակս կ'մուծանէին։

— Քո՞ սենեակդ։

— Այո՛, իմ յատուկ սենեկիս մէջ։ Կարծեցի թէ սխալմունք մը կար, պանդոկապետէն բացատրութիւն խնդրեցի. պանդոկապետը կ'յայտնէ ինձ որ իմ կողմէ վարձեալ սենեակն ութ օրէ 'ի վեր՝ այն կրօնաւորէն ինքերորդ օրէն վեր՝ վարձու բռնուած էր։

— Հո՛, հո՛։

— Ճիշտ ես ալ այդ բացաղանչութիւնն ըրի, հո՛, հո՛։ Ասկէ աւելին ըրի, ուզեցի սրդողել։ Վեր եկայ. նոյն իսկ կրօնաւորին դիմեցի. ուզեցի անոր ընթացքին անպատեհութիւնն երեսին զարնել, բայց այս կրօնաւորը, որչափ որ հոգեվար կ'երևէր, իր արմկին վրայ ելաւ, իր երկու կայծակնացայտ աչունքը վրաս սևեռեց, և ձայնով մ'որ հեծեծալաղօրաց դունդ մը յարձակման կոչնար հրամայել. «Նետեցէք այս անպիտանը դուրս» ըսաւ։ Այս հրամանն անմիջապէս 'ի գործ դրին պանդոկապետն ու չորս բեռնակիրները, որոնք վայելուչ եղածէն աւելի շուտով զիս սանդղէն վար իջեցուցին։ Ահա այս է պատճառը, սիրականս, որ ալ բնակարան չունիմ։

— Բայց ո՞վ էր այն կրօնաւորը — հարցուց Մօնդալէ։ — Ուրեմն զօրապետ մ'է։

— Ճիշտ է, կարծեմ թէ բեռնակիրներէն մին կէս ձայնով խօսելու ատեն անոր այդ տիտղոսը տուաւ։

— Այնպէս որ . . . — ըսաւ Մօնդալէ ։

— Այնպէս որ այլ ևս սենեակ չունիմ, պանդոկ չունիմ, բնակարան չունիմ, և ինչպէս քիչ մ'առաջ իմ Մանիքան բարեկամս, ես ալ նոյնպէս միտքս դրած եմ դուրս պառկելու չերթալ ։

— Ի՞նչ ընենք հիմակ — դոչեց Մօնդալէ ։

— Այդ է խնդիրը — ըսաւ Մալիքօրն ։

— Բայց ադկից աւելի պարզ բան մը չկայ — ըսաւ երրորդ ձայն մը ։

Մալիքօրն և Մօնդալէ միաբերան աղաղակ մը հանեցին ։

Սէնդ-Էնյան երևան եկաւ ։

— Սիրելիդ իմ Պ. Մալիքօրն — ըսաւ Սէնդ-Էնյան — բարեյաջող դիպուած մը զիս ասա կ'բերէ որ քեզ նեղ վիճակէդ ազատեմ . . . ։ Եկուր, ես իմ սենեակս քեզի կ'ընծայեմ, և այդ սենեակը՝ կ'երդնում որ ինչ և է Ֆրանչիսկեան չպիտի կարենայ ձեռքդ հանել ։ Իսկ քեզի գալով, սիրելի օրիորդ, մի վրդովիր ։ Արդէն Լա Վալիէր օրիորդին, Դօնէյ-Շարանդ օրիորդին գաղտնիքը գիտեմ. հիմակ ալ քուկդ յայտնեցիր ինձ, շնորհակալ եմ. մէկին չափ լաւ պիտի պահեմ երեք գաղտնիքն ալ ։

Մալիքօրն և Մօնդալէ իրարու երես նայեցան իբրև երկու փախստական աշակերտներ, բայց 'ի վերջէ՝ Մալիքօրն տեսնելով որ մեծ առաւելութիւն մը կայ իրեն եղած առաջարկութեան մէջ՝ Մօնդալէի համբերատարութեան նշան մ'ըրաւ, որուն փոխարէնը հատոյց նա ։

Յետոյ Մալիքօրն սանդղէն աստիճան առ աստիճան իջաւ, մտածելով ամէն մէկ քայլափոխին թէ ինչպէս փոքր առ փոքր պիտի կարենայ Սէնդ-Էնյանի բերնէն երևելի գաղտնիքը քաղել ։

Մօնդալէ՝ եղնիկի պէս թեթևաշարժ՝ արդէն մեկներ էր, և ոչ քառուղի, ոչ լափիւրինթոս կարող չեղան զինքը խաբելու ։

Իսկ Սէնդ-Էնյան՝ իրօք իր բնակարանը տարաւ Մալիքօրնը, հազար տեսակ քաղաքավարութիւններ ընելով անոր, զմայլելով միանգամայն որ իր ձեռաց ներքև երկու մարդ ունէր, որոնք, ենթադրելով թէ Կիշ համր պիտի մնար, կարող էին պատուոյ աղջկանց վրայ մանր տեղեկութիւններ հաղորդել իրեն ։

ԺԲ

ՊՕ—ԲԱՆԻ ՊԱՆԴՈԿՆ ԻՐՕՔ Ի՞ՆՉ ԱՆՑԱԾ ԷՐ

Նախ՝ մեր ընթերցողաց մէկ քանի ծանօթութիւններ տանք Պօ—Բան պանդոկին վրայ, ապա կ'նկարագրենք այն տեղ բնակող ճամբորդները ։

Պօ—Բան պանդոկը՝ ինչպէս ամէն պանդոկ՝ իր անունը նշանագրէն առած էր ։

Այս նշանագիրը սիրամարգ մը (paon) կ'ներկայէր սիրասնած ։

Այս տարբերութեամբ միայն որ՝ քանի մը պատկերհաններու պէս որ Եւան փորձող օձին սիրուն տղու մը կերպարանը տուած են, նշանագիրը յօրինողը գեղեցիկ (beau) սիրամարգին կնկան մը դէմքը տուեր էր ։

Այս պանդոկը՝ որ ինչպէս կ'ըսէ Պ. Լրկուվէ, կենդանի երդիծանք մ'էր մարդկային սեռի այն կիսոյն դէմ որ կենաց բերկրանքը կ'կազմէ, Ֆօնդէնպլօի մէջ կ'բարձրանար ձախակողմեան առաջին փողոցը, և այս փողոցը Բարիզէն գալով կ'կարէր այն արահետն որ ինքնին Ֆօնդէնպլօի ամրողջ քաղաքը կ'յօրինէ ։

Կողմնական փողոցն այն ատեն Լիօնի փողոց կ'անուանէր, անտարակոյս անոր համար որ աշխարհագրապէս կ'յառաջանար տէրութեան երկրորդ մայրաքաղքին կողմը ։

Այս փողոցն երկու տունէ կ'բաղկանար, որոց մէջ քաղաքաւորներ կ'բնակէին, տուներ որ իրարմէ զատուած էին ցանկապատ երկու մեծ պարտէզներով ։

Առ երևոյթս՝ փողոցին մէջ կարծես թէ երեք տուն կար, բայց ատրենք թէ ինչպէս այս երևոյթին ներհակ՝ միայն երկու տուն կար ։

Պօ—Բանի պանդոկին գլխաւոր ճակատը մեծ փողոցին վրայ կը նայէր. բայց՝ ասոր փոխարէն՝ Լիօնի փողոցին վրայ՝ շէնքի եր-

կու թևեր, որ բակերով զատուած էին, մեծ բնակարաններ կը պարունակէին՝ թէ հետի և թէ ձիաւոր ուղևորներ, մինչև անդամ կառքով ճամբորդներ ընդունելու յարմար, և ոչ միայն սենեակ ու սեղան, այլ և ճեմելիք ու առանձնական կեանք մը կ'մատակարարէին ամենէն հարուստ պալատականաց, երբոր արքունիքը ձախորդութիւն մը կրելէն ետև՝ փափաքէին ամիսներով որպէս զի նախատինքը կլլեն կամ վրէժ մտածեն։

Այս երկդուռ տան պատուհաններէն՝ ուղևորները նախ փողոցը կ'նայէին, որու խոտը կ'աճէր սալաքարին վրայ և փոքր առ փոքր կ'քակէր զայն։

Ապա կ'տեսնէր շամբկի և գժնկի ցանկապատները, որ կ'փակէին՝ իրրև երկու դալարուտ և ծաղկաւէտ թևեր, այն բնիկներուն տուներն որոց վրայ արդէն խօսեցանք։

Յետոյ՝ այս տանց միջոցները, որոնք պատկերին խորը յօրինելով և իրրև անանցանելի հորիզոն նկարուելով՝ խիտ, բուսաւէտ պուրակներու գիծը կ'երևէր, ընդարձակ անտառին առաջին պահակները, որ Փոնդէնպլօի առջևը կ'պարզուէին։

Ուսի կարելի էր, եթէ մարդ միայն սենեակ մ'ունենար Բարիզի մեծ ճամբուն անկիւնը, մասնակից դտնուիլ անցորդներու և հանդէսներուն տեսքը վայելել, և Լիօնի փողոցէն ալ, արտաքէից տեսքն ու հանդարտութիւնը վայելել։

Այս ևս կար որ սիպողական պարագայի մէջ՝ եթէ Բարիզի փողոցին մեծ դուռը զարնուէր, մարդ մը կրնար Լիօնի փողոցին փոքրիկ դռնէն խոյս տալ, և բնիկներուն տանց պարտէզները քերելով՝ անտառին առաջին մայտաներուն հասնիլ։

Մալիքօրն՝ որ՝ ինչպէս ընթերցողը կ'յիշէ, ամենէն առաջ խօսեցաւ Պօ-Բռանի պանդոկին վրայ, որպէս զի անկից արտաքսուելուն վրայ ողայ, Մալիքօրն՝ իր յատուկ գործերովը զբաղած լինելով, բնաւ չէր ըսած Մօնդալէին այս հետաքրքրական պանդոկին վրայ ամէն պէսք եղածը։

Այժմ պիտի փորձ փորձենք Մալիքօրնի ձգած այս պակասը լնուլ։

Օրինակի համար՝ Մալիքօրն մոռցեր էր ըսելու թէ ինչ կերպով Պօ-Բռանի պանդոկը մտեր էր։

Ասկէ զատ՝ 'ի բայց թողլով ֆրանչիսկեան կրօնաւորը՝ որու վրայ խօսք մը միայն ըսեր էր, նոյն պանդոկը բնակող ուղևորներու վրայ բնաւ ծանօթութիւն չէր տուած։

Ասոնք ինչ կերպով մտեր էին ներս, ինչ կերպով կ'ապրէին, միայն մենաշնորհ ունեցող ճամբորդներէն զատ ուրիշի համար որչափ դժուար էր առանց կարգաբանի պանդոկը մտնելը, և առանց քանի մը նախապատրաստական զգուշութեանց անդ բնակիլը, անտարակոյս Մալիքօրնի ուշադրութիւնը գրաւած պիտի լինէին։

Բայց ինչպէս որ ըսինք, Մալիքօրն անձնական հոգեր ունէր որոնք շատ մը բաներ դիտելու զինք կ'արգիլէին։

Արդարև՝ Պօ-Բռանի բոլոր սենեակներն առանձնակեաց, հանդարտաբարոյ և մարդահաճոյ դէմքեր ունեցող մարդիկ բնած էին, որոց և ոչ մին ծանօթ էր Մալիքօրնի։

Բոլոր այս ճամբորդները պանդոկը հասեր էին՝ իրեն հասած տեղեկն 'ի վեր, ամէն մէկը յատուկ կարգախօսով մը ներս մտեր էր որով 'ի սկզբան շատ վրդովեր էր Մալիքօրն, բայց անուղղակի կերպով խնայեր էր թէ պանդոկապետն այս տեսակ հսկողութեան իրրև պատճառ մէջ կ'բերէր թէ՝ ըստ որում քաղաքը շատ հարուստ աղնուականներ կային, անտարակոյս ճարպիկ և հանած վարած գողեր ալ պիտի պարունակէր։

Հետևապէս Պօ-Բռանի պէս պարկեշտ տան մը համբաւը կրնար արատաւորիլ եթէ պանդոկապետը չհսկեր և թողուր որ ճամբորդները կողոպտուին։

Հետևապէս՝ Մալիքօրն երբեմն ինքնիրեն կ'հարցնէր՝ երբ կ'ամփոփուէր և Պօ-Բռանի մէջ իր կացութիւնը կ'քննէր, թէ ինչպէս նոյն պանդոկը մտնելու թողեր էին զինքը, մինչդեռ նոյն տեղ մտնելէն 'ի վեր շատերուն արտաքսուիլը տեսեր էր։

Մանաւանդ կ'հարցնէր իրրովն թէ ինչպէս Մանիքան՝ որ՝ իր կարծեօքը՝ ամենուն պատկառելի աղնուական մը պիտի լիներ, իր ձին Պօ-Բռանի մէջ պատսպարել ուզելուն՝ թէ ձին և թէ ձիաւորը խիստ անհաշտելի կերպով դուրս հաներ էին։

Այս բանս Մալիքօրնի համար խնդիր մ'էր զոր՝ սակայն ինք

սիրային և փառասէր գաւերով զբաղած լինելուն՝ չէր աշխատած զննելու։

Եթէ քննելու անգամ ելնէր, թէև իրրև իմացողութեան տէր մարդ մը ներկայացուցինք զանի, դարձեալ չենք համարձակիր ըսելու թէ պիտի յաջողէր։

Եթէ ընթերցողին քանի մը խօսքով բացատրենք այս կէտը՝ պիտի իսկոյն ըմբռնէ որ նոյն ինքն Եւտիքէս պէտք էր այսպիսի հանելուկ մը լուծելու համար։

Ութ օրէ վեր այս պանդոկը եօթն Ճամբորդ մտեր էր, ամենքն ալ հասեր էին այն բարեբաստիկ օրուան հետևեալ օրն երբ Մալիքօրն իր ընտրութիւնը Պօ–Բ-ի վրայ ձգեր էր։

Այս եօթն անձինք էին, չափաւոր հետևորդներով հանդերձ, նախ՝ զերմանական զօրաց դասապետ մը, իր զրաղիրը, իր բժիշկը, երեք պայիկ և տասն երկու ձիանք։

Այս դասապետին անունն էր Վ. Օսդպուր կոմս։

Սպանիացի կարտինալ մ'երկու եղբօրորդիներով, երկու զրադրով, իր տան մէկ սպայով և տասն երկու ձիով։

Այս կարտինալին անունն էր մեծաշուք Հէրէպիա։

Պրէմայի մէկ հարուստ վաճառական մը իր սպասաւորով և երկու ձիով։

Այս վաճառականին անունն էր Պ. Պօնսդէտ։

Վենետիկցի ատենակալ մ'իր կնիկով և աղջիկով, երկուքն ալ կատարեալ գեղեցկութեամբ։

Այս ատենակալը կ'կոչուէր «Էնէօր Մարլնի։

Սկովտիոյ տանուտէր մ'իր յեղին չորս լեռնականներով, ամենքը հետևակ։

Այս տանտիրոջ անունն էր Մակ Կումոր։

Վիէննայէն աւստրիացի մ'որ ոչ տիտղոս, ոչ զինագրոշմ ունէր, և կառքով եկած էր. քիչ մը քահանայի և շատ մը զինուորի կ'նմանէր։

Այս մարդը խորհրդական կ'անուանէին։

Վերջապէս Ֆլամանտացի տիկին մ'իր պայիկով, սենեկապանուհիով և ընկերուհի օրիորդով մը։ Մեծ հանդերձանք, մեծ կերպարան, մեծ ձիեր։

Ասոր անունն ալ Ֆլամանտացի տիկին էր։

Բոլոր այս Ճամբորդները նոյն օրն եկեր էին, ինչպէս ըսինք, և սակայն իրենց զալուստը շփոթութիւն մը չէր պատճառած պանդոկին մէջ, և ոչ փողոցին մէջ ժողով մը, քանի որ իրենց բնակարանները կանխաւ պատրաստած էին իրենց սուրհանդակներուն և զրաղիրներուն խնդրանաց համեմատ, առջի օրը կամ նոյն առաւօտ իսկ զալով։

Մալիքօրն՝ իրենցմէ առաջ օր մը՝ թեթև պայուսակով բեռնաւորեալ ձիով մը հասնելով ինքզինքը ծանուցեր էր Պօ–Բ-ի պանդոկին իրրև բարեկամ աղնուականի մ'որ հետաքրքիր էր հանպանդոկին իրրև բարեկամ աղնուականի մ'որ հետաքրքիր էր հանդէսները տեսնելու, և թէ այն աղնուականն ալ քիչ ատենէն պիտի դար։

Այս խօսքին՝ պանդոկապետը ժպտեր էր որպէս թէ քաջ կը Ճանչէր, կամ Մալիքօրն, կամ իր բարեկամ աղնուականը, և անոր ըսեր էր.

— Ընտրէ, պարոն, հաւնած սենեակդ, քանի որ ամենէն առաջ կ'հասնիս։

Եւ այս հրաւէրն այնպիսի նշանակական մեծարանօք ըրաւ պանդոկապետը՝ որով ըսել կ'ուզէր. «Անհոգ եղիր, պարոն, դիտնիք թէ մեր գործն որուն հետ է, և ըստ այնմ պիտի վարուինք քեզի հետ»։

Այս խօսքն ու ասոր ընկերացող շարժումը բարեսիրական այլ բաւական մութ երևցեր էին Մալիքօրնի։ Արդ՝ որովհետև չէր կամեր մեծ ծախքեր ընել, և եթէ փոքր սենեակ մը խնդրեր՝ թերևս մերժուեր իրեն մեծ կարևորութիւն մը չտրուելով, պանդոկապետին խօսքը բերնէն առնելով՝ իր նրբամտութեամբը զանի պատժելու փութայ։

Ուստի՝ ժպտելով իրրև մարդ մ'որու համար անդատճառ պարտ ու պատշաճը կ'կատարէ մէկը.

— Սիրելի պանդոկապետս — ըսաւ նա — ես ամենէն լաւ և զուարթ սենեակը պիտի բռնեմ։

— Ախոռով։

— Ախոռով։

— Ո՞ր օրուան համար։

— Ա՛նմիջապէս, եթէ կարելի է։

— Քաջալա՛ւ։

— Միայն — փութայ ըսելու Մալիքօրն — մեծ սրահն իսկոյն չպիտի բնակիմ։

— Լա՛ւ — ըսաւ պանդոկապետը համամտութեան դէմքով մը։

— Կան քանի մը պատճառներ որ, և ասոնք վերջէն պիտի իմանաս, կ'բռնադատեն զիս այս փոքրիկ սենեակը միայն հաշուիս առնել։

— Այո՛, այո՛, այո՛ — ըսաւ պանդոկապետը։

— Երբոր իմ բարեկամս գայ, այդ մեծ սենեակը պիտի վարձու բռնէ, և բնականապէս այն մեծ սենեակն իրը լինելով՝ ուղղակի քեզի հետ հաշիւը կ'տեսնէ։

— Շատ աղէկ — ըսաւ պանդոկապետը — շատ աղէկ, այսպէս որոշուած էր։

— Այսպէ՞ս որոշուած էր մի։

— Բառ առ բառ։

— Կարդէ դուրս բան մ'է այդ — մրմռաց Մալիքօրն։ — Այսպէս կ'իմանամ։

— Այո՛։

— Այդ միայն պէտք է։ Հիմակ որ բանը հասկցար . . . վասն զի քաջ կ'հասկընաս, այնպէս չէ՞։

— Կատարելապէս։

— Լաւ ուրեմն, զիս իմ սենեակս պիտի տանիս այժմ։

Պօ–Բռնի պանդոկապետը Մալիքօրնի առջևէն քալեց, դտակը ձեռքը բռնած։

Մալիքօրն իր սենեակը տեղաւորեցաւ, և բոլորովին զարմացած մնաց տեսնելով որ պանդոկապետը, ամէն անգամուն որ վեր կ'ելնէր կամ վար կ'իջնէր, քթիքթներ կ'ընէր որ երկու հաղորդակիցներու մէջ ամենակատարեալ համաձայնութիւն կ'յայտնեն։

— Ասոր մէջ սխալմունք մը պիտի լինի — կ'ըսէր Մալիքօրն իւրովի — բայց մինչև երեան գալը, օգուտ պիտի քաղեմ անկից, և առ այժմ լաւագոյն բան մը չկայ ընելու։

Եւ Մալիքօրն իր սենեկէն դուրս կ'սրանար որսական շէն պէս արքունեայ լուրեր և հետաքրքրական բաներ հետաղօտելու համար, այս տեղ եփելով այն տեղ խղդուելով, ինչպէս որ օրիորդ Մօնդալէի ըսեր էր։

Իր բնակութեան երկրորդ օրը Մալիքօրն տեսեր էր հետզհետէ եօթն ուղևորներու դալն որ բոլոր պանդոկը կ'լեցնէին։

Բոլոր այս բազմութիւնը, այս սպասաւորները, այս ձիերը տեսնելուն՝ Մալիքօրն ձեռները շփեց, մտածելով որ եթէ օր մ'ևս ուշանար՝ իր խուզարկութիւններէն 'ի դարձին անկողին մ'անգամ չպիտի գտնէր հանդստանալու համար։

Այս ամէն օտարականներն իրենց սենեակները բռնելէն ետև՝ պանդոկապետն իր սենեակը մտաւ, և իր սովորական շնորհքովը,

— Սիրելիդ իմ պարոն — ըսաւ անոր — քեզի կ'մնայ շնչին երրորդ թեւին մեծ սրահը, գիտես այս բանը։

— Անշուշտ գիտեմ։

— Եւ այս ալ իրօք Ճշմարիտ ընծայ մ'է որ քեզի կ'ընեմ։

— Շնորհակալ եմ։

— Այնպէս որ երբ բարեկամդ գայ . . .։

— Լաւ ուրեմն։

— Լա՛ւ, իզնէ գոհ պիտի լինի, կամ՝ եթէ գոհ չլինի, ըսել է թէ գժուարաւ բան հանող մարդ մը պիտի լինի։

— Ներէ՛, կ'ուզէս որ իմ բարեկամիս վրայօք քեզի բան մը ըսեմ։

— Ինչո՞ւ չըսես, աղատ ես միշտ ըսելու։

— Գիտես որ՝ պարտաւոր էր գալու . . .։

— Եւ կ'պարտաւորի գալ միշտ։

— Բայց կարելի է միտքը փոխած է։

— Ո՛չ։

— Եթէ ստոյգ ես։

— Ստոյգ եմ։

— Ուրեմն եթէ երբէք կասկած մ'ունիս . . .։

— Վերջը՞։

— Ես պիտի ըսեմ քեզի, որ պատասխանատու չեմ ձեզ դալուն։

— Բայց քեզի ըսաւ կարծեմ. . . :

— Անշուշտ ըսաւ. բայց դիտես որ մարդ կ'առաջադրէ և Աստուած կ'տնօրինէ, verba volant, scripta manent :

— Ի՞նչ ըսել է այդ :

— Բառերը կ'թռին, գրուածը կ'մնայ. և որովհետև ինձ չգրեց, և մինակ խօսքով յայտնեց իր միտքը. ուստի պիտի արտօնութիւն տամ քեզի, թէև առանց քեզ հրաւիրելու որ ընես . . . կ'զգաս որ շատ դժուարին է :

— Ի՞նչ բանի արտօնութիւն կ'տաս ինձ :

— Ճշմարիտը, իր սենեակը վարձու տալու, թէև աղէկ դին մը գտնես :

— Ե՞ս :

— Այո՛, դու :

— Երբէք, պարոն, երբէք այդպիսի բան մը չպիտի ընեմ : Եթէ քեզի չգրեց . . . :

— Ո՛չ, չգրեց :

— Ինձի գրեց :

— Է՛յ :

— Այո՛ :

— Եւ ի՞նչ խմաստով գրեց : Նայինք թէ իր նամակը խօսքին կ'համաձայնի՞ :

— Աւասիկ գրեթէ բնագիրը.

« Ա՜ պարոն պանդոկապետ Պօ—Բանի,

« Կարևոր մարդ մը քեզի խմացուցած պիտի լինի թէ պանդոկիդ մէջ ժամադիր եղած եմ : Գոնդէնսլը դումարուող ընկերութեան մասնակից եմ : Ուստի պահէ, թէ մէկ պզտիկ սենեակ մը բարեկամի մը համար որ իրնէ առաջ կամ ետքը պիտի գայ . . . » :

— Այս ըսած բարեկամը դու ես, այնպէս չէ՞ — ըսաւ Պօ—Բանի պանդոկապետը խօսքն ընդմիջելով :

Մալիքօրն համեստաբար ծռեցաւ :

Պանդոկապետը շարունակեց.

« Եւ մեծ սենեակ մ'ինձի համար : Մեծ սենեակն ինձի կ'վերաբերի. բայց կ'փափաքիմ որ սենեկին վարձքը միջակ լինի, այդ սենեակն անարծաթ բժշկի մը վերաբերելուն » :

— Այս բժիշկը դու ես միշտ, այնպէս չէ՞ — ըսաւ պանդոկապետը :

— Ճշմարիտ է, ես եմ — ըսաւ Մալիքօրն :

— Ուրեմն համաձայն ենք. բարեկամդ իր սենեկին վարձքը պիտի վճարէ, և դու ալ քու սենեկիդ :

— Կախաղանն ելնեմ, եթէ բան մը կ'իմանամ այս անցած դարձած բաներէն — ըսաւ Մալիքօրն իրրովի :

Ապա՝ բարձր ձայնով.

— Եւ ըսէ՛ ինձ, միթէ անունը գոհ ըրաւ քեզ :

— Ի՞նչ անուն :

— Նամակը վերջացնող անունը բոլորովին երաշխաւորութիւն մ'ընծայեց քեզի :

— Ես ալ այդ անունը պիտի հարցնէի քեզի — ըսաւ պանդոկապետը :

— Ի՞նչպէս, միթէ նամակը ստորագրեալ չէր :

— Ո՛չ — ըսաւ պանդոկապետը խորհրդաւոր և հետաքրքրաշարժ կերպով իր աչերը կէս մը բացած :

— Ուրեմն — պատասխանեց Մալիքօրն այս շարժումն ու խորհրդաւոր ձևը կեղծելով — եթէ իր անունը չէ իմացուցած . . . :

— Լաւ ուրեմն :

— Պէտք է հասկընաս որ այդ զանցաւորութեան համար պատճառներ պիտի ունենայ :

— Անտարակոյս :

— Հետևապէս ես ալ, ես որ իր բարեկամն եմ, ես իր սրտակիցը՝ այս գաղտնիքը չպիտի մատնեմ :

— Իրաւունք ունիս, պարոն — պատասխանեց պանդոկապետը — ուստի ես ալ չեմ պնդեր :

— Այդ փափկութիւնդ կ'գնհատեմ : Իսկ ինձի գալով, ինչպէս որ բարեկամս ըսաւ : իմ սենեակս զատ է, այս կէտը լաւ որոշէ :

— Պարոն, որոշուած է :

— Քաջ կ'հասկընաս որ լաւ հաշիւները լաւ բարեկամները կ'ընեն : Ուրեմն մեր հաշիւը նայինք :

— Ստիպողական չէ :

— Միշտ կարդադրենք մեր հաշիւը։ Սենեակ, մնունդ, ինձի համար, իմ ձիուս տեղն ու կերակուրը. օրը քանի՞ կ'ուզես։

— Չորս ֆրանք, պարոն։

— Ուրեմն արդէն անցած երեք օրուան համար այդ հաշուով տասն երկու ֆրանք կ'ուզես։

— Տասն երկու ֆրանք, այո՛, պարոն։

— Աւասիկ քու տասն երկու ֆրանքդ։

— Է՛հ, պարոն, ի՞նչ հարկ կայ անմիջապէս վճարել զայն։

— Վասն զի — ըսաւ Մալիքօրն ձայնը մեղմելով և խորհրդաւոր կերպ մը դասելով, քանի որ կ'տեսնէր թէ խորհրդաւոր բաները կ'յաջողին — վասն զի՝ եթէ շուտ մը մեկնելու պէտք տեսնուի, և անմիջապէս ճամբայ ելնելու՝ մեր հաշիւը զոյցած պիտի լինինք։

— Պարոն, իրաւունք ունիս։

— Ուրեմն այն սենեակն իմն է։

— Քուկդ է։

— Լաւ ուրեմն, գոհ եմ, մնաս բարեաւ։

Պանդոկապետը քաշուեցաւ գնաց։

Երբ Մալիքօեն մինակ մնաց՝ հետեւեալ դատողութիւնն ըրաւ.

— Մինակ Պ. Կիշ կամ Մանիքան գրած պիտի լինին պանդոկապետին. Պ. Կիշ՝ վասն զի բնակարան մը կանխաւ պատրաստել կ'ուզէ, յաջողութեան կամ անյաջողութեան պարագայի մէջ. Մանիքան՝ վասն զի այս յանձնարարութիւնը Պ. Կիշին կողմէն առած պիտի լինի։

« Ուրեմն ահա Պ. Կիշի կամ Մանիքանի երևակայածը. մեծ սենեակը՝ թանձր քօղով ծածկուած տիկին մը վայելուչ կերպով ընդունելու համար բաւած պիտի լինի, սա նախազգուշութեամբ որ վերոյիշեալ տիկինն ամայի և անտառը տանող փողոցին մէկ դռնէն 'ի հարկին դուրս հանեն։

« Փոքր սենեակն ալ առ ժամանակեայ կերպով կամ Մանիքանն՝ որ Կիշին խորհրդակիցն է և դրան արթուն հսկողը, կամ նոյն ինքն Պ. Կիշը պատսպարելու համար է, Կիշն որ աւելի ապահովութեան համար թէ տիրոջ և թէ խորհրդակցի դերը կ'խաղայ։

« Բայց այն դումարումն որ տեղի պիտի ունենայ, որ իրօք տեղի ունեցաւ պանդոկին մէջ։

« Անտարակոյս թագաւորին ներկայանալիք մարդիկ են։

« Հապա ո՞վ է այն խեղճ արարածն որու սահմանուած է փոքր սենեակը։

« Հնարք մ'է Կիշը կամ Մանիքանն աւելի լաւ պահելու համար։

« Եթէ այդպէս է, ինչպէս որ հաւանական բան է, չարեայ փոքրապղծին է, և Մանիքանէն 'ի Մալիքօրն՝ քսակը կայ միայն »։

Այդ բանագաուութիւնն ընելէն ետև՝ Մալիքօրն հանգիստ քնայեր էր, թողլով որ եօթն օտարականները Պ.-Բ.ի պանդոկին եօթն սենեակներն ըստ հաճոյս բնակին և չափեն։

Երբոր Մալիքօրն արքունիքն անհանգիստ լինելու բան մը չունենար, երբոր արշաւելէն և խուզարկելէն յոգնած դադրած կը վերադառնար, երբոր տոմսակներ գրելէն ձանձրացած կ'երևէր, տոմսակներ զորս երբեք իրենց հասցէին զրկելու առիթ մը չէր գտներ, այն ատեն իր երանելի փոքրիկ սենեակը կ'մտնէր և թոռմած կտիմներով ու շահոքրամով զարդարուած պատշգամին վրայ արմուկը դնելով՝ կ'մտածէր այն տարօրինակ օտարներուն վրայ որոց համար կարծես թէ Ֆոնդէնպլօ ո՛չ լոյս ունէր, ո՛չ խրախճան և ո՛չ հանգիստ։

Այս վիճակը մինչև եօթներորդ օրը տևեց, օր զոր մանրամասն նկարագրեցինք իր դիշերովը նախընթաց գլուխներուն մէջ։

Այն գիշեր Մալիքօրն պատուհանը նստած օդ կ'առնուր առաւօտեան ժամը մէկին, երբոր Մանիքան ձիով երևցաւ՝ հետաղնին, հոգատար և տաղտկացած դէմքով։

— Լա՛ւ — ըսաւ Մալիքօրն զանի խկոյն ճանչելով — աւասիկ իմ մարդս որ սենեակը փնտռելու կ'գայ, այսինքն իմ սենեակս։

Եւ Մանիքանը կոչեց։

Մանիքան գլուխը վերցուց, և ըստ կարգի ինքն ալ ճանչեց Մալիքօրնը։

— Ա՛հ, թշուառական — ըսաւ նա դէմքը պարզելով — քարի եկեր ես, Մալիքօրն։ Ֆոնդէնպլօի մէջ կ'թափառիմ, երեք բան կ'փնտռեմ և չեմ կարող գտնել. այս է Կիշը, սենեակ մը և ախոռ մը։

— Կիշի մասին ոչ աղէկ և ոչ դէշ լուր մը կրնամ տալ քեզի, վասն զի զանի բնաւ չտեսայ. իսկ սենեկիդ և ախոռի մը դալով, այդ ուրիշ խնդիր է։

— Հա։

— Այո՛, այս տեղ բռնուած են վարձու խնդրածներդ։

— Վարձու բռնուած են, և որո՞ւ կողմէ։

— Կարծեմ թէ քու կողմէդ։

— Ի՞մ կողմէս։

— Միթէ բնակարան մը չբռնեցիր։

— Ե՞ս, ամենևին։

Նոյն պահուն պանդոկապետը սեմին վրայ երևցաւ։

— Սենեա՞կ մը — հարցուց Մանիքան։

— Միթէ բռնեցիր, պարոն։

— Ո՛չ։

— Ուրեմն, հիմակ սենեակ չկայ։

— Եթէ այդպէս է, սենեակ մը բռնեցի — ըսաւ Մանիքան։

— Սենեա՞կ մը թէ բնակարան մը։

— Ի՞նչ որ կ՚ուզես։

— Նամակո՞վ — հարցուց պանդոկապետը։

Մալիքօրն հաստատական նշան մ՚ըրաւ գլխովը Մանիքանի։

— Է՛հ, անտարակոյս նամակով — ըսաւ Մանիքան։ — Միթէ իմ կողմէ գիր մը չստացա՞ր։

— Ի՞նչ թուականով — հարցուց պանդոկապետը, որ Մանիքանի վարանական ընթացքէն կասկածներու կ՚երթար։

Մանիքան ականջը քերեց և Մալիքօրնի պատուհանին նայեցաւ. բայց Մալիքօրն իր սենեկէն դուրս ելեր էր և սանդղէն վար կ՚իջնէր որպէս զի բարեկամին օդնութեան հասնի։

Ճիշտ նոյն պահուն, Ճամբորդ մը, սպանիական երկար վերարկուով մը ծածկուած՝ ներքնադաւթին մէջ կ՚երևէր, սոյն խօսակցութիւնը լսելու չափ մօտ գտնուելով։

— Կ՚հարցնեմ քեզի թէ իմ պանդոկիս մէջ բնակարան մը բռնելու համար զրած նամակդ ի՞նչ թուական ունէր — կրկնեց պանդոկապետը պնդելով։

— Անցեալ չորեքշաբթի օրուան թուականն ունի այն գիրը — ըսաւ անուշ և քաղաքավար ձայնով մը խորհրդաւոր օտարականը պանդոկապետին ուսին գսելով։

Մանիքան ետ ետ գնաց, և Մալիքօրն՝ որ սեմին վրայ կ՚երևէր, ըստ կարգի ականջը քերեց։ Պանդոկապետը նորեկ անձին բարև տուաւ իբրև մարդ մ՚որ իր Ճշմարիտ ուղևորը կ՚Ճանչէ։

— Պարոն — ըսաւ անոր մարդավարութեամբ — քու սենեակդ պատրաստ կեցած է, նոյնպէս ախոռներդ։ Միայն . . . ։

Իր չորս կողմը նայեցաւ։

— Ո՞ւր են ձիերդ — հարցուց նա։

— Իմ ձիերս պիտի դան կամ պիտի չդան։ Այդ կէտը քեզի փոյթ չէ, այնպէս չէ՞, բաւական է որ բռնուած ախոռներուն վարձը ստանաս։

Պանդոկապետն աւելի ծուելով բարևեց։

— Ասկից զատ՝ միթէ պահեցիր քեզնէ խնդրած սենեակս — հարցուց անծանօթ Ճամբորդը։

— Ա՛յ — ըրաւ Մալիքօրն, ինքզինքը պահելու փորձ փորձելով։

— Պարոն, ութ օրէ վեր բարեկամդ բռնած է զայն — ըսաւ պանդոկապետը Մալիքօրնը ցոյց տալով որ կարելի եղածին չափ փոքրնալու կ՚ջանար։

Ուղևորն իր վերարկուն մինչև քիթը բարձրացնելով Մալիքօրնի վրայ արագ ակնարկ մը ձգեց։

— Այս պարոնն իմ բարեկամս չէ — ըսաւ նա։

Պանդոկապետն ոստում մ՚ըրաւ։

— Ես այս պարոնը չեմ Ճանչեր — շարունակեց ուղևորը։

— Ինչպէ՞ս — զոչեց պանդոկապետը Մալիքօրնի դառնալով — ինչպէ՞ս, դու պարոնին բարեկամը չե՞ս։

— Ի՞նչ փոյթդ է, բաւական է որ դու վարձդ ընդունիս — ըսաւ Մալիքօրն օտարականին ձեռը կեղծելով վեհափառօրէն։

— Ինքան փոյթս է — ըսաւ պանդոկապետը, որ սկսեր էր դիտել թէ անձի փոփոխութիւն կար — որ կ՚աղաչեմ քեզի, պարոն, որ քեզնէ առաջ ուրիշի բռնած տեղերը պարպես երթաս։

— Բայց վերջապէս — ըսաւ Մալիքօրն — այս պարոնը պէտք

չունի անշուշտ առաջին դստիկոնէ սենեակ մը և երկրորդէն ուրիշ խուց մը . . . : Եթէ այս պարոնը սենեակը բռնէ՝ ես, ես ալ սրահը կ'բռնեմ. եթէ պարոնը սրահը պահէ, ես ալ սենեակը կ'առնում:

— Շատ կ'ցաւիմ, պարոն, յայտնելու թէ ոչ միայն սենեակն այլ սրահն ալ ինձի պէտք է — ըսաւ օտարականն իր անուշ ձայնովը:

— Բայց վերջապէս, որո՞ւ համար է — հարցուց Մալիքօրն:

— Սրահն ինձի համար է:

— Լա՛ւ, հապա սենեակը:

— Նայէ՛ անդամ մը — ըսաւ օտարականը ձեռքը կարկառելով դէպ 'ի շքաղիրներուն որ կ'յառաջանային:

Մալիքօրն ցոյց տրուած կողմը տարաւ աչքն և տեսաւ պատղարակով մ'այն ֆրանչիսկեան կրօնաւորին դալուստը, որու իր սենեկին մէջ տեղաւորուիլը քանի մը մանր պարագաներով պատմած էր Մօնդալէի, և զոր ընդունայն ջանացեր էր աւելի խոնարհ խորհուրդներու վերածելու:

Անծանօթ ուղևորին և հիւանդ կրօնաւորին դալստեան արդիւնքն եղաւ Մալիքօրնի արտաքսումը, որ առանց որ և է ակնածութեան Պօ-Բռանի պանդոկէն դուրս նետուեցաւ պանդոկապետին և կրօնաւորը կրող մարդոց կողմէն:

Արդէն ընթերցողին յայտնեցինք թէ այս արտաքսումն ինչ հետևանք ունեցաւ, թէ ինչ խօսեցան Մանիքան և Մօնդալէ, զոր Մանիքան քան Մալիքօրն աւելի Ճարպիկ գտեր էր Կիշի վերայ լուր առնելու դիտմամբ, թէ վերջը Մալիքօրնի և Մօնդալէի մէջ ինչ խօսքեր անցան, և թէ վերջապէս ինչպէս Սէնդ-Էնյան Մանիքանի և Մալիքօրնի համար բնակարան գտեր էր:

Կ'մնայ մեզ յայտնել ընթերցողին թէ ո՞վ էր վերարկուով ուղևորը, կրկին սենեկայց գլխաւոր վարձուորը, նոյնպէս թէ ո՞վ էր ֆրանչիսկեանը, որ խորհրդաւոր անձ մը կ'երևէր, և որու գալուստը՝ վերարկուով ուղևորին դալստեան հետ հանդիպելով՝ երկու բարեկամաց կարդաղրութիւնները գժբաղդաբար խանգարեր էին:

ԺԳ

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐՈՒԱՆ ՄԷԿ ԺԷԶՎԻԴԸ

Եւ ամենէն առաջ՝ ընթերցողին հետաքրքրութիւնը գոհ ընելու համար՝ պիտի փութանք առաջին հարցման պատասխանել:

Երեսը վերարկուովը ծածկող Ճամբորդն Արամիսն էր, որ Գուքէէն բաժնուելէն և սպասաւորին ձեռօք բացած մէկ պայուսակէն ձիաւորի կատարեալ զգեստները հանելէն ետև՝ դղեկէն դուրս ելեր և Պօ-Բռան պանդոկն եկեր էր, ուր տեղ եօթն օրէ վեր՝ ինչպէս պանդոկապետն ըսաւ, սրահ մը և սենեակ մը վարձու բռնած էր նամակով:

Արամիս՝ Մալիքօրնի և Մանիքանի արտաքսմանէ անմիջապէս ետք՝ ֆրանչիսկեան կրօնաւորին մօտեցաւ և հարցուց անոր թէ ո՞ր տեղը կ'ընտրէ, սրա՞հը թէ սենեակը:

Ֆրանչիսկեանն հարցուց թէ ո՞ւր կ'գտնուին այս երկու տեղերը:

Պատասխան տուին իրեն որ սենեակն առաջին և սրահն երկրորդ դստիկոնը կ'գտնուին:

— Ուրեմն, սենեակը կ'ուզեմ — ըսաւ կրօնաւորը:

Արամիս չսպնդեց բնաւ և կատարեալ հլութեամբ մը,

— Սենեակը — ըսաւ պանդոկապետին:

Եւ յարգանօք բարև տալով՝ սրահը քաշուեցաւ:

Ֆրանչիսկեանն անմիջապէս սենեակը տարին:

Այժմ միթէ զարմանալի բան մը չէ՞ տեսնել եպիսկոպոսի մը յարգանքը պարզ վանականի մը համար, և մուրացիկ կարգի վանականի մը համար, որու այսպէս՝ թէև չնդրեց, սենեակ մը կ'տային որ այնչափ ուղևորներու փառասիրութիւնը կ'գրգռէր:

Ի՞նչպէս բացատրել նաև Արամիսի այս անակնկալ գալուստն 'ի Պօ-Բռան, քանի որ Գուքէի հետ դղեակը մնալով՝ կարող էր Գուքէի հետ դղեակը բնակիլ:

Ֆրանչիսկեանն առանց տրտունջ մը հանելու սանդղէն վեր սենեակը փոխադրուեցաւ, թէև յայտնի կ'երևէր որ մեծ էր տառապանքը, և ամէն անգամուն որ պատգարակը պատին կամ սանդղին բազրիքին կ'զարնէր, բոլոր մարմնով սոսկալի ցնցում մը կ'զգար։

Ի վերջէ՝ երբ սենեակը հասաւ.

— Օգնեցէք ինձ որ թևաթոռին վրայ նստիմ — ըսաւ բեռնակիրներուն։

Ասոնք ալ պատգարակը գետինը դրին, և կարելի եղածին չափ մեղմիկ վերցնելով հիւանդը ցոյց տուած թևաթոռին վրայ նստեցուցին, որ մահճին գլխին կողմը դրուած էր։

— Այժմ — յարեց նա՝ մեծ անուշութեամբ շարժում և ձայն հանելով — ըսէք պանդոկապետին որ վեր ելնէ։

Մարդիկ հնազանդեցան։

Հինգ վայրկեան ետք՝ Պ.-Բանի պանդոկապետը դրան սեմին վրայ կ'երևէր։

— Բարեկամդ իմ — ըսաւ անոր Ֆրանչիսկեան կրօնաւորը — կ'աղաչեմ, ճամբայ տուր այս մարդոց. Մըլէօնի դերկոմսին հպատակներն են։ Ջերմութենէ մարած գտան զիս ճամբուն վրայ, և առանց նայելու թէ արդեօք իրենց նեղութեան վարձքը պիտի ընդունի՞ն թէ ոչ, ուզեցին զիս իրենց տունը տանիլ։ Բայց գիտեմ թէ ո՛րչափ սուղ կ'նստի աղքատաց հիւանդի մը տրուած հիւրընկալութիւնը, և նախադաս սեպեցի պանդոկը՝ ուր՝ սակայն ինձ կ'սպասէին։

Պանդոկապետը զարմանօք նայեցաւ Ֆրանչիսկեան կրօնաւորին։

Ֆրանչիսկեանն իր բթամատով և ձեռով մը կուրծքին վրայ խաչի նշանն ըրաւ։

Պանդոկապետը նոյն նշանն ըրաւ իր ձախ ուսին վրայ։

— Այո՛, իրաւ է — ըսաւ նա — ձեզի կ'սպասէինք, հայր իմ. բայց կ'յուսայինք որ լաւագոյն վիճակի մէջ պիտի գայիք այս տեղ։

Եւ՝ երբ գեղացիները զարմանօք կ'նայէին այն պանդոկապետին որ յանկարծ ակնածու ընթացք մ'առեր էր պարզ կրօնաւորի մը առջև, Ֆրանչիսկեանն իր գրպանէն երկու երեք հատ ոսկի հանեց և ցցուց։

— Աւասիկ, բարեկամներս — ըսաւ — ինձ տրուելիք խնամոց խոխարէն վարձքը։ Այսպէս անհոգ եղէք և մի՛ վախնաք զիս այս տեղ թողլու։ Իմ միաբանութիւնս՝ որու համար կ'ուղևորիմ, չուզեր որ մուրամ, բայց որովհետև ձեր կողմէն տեսած խնամքս վարձատրութեան արժանի են, սա երկու ոսկիներն առէք և 'ի խաղաղութիւն վերադարձէք։

Գեղացիները չէին իշխեր ընդունելու վարձքը. պանդոկապետը կրօնաւորին ձեռքէն երկու ոսկին առաւ և գեղացիի մը ձեռքը տուաւ։

Զորս բեռնակիրները քաշուեցան դացին խոշոր խոշոր բանալով իրենց աչքը։

Երբ դուռը գոցուեցաւ և պանդոկապետը յարգանօք նոյն դրան մօտ կ'կենար, Ֆրանչիսկեանը պահ մ'ինքզինքն ամփոփեց։

Ապա իր գեղնած ճակտին տարաւ տենդէ չորցած ձեռքն և կարկամ մատներով շփեց դողդոջուն իր մօրուքին աղէբեկ գանգուրները։

Իր մեծ աչունքը՝ որ հիւանդութենէ և յուզմունքէ փոքր էին՝ կարծես թէ անորոշակի կ'հետևէին վշտալի և անողոքելի դաղափարի մը։

— Ի՞նչ բժիշկներ ունիք 'ի Փօնդէնպլօ — հարցուց նա վերջապէս։

— Երեք հատ ունինք, հայր իմ։

— Ի՞նչպէս կ'անուանին։

— Նախ՝ Լինիկէ։

— Ապա՞։

— Ապա Կարմէլեան եղբայր մը Հիւպէր։

— Ապա՞։

— Ապա Կրիզար անուամբ աշխարհական մը։

— Ա՛հ, Կրիզա՛ր — մրմռաց կրօնաւորը։ — Շուտով Պ. Կրիզարը կոչէ։

Պանդոկապետն արտօրնօք հնազանդելու շարժում մ'ըրաւ։

— Աղէկ միտքս ընկաւ, այս տեղ ձեռքի տակ ի՞նչ քահանաներ ունիք։

— Ի՞նչ քահանաներ։

— Այո՛, որ ուխտին վերաբերեալ են։

— Ժէզվիդներ, օգոստինեաններ, ֆրանչիսկեաններ կան, բայց, հայր իմ, ժէզվիդներն ամենէն մօտ են։ Ուստի ժէզվիդ խոստովանահայր մը պիտի կոչեմ, այնպէս չէ՞։

— Այո՛, դնա կանչէ։

Պանդոկապետը դուրս ելաւ։

Ընթերցողը գուշակած է որ՝ հիւանդին և պանդոկապետին մէջ փոխանակուած խաչի նշանէն՝ երկուքն ալ Ճանչեցին որ յիսուսեան ահարկու ընկերութեան անդամակիցներ էին։

Երբ մինակ մնաց ֆրանչիսկեան կրօնաւորն իր գրպանէն ծրար մը թուղթ հանեց որոց մէկ քանին խղճահար ուշադրութեամբ աչքէ անցուց։ Սակայն հիւանդութեանը սաստկութիւնն իր քաջասրտութիւնն ընկճեց. իր աչերը դարձան, իր Ճակտէն պաղ քրտինք մը հոսեցաւ, և դրեթէ մարելով՝ գլուխն ետին դարձած ընկաւ, իր թևերը թիկնաթոռին երկու կողմէն վար կախուած։

Հինգ վայրկեան այսպէս առանց որ և է շարժում մ՚ընելու մնաց, երբոր պանդոկապետը ներս մտաւ՝ բժիշկն առաջնորդելով, որուն հազիւ ատեն տուեր էր հագուելու։

Ասոնց ներս մտնելէն առաջ եկած աղմուկը, դրան բացուելուն վրայ պատահած օդի յորձանքը՝ հիւանդին զգայարանքը գըրգռեցին։ Փութով իր ցիրուցան թղթերը ժողվեց և իր երկայն ու ոսկրուտ ձեռքը թիկնաթոռին բարձին տակը պահեց զանոնք։

Պանդոկապետը դուրս ելաւ հիւանդն ու բժիշկը միասին թողլով։

— Նայինք — ըսաւ կրօնաւորը բժշկին — Պ. Կրիզար, մօտեցիր նայինք, վասն զի ժամանակը սուղ է, երակս զննէ, քննէ, դատէ և վճիռն արձակէ։

— Մեր պանդոկապետը — պատասխանեց բժիշկը — հաւաստեց ինձ որ ուխտին անդամներէն մէկուն իմ խնամքս տալու բարեբաղդութիւնն ունիմ։

— Անդամներէն մէկուն, այո՛ — պատասխանեց ֆրանչիսկեանը։ — Ուրեմն ըսէ ինձ Ճշմարտութիւնը. շատ տկար կ՚գտնեմ ինքզինքս, կ՚երևի ինձ որ պիտի մեռնիմ։

Բժիշկը կրօնաւորին ձեռքը բռնեց և երակը զննեց։

— Հօ՛, հօ՛ — ըսաւ նա — վտանգաւոր տենդ։

— Ի՞նչ կ՚նշանակէ վտանգաւոր տենդ — հարցուց հիւանդը հրամայական ակնարկով մը։

— Առաջին կամ երկրորդ տարուան անդամակցի մը, պիտի ըսէի բուժելի տենդ — պատասխանեց բժիշկն աչքը կրօնաւորին հարց ու փորձ ընելով։

— Բայց ի՞նձ — ըսաւ ֆրանչիսկեանը։

Բժիշկը վարանեցաւ։

— Նայէ իմ սպիտակ մազերուս և խորհուրդներով լեցուն Ճակտիս — շարունակեց նա — նայէ խորշերն որով իմ փորձերս կը համրեմ, ես մեռասաներորդ տարուան ժէզվիդ մ՚եմ, Պ. Կրիզար։

Բժիշկը դողդողաց։

Արդարև՝ մեռասաներորդ տարուան ժէզվիդ մը՝ այն մարդերէն մին է որ ուխտին բոլոր գաղտնեաց հաղորդ է, այն մարդերէն մին որոց համար գիտութիւնն այլ ևս գաղտնիք, ընկերութիւնը այլ ևս պատնէշներ, աշխարհական հնազանդութիւնն այլ ևս կապեր չունի։

— Այսպէս ուրեմն — ըսաւ Կրիզար յարգանօք բարևելով — ես վարպետի մ՚առջև կ՚գտնուիմ։

— Այո՛, ուստի ըստ այնմ վարուէ։

— Եւ ի՞նչ կ՚ուզէք իմանալ...։

— Իմ Ճշմարիտ վիճակս։

— Լաւ ուրեմն — ըսաւ բժիշկը — ըղեղային տենդ մ՚է, կամ ուրիշ ոՃով սուր ԴԵՆԷՆՃԷՔ մ՚որ իր յետին սաստկութեան աստիճանը հասած է։

— Ուրեմն, յոյս չկայ, այնպէս չէ՞ — հարցուց ֆրանչիսկեանը սուղ ձայնով մը։

— Ես այդ չեմ ըսեր — պատասխանեց բժիշկը. — սակայն ըղեղին խանգարումը, ընչաւութեան կարճութիւնը, երակին սաստկութիւնը, ձեզ լափող սոսկալի տենդին ուժգնութիւնը նկատելով...։

— Որ զիս երեք անգամ վար զարկաւ այս առաւօտէն 'ի վեր — ըսաւ կրօնաւորը։

— Ասոր համար սոսկալի անուանեցի։ Բայց ի՞նչպէս ճամբան չմնացիք։

— Այս տեղ կ՚սպասէին ինձ, պէտք էր որ գայի։

— Եթէ մեռնէիք իսկ։

— Այո՛, եթէ մեռնէի անգամ։

— Լաւ ուրեմն, այս ամէն նշաններէն կ՚հեւեցնեմ որ ձեր վիճակը գրեթէ յուսահատական է։

— Այդ քու ըսածդ, վարպետ Կրիզար, թերևս բաւական է անդամակցի մը համար, նոյն իսկ մեստասաներորդ տարուան, բայց ինձի համար շատ քիչ է, և իրաւունք ունիմ աւելի պահանջելու։ Նայինք, ադիկց աւելի ճշմարիտ լինինք, անկեղծ լինինք, որպէս թէ Աստուծոյ հետ է մեր խօսքը։ Զմոռնամ որ արդէն խոստովանահօր մը ձայն տուի որ գայ։

— Ո՛հ, սակայն ես կ՚յուսամ — թոթովեց բժիշկը։

— Պատասխանէ — ըսաւ հիւանդն արժանավայել շարժումով մ՚ոսկի մատնի մը ցոյց տալով՝ որու կապիճն ափին կողմը դարձուցեր էր մինչ ցայն կէտ և որ յիսուսեան ընկերութեան յայտարար նշանը փորագրեալ ունէր։

Կրիզար բացականչութիւն մը հանեց։

— Զօրապե՛տը — գոչեց նա։

— Լռութի՛ւն — ըսաւ ֆրանչիսկեանը — կ՚հասկընաս այժմ որ պէտք է ճշմարիտ խօսիլ։

— Տէր իմ, տէր իմ, կանչեցէք խոստովանահայրը — մրմռաց Կրիզար — վասն զի երկու ժամէն՝ առաջին անգամ տենդը կրկնուելուն՝ պիտի զառանցէք, և ճգնաժամը պիտի հասնի։

— Շատ լաւ — պատասխանեց հիւանդն որ պահ մ՚իր ունքը պուստեց — ուրեմն երկու ժամ ունիմ։

— Այո՛, մանաւանդ եթէ ըմպէք ձեզ զրկելիք դեղջուրս։

— Եւ միթէ երկու ժամ միջոց պիտի տա՞ յ ինձ։

— Երկու ժամ։

— Եթէ թոյն անգամ լինի՝ պիտի ըմպեմ այդ ջուրը, վասն զի այդ երկու ժամն ոչ միայն ինձ կարևոր են, այլ ուխտին փառաց։

— Ո՛հ, ի՛նչ կորուստ — մրմռաց բժիշկը — ի՛նչ ձախորդութիւն մեզի համար։

— Մարդ մը միայն պիտի կորսուի, և այլ ոչ ինչ — պատասխանեց ֆրանչիսկեանը — և Աստուած պիտի հոգ տանի որ ձեզնէ բաժնուող խեղճ կրօնաւորն արժանի յաջորդ մը գտնէ։ Մնաս բարեաւ, Պ. Կրիզար, արդէն Աստուծոյ մէկ շնորհն է որ քեզի հանդիպեցայ։ Եթէ մեր սուրբ ուխտին հաղորդ բժիշկ մը չգտնէի՝ իմ վիճակիս վրայ զիս չպիտի լուսաւորէր, և ես ալ կարծելով թէ տակաւին պիտի ապրիմ, պէտք եղած զգուշութիւնները չպիտի առնուի։ Գիտուն ես, Պ. Կրիզար, այդ բանը մեզ ամենուս պատիւ մ՚է. դժարս պիտի դար եթէ մերայնոց մին իր արհեստին մէջ միջակ գտնէի։ Մնաս բարեաւ, վարպետ Կրիզար, մնաս բարեաւ, և շուտով զրկէ ինձ դեղջուրդ։

— Գոնէ օրհնեցէք զիս, տէր իմ։

— Մտքով, այո՛, կ՚օրհնեմ... գնա՛... մտքով, ըսի քեզի ... animo, վարպետ Կրիզար ... viribus impossibile (հոգւոյ ... զօրութեան անկարելի)։

Եւ վերստին իր թեւաթոռին վրայ ընկաւ՝ գրեթէ մարելով։

Վարպետ Կրիզար վարանեալ մնաց թէ արդեօք վայրկենական օգնութիւն մը հասցնէ՞ անոր, թէ ոչ խոստացեալ դեղջուրը պատրաստելու վազէ։ Անտարակոյս դեղջուրը բերելու որոշեց, վասն զի սենեկէն դուրս սրացաւ և սանդղէն վար անհետ եղաւ։

ԺԴ

ՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԱՂՏՆԻՔԸ

Կրիզար բժշկին երթալէն քանի մը վայրկեան ետք՝ խոստովանահայրը հասաւ։

Այն ինչ դրան սեմէն անցաւ՝ որ ֆրանչիսկեանն անոր վրայ սևեռեց իր խորին ակնարկը։

Ապա իր գունատ գլուխը ցնցելով,

— Ահա ողորմելի միտք մը — մրմռաց նա — և յուսամ որ Աստուած պիտի ներէ ինձ եթէ առանց այս կենդանի ապիկարութեան օգնութեանը մեռնիմ։

Խոստովանահայրն ալ իր կողմէն զարմանօք գրեթէ սոսկումով կ'նայէր հոգեվարին։ Երբէք տեսած չէր գոյութեան մօտ եղող այնպիսի հրավառ աչեր, մարելու մօտ եղող այնպիսի ահարկու ակնարկներ։

Ֆրանչիսկեան կրօնաւորն իր ձեռքն արագ ու հրամայական նշան մ'ըրաւ։

— Այդ տեղ նստիր, հայր իմ, և ինձ մտիկ ըրէ։

Ժէզվիդ խոստովանահայրը, բարի քահանայ մը, պարզ և միամիտ նորընծայ մ'որ ուխտին խորհուրդներէն միայն ընծայումը տեսեր էր, հիւանդին գերաղանցութեան հնազանդեցաւ։

— Այս պանդոկին մէջ շատ մարդիկ կան — շարունակեց Ֆրանչիսկեանը։

— Բայց — հարցուց ժէզվիդը — կարծէի թէ խոստովանութեան համար եկած եմ։ Մի՞թէ այդ ըսածդ խոստովանանքնէ։

— Ինչո՞ւ համար այդ հարցումդ։

— Գիտնալու համար թէ արդեօք խօսքերդ դաղտնի պահել պէտք եմ։

— Իմ խօսքս խոստովանութեան ասացուածներ են. իբրև խոստովանահայր քեզի կ'հաղորդեմ զանոնք։

— Շատ աղէկ — ըսաւ քահանային նստելով այն թիկնաթոռին վրայ, որմէ Ֆրանչիսկեանը նոր ելեր էր մեծ դժուարութեամբ իր անկողնին վրայ երկննալու համար։

Ֆրանչիսկեանը շարունակեց.

— Այս պանդոկս շատ անձինք կան, կ'ըսէի քեզ։

— Այդ լսեցի։

— Այդ անձինքն ուզի հոգի պիտի լինին։

Ժէզվիդը նշան ըրաւ թէ կ'հասկըներ։

— Առաջին մարդն որու հետ խօսիլ կ'ուզեմ դերմանացի մ'է — ըսաւ հոգեվարը — և Վօսդպուր պարոն կ'անուանի։ Բարեհաճէ երթալ գտնելու զանի, և ըսէ անոր որ սպասած անձն եկած է։

Խոստովանահայրը զարմանօք իր ծուխին նայեցաւ, այս խոստովանանքն իրեն տարօրինակ կ'երևէր։

— Հնազանդէ — ըսաւ Ֆրանչիսկեանը հրամայական անդիմադրելի ձայնով մը։

Բարի ժէզվիդը՝ բոլորովին նկուն՝ կանգնեցաւ և սենեկէն դուրս ելաւ։

Երբ ժէզվիդը դուրս գնաց՝ Ֆրանչիսկեան կրօնաւորը վերստին առաւ թղթերը զոր առաջին անգամ թողեր էր յանկարծ տենդէն բռնուելով։

— Պ. Վօսդպուր. լա՛ւ — ըսաւ նա — փառասէր, յիմար, կարճամիտ մարդ մը։

Վերստին ծալեց թղթերն և բարձին ներքև քշեց։

Նրբաղաւթին ծայրն արագընթաց քայլերու ձայնը կ'լսուէր։

Խոստովանահայրը ներս մտաւ, և իրեն կ'հետևէր Պ. Վօսդպուր, որ գլուխը բարձր կ'քալէր, որպէս թէ աւաստաղն իր փետուրովը ծակելու միտք ունենար։

Ուստի այս մթին նայուածքով Ֆրանչիսկեան կրօնաւորը տեսնելուն, նոյնպէս սենեկին պարզութիւնը,

— Ո՞վ կ'կոչէ զիս — հարցուց դերմանացին։

— Ե՛ս — ըսաւ Ֆրանչիսկեանը։

Ապա խոստովանահօր կողմը դառնալով,

— Բարի հայր — ըսաւ անոր — մեզ պահ մը մինակ թող տուր, երբ պարոնը դուրս ելնէ այն ատեն ներս մտիր։

Ժէզվիդը դուրս ելաւ, և անտարակոյս հոգեվարին սենեկէն այսպէս վայրկենական աքսորէն օգուտ քաղեց այս տարօրինակ հիւանդին վրայ քանի մը բացատրութիւններ խնդրելու պանդոկապետէն, քանի որ նա իր խոստովանահայրն իբրև սենեկապան մը կ'գործածէր։

Պարոնն անկողնին մօտեցաւ և խօսիլ ուզեց, բայց Ֆրանչիսկեանն իր ձեռքը լռութիւն պատուիրեց։

— Վայրկեանները թանկագին են — ըսաւ կրօնաւորն արտորնօք — այս տեղ եկար մրցանքին համար, այնպէս չէ՞։

— Այո՛, հայր իմ։

— Զօրապետ ընտրուելու յոյս ունիս։

— Կ՚յուսամ։

— Գիտես թէ այս բարձր աստիճանին հասնելու համար ինչ պայմաններ պէտք են, որով մարդս թագաւորայ դլուխն և պաղերու հաւասար կ՚դառնայ։

— Ո՞վ ես դու — հարցուց պարոնը — որ այս հարցաքննութեան կ՚ենթարկես զիս։

— Ես ձեր սպասած անձն եմ։

— Ընդհանուր ընտրողն ես։

— Ես ընտրեալն եմ։

— Դո՞ւք էք . . . ։

Ֆրանչիսկեանն անոր ժամանակ չտուաւ որ խօսքն աւարտէ. իր նիհարցած ձեռքն երկնցուց. իր մատը կ՚փայլէր զօրապետութեան մատնիով։

Պարոնը զարմանքէն ետ ետ քաշուեցաւ, ապա խկոյն խորին յարգանօք ծռելով.

— Ի՞նչ — գոչեց նա — դուք այս տեղ էք, տէր իմ, դուք այս խեղճ սենեկին մէջ, այս ողորմելի մահճին վրայ, դուք այսպէս կ՚փնտռէք և կ՚ընտրէք ապագայ զօրապետը, այսինքն ձեր յաջորդը։

— Այդ մասին անհոգ եղիր, պարոն. շուտ առաջին պայմանը կատարէ, որ է մեր Ուխտին այնպիսի դաղտնիք մը հաղորդել որ Եւրոպայի արքունեաց մին՝ քու միջոցաւդ՝ ընդ միշտ մեր Ուխտին հպատակած մնայ։ Լաւ ուրեմն, այդ դաղտնիքն ունիս, ինչպէս խոստացար ունենալ մեծ խորհրդին ուղղած խնդրագրոյդ մէջ։

— Տէր իմ. . . ։

— Բայց կարդաւ շարունակենք . . . ։ Միթէ իրօք դու Վօլպուր պարո՞ն ես։

— Այո՛, տէր իմ։

— Միթէ այս նամակն իրօք քո՞ւկդ է։

Ժէզվիդներու զօրապետն իր ծրարէն թուղթ մը հանեց և պարոնին ներկայացուց։

Պարոնն իր աչքն անոր վրայ ձգեց և հաստատական նշանով մը.

— Այո՛, տէր իմ, այդ նամակն իրօք իմն է — ըսաւ նա։

— Եւ միթէ կարո՞ղ ես մեծ խորհրդին քարտուղարին դրած պատասխանն ինձ ցոյց տալ։

— Աւասիկ, տէր իմ։

Պարոնը Ֆրանչիսկեանին նամակ մը ներկայացուց որ պարզապէս սա հասցէն կ՚կրէր.

« Նորին վսեմութիւն Պարոն Վ. Օսդպուր »։

Եւ մինակ սա խօսքը կ՚պարունակէր.

A M D G*

— Շատ աղէկ — ըսաւ կրօնաւորը — աւասիկ իրարու դէմ առ դէմ ենք, այժմ խօսէ։

— Զօրաբանակ մ՚ունիմ որ յիսուն հազար հոգիէ կ՚բաղկանայ. բոլոր սպաները շահուած են։ Դանուբի վրայ կ՚բանակիմ։ Կարող եմ չորս աւուր մէջ կայսրը տապալել, որ՝ ինչպես դիտես, մեր Ուխտին յաւաջադիմութեան հակառակ է, և կարող եմ անոր յաջորդ կարդել իր գերդաստանին անդամներէն մին ըստ հաճոյս մեր Ուխտին։

Ֆրանչիսկեանը մտիկ կ՚ընէր առանց կենդանութեան նշան մը տալու։

— Միթէ այդ է բոլոր ըսելիքդ։

— Իմ ծրագրիս մէջ Եւրոպական յեղափոխութիւն մը կայ — ըսաւ պարոնը։

— Շատ աղէկ. Պ. Վ. Օսդպուր, պատասխանդ պիտի ընդունիս. քաշուէ սենեակդ, և քառորդէ մը Գօնդէնպլօէն մեկնէ դնա։

Պարոնն ետ ետ քաշուելով դուրս ելաւ, և այնպիսի երեսպաշտութեամբ որպէս թէ հրաժեշտ կ՚տար այն կայսեր զոր պիտի մատնէր։

— Այդ դաղտնիք մը չէ — մտմտաց Ֆրանչիսկեանը — այդ դաւադրութիւն մ՚է . . . ։ Այլ սակայն — յարեց նա պահ մը

* Աստուծոյ մեծագոյն փառաց համար։

ղութիւն պահելէն եաև — Եւրոպայի ապագան այսօր Աստրիոյ տան մէջ չէ։

Եւ իր ձեռքը բռնած կարմիր մատիտով մը Պ. Վօսդպուրի անունը ցանկէն գծեց։

— Այժմ կարտինալին հետ տեսնուինք — ըսաւ նա — Սպանիոյ կողմէն աւելի ծանրակշիռ բան մը պիտի լսենք անշուշտ։

Այն ատեն աչերը բարձրացնելով՝ տեսաւ խոստովանահայրն որ իր հրամանին կ'սպասէր, աշակերտի մը հլութեամբ։

— Հա՛, հա՛ — ըսաւ նա այս հլութիւնը դիտելով — միթէ պանդոկապետին խօսեցա՞ր։

— Այո՛, տէր իմ, և բժշկին։

— Կրիզարի՞ն։

— Այո՛։

— Ուրեմն անդ է։

— Խոստացեալ դեղջրով կ'սպասէ։

— Շատ լաւ, եթէ պէտք լինի, զանի պիտի կոչեմ. այժմ, իմ խոստովանութեանս բոլոր կարևորութիւնը հասկրցար, այնպէս չէ՞։

— Այո՛, տէր իմ։

— Ուրեմն դնա կանչէ Հերէպիա անուն սպանիացի կարտինալը։ Շո՛ւտ ըրէ։ Այս անգամ միայն, քանի որ խնդիրը դիտես, իմ քովս պիտի մնաս, վասն զի տկարութիւնս կ'աւելնայ։

— Պէ՞տք է կոչել բժիշկը։

— Ո՛չ, տակաւին ո՛չ. . . . Մինակ սպանիացի կարտինալը կ'ուզեմ, և այլ ոչ ինչ. դնա՛։

Հինգ վայրկեան ետքը՝ կարտինալը ներս կ'մտնէր՝ գունատ և մտայոյզ։

— Կ'իմանամ, տէր իմ. . . — թոթովեց կարտինալը։

— Խնդրոյն զանք — ըսաւ Ֆրանչիսկեանը մարած ձայնով մը։ Եւ անոր ցոյց մեծ խորհրդին իր կողմէ գրած մէկ թուղթը։

— Միթէ այս քու դիրդ է — հարցուց նա։

— Այո՛, բայց . . . ։

— Հապա քու կոչումդ . . . ։

Կարտինալը կ'վարանէր պատասխանելու։ Իր ծիրանին կ'ապստամբէր խեղճ Ֆրանչիսկեանի հաստ ատուին դէմ։

Հոգեվարն իր ձեռքը կարկաւեց և մատնին ցցուց։

Մատնին իր ներգործութիւնն ըրաւ, և մեծապոյն ներգործութիւն մը քանի որ կ'մեծնար այն անձն որու վրայ Ֆրանչիսկեանը կ'ներգործէր։

— Գաղտնիքը, շո՛ւտ գաղտնիքը — հարցուց հիւանդն իր խոստովանահօր վրայ կռթնելով։

— Coram isti (անոր առջև) — հարցուց կարտինալը մտայոյզ։

— Սպանիերէն խօսէ — ըսաւ Ֆրանչիսկեանը՝ մեծ ուշադրութիւն ընելով։

— Գիտէք, տէր իմ — ըսաւ կարտինալը Կասպիլեան լեզուաւ խօսակցութիւնը շարունակելով — որ Սպանիոյ թագաւորին աղջկան ամուսնութիւնը Ֆրանսայի թագաւորին հետ սա թէութեամբ է որ արքայաղն օրիորդն և ոչ Լուի իրաւունք մը պիտի ունենան Սպանիոյ գահին։

Ֆրանչիսկեանը հաստատական նշան մ'ըրաւ։

— Ասկից սա կ'հետևի — շարունակեց կարտինալը — որ երկու թագաւորութեանց մէջ խաղաղութիւնն ու դաշնադրութիւնը պայմանագրին այս տրամադրութեան պահպանութենէ կախումն ունի։

Կրօնաւորը նոյն նշանն ըրաւ։

— Ոչ միայն Ֆրանսան ու Սպանիան — ըսաւ կարտինալը — այլ բոլոր Եւրոպան պիտի դղրդէր այս կամ այն կողման անհաւասարմութենէ։

Հիւանդը վերստին գլուխը կ'շարժէ։

— Ասկից սա կ'հետևի — շարունակեց ատենախօսը — որ դէպքերը դուշակելու կարող եղող և ինչ որ մարդուս մտքին մէջ ամէն մ'է՝ իբրև ստոյգ հաղորդող անձը, այսինքն ապագայ չարեաց և բարեաց դաղափարը, աշխարհս ահագին աղէտքէ մը պիտի պահպանէր, այն ատեն մեր Ուխտին 'ի նպաստ պիտի գործածենք այն դուշակեալ դէպքը նոյն իսկ զայն պատրաստողին ըղձին մէջ։

— Pronto, pronto, (շուտ) — մրմռայ կրօնաւորն որ դունատեցաւ և քահանային վրայ ծռեցաւ։

Կարտինալը հոգեվարին ականջին մօտեցաւ։

— Լաւ ուրեմն, տէր իմ — գիտեմ որ Ֆրանսայի թագաւորն որոշեց որ առաջին բարուրանք մը գտնելուն՝ այսինքն եթէ մահ մը պատահի, կամ Սպանիոյ թագաւորին, կամ իրեն որդւոյն, Ֆրանսան ղէն 'ի ձեռին՝ Սպանիական գահին ժառանգութիւնը պահանջէ, և բոլորովին ձեռքս պատրաստ ունիմ այս առթիւ Լուի ԺԴի հետևելիք քաղաքականութեան ծրագիրը։

— Ի՞նչ է այդ ծրագիրը — ըսաւ Ֆրանչիսկեանը։

— Աւասիկ — ըսաւ կարտինալը։

— Որո՞ ձեռօք գրուած է։

— Իմ ձեռօքս։

— Միթէ ուրիշ բան մը չունի՞ս ըսելու։

— Կարծեմ թէ շատ խօսեցայ, տէր իմ — պատասխանեց կարտինալը։

— Այո՛, Ուխտին մեծ ծառայութիւն մ'ըրիր։ Բայց ինչպէս իմացար այդ մանր տեղեկութիւններն որով ծրագիրդ յօրինեցիր։

— Ֆրանսայի թագաւորին մօտ ստորին կարգի սպասաւորներ կան որոց ամսական կապած եմ, և անոնց միջոցաւ ձեռք ձգեցի այն ամէն անպիտան թղթերը զորս կրակարանը խնայած է։

— Հնարագէտ ես — մրմռայ Ֆրանչիսկեանը ժպտելու փորձելով։ — Պ. կարտինալ, քաւորդէ մ'այս պանդոկէն պիտի մեկնիս, քեզի պատասխան պիտի տրուի, գնա՛։

Կարտինալը քաշուեցաւ։

— Կանչէ՛ ինձի Կրիզարը, և դնա վենետիկցի Մարինին դուռը — ըսաւ հիւանդը։

Մինչդեռ խոստովանահայրը կ'հնազանդէր՝ Ֆրանչիսկեանը՝ փոխանակ կարտինալին անունը՝ պարոնին անուան պէս ջնջելու, նոյն անուան մօտ խաչ մը դնել։

Յետոյ՝ ըրած ճգանց չտակալով՝ իր անկողնին մէջ ընկաւ տաքթոր Կրիզարին անունը մրմռալով։

Երբոր հնքզինքին եկաւ՝ դեղջրին մէկ մասը խմեց՝ որու մնացորդը բաժակի մը մէջ կ'սպասէր, և բժիշկն անոր կ'օգնէր, մինչդեռ վենետիկցին և խոստովանահայրը դրան մօտ կ'կենային։

Վենետիկցին ալ իր երկու ոտիններուն պէս՝ մի և նոյն ձեռքուն ենթարկուեցաւ, անոնց պէս վարանեցաւ երկու օտարականաց տեսքէն, և զօրապետին հրամանին վրայ ապահովուելով՝ յայտնեց թէ Պապը՝ Ուխտին զօրութենէ երկնչելով՝ ժէզվիդներն արտաքսելու համար ընդհանուր յատակագիծ մը կ'պատրաստէր դաղտնի, և Եւրոպայի արքունեաց հետ կ'բանակցէր որպէս զի անոնց օգնութիւնը ստանայ։ Քահանայապետին օգնականները ցցուց, անոր գործելու միջոցները, և Արշիպեղագոսին այն կողմը նշանակեց, ուր, յանկարծական յափշտակութեամբ մը, մատասանները տարուին հաղորդակից երկու կարտինալներ, և հետևապէս գլխաւոր մեծաւորներ, Հռոմէն պիտի փոխադրուէին երսուն երկու հատ անդամակից ժէզվիդներով։

Ֆրանչիսկեանը շնորհակալ եղաւ «ինէոթ Մարինիին։ Այս քահանայապետական խորհրդին յայտնութիւնը ժէզվիդական միաբանութեան մատուցեալ փոքրիկ ծառայութիւն մը չէր։

Այնուհետև վենետիկցին հրաման ստացաւ քառորդէ մը մեկնելու, և խնդալին մեկնեցաւ, որպէս թէ արդէն տէրն էր այն մատնիին որ ընկերութեան հրամանատարութեան նշանն էր։

Բայց մինչդեռ կ'հեռանար՝ Ֆրանչիսկեանն իր անկողնին մէջ կ'մրմռար.

— Բոլոր այս մարդիկ լրտեսներ են կամ նուիրակներ (sbire), ոչ մէկը զօրապետ է. ամենքը դաւադրութիւն մ'երևան հանելու, ոչ ոք դաղտնիք մը չունի։ Բնաւ կործանմամբ, պատերազմով, ուժով չէ որ յիսուսեան միաբանութիւնը պիտի կառավարէ, այլ բարոյական դերազանցութեան տուած խորհրդաւոր ազդեցութեամբ։ Ո՛չ, ուզած մարդս չդտայ, և աղէտից չափը ընելու համար՝ Աստուած զիս կ'զարնէ, և ահա կ'մեռնիմ։ Ո՛հ, սէ՞տք է որ Միաբանութիւնն ինձի հետ կործանի առ 'ի չգոյէ սիւնի մը, պէ՞տք է որ ինձ սպասող ապագան ինձի հետ կլանէ նաև Միաբանութիւնը։ Այս ապագան զոր թերևս իմ կենացս տաս տարիով պիտի յաւիտենական դառնար, վասն զի փառաւոր

և շքեղ. կ'բացուի այն իմ աչացս՝ նոր թագաւորին իշխանութեամբը։

Այս կէս մնածուած, կէս արտասանուած բառերն ահաբեկ կը լսէր բարի ժէզվիդը, ինչպէս որ մարդ տենդոտ մարդու մը զառանցանքը կ'լսէ, մինչդեռ Կրիզար, որ աւելի բարձր միտք մը ունէր, զանոնք կ'կլանէր իբրև անծանօթ աշխարհի մը յայտնութիւնները, ուր իր աչքը կ'խորասուզէր թէև իր ձեռքը չէր կարող անդ հասնիլ։

Ցանկարծ Ֆրանչիսկեանն ելաւ նստաւ։

— Լմնցնենք — ըսաւ — մահը զիս կ'զրաւէ։ Ո՛հ, քիչ մ'առաջ հանգիստ կ'մեռնէի, կ'յուսայի . . . . : Այժմ յուսահատ կ'ընկնիմ, միայն թէ մնացած մարդոց մէջ. . . Կրիզա՛ր, Կրիզա՛ր, զիս ժամ մ'ևս ապրեցո՛ւր։

Կրիզար հոգեվարին մօտեցաւ և անոր քանի մը կաթիլ ևս խմցուց, չէ թէ բաժակին մէջ եղած ջրէն, այլ իր քովն ունեցած սրուակին մէջ գտնուած դեղէն։

— Կանչեցէք սկովտիայցին — գոչեց Ֆրանչիսկեանը — կանչեցէք Պրէմի վանականը։ Կանչեցէք, կանչեցէք, Յիսո՛ւս, ահա կ'մեռնիմ, Յիսո՛ւս, կ'խղդուիմ։

Խոստովանահայրը դուրս նետուեցաւ որ երթայ օգնութիւն խնդրէ, որպէս թէ մարդկային զօրութիւն մը լինէր որ հիւանդին վրայ ծանրացող մահուան մատը բառնալու կարող լինէր, բայց դրան սեմին վրայ Արամիսը գտաւ, որ շրթերուն վրայ մէկ մատը դրած Լուութեան ատուած՝ Հարպոկրատի արձանին պէս՝ նայուածքով զանի հրեց մինչև սենեկին խորը։

Սակայն բժիշկն ու խոստովանահայրը շարժում մ'ըրին, աչքք իրարու խորհուրդ հարցնելէն ետև, որպէս զի Արամիսը հեռացնեն։ Բայց նա՝ երկու խաչի Դշանով՝ որոց իւրաքանչիւրը տարբեր կերպով մ'ըրաւ, երկուքն ալ իրենց գտնուած տեղը դամեց։

— Գլխաւո՛ր մը — մրմնացին երկուքնին ալ։

Արամիս ծանրութեամբ մնաց այն սենեակն ուր հոգեվարը մահուան առաջին հարուածոց դէմ կ'մաքառէր։

Իսկ Ֆրանչիսկեանը՝ սեպէ թէ ջուրն իր ներգործութիւնն ունեցաւ, սեպէ թէ Արամիսի երևիլն իրեն ոյժ տուաւ, շարժում մ'ըրաւ, և հրատապ աչքք, կիսբաց բերնով, քրտինքէն խոնաւ մազերով՝ իր անկողնին մէջ ելաւ նստաւ։

Արամիս զգաց որ այն սենեկին օդն հեղձամղձուկ էր, բոլոր պատուհանները գոց էին, կրակարանը կրակ կ'վառէր, երկու դեղնագոյն մոմեր պղնձէ աշտանակներուն վրայ հալելով կ'սահէին և իրենց թանձր շղթով աւելի ևս մթնոլորտը կ'տաքցնէին։

Արամիս պատուհանը բացաւ, և հոգեվարին վրայ բանիմաստ և յարգական ակնարկ մը սևեռելով,

— Տէր իմ — ըսաւ — ձեզնէ ներողութիւն կ'խնդրեմ որ այսպէս առանց ձեր ազդարարութեան եկայ. բայց ձեր վիճակն ինձ ահ ու դող կ'ազդէ, և մտածեցի որ թերևս զիս չտեսած մեռնիք, վասն զի ձեր ցանկին մէջ ես վերջերորդ կարգը բռնած եմ։

Հոգեվարը գոզդոզաց և իր ցանկին նայեցաւ։

— Ուրեմն դու այն ես զոր երբեմն Արամիս կ'կոչէին, և ապա Հէրպլէյ ասպետ, դու ուրեմն Վանի եպիսկոպոսն ես։

— Այո՛, տէր իմ։

— Քեզ կ'ճանչեմ, քեզ տեսեր եմ։

— Վերջին յոբելեան տօնին օրը, միասին տեսնուեցանք Ս. պապին ասպարանքը։

— Ա՛հ, այո՛, ճշմարիտ է, կ'յիշեմ։ Եւ միթէ դու ալ հետամուտներուն կարգը մտած ես։

— Տէր իմ, իմացայ որ Միսբանութիւնը պետական մեծ գաղտնիք մ'ունենալու պէտք ունի, և գիտնալով որ համեստութենէ կանխաւ ձեր պաշտօնէն հրաժարած էք այս գաղտնիքը յայտնողին 'ի նպաստ, գրեցի որ պատրաստ եմ հետամտել, ես գիտնալով գաղտնիք մը զոր կարևոր կ'սեպեմ։

— Խօսէ — ըսաւ կրօնաւորը — պատրաստ եմ քեզ մտիկ ընելու և այդ գաղտնիքին կարևորութիւնը դատելու։

— Տէր իմ, իմ գիտցած գաղտնիքիս կարևորութիւնն ունեցող գաղտնիք մը զոր ձեզի յայտնելու պատիւը պիտի ունենամ, երբէք խօսքով չըսուիր։ Ամէն գաղափար որ անդամ մը մտածութեան լիմբոսէն ելած և որ և է յայտարարութեամբ ամրացած

է նոյն իսկ զայն ծնողին չվերաբերիր։ Մտադիր և թշնամի ա-
կանջ մը կրնայ խօսքը քաղել. ուստի ըստ դիպուածոյ ցանել
պէտք չէ զայն, վասն զի այն ատեն գաղտնիք մը գաղտնիք չիո-
չուիր։

— Ուրեմն ի՞նչպէս գաղտնիքդ առանգել կ'յուսաս — հարցուց
հոգեվարը։

Արամիս մէկ ձեռքովը նշան ըրաւ բժշկին և խոստովանահօր
որ հեռանան, և միւսովը՝ Ֆրանչիսկեանին կրկնակ պահարանով
ծածկուած թուղթ մը ներկայացուց։

— Հապա գիրը — հարցուց Ֆրանչիսկեանը — միթէ խօսքէն
աւելի վստանգաւոր չէ՞, ըսէ։

— Ո՛չ, տէր իմ — ըսաւ Արամիս — վասն զի այդ պահարա-
նին մէջ այնպիսի տառեր պիտի գտնէք զոր միայն դուք և ես կա-
րող ենք հասկընալ։

Ֆրանչիսկեանն Արամիսին նայեցաւ զարմանօք որ հետզհետէ
կ'աւելնար։

— Այդ թուանշանը — շարունակեց Արամիս — 1655ին ձեր
գործածած թուանշանն էր, և զոր ձեր քարտուղարը, Ժուան
Ժուժան, որ մեռած է, միայն կարող էր կարդալ եթէ երբէք
աշխարհ դառնար։

— Ուրեմն դու այդ թուանշանը կ'ճանչես, գո՞ւ։

— Ես տուեր էի զայն անոր։

Եւ Արամիս, յարգանօք լի շնորհքով ծռելով, դէպ 'ի դուռը
յառաջացաւ գուրս ելնելու համար։

Բայց Ֆրանչիսկեան կրօնաւորին մէկ շարժումն և կոչման մէկ
աղաղակը զանի կեցուց։

— Յիսո՛ւս — ըսաւ — écco homo (առասիկ մարդը)։

Ապա՝ երկրորդ անգամ մ'ալ թուղթը կարդալով,

— Եկո՛ւր — ըսաւ — շո՛ւտ եկուր։

Արամիս կրօնաւորին մօտեցաւ նոյն հանդարտ և ակնածու դէմ-
քով։

Ֆրանչիսկեանը՝ թևը տարածելով, մոմին կ'այրէր Արամիսին
տուած թուղթը։

Այն ատեն՝ Արամիսի ձեռքը բռնելով և իրեն քաշելով,

— Ի՞նչպէս և որո՞ւ ձեռքք կարող եղար այդպիսի գաղտնիք
մ'իմանալու — հարցուց նա։

— Տիկին Շէվրէօզի միջոցաւ, որ թագուհւոյն մտերիմ և խոր-
հրդակից բարեկամուհին է։

— Հապա տիկին Շէվրէօզ. . . ։

— Մեռած է։

— Ուրիշներ, ուրիշներ գիտէին որ . . . ։

— Միայն ժողովրդեան մարդ մը և կին մը։

— Ո՞յք էին այդ անձինք։

— Զանի մեծցնողները։

— Ի՞նչ եղան։

— Անոնք ալ մեռած են . . . ։ Այդ գաղտնիքը կրակի պէս
կ'այրի։

— Եւ դու ի՞նչպէս ապրեցար։

— Ոչ ոք գիտէ թէ այդ գաղտնիքին տեղեակ եմ։

— Քանի՞ ատենէ վեր այդ գաղտնիքը գիտես։

— Տասն հինգ տարիէ վեր։

— Եւ միթէ պահեցիր։

— Ապրիլ կ'ուզէի։

— Եւ միթէ Ուխտին կ'ընծայես զայն, առանց փառասիրու-
թեան, առանց փոխարինի։

— Ուխտին կ'նուիրեմ զայն փառասիրութեամբ և փոխարինու-
թեամբ — ըսաւ Արամիս — վասն զի թէ որ ապրիս, տէր իմ,
հիմակ որ զիս կ'ճանչես, կարող ես զիս ընել ինչ որ կ'ուզես,
ինչ որ պարտիմ լինիլ։

— Եւ որովհետև կ'մեռնիմ — ղոչեց Ֆրանչիսկեանը — քեզ
իմ յաջորդս կ'ընեմ. . . ։ Ա՛ռ։

Եւ մատանին քաշելով մատէն, Արամիսին մատն անցուց։

Ապա այս տեսարանիս երկու հանդիսադիրներուն դառնալով.

— Վկայ եղէք — ըսաւ — և 'ի հարկին հաստատեցէք որ՝ թէև
մարմնով հիւանդ, բայց մտքով առողջ, ազատօրէն և ինքնակամ
յանձնեցի այս մատանին, որ ամենակարողութեան նշանն է, վերա-

պատուելի Հերպլէյին, Վանի եպիսկոպոսին, զոր իմ յաջորդս կ'կարդեմ, և որու առջև՝ ես՝ խոնարհ մեղաւոր, որ Աստուծոյ առջև երևելու պատրաստ եմ, ամենէն առաջ կ'խոնարհիմ, որպէս զի այլոց ամենուն օրինակ տամ։

Եւ Ֆրանչիսկեանն իրօք խոնարհեցաւ, մինչդեռ բժիշկն ու ժէզվիդը ծունր կ'դնէին։

Արամիս նոյն ինքն հոգեվարէն աւելի դեղնելով անդամ, իր ակնարկը յաջորդաբար տարածեց այս տեսարանիս դերասաններուն վրայ։ Գոհ եղած փառասիրութիւնն իր արեան հետ դէպ 'ի սիրտը կ'դիմէր։

— Փութանք — ըսաւ Ֆրանչիսկեան կրօնաւորը — այս տեղ ընելիքս սոսկալի է այնչափ որ զիս կ'մաշէ, և չպիտի յաջողիմ ընելու։

— Ես պիտի ընեմ, ես — ըսաւ Արամիս։

— Շատ աղէկ — ըսաւ կրօնաւորը։

Ապա ժէզվիդին և բժշկին ուղղելով խօսքը,

— Մեզ մինակ թողուցէք — ըսաւ նա։

Երկուքնին ալ հնազանդեցան։

— Այդ նշանով — ըսաւ նա — դու պէտք եղած մարդն ես երկիրը դղրդելու համար. այդ նշանով կ'տապալես, այդ նշանով պիտի հրահանգես. — In hoc signo vinces! (Գոյէ դուռը) — ըսաւ Ֆրանչիսկեանն Արամիսին։

Արամիս պարզունակը քաշեց և կրօնաւորին մօտ դարձաւ։

— Պապը մեր Ուխտին դէմ դաւադրեց — ըսաւ Ֆրանչիսկեանը — Պապը պէտք է որ մեռնի։

— Պիտի մեռնի — ըսաւ Արամիս հանդարտօրէն։

— Եօթն հարիւր հազար ֆրանք պարտք ունինք Պրէմի մէկ վաճառականի մը, Տօնսգէտ անուն, որ այս տեղ եկեր էր իմ ստորագրութեանս ապահովութիւնը խնդրելու։

— Այդ դումարը պիտի վճարուի — ըսաւ Արամիս։

— Մալդայի վեց ասպետներ՝ մետասաներորդ տարուան անդամակցի մ'անխոհեմութենէ Ուխտին երրորդ խորհուրդներն իմացեր են, աւասիկ այն ասպետաց անունները. պէտք է իմանալ թէ այս մարդիկ ի՞նչ ըրին այդ դաղտնիքը, զայն առնուլ և մարել։

— Այդ պիտի կատարուի։

— Երեք վտանգաւոր անդամակիցներ պէտք է Թիպէտ ղրկել որ կորսուին, դատապարտուած են. աւասիկ անոնց անունները։

— Այդ վճիռը պիտի գործադրել տամ։

— Վերջապէս՝ Անվերսի մէջ բնակող կին մը կայ, Ռավայաքի քրոջն աղջիկը, որ իր ձեռքը քանի մը թղթեր ունի Ուխտին պատուոյն վտանգաւոր։ Նոյն ընտանիքին, յիսուն և մէկ տարիէ վեր՝ յիսուն հազար ֆրանք թոշակ կապուած կայ։ Այս թոշակը ծանր է. Միաբանութիւնը հարուստ չէ...։ Պէտք է դումար մը տալով այն թղթերը գնել, կամ՝ եթէ մերժեն՝ թոշակը ջնջել... առանց վտանգի։

— Պիտի մտածեմ — ըսաւ Արամիս։

— Լիմայէն եկող նաւ մ'անցած շաբաթ Լիզբոնայի նաւահանգիստը մտած է. աւ երևոյթս տրումով բեռնաւորուած է, լիքօք՝ ոսկիով։ Ամէն մէկ քծուար տրումի խաւի մը ներքև ծածկուած է։ Այդ նաւը Միաբանութեանն է. տասն ութ միլիոն ֆրանք կ'արժէ, զայն կ'պահանջես. աւասիկ բեռնագիրները։

— Ո՞ր նաւահանգիստը պիտի բերել տամ։

— Ի Պայոն։

— Եթէ հովերը չհակառակին, երեք շաբաթ չանցած տահմանեալ տեղը պիտի հասնի։ Այս է ամենը։

Ֆրանչիսկեան կրօնաւորը դլխովը հաստատական նշան մ'ըրաւ, վասն զի չէր կարող ա՛լ խօսիլ. արիւնն իր կոկորդն ու դլուխը կ'արշաւէր և բերնէն, ռունկերէն և աչքերէն դուրս կ'ցայտէր։ Ողբմելին ժամանակ չունեցաւ Արամիսին ձեռքը սեղմելու և տախտակին վրայ ընկաւ կարկամեալ։

Արամիս իր ձեռքն անոր սրտին վրայ դրաւ. սիրտը բախելէն դադրեր էր։

Ծռելու ատենը՝ Արամիս դիտեց որ կրօնաւորին տուած թղթին մէկ կտորը բոցերէն ազատեր էր։

Գետնէն առաւ զայն և մինչև յետին հիւլէն այրեց։

Ապա խոստովանահայրն ու բժիշկը կոչելով.

— Քու ապաշխարողդ Աստուծոյ հետ է — ըսաւ խոստովանահօր. — միայն աղօթից և մեռելոց դամբանի պէտք ունի. գնա՛ պարզ թաղման մը համար ամէն ինչ պատրաստէ, ինչպէս որ պատշաճ է ընել խեղճ կրօնաւորի մը . . . : Գնա՛ :

Ժէզվիդը դուրս ելաւ :

Այն ատեն բժշկին կողմը դառնալով՝ և անոր դունատ և մտատանջ կերպարանը տեսնելով,

— Պ. Կրիզար — ըսաւ մեղմիկ — պարզէ այս բաժակն ու մաքրէ. անոր մէջ մեծ խորհրդին ապսպրած դեղէն դեռ ևս շատ կը դտնուի :

Կրիզար շուարած, այլ յայլմէ եղած և ճզմուած՝ քիչ մնաց կռնակի վրայ պիտի ընկնէր :

Արամիս ուսերը բարձրացուց 'ի նշան դթութեան, բաժակն առաւ և անոր մէջի եղածը կրակարանին մոխրին մէջ թափեց :

Ապա դուրս ելաւ մեռելին թղթերն իր հետն առնելով :

ԺԵ

ՊԱՀՏՕՆ

Հետևեալ օրը, կամ լաւ ևս նոյն օրն իսկ՝ վասն զի մեր արդէն պատմած դէպքերն առաւօտեան ժամն երեքին վերջացած էին, նախաճաշէն առաջ. և երբ թաղաւորը պատարագի կ'երթար երկու թաղուհեաց հետ, երբոր արքայազունը՝ Լօրէն ասպետին և ուրիշ մէկ քանի մտերիմներու հետ՝ ձի կ'հեծնէր դեռը գնալու, որպէս զի այն նշանաւոր բաղնիքներէն մին առնու, որոց համար կանայք կ'խենդանային, որովհետև միայն իշխանուհին մնացեր էր դղեակը, վասն զի անհանգստութիւն առթելով դուրս չէր ուզած ելնել, տեսան, կամ լաւ ևս ոչ ոք տեսաւ Մօնդալէն որ պատուոյ աղջկանց սենեկէն դուրս կ'սահէր, իրեն

հետ առնելով Լա Վալիէրը, որ կարելի եղածին չափ կ'թաքչէր, և երկուքնին ալ, պարտէզներէն խոյս տալով, իրենց չորս կողմը նայելով, յաջողեցան՝ հովանոցներուն ներքև հասնիլ :

Օդն ամպոտ էր. հրային հով մը ծաղիկներն ու թփերը կը ծռէր, հրատապ փոշին, որ ճամբէն վեր կ'ելնէր՝ ծառերուն վերայ մրրկաձև կ'դադարէր :

Մօնդալէ, որ բոլոր ճամբուն վրայ, ճարպիկ առաջնորդի մը պաշտօն վարեր էր, Մօնդալէ դեռ ևս քանի մը քայլ առաւ, և ետին դառնալով որպէս զի ստուգէ թէ ոչ ոք մոտիկ կ'ընէր կամ կ'դար,

— Օ՜ն — ըսաւ նա — փոքր Աստուծոյ, մինակ ենք : Երէկուանէ 'ի վեր ամէն մարդ կ'լրտեսէ այս տեղ, և մեր չորս կողմը շրջանակ մը կ'քաշեն որպէս թէ ժանտախտէ բռնուած լինէինք :

Լա Վալիէր դլուխը ծռեց և հառաչ մ'արձակեց :

— Վէրջապէս, անլուր բան մ'է այս — շարունակեց Մօնդալէ — Մալիքօրնէն սկսեալ մինչև Պ. Սէնդ-Էնյան, ամէն մարդ մեր գաղտնիքն իմանալու հետամուտ է : Դայինք, Լուիզ, փորը ինչ բանակցինք որպէս զի ես ալ իմ ընելիքս դիտնամ :

Լա Վալիէր իր ընկերուհւոյն վրայ դարձուց իր դեղեցիկ, յստակ և խորունկ աչերը՝ դարնան երկնից կապուտակին պէս :

— Եւ ես ալ պիտի հարցնեմ քեզի — ըսաւ նա — թէ ինչո՞ւ համար իշխանուհւոյն մօտ կանչուեցանք, ինչո՞ւ համար անոր սենեակը պառկեցանք փոխանակ ըստ սովորականին մեր սենեակը պառկելու, ինչո՞ւ համար այնքան ուշ վերադարձար, և ինչո՞ւ համար այս առտու մեր վրայ հսկելու համար փորձեր եղան :

— Սիրելիդ իմ Լուիզ, դու իմ հարցիս հարցումով մը կ'պատասխանես, կամ լաւ ևս տաս հարցումով, և այդ ալ պատասխան տալ չէ : Ես այդ բանը վերջէն պիտի ըսեմ, և որովհետև երկրորդական կարևորութիւն ունեցող բաներ են, կրնաս սպասել : Իմ բոլոր հարցուցածս սա է, վասն զի ամէն ինչ այդ բանէն պիտի հետևի, այսինքն թէ դաղտնիք կայ թէ ոչ :

— Զգիտեմ եթէ դաղտնիք կայ — ըսաւ Լա Վալիէր — բայց իմ դիտցածս դէթ սա է թէ մեծ անխոհեմութիւն մ'եղաւ իմ

յիմար խօսքէս և իմ երէկուան յիմարագոյն նուաղումէս վեր. այս տեղ ամէն մարդ ուզածին պէս կ'մեկնէ մեր ընթացքը։

— Դու քեզի համար խօսէ, սիրելիդ իմ — ըսաւ Մօնդալէ ծիծաղելով — խօսէ քեզի և Դօնէյ-Շարանդի համար, քանի որ երէկ ձեր սիրոյ յայտարարութիւնն ամբերուն ըրիք, և դժբաղդաբար այդ յայտարարութիւններն այլոց ականջը հասան։

Լա Վալիէր գլուխը ծռեց։

— Ճշմարիտը — ըսաւ նա — դու զիս կ'ճշմես։

— Ե՞ս։

— Այո՛, այդ կատակները զիս կ'սպաննեն։

— Մանիկ ըրէ, մանիկ ըրէ, Լուիզ։ Ասոնք կատակներ չեն, և ընդ հակառակն, ըրջօրէն կ'խօսիմ քեզի։ Ես քեզ գղեկէն դուրս չհանեցի, պատարագէն չզրկուեցայ, իշխանուհւոյն պէս գլխի ցաւ չկեղծեցի, գլխի ցաւ զոր իշխանուհին ալ ինձի չափ չունէր, վերջապէս Պ. Գօլպէրի Պ. Մաղարէնէն ժառանգած և Պ. Ֆուքէի դէմ գործածած դիւանագիտութենէ տասն անգամ աւելին չբանեցուցի՝ որ իմ ցաւերս քեզի յայտնելու յաջողիմ, սա միակ նպատակաւ որ երբ մինակ մնանք, երբ ոչ ոք մեզ մանիկ կ'ընէ, ելնես ինձի հետ վարպետութիւն ծախես։ Ո՛չ, ո՛չ, հաւատա ինձ, երբ քեզի հարց ու փորձ կ'ընեմ, հետաքրքրութենէ չէ բնաւ, այլ միայն անոր համար որ մեր կացութիւնը խիստ փափուկ է։ Ամէն մարդ գիտէ երէկուան ըսածդ, այդ խնդրոյն վրայ լեզու կ'թափեն։ Ամէն ոք ըստ հաճոյս կ'զարդարէ և կ'հիւսէ պատմութիւնը. այս գիշեր պատիւ ունեցար բոլոր արքունիքը քեզմով զբաղեցնելու, և այս առտու ալ պատիւ ունիս դեռ ևս նոյնն ընելու, սիրականդ իմ, և քեզի այնչափ քնքուշ և ուշիմ բաներ ըսել կ'տան որ օրիորդ Սքիւտէրին և իր եղբայրը սրտմտութենէ պիտի ճաթէին եթէ բոլոր ըսուածներն հաւատարմութեամբ անոնց պատմէին։

— Ո՛հ, բարեսիրտ Մօնդալէ — ըսաւ եղկելի աղջիկը — դու ամենէն լաւ գիտես ըսածս, քանի որ քու առջևդ կ'ըսէի։

— Այո՛, գիտեմ։ Ասոնց իմ, խնդիրն այդ կիսին մէջ չէ։ Եւ ոչ իսկ մուցայ ըսածներդդ խօսք մը, բայց միթէ համոզումնդ կ'ըսէիր այդ բանը։

Լուիզ այլայլեցաւ։

— Նորէն հարցումնե՛ր — գոչեց նա։ — Ասատած իմ, մինչ-դեռ ես ամէն ճիգս կ'թափեմ որ ըսածս մոռնամ, ի՜նչ զարմանք որ ամէն մարդ միաբանած են զայն ինձ յիշեցնելու։ Ո՛հ, իրաւի այդ սոսկալի բան է։

— Ո՞ր բանը, ըսէ նայինք։

— Այսինքն, բարեկամուհի մ'ունենամ որ պարտաւոր էր ինձ խնայել, որ կրնար ինձ խորհուրդ տալ, օգնել և զիս ազատել, և ընդ հակառակն զիս կ'սպաննէ, կ'մահացնէ։

— Հա՛, հա՛ — ըսաւ Մօնդալէ — ահա նախ շատ քիչ բան ըսելէն ետև՝ հիմակ չափէն աւելին կ'ըսես։ Ոչ ոք քեզ սպաննելու միտք ունի, և ոչ իսկ կողոպտելու, մինչև անգամ գաղտնիքդ. ինքնայօժար կ'ուզեմ իմանալ և չէ թէ ուրիշ կերպով. վասն զի խնդիրը մինակ քու գործոյդ չվերաբերիր, այլ և մեր գործոյ. և Դօնէյ-Շարանդն ալ նոյնը պիտի ըսէր թէ որ ասա դտնուէր։ Վասն զի, վերջապէս երէկ իրկուն՝ մեր խուցն առանձին խօսելու համար փափաք յայտնելուն՝ ես ալ խնդիրը կատարելու կ'երթայի Մանիքանեան և Մալիքօրնեան առանձնախօսութիւնն աւարտելէն ետև՝ երբ իմացայ 'ի դարձիս, թէև ուշ իրաւ, որ իշխանուհին փակեր էր պատոյ անդամները, և թէ իր սենեկին մէջ պիտի պառկինք քան թէ մերը։ Արդ՝ իշխանուհին պատոյ նաժիշտներն իր քովն առաւ փակեց որպէս զի ժամանակ չունենան հանձայն գործելու, և այս առտու ալ Դօնէյ-Շարանդի հետ փակուած մնաց այս նպատակաւ։ Հիմակ ըսէ ինձ, սիրելի բարեկամուհիս, Ամէնախս և ես ի՞նչ ասոիճան կրնանք վստահիլ քու վրադ, ինչպէս որ պիտի ըսենք թէ դու ալ ինչ ասոիճան կրնաս մեր վրայ վստահիլ։

— Լաւ չեմ հասկընար ըրած հարցումդ — ըսաւ Լուիզ սաստիկ յուզուած։

— Հը՛մ, ընդ հակառակն դէմքդ կ'երևի որ հարցումս քաջ կ'հասկընաս։ Բայց հարցումներս ծշղել կ'ուզեմ, որպէս զի փախուստ տալու ամենաչնչին բարոյրն անգամ չգտնես։ Ուրեմն միա՛ գիր. Կ'սիրէ՞ս Պ. Պրաժլօնը։ Այս բացորոշ է կարծեմ, հէյ։

Այս հարցման վրայ՝ որ պաշարող բանակի մը գնդակին պէս պաշարեալ քաղքի մը մէջ կ'իյնայ, Լուիզ շարժում մ'ըրաւ։

— Եթէ կ'սիրեմ Ռաուլը — գոչեց նա — իմ մանկութեանս բարեկամը, իմ եղբայրս։

— Է՛հ, ոչ, ոչ, ոչ։ Աւասիկ վերստին ձեռքէս կ'սահիս, կամ լաւ ևս ըսեմ, սահիլ կ'ուզես։ Ես չեմ հարցներ քեզ թէ Ռաուլը, քու մանկութեանդ բարեկամը, եղբայրդ կ'սիրես, այլ կ'հարցնեմ թէ Պրաժլօն դերկոմսը, քու նշանածդ կ'սիրես թէ ոչ։

— Ո՛հ, Աստուած իմ, սիրականս — ըսաւ Լուիզ — ինչպէս սաստիկ կ'խօսիս ինձի հետ։

— Ներողութիւն չկայ, ես իմ սովորականէս ոչ աւելի ոչ նուազ խիստ եմ։ Ես քեզի հարցում մը կ'ուղղեմ, այս հարցմանս պատասխան տուր։

— Ճշմարիտը — ըսաւ Լուիզ խեղդուկ ձայնով մը — դու ինձ իբրև բարեկամուհի չես խօսիր, բայց ես իբրև անկեղծ բարեկամուհի քեզի հետ պիտի խօսիմ։

— Պատասխանէ։

— Լա՛ւ, խղճահար և ծաղրելի հպարտութեամբ լի սիրտ մը ունիմ կնկան մը դաղտնի պահելիք իրերու մասին և այս նկատմամբ ոչ ոք իմ սրտիս խորը թափանցած է։

— Քաջ դիտեմ։ Եթէ սիրտդ կարդացած լինէի, քեզի հարց ու փորձ չէի ըներ, այլ պարզապէս պիտի ըսէի. « Իմ բարի Լուիզ, երջանկութիւն ունիս Պ. Պրաժլօնը Ճանչնալու, որ ընտիր տղայ մ'է և առանց հարստութեան աղջկան մը համար շահաւէտ փեսայ մ'է։ Լա Գէր կոմսն իր որդւոյն հազար հինգ հարիւր ֆրանքի մօտ եկամուտ մը պիտի թողու։ Ուրեմն դու ալ օրին մէկը հազար հինգ հարիւր ֆրանք եկամուտ պիտի ունենաս իբրև այս որդւոյն կինը. այս պատուական բան մ'է։ Ուստի ոչ աջ և ոչ ահեակ դիմէ, շիտակ Պ. Պրաժլօնի դնա, այսինքն խորանն ու քեզ պիտի առաջնորդէ։ Ապա՞. լա՛ւ, ապա իր բնաւորութեան համեմատ կամ ազատ պիտի լինիս կամ դերի, այսինքն իրաւունք պիտի ունենաս ազատ կամ ստրուկ անձերու ըրած բոլոր յիմարութիւններն ընել»։ Ահա ուրեմն, սիրելի Լուիզ, ինչ պիտի ըսէի ամէն բանէ առաջ, եթէ սրտիդ խորը կարդացած լինէի։

— Եւ ես շնորհակալ պիտի լինէի քեզի — թոթովեց Լուիզ — թէև այդ խորհուրդդ բոլորովին լաւ չերևիր ինձ։

— Սպասէ, սպասէ... բայց այս խորհուրդս տալէս առաջ պէս ետք՝ պիտի յարէի. « Լուիզ, վտանգաւոր բան է ամբողջ օրեր դլուխդ կուրծքիդ վրայ ծռած, ձեռներդ անշարժ և աչքդ մոլորած անցընել. վտանգաւոր բան է մութ ծառուղիներ փնտուել և այլ ևս չժպտիլ այն զբօսանաց ժամանակ՝ որոնք Նորատի աղջկանց սիրտը կ'բանան. վտանգաւոր է, Լուիզ, ոտքի ծայրովը դրել, ինչպէս որ կ'դրես, աւազին վրայ, տաւեր զոր ընդունայն կ'աւրես, բայց դարձեալ կ'երևին գարշապարին ներքև, մանաւանդ երբ այդ տաւերն աւելի Լ ի կ'նմանին քան թէ Պ ի. վերջապէս վտանգաւոր է միտդ հազար տեսակ այլանդակ ցնորքով պաշարել, որ առանձնութեան և դլխացաւի արդիւնք են, այդ ցնորքը խեղճ աղջկան մ'այտերը կ'փորեն ինչպէս նաև ըղեղը։ Ուստի շատ անդամ կ'տեսնուի, այսպիսի պարապայից մէջ, ամենաչքնաղ օրիորդ մը սէգ աղջիկ մը կ'դառնայ, և որ ամենէն ուշիմն ամենէն ապուշը»։

— Շնորհակալ եմ, իմ սիրելեալ Օրս — պատասխանեց Լա Վալիէր մեղմիկ. — բնաւորութիւնդ է ինձ այդպէս խօսիլ, և շնորհակալ եմ որ բնաւորութեանդ համեմատ ինձ կ'խօսիս։

— Եւ ես ալ լոկ անրջական բաներու համար կ'խօսիմ. ուստի իմ խօսքէս առ ինչ որ պէտք կ'համարիս առնուլ։ Ահա, չդիտեմ ինչպէս միտքս կ'դայ այժմ վէպ մը թերեւամիտ կամ մելամաղձոտ աղջկան մը վրայ, վասն զի Պ. Տանժօ անցած օր ինձ կ'բացատրէր թէ mélancolie (սևամաղձութիւն) քերականապէս պէտք էր երևիլ mélancholie, աւելի h ով մը։ վասն զի դաղղիական բառն երկու յունական բառերէ շինուած է, որոց մին սև և միւսը մաղձ կ'նշանակէ։ Ուստի այն Նորատի աղջկան վրայ կ'խորհէի որ սև մաղձէ կ'մեռնէր, երևակայած լինելով թէ իշխանը, թագաւորը կամ կայսրը... Ճշմարիտը, չդիտեմ որը, զինքը կ'պաշտէր, մինչդեռ իշխանը, թագաւորը կամ կայսրը.

. . ինչ որ կ'ուզես ըսէ, յայտնապէս ուրիշը կ'սիրէր, և զարմանալի բան, որմէ ինքն անտեղեակ էր, մինչդեռ իր բոլորտիքն ամէն բան կ'տեսնէր որ զանի իբրև սիրոյ պատրուակ կ'բռնէր։ Դուռալ, ինձի պէս կ'ծիծաղիս, այնպէս չէ՞, Լա Վալիէր, այն խեղճ աղջկան վրայ։

— Կ'ծիծաղիմ — թոթովեց Լուիզ մեռելի պէս գունատ — այո՛, կ'ծիծաղիմ անշուշտ։

— Եւ իրաւունք ունիս, վասն զի խնդիրը զբօսալի է։ Այս պատմութիւնը կամ վէպն ինձ հաճելի երևցաւ, և ասոր համար միտքս պահեցի և քեզի կ'պատմեմ։ Կ'երևակայեմ, իմ բարի Լուիզ, թէ ինչ աւերմունք կրնայ բերել դլխուդ, օրինակի համար, այս տեսակ սեամաղձութիւն մը։ Իսկ ես, միտքս դրի գործը քեզի պատմել, վասն զի եթէ գործը մեզնէ մէկուն պատահէր, պէտք էր որ այս ճշմարտութեան լեռվին համոզուած լինէր. այսօր խայծ մ'է, վաղը՝ ծանակ պ'տի լինի, հետևեալ օրն ալ մահ պիտի լինի։

Լա Վալիէր զողզողաց և նորէն դեղնեցաւ, եթէ կարելի էր աւելի դեղնիլ։

— Երբ թագաւոր մը մեզի կ'նայի — շարունակեց Մօնդալէ — մեզ նայելը յայտնապէս կ'ցուցնէ, և եթէ իր տենչացած ստացուածքը մենք ենք, դիտէ իր ստացուածքը հոգալ։ Կ'նայիս ուրեմն, Լուիզ, որ այսպիսի պարագայի մէջ, նմանօրինակ վտանգի մ'ենթարկեալ աղջիկներ՝ պէտք է որ իրարու սիրտ բանան, որպէս զի անմեղամաղձ սիրտերը մեղամաղձոտ դառնալու հակամէտ եղողներուն վրայ հսկեն։

— Լուռթիւն, լուռթիւն — գոչեց Լա Վալիէր — մարդ կը գայ։

— Իրօք մարդ կ'գայ — ըսաւ Մօնդալէ — բայց ո՞վ կրնայ լինիլ եկողը, Ամէն մարդ թագաւորին հետ պատարագ տեսնելու գնաց, կամ արքայազնին հետ բանիքը։

Ռաուլէյն ծայրը՝ նորատի օրիորդները դրեթէ նոյն հետայն դալարաւէտ կամարին ներքև տեսան՝ երիտասարդի մը շնորհալի քալուածքն և պերճ հասակը, որ սուրը թևին ներքև առած և

վերարկու մ'անոր վրայ դրած՝ կօշկով և մարակով՝ հեռուէն ասոնց կ'բարևէր անուշ ժպիտով մը։

— Ռաո՛ւլ — գոչեց Մօնդալէ։

— Պ. Պրաժլո՛ն — մրմնաց Լուիզ։

— Այս բնական դատաւոր մ'է որ մեր վէճին համար կ'գայ — ըսաւ Մօնդալէ։

— Ո՛հ, Մօնդալէ, Մօնդալէ, շնո՛րհ — գոչեց Լա Վալիէր — անգութ լինելէն ետև՝ անողոքելի մի լինիր։

Այս խօսքը զոր աղաչանաց եռանդով արտասանեց՝ Մօնդալէի եթէ ոչ սրտէն, դէմքէն ջնջեցին հեգնութեան ամէն հետք։

— Հօ, ահա Ամատիսի պէս աղուր ես, Պ. Պրաժլօն — գոչեց Մօնդալէ — և անոր պէս բոլորովին սպառազէն և կօշիկնեռով։

— Իմ բիւր յարգանքս կ'նուիրեմ ձեզ, օրիորդներ — պատասխանեց Պրաժլօն խոնարհելով։

— Բայց վերջապէս՝ ինչ կ'նշանակեն այս կօշիկները — կրկնեց Մօնդալէ, մինչդեռ Լա Վալիէր, իր ընկերուհւոյն ցոյց տուած զարմանօք Ռաուլին նայելով հանդերձ, լռութիւն կ'պահէր։

— Ինչո՞ւ համար մի — հարցուց Ռաուլ։

— Այո՛ — ըսաւ վարանմամբ Լա Վալիէր ըստ կարգի։

— Վասն զի կ'մեկնիմ — ըսաւ Պրաժլօն Լուիզին նայելով։

Նորատի օրիորդն աւելորդապաշտական սարսափով մ'այս հարուածն զգաց և երերաց։

— Կ'մեկնի՞ս, Ռաուլ — գոչեց նա — և ո՞ր կ'երթաս։

— Սիրելիդ իմ Լուիզ — ըսաւ երիտասարդն այնպիսի պարզութեամբ մ'որ իրեն բնական էր — Անկլիա կ'երթամ։

— Եւ ինչ ընելու կ'երթաս Անկլիա։

— Թագաւորը զիս կ'զրկէ։

— Թագաւո՛ր — գոչեցին Լուիզ և Օր միանգամայն, որ ակամայ իրարու հետ ակնարկ մը փոխանակեցին, երկուքնին ալ յիշելով այն խօսակցութիւնն զոր քիչ մ'առաջ ընդհատեր էին։

Այս ակնարկը գիտեց Ռաուլ, բայց չէր կարող զայն հասկընալ։

Հետևապէս երկու աղջկանց իր վրայ ունեցած հոգատարութեան վերադրեց զայն բնականօրէն։

— Նորին Վեհափառութիւնը շնորհ ըրաւ յիշելու որ Լա Ֆէր կոմսը սիրելի է Շարլ Բ թագաւորին։ Ուստի այս առտու՝ երբ պատարագի կ'երթար՝ զիս իր ձամբուն վրայ տեսնելուն, գլխովն ինձ նշան մ'ըրաւ։ Այն ատեն անոր մօտեցայ։ « Պ. Պրաժլօն, ըսաւ ինձ, Պ. Ֆուքէի մօտ գնա, որ Մեծն-Բրիտանիոյ թագաւորին ուղղեալ նամակներ ընդունած է իրենէ. այդ նամակները պիտի առնուս տանիս »։ Խոնարհութիւն ըրի։ « Ա՛հ, մեկնելէն առաջ, յարեց նա, բարեհաճէ իշխանուհւոյն յանձնարարութիւններն առնուլ իր թագաւոր եղբօր համար »։

— Աստուած իմ— մրմնաց Լուիզ բոլորովին ջլատ և միանդամայն խոհուն։

— Այդչափ շո՞ւտ, այդչափ շուտ կ'հրամայեն քեզ մեկնելու — ըսաւ Մօնդալէ այս տարօրինակ դէպքէն ջլատեալ։

— Լաւ հնազանդելու համար անոնց ղրկս կ'յարդենք — ըսաւ Ռաուլ— պէտք է շուտով հնազանդիլ։ Այս հրամանն ընդունելէս տաս վայրկեան ետք՝ պատրաստ էի։ Իշխանուհին՝ ընդունած աղդարարութեան վրայ՝ կ'պրէ նամակը զոր ինձ տալու պատիւ պիտի ընէ։ Նոյն միջոցին, իմանալով Դօնէյ-Շարանդ օրիորդէն որ հովանոցներուն կողմն էր, ելայ եկայ, և ձեզ երկուքնիդ ալ կ'գտնեմ։

— Եւ երկուքնիս ալ բաւական կ'տառապինք, ինչպէս որ կը տեսնես — ըսաւ Մօնդալէ Լուիզի օգնութեան դալու համար, որու կերպարանն յայտնապէս կ'այլայլէր։

— Կ'տառապինք — կրկնեց Ռաուլ Լա Վալիէրի ձեռքը սեղմելով դորովալիր հեռաքրքրութեամբ մը։ — Ո՛հ, արդարև՝ ձեռքդ սառած է։

— Այդ բան մը չէ։

— Այդ սառնութիւնը մինչև սիրտը չհասնիր, յուսամ, այնպէս չէ՞, Լուիզ— հարցուց երիտասարդն անուշ ժպիտով մը։

Լուիզ աշխուժիւ դլուխը վերցուց, որպէս թէ այս հարցումը կասկածէ մը ներշնչուած էր և խղճի տաղնապ մը կ'զրդռէր։

— Ո՛հ, պիտես — ըսաւ նա ձդամբ — որ երբէք սիրտս չպիտի կարի քեզի պէս բարեկամի մը համար, Պ. Պրաժլօն։

— Շնորհակալ եմ, Լուիզ։ Ես կ'ճանչեմ սիրտդ և հոգիդ, և բնաւ ձեռքի հպումով քու դորովոյդ պէս դորով մը չդատուիր, քաջ դիտեմ։ Լուիզ, դու ևս դիտես թէ որչափ կ'սիրեմ քեզ, ինչ վստահութեամբ և անձնուիրութեամբ իմ կեանքս քեզի տուի. պիտի ներես ուրեմն ինձ, այնպէս չէ՞, փոքր ինչ տղայի պէս քեզ խօսելուս։

— Խօսէ, Պ. Ռաուլ— ըսաւ Լուիզ բոլորովին դողդոջուն քեզ մտիկ կ'ընեմ։

— Ձեմ կարող քեզնէ հեռանալ հետս տանելով տանջանք մ'որ թէև անհիմն, այլ սակայն սիրտս կ'ճմլէ։

— Բայց երկաթ ատենուան համար կ'հեռանաս — հարցուց Լա Վալիէր ճնշեալ ձայնով մը, մինչդեռ Մօնդալէ գլուխը մեկուսի կ'դարձնէր։

— Ո՛չ, ըստ հաւանականին՝ տասն հինգ օր տարակայ չպիտի դտնուիմ։

Լա Վալիէր ձեռքը սրտին վրայ դրաւ որ կ'խորտակէր։

— Տարօրինակ բան — շարայարեց Ռաուլ օրիորդին նայելով մելամաղձութեամբ — շատ անպամ բաժնուած եմ քեզնէ վտանգաւոր մարտերու դնալու համար, այն ատեն ուրախ զուարթ կը մեկնէի, սիրտս աղատ, դալիք ուրախութեամբ ապագայ յոյսերով արբշիռ, և սակայն այն ատեն սպանիացւոյ դնդակներն և վալոնցւոյ նիզակները դիմադրաւելու կ'երթայի։ Այսօր կ'մեկնիմ առանց որ և է վտանգի, առանց մտատանջութեան ամենադիւրին ճամբով աղօր վարձք մը դտնելու զոր թագաւորին այս շնորհն ինձ կ'խոստանայ, թերևս ասով քեզ տիրանամ, վասն դի քեզնէ զատ ուրիշ ինչ մեծադին շնորհ կրնայ թագաւորը պարդևել ինձ։ Լաւ ուրեմն, Լուիզ, ճշմարիտ չդիտեմ ինչ է պատճառը, բայց բոլոր այս երջանկութիւնը, բոլոր այս ապագան իմ աչացս առջևէն կ'խուսափին իբրև սնոտի մուխ մը, իբրև ցնորական երազ մը, և սա տեղ, սրտիս խորը, ճշմարիտը, մեծ վիշտ մ'ունիմ, անպատում վկայութիւն մը, մթին, անշարժ և մահատիպ բան

մը, դիակի պէս։ Ո՛հ, Լուիզ, դիտեմ թէ ինչու համար, վասն զի ես երբէք այնչափ սիրած չեմ քեզ որչափ այս պահուս։ Ո՛հ, Աստուած իմ, Աստուած իմ։

Խորտակեալ սրտէ մ՚ելած այս յետին բացագանչութեան վրայ՝ Լուիզ յորդ արտասուք թափեց և Մոնդալէի գիրկն ընկաւ։

Թէև Մոնդալէ չափազանց փափկասիրտ չէր, զգայ որ աչերն արտասուքով կ՚լեցուին և սիրան երկաթէ շրջանակի մը մէջ կ՚սեղմուի։

Ռաուլ իր նշանածին արտասուքը տեսաւ։ Իր ակնարկը չթափանցեց, չուզեց իսկ թափանցել իր արտասուքէն անդին. մէկ ծունկն անոր առջև կրկնեց և գորովանօք անոր ձեռքը համբուրեց։

Կ՚տեսնուէր որ այս համբոյրին մէջ ամփոփած էր բոլոր սիրտը։

— Ելիր, ոտք ելիր — ըսաւ անոր Մոնդալէ, ինքն ալ լալու պատրաստ գտնուելով — վասն զի աւասիկ Աթէնայիսն որ կ՚գայ։

Ռաուլ իր ծունկը սրբեց թևին յետակողմով, անդամ մ՚ևս Լուիզին ժպտեցաւ, որ այլ ևս անոր չէր նայեր, և Մոնդալէի ձեռքը սրտի առատութեամբ սեղմելով, դարձաւ որ Դոնէյ-Շարանդ օրիորդը բարևէ, որուն մատաքսեայ շրջազգեստին աւաղին վրայ քսուիլն սկսեր էին լսել։

— Արդեօք իշխանուհին իր նամակն աւարտեց — հարցուց նա երբ իր ձայնը լսելու չափ մօտեցաւ օրիորդը։

— Այո՛, գերիկոմս, նամակը լմնցաւ, կնքուեցաւ, և Նորին արքայական Բարձրութիւնը քեզի կ՚սպասէ։

Այս խօսքին՝ Ռաուլ հազիւ ժամանակ անցուց Աթէնայիսին բարև տալու, այլ Լուիզին վերջին ակնարկ մը նետեց, վերջին նշան մ՚ըրաւ Մոնդալէի, և գրեկին ուղղութեամբը հեռացաւ։

Բայց հեռանալու ատենն ալ՝ գլուխը կ՚դարձնէր։

Վերջապէս երբ մեծ ծառուղոյն ծայրը հասաւ, ընդ ունայն դարձաւ նորէն ետին նայելու, այլ ևս բան մը չտեսաւ։

Երեք նորատի օրիորդներն ալ իրենց կողմէ՝ շատ իրարու տարբեր զգացումներով՝ անոր անհետանալը տեսեր էին։

— Վերջապէս — ըսաւ Աթէնայիս ամենէն առաջ լռութիւնը խզելով — վերջապէս ահա մինակ ենք, և երեկուան մեծ գործին

վրայ խօսելու ազատ, որպէս զի մեր բռնելիք ընթացքին վրայ իրարու միտք հասկընանք։ Արդ՝ եթէ կ՚ուզէք իմ ըսածս ուշադրութեամբ մտիկ ընել — շարունակեց նա ամէն կողմը նայելով — ձեզի կարելի եղածին չափ համառօտ պիտի բացատրեմ, նախ իմ հասկցած կերպովս մեր ունեցած պարտքը, և եթէ կէս բերան ըսածս չէք հասկընար, իշխանուհւոյն կամքը։

Եւ օրիորդ Դոնէյ-Շարանդ այս վերջին խօսքը շեշտեց այնպէս որ իր ընկերուհեայ մտքին մէջ կասկած մը չթողու թէ ինք՝ի պաշտօնէ խօսելու պաշտօն մ՚ունի։

— Իշխանուհւոյն կամքը — գոչեցին միաբերան Մոնդալէ և Լուիզ։

— Վերջնագիր — պատասխանեց Դոնէյ-Շարանդ դիւանագիտօրէն։

— Բայց, Աստուած իմ, օրիորդ — մրմռաց Լա Վալիէր — ուրեմն իշխանուհին գիտէ։

— Իշխանուհին մեր ըսածներէն աւելի բան գիտէ — արտաբերեց Աթէնայիս բացորոշ։ — Այսպէս, օրիորդներ, ուշադրութեամբ մտիկ ըրէք։

— Ո՛հ, այո՛ — ըսաւ Մոնդալէ։ — Ուստի ականջներս բաց մտիկ կ՚ընեմ։ Խօսէ, Աթէնայիս։

— Աստուած իմ, Աստուած իմ — մրմռաց Լա Վալիէր բոլորովին դողահար — միթէ այն անպատրաստն երեկոյթէն ետք պիտի ապրիմ։

— Ո՛հ, այդչափ մի տագնապիք — ըսաւ Աթէնայիս — դեղն ունինք։

Եւ երկու ընկերուհեայ մէջ նստելով՝ որոց իւրաքանչիւրին ձեռքն առաւ և իրենին մէջ կցեց, և այսպէս սկսաւ։

Իր առաջին խօսքերը փսփսալուն՝ դիւրին էր լսել ձիու մ՚աղմուկը՝ որ մեծ Ճամբուն սալայատակին վրայ կ՚արշաւէր՝ գրեկին վանդակներէն դուրս։

ԺԶ

ԵՐԶԱՆԻԿ ԻԲՐԵԻ ԻՇԽԱՆ ՄԸ

Այն միջոցին որ դղեակը պիտի մտնէր՝ Պրաժլօն Կիշին հանդիպեր էր։

Բայց Ռաուլին չհանդիպած՝ Կիշ Մանիքանի հանդիպեր էր, և այս ալ Մալիքօրնի հանդիպեր էր։

Մալիքօրն ինչպէս հանդիպեր էր Մանիքանի. շատ պարզ կերպով. անոր պատարագէն դարձին սպասեր էր, վասն զի Պ. Սէնդ-Էնյանի հետ նորին Վեհափառութեան ուղեկից դտնուեր էր։

Երբ իրարու միացան՝ իրենց խնդակցութիւնը յայտնեցին այս բարեյաջող հանդիպման վրայ, և Մանիքան այս պարագայէն օգուտ քաղելով հարցուցեր էր իր բարեկամին թէ իր դրպանին մէջ քանի մը սկուտ չէ՞ր մնացած։

Մալիքօրն՝ առանց զարմանալու այս հարցման վրայ՝ որու թերևս կ'յուսար, պատասխան տուեր էր թէ որ և է դրպան որմէ անդադար մարդ կ'քաղէր առանց անոր մէջ բան մը դնելու, այն ջրհորներուն կ'նմանի, որ ձմեռն ալ ջուր կ'մատակարարեն, բայց պարտիզպանները զանոնք ամառը կ'չորցնեն. թէ իր դրպանը՝ անտարակոյս խորութիւն ունէր, և թէ առատութեան ատեն անկից քաղելը զուարճութիւն մ'էր, բայց թէ դժբաղդաբար՝ անխնայ գործածութիւնն երաշտ պատճառեր էր։

Այս խօսքին Մանիքան մտախոհ, պատասխան տուեր էր.

— Իրաւացի է։

— Ուրեմն կարևոր է զայն լեցնել—յարեր էր Մալիքօրն։

— Անտարակոյս, բայց ինչպէս։

— Բայց շատ դիւրին է այդ, սիրելիդ իմ Մանիքան։

— Լաւ, ըրուցէ։

— Արքայազնին պալատն ինձի պաշտօն մը դտի՛ր, և դրպանը կ'լեցուի։

— Այդ պաշտօնն արդէն չունիս։

— Այսինքն միայն տիտղոսն ունիմ։

— Լաւ, ուրիշ ի՞նչ կ'ուզես։

— Այո՛, բայց առանց պաշտօնի տիտղոսն առանց դրամի քսակն է։

— Իրաւացի է — պատասխաներ էր վերստին Մանիքան։

— Ուրեմն պաշտօնը ձեռք ձգելու նայինք — պնդեր էր պաշտօնախնդիրը։

— Սիրելի, ամենասիրելի — հառաչեց Մանիքան — արքայազնին պալատը պաշտօն մը ձեռք ձգելը մեր կացութեան ամենէն ծանր դժուարութեանց մին է։

— Հօ, հօ։

— Անտարակոյս, չենք կարող բան մը խնդրել արքայազնէն այս միջոցին։

— Ուրեմն ինչո՞ւ համար։

— Վասն զի անոր հետ մեր յարաբերութիւնը պաղ է։

— Այդ անհեթեթ բան է — արտաբերեց վճռաբար Մալիքօրն։

— Վա՜շ. հապա եթէ իշխանուհւոյն մեր ակնածական յարգանքը յայտնենք — ըսաւ Մանիքան — միթէ կրնա՞նք, ըսէ՛ բայէ՛ի բաց, արքայազնին հաճելի լինիլ։

— Ճշմարիտը, եթէ իշխանուհւոյն մեր ակնածութիւնը յայտնենք և ճարպիկ լինինք, այն ատեն արքայազունը մեզ պիտի պաշտէ։

— Հը՛մ։

— Ապա թէ ոչ յիմար ենք։ Շուտ ըրէ՛ ուրեմն, Պ. Մանիքան, դու որ մեծ քաղաքագէտ մ'ես, Պ. Կիշը նորին Բարձրութեան հետ հաշտեցուր։

— Նայինք, Պ. Սէնդ-Էնյանը քեզի, Մալիքօրն, ի՞նչ իմացուց։

— Ինձի՞, ոչ ինչ. մինակ հարցումներ ըրաւ, և այլ ոչ ինչ։

— Լաւ, ինձի հետ նուազ խորհրդապահ եղաւ։

— Ուրեմն քեզի իմացուց թէ . . .։

— Թէ թագաւորը խենթի պէս սիրահարած է Լա Վալիէրի։

— Այդ արդէն գիտէինք, Թշուառական — պատասխանեց Մաւլիքօրն հեղնօրէն — և այնքան բարձր կ'խօսին այս մասին որ ամէն մարդ կարող է լսել։ Բայց առ այժմ, կ'աղաչեմ իմ տուած խորհրդոյս հետևէ. Պ. Կիշին խօսէ, և ջանա համոզելու որ արքայաղնին մօտ փորձ մը փորձէ։ Իրաւ որ, այդպիսի փորձ մ'ընելու պարտաւոր է նորին արքայական Բարձրութեան մօտ։

— Բայց պէտք պիտի լինէր Պ. Կիշը տեսնելու։

— Ինձ կ'երևի որ այդ մասին մեծ դժուարութիւն մը չկայ. քեզ տեսնելու համար ըրածս, դու ալ անոր համար ըրէ. սպասէ անոր, գիտես որ բնապէս շրջող է։

— Այո, բայց ո՞ւր կ'շրջի։

— Ճշմարիտ վկայ, աղբոր հարցում մ'է այդ... իշխանուհոյն սիրահարած է, այնպէս չէ՞։

— Այդպէս կ'ըսեն։

— Լաւ ուրեմն, իշխանուհոյն սենեակներուն կողմերը կ'պտըտի։

— Է՛հ, նայէ, սիրելի Մաւլիքօրն, չէիր սխալեր, աւասիկ Պ. Կիշ կ'գայ։

— Եւ ինչո՞ւ համար սխալիմ։ Մինթէ գիտած ես երբէք ոք սխալած լինիմ։ Ըսէ, նայինք ի՞նչ պիտի ընես, աղէկ ժամն է։ Մինթէ ստակի պէտք չունի՞ս։

— Ա՛հ — ըրաւ Մանիքան ողբագին։

— Ե՞ս, ես իմ պաշտօնէս պէտք ունիմ։ Եթէ Մաւլիքօրն պաշտօնը ստանայ, Մաւլիքօրն դրամ պիտի ունենայ։ Բոլոր դժուարութիւնն ասոր մէջն է։

— Լաւ ուրեմն, հանդարտ եղիր։ Ես իմ ձեռքէս եկածը պիտի ընեմ։

— Ըսէ։

Կիշ կ'յառաջանար. Մաւլիքօրն քաշուեցաւ դնաց, Մանիքան Կիշը բռնեց։

Կոմը մտախոհ և տխուր էր։

— Ըսէ ինձ, ի՞նչ յանդ կ'փնտռես, սիրելիդ իմ կոմս — ըսաւ Մանիքան։ — Մէկ հատ պատուական ունիմ քու յանդիդ հետ յարմարցնելու համար, մանաւանդ եթէ քու կդ հոգի բառով կը վերջանայ։

Կիշ դլուխը ցնցեց, և իր բարեկամը ճանչելով, անոր թեը մտաւ։

— Սիրելիդ իմ Մանիքան — ըսաւ նա — յանդէ տարբեր բաներ կ'փնտռեմ։

— Ի՞նչ կ'փնտռես։

— Եւ պիտի օգնես ինձ փնտռածս գտնելու — շարունակեց կոմը — դու որ ծոյլ մ'ես, այսինքն հնարագիտութեամբ լի միտք մը։

— Իմ հնարագիտութիւնս կ'պատրաստեմ, սիրելի կոմս։

— Աւասիկ խնդիրը. կ'ուզեմ տան մը մօտենալ ուր գործ ունիմ։

— Պէտք է նոյն տան կողմն երթալ — ըսաւ Մանիքան։

— Լաւ, բայց այդ տունը նախանձոտ ամուսին մը կ'ընակի։

— Մինթէ Կերպերոս շունէն աւելի՞ նախանձոտ է։

— Ո՛չ, աւելի չէ, բայց նոյնչափ։

— Մինթէ երեք կոկորդ ունի, դժոխոց այս յուսահատիչ պահպանին նման։ Ո՛հ, ուսերդ մի՛ բարձրացներ, սիրելիդ իմ կոմս, բանաւոր պատճառաւ մը կ'ընեմ այս հարցումս՝ վասն զի բանահիւսները կ'պնդեն թէ՝ Կերպերոսը ընկճելու համար պէտք է որ ճամբորդը կարկանդակ մը բերէ։ Արդ՝ ես որ գործն իր արձակ կողմէն կ'նայիմ, այսինքն իրականութեան կողմէն, կ'ըսեմ. կարկանդակ մը քիչ բան է երեք կոկորդի համար։ Եթէ նախանձոտդ երեք կոկորդ ունի, կոմս, երեք կարկանդակ խնդրէ։

— Մանիքան, այդ տեսակ խորհուրդներ կընամ երթալ Պ. Պոտրուէն խնդրել։

— Լաւագոյն խորհուրդներ ստանալու համար, կոմս — ըսաւ Մանիքան ծաղրալի ծանրութեամբ մը — այն ատեն աւելի յստակ բանաձև մը պիտի ընտրես քան ինչ որ ինձ յայտնեցիր։

— Ա՛հ, թէ որ Ռաուլ ներկայ լինէր, նա, նա միտքս կ'լիմանար։

— Կ'հաւատամ, մանաւանդ եթէ անոր ըսէիր. շատ կ'փափաքէի Տիկնոջ (իշխանուհին) աւելի մօտէն տեսնել, բայց Պաբոնէն (արքայաղուն Գիլիպը) կ'վախնամ, որ նախանձոտ է։

— Մանիքան — գոչեց կոմսը բարկութեամբ և իր ակնարկին ներքև հեգնաբանը ճղմելու փորձելով։

Բայց հեգնաբանը կարծես թէ ամենաթեթև այլայլութիւնն անդամ չզգաց։

— Ի՞նչ կայ ուրեմն, սիրելիդ իմ կոմս — հարցուց Մանիքան։

— Ինչպէ՛ս, միթէ այդպէս ամենէն նուիրական անունները կ'անիծես — գոչեց Կիշ։

— Ի՞նչ անուններ։

— Պարոնն ու Տիկինը, տէրութեան առաջին անունները։

— Սիրելի կոմս, տարօրինակ կերպով կ'սխալիս, և ես տէրութեան առաջին անունները չանուանեցի։ Պատասխան տուի միայն քու չանուանած նախանձոտ էրկան մը մասին, բայց 'ի հարկէ կին մ'ունի. ես պատասխան տուի քեզի. Տիկինը տեսնելու համար, Պարոնին մօտեցիր։

— Անշա՛հ զուարճախօս — ըսաւ կոմսը ժպտելով — միթէ դո՛ւ այդ ըսիր։

— Ուրիշ բան չըսի։

— Լա՛ւ, ասա՛։

— Հիմակ — յարեց Մանիքան — կ'ուզես որ խօսքը տիկին դքսուհւոյն . . . և պարոն դքսին դարձնենք. մօտենանք այն տունին, ուրն որ լինի, վասն զի վարպետութիւն մ'է այս որ ամէն ատեն կրնայ սիրոյդ նպաստաւոր դառնալ։

— Ա՛հ, Մանիքան, բարոյր մը, լաւ բարոյր մը գտիր նայիմ։

— Բարոյր մը, Տէր վկայ, հարիւր բարուրանք, հազար բարուրանք, եթէ կամիս։ Եթէ Մալիքօրն այս տեղ լինէր, նա կարող պիտի լինէր յիսուն հազար պատուական բարուրանք գտնել։

— Ո՞վ է այդ Մալիքօրն — ըսաւ Կիշ աչերը քթթելով իբրև մարդ որ կ'փնտռէ։ — Կ'երևի ինձ որ այս մարդը կ'ճանչեմ . . . ։

— Կ'երևի քեզ որ կ'ճանչէս, անտարակոյս կ'ճանչես. իր հօրն երսուն հազար սկուտ պարտական ես։

— Ա՛հ, այո՛, Օրլէանի այն բարեբարոյ տղան է . . . ։

— Որու պաշտօն մը խոստացար Պարոնին պալատը, չէ թէ նախանձոտ պարոնին, այլ միւսին։

— Լաւ ուրեմն, որովհետև այդչափ խելք ունի այդ քու Մալիքօրն բարեկամդ, թող հնար մը գտնէ ինձ որ Պարոնէն պաշտուիմ, թող բարոյր մը գտնէ որ անոր հետ հաշտուիմ։

— Շատ աղէկ, այդ մասին անոր հետ պիտի խօսիմ։

— Բայց ո՞վ է դէպ 'ի մեզի եկողը։

— Պրաժլօն դերկոմն է։

— Ռաուլ, այո՛, նոյն ինքն է։

Եւ Կիշ երիտասարդը դիմաւորելու համար հապճեպ քալեց։

— Դո՛ւ ես, սիրելիդ իմ Ռաուլ — ըսաւ Կիշ։

— Այո՛, քեզ կ'փնտռէի որ հրաժարական բարևներս տամ, սիրելի բարեկամ — պատասխանեց Ռաուլ կոմսին ձեռքը սեղմելով։ — Բարի լոյս, Պ. Մանիքան։

— Ինչպէ՛ս, կ'մեկնիս, դերկոմս։

— Այո՛, կ'մեկնիմ. . . թագաւորին կողմէ պաշտօն ունիմ։

— Ո՞ւր կ'երթաս։

— Լոնտոն կ'երթամ։ Հիմակ իսկ Տիկնոջ մօտ պիտի երթամ, Նորին Վեհափառութեան, Շարլ Բ թագաւորին ուղղեալ նամակ մը պիտի յանձնէ ինձ։

— Առանձին պիտի գտնես զանի, վասն զի Պարոնը դուրս ելաւ։

— Ո՞ւր երթալու . . . ։

— Բաղնիք երթալու համար։

— Ուրեմն, սիրելի բարեկամ, դու որ Պարոնին ազատորդիներէն մին ես, յանձնառու եղիր իմ կողմէ ներողութիւն խնդրել։ Պիտի սպասէի որ եթէ հրաման ունի տայ ինձ, եթէ Պ. Գուքէ և Նորին Վեհափառութիւնը չպահանջէին որ շուտով ճամբայ ելնեմ։

Մանիքան սրմկովը Կիշը մշտեց։

— Ասասիկ բարոյրը — ըսաւ նա։

— Ո՞ր բարոյրը։

— Պ. Պրաժլօնի համար ներողամտութեան խնդիրը։

— Անշան բարոյր — ըսաւ Կիշ։

— Պատուական է, թէ որ Պարոնը քեզ մեղապարտ չդատէ, անշահ բարոյր մ'է, եթէ մեղապարտ դատէ։

— Իրաւունք ունիս, Մանիքան. բարոյը մը, ինչ տեսակ որ լինի, ինձի կ'յարմարի։ Այսպէս ուրեմն, բարի Ճամբորդութիւն, սիրելի Ռաուլ։

Եւ ասոր վրայ՝ երկու բարեկամք ղերար համբուրեցին։

Հինգ վայրկեան ետք՝ Ռաուլ իշխանուհւոյն սենեակը կ'մտնէր, ինչպէս որ հրաւիրեր էր օրիորդ Մօնդալէ։

Իշխանուհին դեռ ևս այն սեղանին առջևն էր որու վրայ գիրը գրեր էր։ Անոր վրայ կ'վառէր վարդագոյն մոմ որ գիրը կնքելու ծառայեր էր։ Միայն՝ իր մտահոգութեամբը, վասն զի իշխանուհին մտահոգ կ'երևէր, մոռցեր էր մոմը մարելու։

Պրաժլօն կ'սպասէր. երբ երևցաւ, շուտ մ'իշխանուհւոյն խնայ տուին։

Պրաժլօն նոյն իսկ վայելչութիւնն էր. անկարելի էր զանի տեսնել անգամ մ'առանց զինքը միշտ յիշելու, և ոչ միայն իշխանուհին մի անգամ տեսեր էր զանի, այլ և ընթերցողին յայտնի է, Պրաժլօն առաջին ներկայացողներէն մին եղաւ, և անոր Հաւրէն Բարիզ ուղեկից գտնուեր էր։

Ուստի իշխանուհին Պրաժլօնի վրայ լաւ յիշատակ մ'ունէր։

— Ա՛հ — ըսաւ անոր — եկա՞ր, պարոն. երթաս պիտի եղբայրս տեսնելու, որ երջանիկ պիտի լինի որդւոյն հատուցանելու առ հայրն տածած երախտագիտութեան պարտուց մէկ մասը։

— Լա Ֆէր կոմը, տիկին, թագաւորին մատուցած թեթև ծառայութեան համար առատօրէն վարձատրեալ կ'համարի ինքզինքը թագաւորին ըրած բարերարութեամբը, և ես պիտի գնամ հօր և որդւոյն յարգանաց, անձնուիրութեան և երախտագիտութեան հաւատիքը մատուցանել։

— Դերկոմս, եղբայրս կ'ճանչնե՞ս։

— Ո՛չ, իշխանուհիս, առաջին անգամ նորին Վեհափառութիւնը տեսնելու բարերաղդութիւնը պիտի ունենամ։

— Պէտք չունիս որ քեզ յանձնարարեմ անոր մօտ։ Բայց եթէ քու անձնական արժանեացդ վրայ տարակոյս ունիս, զիս իրրև վկայ կոչէ։ Հաւասարի եղիր որ սուտ չպիտի հանեմ քեզ։

— Ո՛հ, Ձեր Բարձրութիւնը շատ բարեսիրտ է։

— Ո՛չ, Պ. Պրաժլօն։ Կ'յիշեմ որ միասին Ճամբայ ելինք և գիտեցի թէ ինչ մեծ խոհանութեամբ կ'վարուէիր՝ քու աջ ու ձախ կողմդ գտնուող՝ երկու ամենամեծ խենդերու յիմարութեանց մէջ, այս է Պ. Կիշ և Պրքինկհէմ։ Բայց անոնց վրայ չխօսինք, քու վրադ խօսինք։ Անկլիա գնա և հաստատուելու ջանա։ Ներէ իմ հարցմանս. բնաւ հետաքրքրութիւնը չէ, այլ քեզի բարիք ընելու փափաքս է որ կ'թելադրէ ինձ։

— Ո՛չ, տիկին, Անկլիա կ'երթամ պաշտօնով մը, զոր Նորին Վեհափառութիւնն ինձի յանձնեց, ուրիշ ոչ ինչ։

— Եւ միթէ միտք ունիս Ֆրանսա վերադառնալու։

— Այդ պաշտօնն աւարտելէս ետքը պիտի գամ, միայն թէ վեհափառ Շարլ թագաւորն ուրիշ հրամաններ չտայ ինձ։

— Սոյդ եմ որ պիտի աղաչէ քեզ որ կարելի եղածին չափ երկար ժամանակ իր քովը մնաս։

— Այն ատեն՝ որովհետև չպիտի կարենամ մերժել, կանխաւ պիտի աղաչեմ Ձեր Բարձրութիւնն որ շնորհ ընէք Ֆրանսայի թագաւորին յիշել որ իր ամենէն անձնուէր ծառաներէն մին իրմէ հեռու կ'գտնուի։

— Կ'վախնամ որ երբ թագաւորը քեզ կոչէ իրրև իշխանութեան զեղծում մը չնկատես իր հրամանը։

— Ձեմ հասկընար, տիկին։

— Ֆրանսայի արքունիքն անհամեմատ է, քաջ գիտեմ, բայց Անկլիոյ արքունիքն ալ քանի մը սիրուն կիներ ունինք։

Ռաուլ ժպտեցաւ։

— Այո՛ — ըսաւ իշխանուհին — ահա այդ ժպիտդ բարեդուշակ չէ ինաւ իմ հայրենակցուհեացս համար։ Որպէս թէ ըսէիր անոց, Պ. Պրաժլօն. «Ձեզի կ'գամ, բայց նեղուցէն անցին կը ձգեմ իմ սիրաս»։ Միթէ այս չէ՞ր նշանակեր ժպիտդ։

— Ձեր Բարձրութիւնը հոգիներու խորագոյն կողմը կարդալու ձիրքն ունի. ուստի պիտի հասկընաք թէ Անկլիոյ արքունիքն որչափ երկար մնամ այնչափ վիշտ պիտի զգամ։

— Եւ պէտք չունիմ հարցնելու թէ արդեօք քեզի պէս քաջասիրտ ասպետ մը փոխարէն սէր կ'վայելէ։

— Տիկին, իմ սիրած անձիս հետ մեծցած եմ և կարծեմ թէ ինձի համար կ'տածէ այն զգացումները զոր իրեն համար ունիմ։

— Լաւ ուրեմն, շուտ մեկնէ, Պ. Պրաժլօն, շուտ դարձիր, և 'ի դարձիդ երկու երջանիկ պիտի տեսնենք, վասն զի կ'յուսամ որ երջանկութեանդ դէմ արգելք մը չկայ։

— Մեծ արգելք մը կայ, տիկին։

— Վա՜հ, և ի՞նչ արգելք։

— Թագաւորին կամքը։

— Թագաւորի՞ն կամքը . . . Թագաւո՞ր ամուսնութեանդ կ'դիմադրէ։

— Կամ թերևս կ'երկարաձգէ։ Լա Ֆէր կոմսին միջոցաւ թագաւորին հաւանութիւնը խնդրեցի և թագաւորն առանց բոլորովին մերժելու, ըսաւ միայն որ քիչ մը պիտի սպասել տայ։

— Մի՞թէ սիրած անձդ անարժա՞ն է ուրեմն քեզի։

— Տիկին, թագաւորի մը սիրոյն արժանի է։

— Ըսել կ'ուզեմ թէ կարելի է քուկինիդ հաւասար ազնուականութիւն մը չունի։

— Պատուական ընտանիքէ մ'է։

— Նորատի՞, դեղանի՞։

— Տասն եօթ տարեկան է և ինձի համար զմայլելի դեղեցկութիւն մ'ունի։

— Բարի՞ է թէ 'ի դաւառ։

— Ֆոնդէնպլօ կ'դանուի, տիկին։

— Արքունիքը։

— Այո։

— Մի՞թէ կ'ճանչեմ զանի։

— Պատիւ ունի նա Ձեր արքայական Բարձրութեան տան վերաբերելու։

— Իր անունը — հարցուց իշխանուհին անձկութեամբ — եթէ տակայն — յարեց նա աշխուժիւ ուղղելով ըսելիքը — իր անունը գաղտնիք մը չէ։

— Ո՛չ, տիկին, իմ սէրս այնքան մաքուր է որ հարկ չկայ զայն գաղտնի պահել, ևս առաւել Ձեր Բարձրութեան, որ այն-

քան բարեսէր էք ինձի համար։ Օրիորդ Լուիզ Լա Վալիէրն է սիրածս։

Իշխանուհին չկրցաւ ճիկ մը զսպել, որով զարմանքէ աւելի բան կ'յայտնէր։

— Ա՜հ — ըսաւ նա — Լա Վալիէր . . . այն որ երէկ . . . ։

Եւ կանգ 'առաւ։

— Այն որ երէկ տկարութիւն մ'զգաց, կարծեմ — շարունակեց նա։

— Այո՛, տիկն, ես դեռ այս առտու միայն իմացայ անոր պատահած դիպուածը։

— Եւ մի՞թէ տեսա՞ր զանի ասա դալէն առաջ։

— Պատիւ ունեցայ անոր իմ հրաժարական բարևս տալու։

— Եւ կ'ըսես թէ — վրայ բերաւ իշխանուհին ինքն իր վրայ ճիգ մ'ընելով — թէ թագաւորը . . . ուրիշ ժամանակի ձգեց ամուսնութիւնդ այս աղջկան հետ։

— Այո՛, տիկին, ուրիշ ժամանակի ձգեց։

— Եւ մի՞թէ այս յապաղման պատճառ մը ցցո՞ւց։

— Բնա՛ւ։

— Երկար ատեն կա՞յ որ Լա Ֆէր կոմսն այս խնդիրն անոր առաջարկեց։

— Ամիս մը կայ, տիկին։

— Տարօրինակ բան — ըսաւ իշխանուհին։

Եւ ամսի նման բան մ'աչացը վրայէն անցաւ։

— Ամի՞ս մը — կրկնեց իշխանուհին։

— Գրեթէ ամիս մը։

— Իրաւունք ունիս, պերկոմս — ըսաւ իշխանուհին ժպիտով մ'որուն մէջ Պրաժլօն կրնար բունազբօսում տեսնել — պէտք չէ որ եղբայրս ընդ երկար պահէ քեզ իր մօտ. ուրեմն շուտ մեկնէ, և Անկլիա գրելիք առաջին գրոյս մէջ քեզ պիտի պահանջեմ յանուն թագաւորին։

Եւ իշխանուհին ոտք ելաւ իր գիրը Պրաժլօնի ձեռքը տալու։ Ռաուլ հասկըցաւ որ իր ունկնդրութիւնն աւարտած էր, նամակն առաւ իշխանուհւոյն առջև խոնարհութիւն ընելով և դուրս ելաւ։

— Ամիս մը — մրմռաց իշխանուհին — միթէ այս աստիճան կուրցած էի, և արդեօք ամսէ մ'ի վեր զանի կ'սիրէր։

Եւ որովհետև տիկինն ընելու գործ մը չունէր, նստաւ որ իր եղբօրը գրելիք նամակն սկսի որու յեռոյ ֆրոՔՒՒ-ՆԸ Պրաժլօնի վրայ պիտի գառնար։

Ինչպէս որ տեսանք՝ Կիշ կոմսը Մանիքանի թախանձանաց զիջեր էր և անոր հետևելով մինչև ախոռները հասեր, ուր որ իրենց ձիերը թամբել տուին. յետոյ՝ փոքրիկ անցքէն՝ որու նկարագիրն արդէն մեր ընթերցողաց տուինք, արքայազունը դիմաւորեցին, որ բաղնիքէն ելնելով, դէպ 'ի գղեակը կ'գառնար բոլորովին թարմ, իր երեսին վրայ կնկան քօղ մը ձգելով որպէս զի արևը՝ որ արդէն տաք էր, իր դէմքը չայրէ։

Արքայազունն այն զուարթ բնաւորութեան մէկ ժամուն մէջ կը գտնուէր որով երբեմն կ'ներշնչուէր իր յատուկ գեղեցկութեան զմայլումով։ Ջրին մէջ՝ իր մարմնոյն սպիտակութիւնն իր պալատականաց մարմնոյն հետ բաղդատելու կարող եղեր էր, և Նոքին արքայական Բարձրութեան իր անձին համար տարած խնամոց շնորհիւ՝ ոչ ոք, նոյն իսկ Լօրէն ասպետը՝ գեղեցկութեան կողմէ անոր հետ չէր կրցած մրցիլ։

Ասկէ զատ՝ արքայազունը բաւական յաջողութեամբ լողացեր էր, և բոլոր իր ջիլերը՝ զովարար ջրին ներգործութեամբը ձգտելով վայելչաբար, իր մարմնին ու մէջքը բարեյաջող հաւասարակշռութեան մէջ կ'պահէին։

Ուստի երբ Կիշը տեսնելուն՝ որ վառաւոր սպիտակ ձիոնն անոր առաջն առնելու կ'գար արշաւակի, իշխանը չկրցաւ խնդալին բացագանչութիւն մը զսպել։

— Կ'երևի ինձ թէ բանը յաջող է — ըսաւ Մանիքան, որ կարծեց այս բարեյօժարութիւնը Նորին արքայական Բարձրութեան կերպարանին վրայ նշմարել։

— Ա՛հ, բարի լոյս, Կիշ, բարի լոյս, իմ խեղճ Կիշս — գոչեց իշխանը։

— Ողջոյն առ տէրդ իմ — պատասխանեց Կիշ, Գիլիսլ իշխանին ձայնէն քաջալերուելով — առողջութիւն, խնդութիւն, երջանկութիւն և բարօրութիւն Ձեր Բարձրութեան կ'մաղթեմ։

— Բարի առաքեցար, Կիշ, իմ աջ կողմս անցիր. բայց ձիուդ սանձը քաշէ, վասն զի քայլ առ քայլ կ'ուզեմ գնալ այս գալարաւէտ կամարներուն ներքև։

— Պատրաստ եմ ձեր հրամանին, տէր իմ։

Եւ Կիշ իշխանին աջ կողմը քաշուեցաւ ինչպէս որ հրաւիրուեր էր։

— Նայինք, սիրելիդ իմ Կիշ — ըսաւ իշխանը — նայինք, ինձի այն Կիշին վրայ որ երբեմն իմ կնոջս հետ կ'սիրաբանէր, քանի մը լուրեր տուր։

Կիշ սաստիկ կարմրեցաւ, մինչդեռ իշխանը խնդալէն կ'ճաթէր որպէս թէ ամենանուրը կատակ մ'էր ըրածը։

Իշխանին բոլորտիքը գտնուող քանի մ'առանձնաշնորհ մարդիկ կարծեցին թէ պարտ է անոր օրինակին հետևիլ, թէև իր խօսքը չլսեցին, և աղմկալի ծիծաղ մ'արձակեցին, որ առաջինէն սկսելով, բոլոր հետևորդներէն անցաւ և վերջինով մարեցաւ։

Կիշ՝ որչափ որ կարմրեր էր, դարձեալ իր ընթացքը չփոխեց. Մանիքան անոր կ'նայէր։

— Ա՛հ, տէր իմ — պատասխանեց Կիշ — գթացէք թշուառի մը, մի՛ զրկեր զիս Լօրէն ասպետին։

— Ի՞նչ կերպով։

— Եթէ լսէ որ զիս կ'ծաղրէք, ձեր ըրածին տասնապատիկը պիտի ընէ և զիս անխնայ պիտի ծաղրէ։

— Առ իշխանուհին ունեցած սիրոյդ համար։

— Ո՛հ, տէր իմ, գթութիւն։

— Նայինք, նայինք, Կիշ, խոստովանէ որ իշխանուհւոյն աչք ըրիր։

— Երբէք այդպիսի բան մը չպիտի խոստովանիմ, տէր իմ։

— Առ իս ունեցած յարգանաց պատճառաւ։ Լաւ ուրեմն, այդ յարգանքէն քեզ կ'աղաչեմ, Կիշ։ Խոստովանէ, որպէս թէ խնդիրն օրիորդ Շալէի կամ Լա Վալիէրի վրայ լինէր։

Ապա՝ խօսքն ընդմիջելով,

— Օ՛ն, լա՛ — յարեց նա ծիծաղն սկսելով — ահա երկոսյրի սրով մը կ'խաղամ ես։ Քեզի կ'զարնեմ, և եղբօրս կ'զարնեմ, Շալէ և Լա Վալիէր, քու նշանածդ և իր ապագայ կինը։

— Ճշմարիտը, տէր իմ — ըսաւ կոմսը — այսօր պաշտելի զուարթութեամբ մը կ'փայլիք։

— Հաւատս վկայ, այո, ստոյգ է, ինքզինքս քաջառողջ կ'ըզգամ և ասկէ զատ տեսքդ ինձ հաճոյք կ'պատճառէ։

— Շնորհակալ եմ, տէր իմ։

— Ուրեմն ինձի դէմ արտունջ մ'ունիր։

— Ե՞ս, տէր իմ։

— Այո, դու։

— Եւ ի՞նչ բանէ տրտունջ ունենայի, Տէր Աստուած։

— Անոր համար որ ընդմիջեր էի քու կաքաւներդ ու սպանիական երգերդ։

— Ա՛հ, Ձե՛ր Բարձրութիւնը։

— Արի, ոչ ինչ մի՛ ուրանար։ Դու այն օրը վայրագ աչօք իշխանուհւոյն սենեկէն դուրս ելար. այդ քեզի դժբաղդութիւն պատճառեց, սիրելիդ իմ, և երէկուան պարեկն ողորմելի կերպով մը պարեցիր։ Մի՛ սրդողիր, Կիշ, այդ քեզի կ'վնասէ, վասն զի դու արջի մը կերպարանը կ'առնուս։ Եթէ իշխանուհին քեզի երէկ նայեցաւ, բանի մը վրայ ստոյգ եմ. . . ։

— Ի՞նչ բանի վրայ, տէր իմ, Ձեր Բարձրութիւնը զիս կ'ահաբեկէ։

— Անշուշտ քեզ բոլորովին ուրացած է։

Եւ իշխանն սկսաւ աւելի բարձր ծիծաղիլ։

— Արդարև — մտածեց Մանիքան — ատոլճանը բանի մը չծառայեր, և ամենքն իրարու նման են։

Իշխանը շարունակեց.

— Ահա վերջապէս դարձար. յուսալի է որ ասպետն աւելի սիրալիր դառնայ։

— Ի՞նչպէս, տէր իմ, և ի՞նչ հրաշքով պիտի կարենամ այդ աղդեցութիւնն ունենալ Պ. Լօրէնի վրայ։

— Շատ պարզ բան է, քեզնէ կ'նախանձի։

— Է՛հ, վա՛հ, իրա՞։

— Ըսածս է։

— Ինձ մեծ պատիւ կ'ընէ։

— Կ'հասկընաս անշուշտ որ երբ դու ներկայ ես զիս կ'զդուէ, երբ մեկնիս, զիս կ'չարչարէ։ Կ'իշխեմ տատանեալ։ Ասկէ զատ չգիտես թէ ինչ խորհուրդ ծնաւ մտքիս մէջ։

— Ձեմ տարակուսիր այդ մասին, տէր իմ։

— Լա՛ւ, երբ դու յաքսոր էիր, վասն զի դու աքսորուեցար, իմ խեղճ Կիշս. . . ։

— Տէ՛ր վկայ, որո՞ւ է յանցանքը — ըսաւ Կիշ ցասկոտ կերպարան մը կեղծելով։

— Ո՛հ, անտարակոյս իմն չէ յանցանքը, սիրելի կոմս — պատասխանեց Նորին արքայական Բարձրութիւնը։ — Ես թագաւորէն չմնդրեցի որ քեզ աքսորէ, իմ իշխանի խօսքս վկայ։

— Ո՛չ, տէր իմ, քաջ գիտեմ որ այդպէս է, բայց. . . ։

— Բայց իշխանուհի՞ն։ Ո՛հ, այդ մասին, հակառակը չեմ ըսեր։ Ուրեմն, ի՞նչ ըրիր դու, թշուառական, իշխանուհւոյն։

— Ճշմարիտը, տէր իմ. . . ։

— Կանայք իրենց հեռն ունին, քաջ գիտեմ, և իմն ալ այդ թերութենէ զերծ չէ։ Բայց եթէ նա քեզ աքսորել տուաւ, դարձեալ ես քեզի դէմ բան մը չունիմ։

— Ուրեմն, տէր իմ — ըսաւ Կիշ — կէս մը թշուառ եմ։

Մանիքան որ Կիշին եռեւէն կ'դար, և որ իշխանին ըսածներէն խօսք մը չէր փախցներ, իր ուսերը մինչև ձիւն վզին վրայ ծալեց որպէս զի զսպել չկրցած ծիծաղը զսպէ։

— Ասկէ զատ՝ քու աքսորդ գլխիս մէջ խորհուրդ մը ծնցուց։

— Լա՛ւ։

— Երբ ասպետը՝ քեզ ներկայ չգտնելով և առանձին տիրելու ատոյդ լինելով՝ զիս կ'մոլորէր, այս չարամիտ երիտասարդին թելադրութեան ներքոյ՝ տեսնելով որ իմ երեսէ ձդած կինս այնքան բարի էր ինձի համար, միտքս դրի չնաշխարհիկ երիկ մը դառնալ, արքունեաց մէջ հետաքրքրական, հաղուագիւտ բան մը լինիլ, մէկ խօսքով միտքս դրի կինս սիրել։

Կիշ՝ իշխանին նայեցաւ այնպիսի ապուշ դէմքով մ'որու վրայ բնաւ կեղծիք չկար։

— Ո՛հ — թոթովեց Կիշ դողդողալով — այդ ձեր միտքը, տէր իմ, լրջաբար չդրացաք անշուշտ։

— Հաւատս վկայ, լրջօրէն խորհեցայ։ Ես բաւական կալուածք ունիմ զոր ամուսնութեանս ատեն եղբայրս ինձ տուաւ, իշխանուհի կինս ալ ստակ ունի, և շատ ստակ, քանի որ Անկլիոյ և Ֆրանսայի՝ թէ եղբօրմէն և թէ աներձադէն կ'քաշէ։ Լաւ, արքունիքը կրնայինք թողուլ, կրնայինք քաշուիլ Վիլէր–Քոգրէի գղեակն որ իմ դաստակերտս է, անտառի մը մէջ, ուր կարող էինք կատարեալ սէր հիւսել իմ մեծ պապիս Հանրի Դի և գեղեցիկ Կապրիէլի սիրախօսած տեղուանքը . . . ի՞նչ կ'ըսես այս գաղափարիս, Կիշ։

— Կ'ըսեմ թէ դող կ'ելնեմ լսելով միայն, տէր իմ— պատասխանեց Կիշ, որ իրօք կ'դողդողար։

— Ա՛հ, կ'նայիմ որ երկրորդ անգամ մ'ալ աքսորի չպիտի կարենաս հանդուրժել։

— Ե՞ս, տէր իմ։

— Ուրեմն քեզ չպիտի տանիմ մեզի հետ, ինչպէս որ առաջ կ'մտադրէի։

— Ինչպէ՞ս, ձեզի՛ հետ, տէր իմ։

— Այո՛, եթէ յանկարծ խելքիս փչէ արքունիքէն տրանջելու։

— Ո՛հ, տէր իմ, բաւական է որ կամենաք, Ձեր Բարձրութեան պիտի հետևիմ մինչև աշխարհիս ծայրը։

— Քանի՛ անճարակ ես — մրմնջեց Մանիքան իր ձին Կիշին վրայ քշելով այնպէս որ զանի թամբէն վար ձգէ։

Ապա անոր քովէն անցնելով որպէս թէ երիվարը չէր կարող զսպել,

— Բայց մտածէ մի անգամ թէ ի՞նչ կ'ըսես — փսփսաց անոր մեղմիկ։

— Աղէ՛, ընդ առաջ — ըսաւ իշխանը — այսպէս որոշուած է, քանի որ այդչափ անձնուէր ես ինձի քեզ պիտի տանիմ։

— Ամէն ուրեք, ամէն ուրեք — պատասխանեց Կիշ զուարթագին — ամէն ուրեք, անմիջապէս. պատրաստ էք։

Եւ Կիշ ձիուն սանձն արձակ թողուց ծիծաղելով, որ երկու ոտտամ ըրաւ ընդ առաջ։

— Վայրի՛կ մը, վայրի՛կ մը — ըսաւ իշխանը — գղեկէն անցնինք։

— Ի՞նչ կայ գղեակը։

— Կ'հարցնե՞ս, կինս պիտի առնում, թշուառական։

— Ինչպէ՞ս — հարցուց Կիշ։

— Անտարակոյս, քանի որ ըսի քեզ որ ամուսնական սիրոյ խորհուրդ մ'է իմս, հետևապէս պէտք է որ կինս ինձի հետ առնում։

— Ուրեմն, տէր իմ— պատասխանեց կոմսը — սաստիկ կը վշտանամ, վասն զի Կիշը չկայ ալ ձեզի համար։

— Վա՜հ։

— Այո՛, ինչո՞ւ համար իշխանուհին ձեզի հետ պիտի տանիք։

— Դէ՞ն, վասն զի կ'տեսնեմ որ զանի կ'սիրեմ։

Կիշ թեթև մը գունատեցաւ, թէև կ'ջանար իր առերևոյթական զուարթութիւնը պահել։

— Եթէ իշխանուհին կ'սիրէք, տէր իմ — ըսաւ նա — այդ սէրը պէտք է որ ձեզի բաւէ, և այնուհետև ձեր բարեկամներէն պէտք չունիք։

— Գէշ չէ՛, գէշ չէ՛ — մրմռաց Մանիքան։

— Օ՜ն, ահա նորէն իշխանուհւոյն երեսէն զդայած երկիւղդ քեզ կ'բռնէ — պատասխանեց իշխանը։

— Բայց մտիկ ըրէք, տէր իմ, այդ բանին փոխարէնը ստացած եմ, կին մ'որ զիս աքսորել տուաւ։

— Ո՛հ, Աստուած իմ, ի՜նչ անշահ բնաւորութիւն ունիս, Կիշ, ուրչափ քինախնդիր ես, բարեկամդ իմ։

— Կ'փափաքէի ձեզ, ձեզ տեսնել այսպիսի պարագայի մը մէջ։

— Ճշմարիտը, ահա այդ է պատճառն որ երէկ այնքան գէշ պարեցիր. վրէժ հանել կ'ուզէիր իշխանուհւոյն ծուռ քայլեր առնել տալով. ա՛հ, Կիշ, այդ գձուձ բան է, և իշխանուհւոյն պիտի խմացնեմ։

— Ո՛հ, ի՜նչ որ կամիք կարող էք անոր ըսել, տէր իմ։ Նորին Բարձրութիւնը զիս ատածէն աւելի չպիտի ատէ։

— Վա՜յ, վա՜յ, չափազանցութեամբ կ'խօսիս, քեզ բռնի տան հինգ խեղճ օրեր արտերն անցընելու դատապարտելուն համար։

— Տէր իմ, տան հինգ օրը, տան հինգ օր է, և երբ մարդ

տաղտկանալով կ'անցընէ զանոնք, տասն հինգ օր յաւիտենակա-
նութիւն մը կ'դառնայ։

— Այնպէս որ անոր չպիտի ներես։

— Երբէք։

— Օ՛ն, օն, Կիշ, լաւ տղայ եղիր, քեզ հաշտել կ'ուզեմ
անոր հետ. անոր հետ յաճախ տեսնուելով պիտի համոզուիս որ
չարասիրութիւն չունի և շատ խելացի է։

— Տէր իմ...։

— Պիտի տեսնես որ իշխանուհւոյ մը պէս ընդունիլ և քաղա-
քաւոր կնկան մը պէս ծիծաղիլ գիտէ. պիտի տեսնես որ՝ եթէ
կամենայ՝ այնպէս կ'վարուի որ ժամերն իրրև վայրկեաններ կ'անց-
նին։ Կիշ, բարեկամդ իմ, պէտք է որ իմ կնկանս վրայ կար-
ծիքդ շտկես։

— Ճշմարիտը — ըսաւ Մանիքան իւրովի — ահա ամուսին մ'ո-
րու փորձանք պիտի բերէ իր կնկանն անունը, և բարեյիշատակ
Կանդօլ թագաւորն իշխանին մօտ Ճշմարիտ վարդ մ'էր։

— Ի վերջէ — յարեց իշխանը — իմ կնկանս վրայ կարծիքդ
պիտի շտկես, Կիշ, ես քեզ կ'երաշխաւորեմ, միայն պէտք է որ
Ճամբան ցոյց տամ քեզի։ Նանրասէր չէ նա, և ոչ որ ուզէ
դիւրին չէ անոր սիրտը շահիլ։

— Տէր իմ...։

— Ընդդիմութիւն պէտք չէ, Կիշ, թէ ոչ պիտի աւրուինք —
պատասխանեց իշխանը։

— Բայց քանի որ կ'պահանջէ — մրմռայ Մանիքան Կիշին ա-
կանջին — գոհ ըրէ ուրեմն զինքը։

— Տէր իմ — ըսաւ կոմսը — պիտի հնազանդիմ։

— Եւ սկսելու համար — վրայ բերաւ իշխանը — այս գիշեր
երաժշտութիւն կայ իշխանուհւոյն սենեակը. դու ինձի հետ պի-
տի Ճաշես և ես անոր մօտ պիտի տանիմ քեզ։

— Ո՛հ, այդ բանին, տէր իմ — առարկեց Կիշ — ձեր ներո-
ղութեամբը յանձնառու չպիտի լինիմ։

— Դարձեա՛լ, բայց այդ սառահակութիւն է։

— Իշխանուհին շատ գէշ ընդունեցաւ զիս երէկ բազմութեան
առջև։

— Իրաւ — պատասխանեց իշխանը ծիծաղելով։

— Այն ատենն որ երբ անոր խօսեցայ՝ պատասխան անդամ
չտուաւ ինձ. աղէկ բան է ինքնասիրութիւն չունենալը, բայց
դոյզն ինչը, զոյզն ինչ է, ինչպէս որ կ'ըսեն։

— Կոմս, Ճաշէն ետքը, երթաս պիտի սենեակդ հագուելու և
զիս պիտի դաս առնուս, քեզի պիտի սպասեմ։

— Քանի որ Ձեր Բարձրութիւնը բացարձակապէս ինձ կ'հրա-
մայէ...։

— Բացարձակ կերպով։

— Անսասան է իր գիտաւորութեան մէջ — ըսաւ Մանիքան —
և այս տեսակ բաներն ամենէն աւելի երիկ մարդոց գլուխը յա-
մառութեամբ կ'պաշարեն։ Ա՛հ, ինչո՞ւ համար Մօլիէր այս ա-
մուսնոյն ըսածները չլսեց, անշուշտ ոտանաւորի պիտի վերածէր։

Իշխանն ու պալատականներն այսպէս խորհրդածելով զղեկին
ամենէն հովասուն սրահները մտան։

— Աղէկ միտքս ընկաւ — ըսաւ Կիշ դրան սեմին վրայ — Ձեր
Բարձրութեան համար յանձնարարութիւն մ'ունիմ։

— Յայտնէ՛ յանձնարարութիւնդ։

— Պ. Պրաժլօն Լոնտոն գնայ թագաւորին մէկ հրամանով, և
ապսպրեց ինձ որ իր յարգանքը ձեզի նուիրեմ։

— Լա՛ւ, բարի Ճամբորդութիւն գերկոմսին, զոր շատ կ'սիրեմ։
Աղէ՛, գնա՛ հագուելու, Կիշ, և շուտ դարձիր։ Եւ եթէ չվե-
րադառնաս...։

— Ի՞նչ կ'պատահիր, տէր իմ։

— Սա պիտի պատահիր որ քեզ Պասպիյլ պիտի նետել տամ։

— Օ՛ն, արդարև — ըսաւ Կիշ ծիծաղելով — իշխանը բոլորո-
վին իշխանուհւոյն հակադարձն է։ Իշխանուհին զիս աքսորել կը
տայ որովհետև բաւական չսիրեր զիս, իշխանը զիս բանտարկել
կ'տայ վասն զի զիս չափազանց կ'սիրէ։ Շնորհակալ եմ, իշխան,
շնորհակալ եմ, իշխանուհի։

— Օ՛ն, օն — ըսաւ իշխանը — դու չքնաղ բարեկամ մ'ես,
և քաջ գիտես որ առանց քեզի չեմ կրնար ընել։ Շուտ դարձիր։

— Բայց ես ալ ըստ կարգի նազանք պիտի ընեմ, տէր իմ։

— Վա՛հ։

— Ուստի պայմանաւ մը Ձեր Բարձրութեան բնակարանը պիտի դառնամ։

— Ի՞նչ է պայմանդ։

— Իմ բարեկամաց մէկ բարեկամին շնորհ մ՚ընել կ՚ուզեմ։

— Ի՞նչ է անունը։

— Մալիքօրն։

— Անշա՛հ անուն։

— Կրողը շնորհքով մարդ է, տէր իմ։

— Լաւ ուրեմն, խօսէ։

— Լաւ ուրեմն, Պ. Մալիքօրնի պաշտօն մը պարտաւոր եմ ձեր մօտ, տէր իմ։

— Ի՞նչ պաշտօն։

— Որ և իցէ պաշտօն մը, օրինակի համար մատակարարութեան։

— Տէր վկայ, յարմար կ՚դայ. ես ալ երէկ սենեկապետը ճամբեցի։

— Թո՛ղ սենեկապետութիւն լինի, տէր իմ. ի՞նչ է պաշտօնը։

— Ո՛չ ինչ, բայց եթէ դիտել և տեղեկագրել։

— Ներքին ոստիկանութիւն։

— Ճիշտ այդպէս։

— Ո՛հ, ո՞րչափ այդ պաշտօնը կ՚յարմարի Մալիքօրնի — համարձակեցաւ ըսելու Մանիքան։

— Ուրեմն կ՚ճանչէս մեր խօսած մարդը, Պ. Մանիքան — հարցուց իշխանը։

— Սրտակցութեամբ կ՚ճանչեմ, տէր իմ, իմ բարեկամն է։

— Եւ ի՞նչ է կարծիքդ։

— Իմ կարծիքս այս է որ դուք անոր պէս սենեկապետ մ՚երբէք չպիտի ունենաք։

— Ի՞նչ կ՚բերէ այդ պաշտօնը — հարցուց կոմսն իշխանին։

— Զգիտեմ, միայն ինձ միշտ ըսած են որ բաւական ստակ կը բերէ եթէ զայն վարողը լաւ վարէ։

— Ի՞նչ ըսել է լաւ վարէ, իշխան։

— Այդ ամենայայտ է, այսինքն երբ պաշտօնաւորը խելքի տէր մարդ է։

— Ուրեմն, կարծեմ թէ գոհ պիտի լինիք, վասն զի Մալիքօրն սատանայի չափ խելք ունի։

— Լա՛ւ, ուրեմն պաշտօնը սուղն պիտի նստի ինձ — պատասխանեց իշխանը ծիծաղելով։ — Դու ինձ այդ կերպով ճշմարիտ պարկեշտ մը կ՚ընես, կոմս։

— Այդպէս կարծեմ, տէր իմ։

— Լաւ ուրեմն, գնա՛ իմաց տուր քու Մէլիքօրնիդ . . . ։

— Մալիքօրն, տէր իմ։

— Այդ անուան երբէք չպիտի սովորիմ։

— Լա՛ւ, բայց Մանիքանն աղէկ կ՚հնչէք, տէր իմ։

— Ո՛հ, անշուշտ Մանիքօրն շատ լաւ պիտի ըսեմ նաև։ Սովորութեամբ պիտի վարժիմ։

— Ինչպէս որ կ՚ուզէք անուանեցէք, տէր իմ, հաւատի եղիք որ ձեր սենեկայ տեսուչն երբէք չպիտի սրդողի, չափազանց ընտիր բնաւորութեան տէր մարդ մ՚է։

— Լաւ ուրեմն, սիրելիդ իմ Կիշ, իմացուր անոր իր պաշտօնավարութիւնը . . . բայց սպասէ . . . ։

— Ի՞նչ կայ, տէր իմ։

— Նախ և առաջ զանի տեսնել կ՚ուզեմ։ Եթէ իր անուան չափ տղեղ է, խօսքս ետ պիտի առնում։

— Տէր իմ, զանի կ՚ճանչէք։

— Ե՞ս։

— Անշուշտ։ Դուք, իշխանդ իմ, զանի արդէն տեսաք՝ի Բալէ-Բուայալ եթէ կ՚յիշէք ես ինքս զանի ներկայացուցի ձեզի։

— Ա՛հ, շատ լաւ, կ՚յիշեմ. . . ։ Կրո՛ղ, չքնաղ տղայ մ՚է։

— Քաջ գիտէի որ զանի գիտած էք, իշխանդ իմ։

— Այո՛, այո՛, այո՛, կ՚նայիս, Կիշ, չեմ ուզեր որ կինս և ես տղեղ երեսներ ունենանք մեր աչաց առջևը։ Իմ կինս իբրև նաժիշտ պիտի առնու ամէն սիրուն աղջիկները, ես ալ պիտի առնում, ամէն վայելչադէմ ազատորդիները։ Այս կերպով, կը նայիս, Կիշ, եթէ զաւակներ ընեմ, լաւ ներշնչութենէ մը պի-

տի յառաջ գան, և եթէ իմ կինս ընէ, աղէտ օրինակներ տեսած պիտի լինի։

— Այդ շատ խորունկ կերպով բանագատել է — ըսաւ Մանիքան աչքով և միանգամայն ձայնով հաւան գտնուելով։

Իսկ Կիշին դալով, անտարակոյս այդ դատողութիւնը շատ յարմար չդտաւ, վասն զի միայն շարժմամբ կարծիք յայտնեց, և այս շարժումն ալ դարձեալ անստուգութեան նշան մը կ'ցուցնէր։

Մանիքան գնաց որ Մալիքօրնի հաղորդէ իր իմացած տեսիլը։

Կիշ այնպէս մ'երևցաւ որպէս թէ ակամայ կամօք իր հաղուստն ու կապուտը գնելու կ'երթար։

Իշխանն երդելով, ծիծաղելով և հայլիները նայելով ճաշի ժամանակը բռնեց այնպիսի լաւ արամաբրութեան մէջ որ սա առակը կրնար արդարացնել. «Իշխանի պէս երջանիկ»։

ԺԷ

ՇԱՀԱՊԵՏԻ ԵՒ ԴՐԻԱՊԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ամէն մարդ նախընթրակն ըրած և նախընթրակէն ետքն ալ հաղուեր կապուեր էր դղեկին մէջ։

Ըստ սովորութեան նախընթրակը ժամը հինգին տեղի ունեցեր էր։

Նախընթրակին համար մէկ ժամ և երկու ժամ ալ եթէ հաղուելու գնենք, ըսել է թէ ամէն մարդ երեկոյեան ժամն ութին պատրաստ էր։

Ուստի ժամն ութին մէջոցներն էր որ իշխանուհւոյն կ'ներկայանային։

Վասն զի, ինչպէս որ ըսինք, իշխանուհին էր որ նոյն իրկուն ընդունելութիւն կ'ընէր։

Իսկ իշխանուհւոյն երեկոյթին ամէն մարդ անվրէպ կ'գտնուէր։ Վասն զի իր կողմէ տրուած երեկոյթներն այն հրապուրելի վայելչութիւնն ունէին զոր թագուհին, այս բարեպաշտ և սպասուա-

ցան իշխանուհին, չէր կրցած իր երեկոյթներուն տալ։ Դժբաղդաբար բարութեան մէկ առաւելութիւնն է նուազ զուարճացնել քան թէ չարահնար մտքի մը։

Եւ սակայն, փութանք ըսելու, չարահնար միտք չէր կրնար իբրև ազական իշխանուհւոյն յարմարիլ։

Այս գերընտիր բնաւորութիւնը շատ ճշմարիտ վեհանձնութիւն, շատ ազնիւ խանդ և ազնիւ խորհուրդներ կ'պարունակէր, ուստի կարելի չէր զանի չարասէր բնաւորութիւն անուանել։

Բայց իշխանուհին դիմադրելու ձիրքն ունէր, ձիրքը մ'որ ստէպ դժնդակ է ունեցողին, վասն զի կ'խորտակի երբ ուրիշ մը թերևս խոնարհէր. հետևապէս հարուածները չէին բթանար անոր վրայ ինչպէս կ'բթանային Մարի–Թէրէզի խղճին վրայ։

Իր սիրտը կ'ոստնուր ամէն անգամուն որ հարուած մ'ընդունէր, և մասնիի յարձակողական խաղերուն նշանակներուն պէս, իշխանուհին՝ եթէ զանի թալկացնելու կերպով չզարնէին, հարուածի դէմ հարուած կ'հատուցանէր իրեն հետ պայքարելու յանդգնող անխոհեմ անձին դէմ։

Միթէ չարասիրութիւն էր այս, թէ ոչ պարզապէս նենգամտութիւն։ Մենք կարծենք թէ հարուստ և զօրեղ բնաւորութիւններն անոնք են որ՝ դիտութեան ծաւին պէս, թէ բարիք և թէ չարիք կ'հասցնեն միանգամայն, կրկնակի ճիւղ մ'որ միշտ ծաղկաւէտ, միշտ արդասաւոր է, որմէ լաւ պտուղն ընտրել դիտեն անօթի եղջիւրները, և որմէ կ'մեռնին անոնք որ դէշը, անօգուտը, աւելորդը կ'ուտեն, և այս ալ չարիք մը չէ։

Ուստի իշխանուհին՝ որ երկրորդ թագուհւոյ մը ծրագիրն ունէր, և մինչև իսկ առաջին թագուհւոյ, որ իր մտքին մէջ լաւ մը տեղաւորեր էր, իշխանուհին, ըսինք, իր տունն ախորժելի կ'ընէր խօսակցութեամբ, հանդիսութիւններով, և ամենուն կատարեալ աղատութիւն տալով որ խօսքի հաղորդակից գտնուի, սա պայմանաւ սակայն, որ խօսելիքը սիրուն և օգտակար լինի։ Եւ, միթէ հաւատալի՞ է, այս պատճառաւ իսկ իշխանուհւոյն ընկերութեանց մէջ աւելի քիչ կ'խօսէին քան այլուր։

Իշխանուհին կ'ատէր շաղակրատներն և անգթօրէն վրէժ կ'առնուր անոնցմէ։

Կ'թողուր որ խօսին։

Նոյնպէս մեծամտութիւնը կ'ատէր, և այս թերութիւնը թագաւորին անդամ չէր ներեր։

Այս էր իշխանին հիւանդութիւնն և իշխանուհին զանի բուժելու անհնարին պաշտօնը ստանձներ էր։

Սակայն իշխանուհին՝ իբրև տիրուհի դեր 'ի վեր քան իր աղախինները կ'հիւրընկալէր թէ քերթողները, թէ մտայի մարդիկը, թէ գեղանի կիները. բաւական մտախոհ էր իր բոլոր մանր մունր հեղնութիւններու մէջ որպէս զի բանաստեղծները մտախոհութեան տանի, բաւական զօրաւոր էր իր հրապոյրներովը որպէս զի ամենէն սիրուն կանանց մէջ անդամ փայլի, բաւական մտայի էր որպէս զի ամենէն նշանաւորները զինքը մտիկ ընեն։

Դիւրին է երևակայել թէ իշխանուհւոյն այս տեսակ ակումբներուն որչափ բազմութիւն կ'գիմէր, երիտասարդութիւնն անդ կը յորդէր։ Երբ թագաւորը գեռատի է, ամէն ինչ գեռատի է արքունիքը։

Ուստի պառաւ կիները՝ խնամակալութեան կամ վերջին իշխանութեան օրէն մնացած կունտ դլուխները կ'խոժոռէին. բայց իրենց տրտունջներուն կ'պատասխանէին ծիծաղելով այս պատկառելի անձերու վրայ որ տիրապետութեան ոգին մինչև զինուորական դունդեր հրամայելու հասուցեր էին Պարսաստանի կուռին ժամանակ, որպէս զի, կ'ըսէր իշխանուհին, մարդոց վրայ իրենց ունեցած իշխանութենէ չզրկուին։

Ժամը Ճիշդ ութին՝ իշխանուհին մեծ սրահը մտաւ իր նաժիշտներովը, և շատ դրանիկներ դուռ որ արդէն տաս վայրկենէ 'ի վեր կ'սպասէին։

Այս վերոյիշեալ ժամէն առաջ եկող հիւրերուն մէջ, մնաւեց այն անձն որուն ամենէն առաջ գալիքը կ'յուսար. այն անձը չդտաւ։

Բայց դրեթէ այն միջոցին որ այս խուզարկութիւնը կ'աւարտէր, իշխանին դալը ծանուցին։

Իշխանը չքնաղադեղ էր 'ի տես։ Իշխանը նոյն իրկուն կ'կրէր կարտինալ Մազարէնի բոլոր գոհարները, 'ի հարկէ անոնք զոր պաշտօնական կամայ ակամայ թողեր էր, մայր թագուհւոյն բոլոր գոհարեղէնները, նոյն իսկ իր կնկան քանի մ'անգամանքները։ Ուստի իշխանն արևու պէս կ'փայլէր։

Իր ետևէն կ'գար Կիշ ծանրաքայլ և կեղծ ստրջական երեսով մը. հագեր էր նա մարդարտագոյն թաշէ զգեստ մ'արծաթահիւս և կապոյտ ժապաւէններով։

Կիշ կ'կրէր նաև Մալինեան տանթելներ որ իրենց տեսակին մէջ այնքան աղուր էին որչափ էին իշխանին անգամանքներն իրենց տեսակին մէջ։

Իր գլխարկին փետուրը կարմիր էր։

Իշխանուհին շատ գոյներ ունէր։

Վիժակներու համար կարմիր կ'սիրէր, հագուստի համար մարդարտագոյնը, իսկ ծաղիկներու համար կապոյտը։

Պ. Կիշ այսպէս հագուած ամենուն աչքին զարնող գեղեցկութիւն մ'ունէր։ Սրտագրաւ գեղնութիւն մը, աչաց կերպ մը նուաղում, անփայլ սպիտակութեամբ ձեռներ մեծ տանթելներու ներքև, բերանը մելամաղձոտ, ասոնք արդարև բաւական էին խոստովանելու, Պ. Կիշ տեսնելով, որ Ֆրանսայի արքունիքը քիչեր անոր չափ արժէք ունէին։

Ասկից սա հետևեցաւ որ իշխանը՝ որ աստղ մը նսեմելու չափ մեծամտութիւնն ունէր, եթէ աստղ մ'իրեն հետ բաղդատուելու յանդգնէր, ընդ հակառակն բոլորովին մութն ընկաւ բոլոր երևակայութեանց մէջ, որոնք շատ լուսակաց դատաւորներ են, իրաւ, բայց նաև շատ վէս իրենց դատումներու մէջ։

Իշխանուհին անորոշակի նայեր էր Կիշին, բայց այս նայուածքն որչափ որ անորոշ էր, իր երեսին սիրուն կարմրութիւն մը բերաւ։ Իրօք իշխանուհին այնքան գեղեցիկ և վայելուչ դտեր էր Կիշն որ դրեթէ չցաւելու վիճակին հասեր էր այն արքայական յաղթանակին վրայ որ իր ձեռքէն խուսափելիքը կ'զգար։

Ուստի իր սիրտը թողուց՝ իր կամայ հակառակ, որ բոլոր ազիւնը մինչև այտերը զարկին։

Իշխանը՝ իր սառակ դէմքն առնելով, իշխանուհւոյն մօտեցաւ։ Անոր կարմրութիւնը չէր տեսած, կամ, եթէ տեսեր էր՝ բնաւ մտքէն չէր անցներ անոր բուն պատճառը դուշակել։

— Իշխանուհի — ըսաւ նա իր կնկան ձեռքը համբուրելով — այս տեղ ընկեցիկ, անբաղդ տարագիր մը կայ զոր իմ կողմէ քեզի կ'յանձնարարեմ։ Կ'աղաչեմ, լաւ ուշադրութիւն ըրէ, որ նա իմ ամենընտիր բարեկամներէս մին է, և քու ընդունելութիւնդ ոչ պիտի պարտաւորէ։

— Ի՞նչ տարագիր, ի՞նչ ընկեցիկ — հարցուց իշխանուհին իր չորս կողմը նայելով առանց այլոց և կոմսին վրայ նայուածքը ձգելու։

Ժամանակն էր որ իշխանն իր պաշտպանած անձն առաջ քշէր. ուստի մէկ գի քաշուեցաւ և թողուց որ Կիշ առաջ անցնի։ Կիշ կախած երեսով մ'իշխանուհւոյն մօտեցաւ և անոր խոնարհութիւն ըրաւ։

— Լաւ ուրեմն — հարցուց իշխանուհին, որպէս թէ չափազանց զարմանք կ'ղղար — մթէ Կիշ կոմսն է ընկեցիկն ու տարագիրը։

— Անշուշտ — վրայ բերաւ դուքսը։

— Է՛հ — ըսաւ իշխանուհին — մինակ նա կայ այս տեղ։

— Ա՛հ, տիկին, անիրաւ ես — ըսաւ իշխանը։

— Ե՞ս։

— Անտարակոյս։ Արի, ներէ այս խեղճ աղուն։

— Բայց ի՞նչ ներեմ անոր, ես ի՞նչ ունիմ ներելու Պ. Կիշին։

— Բայց արի, բացատրէ խնդիրը, Կիշ։ Ի՞նչ բան կ'ուզես որ ներէ քեզ — հարցուց իշխանը։

— Աւա՜ղ, Նորին արքայական Բարձրութիւնը քաջ գիտէ — պատասխանեց Կիշ կեղծաւորութեամբ։

— Արի, արի, տուր ձեռքդ, տիկին — ըսաւ Գիլիպ։

— Եթէ այդ քեզ կրնայ հաճոյք պատճառել, տամ ձեռքս, իշխան։

Եւ աչաց ու ուսերուն աննկարագրելի շարժում մը տալով, իշխանուհին իր հոտաւէտ աղուոր ձեռքն երիտասարդին տուաւ, որ շրթունքն անոր վրայ դրոշմեց։

Պէտք է նշատակ որ երկայն ատեն շրթունքը դրոշմեց ձեռքին վրայ, և թէ իշխանուհին շուտով չքաշեց զայն, վասն զի դուքսը յարեց.

— Կիշ ընաւ չարամիտ չէ, տիկին, և անշուշտ քու ձեռքդ չպիտի խածնէ։

Այս բառէն առիթ առնելով, թէև ծիծաղելի չէր թերևս, ամենքը սրահին մէջ մեծաձայն ծիծաղել սկսան։

Արդարև նշանաւոր էր այս վիճակն և քանի մը բարի հոգիներ զայն գիտեր էին։

Իշխանը տակաւին իր ըսած բառին ներգործութիւնը կ'վայելէր երբոր եկան իմաց տալու թագաւորին գալուստը։

Նոյն պահուն՝ սրահին տեսքը, մեր այժմ նկարագրելու փորձ փորձելիք տեսքն ունէր։

Կեդրոնը, ծաղիկներով լցուած կրակարանին առջև՝ նստած էր իշխանուհին՝ իր նաժիշտներովն որ երկու թև կ'կազմէին, որոց վրայ արքունեաց թիմեռնիկները կ'թռէին։

Ուրիշ ակումբներ պատուհաններուն որմածակերը բռներ էին, ինչպէս որ զբաղոյի մը գլխուորները կ'բռնեն իրենց փոխադարձ շրջաններուն մէջ, և իրենց յատուկ յատուկ տեղերուն գլխաւոր ակումբին եղած խօսքերը կ'լսէին։

Կրակարանին ամենէն մօտ ակումբներուն մէկէն՝ Մալիքօրն՝ նոյն նստին մէջ՝ Մանիքանի և Կիշի միջոցաւ սենեկապետութեան պաշտօնին հատնելով, Մալիքօրն որու սպայական զգեստը գրեթէ երկու ամսէ վեր պատրաստ էր՝ իր ոսկեզօծ լաթերով կ'փայլէր և Մօնդալէի վրայ կ'ճառագայթէր, իշխանուհւոյն ձախակողմեան ծայրը՝ իր աչաց բոլոր հրոյն և թաւիշներուն նշոյլներովը։

Իշխանուհին օրիորդ Շադիյօնի և օրիորդ Գրէքիի հետ կ'խօսակցէր, որ իր երկու դրացուհիներն էին, և իշխանին քանի մը խօսք կ'ղրկէր, որ շուտ մը նսեմացաւ երբ իմացուցին,

— Թագաւո՛ր։

Օրիորդ Լա Վալիէր՝ Մօնդալէին ոչ՝ իշխանուհւոյն ձախ կողմն էր, այսինքն գծին վերջնամասը, իր աջ գին Գոնէյ-Շարանդը նստեցուցեր էին։ Հետևապէս Լա Վալիէր այն զօրաբաժնի գիրքն ունէր որու ակարութեան վրայ կասկածներ կ'լինին, և զոր երկու փորձեալ զօրութեան մէջ կ'տեղաւորեն։

Լա Վալիէր այսպէս իր երկու բաղդախնդիր ընկերուհեաց կողմէն պաշարուած, սեպէ թէ Ռաուլի չուին վրայ տրտում էր, սեպէ թէ նորահաս դէպքերէն շարժած էր որով պալատականաց մէջ իր անունը հռչակ կ'առնուր, Լա Վալիէր, ըսինք, իր հովանոցին ետեւը կ'պահէր փոքր ինչ կարմրցած աչունքն և Մօնդալէի ու Ամէնախսի երկու կողմէն փոփոխակի ըսած խօսից մեծ ուշադրութեամբ միտ դնել կ'ցուցնէր։

Երբոր Թագաւորին անունը հնչեց՝ սրահին մէջ մեծ շարժում մ'եղաւ։

Իշխանուհին՝ իբրև տանը տիրուհին՝ ոտք ելաւ իր արքայական այցելուն ընդունելու համար. բայց՝ ոտք ելնելու ատեն՝ այնքան մտահոգ եղած պիտի լինէր՝ որ իր աջ գլխն ակնարկ մը նետեց, և այս ակնարկը՝ զոր ինքնասպասան Կիշն իբրև իրեն ուղղեալ մեկնեց՝ շրջանակին պտոյտն ընելով կեցաւ սակայն Լա Վալիէրի վրայ, որու վառվռուն կարմրութիւնն ու մտայոյզ այլայլութիւնը կրցաւ նշմարել։

Թագաւորը ներս մտաւ ակմբին մէջ տեղէն՝ որ ընդհանուր դարձաւ շարժմամբ մ'որ բոլորակէն դէպ 'ի կեդրոն բնապէս գիմեց։

Ամենուն ճակատները կ'ծռէին Նորին Վեհափառութեան առջև, կանայք թեքելով՝ իբրև վախ և փառաւոր շուշաններ Աքիլլ Թագաւորին առջև։

Նորին Վեհափառութեան վրայ վայրագ բան մը չկար, կրնանք ըսել թէ արքայական երևոյթ մ'անպամ չունէր նոյն իրկուն, եթէ ոչ իր երիտասարդութիւնն ու գեղեցկութիւնը։

Վառվռուն ուրախութեան և բարեյօժարութեան կերպարան մը բոլոր միտքերն արթնցուցին, և այն ատեն ամէն ոք չքնաղ երեկոյթ մ'անցընելու յուսով լցաւ, տեսնելով միայն որ Նորին Վեհափառութիւնն իշխանուհւոյն բնակարանը զուարճանալու փափաք ունէր։

Եթէ կայ մէկն որ իր խնդութեամբն ու զուարթութեամբը Թագաւորին հակակշռի՝ այս էր Պ. Սէնդ-Էնյան, որ զգեստներովը, դէմքովն ու ժպտաէններովը վարդագոյն էր, վարդագոյն էր մանաւանդ գաղափարներովը, և այն իրկուն Պ. Սէնդ-Էնյան շատ գաղափարներ ունէր։

Իր մտքին մէջ ծլող այս ամէն գաղափարներուն նոր ծաղիկ տուողն այն էր որ օրիորդ Շարանդ իրեն պէս վարդագոյն հագուստներ գրեր էր։ Սակայն չենք կամիր ըսել որ նենգամիտ պալատականը կանխաւ չգիտէր որ գեղանի Ամէնախսն այս գոյնով պիտի զարդարուէր, քաջ գիտէր սենեկապանուհի մը կամ դերձակ մը խօսել տալու իր տիրուհւոյն խորհրդոց վրայ։

Այնքան մահատու նայուածքներ արձակեց օրիորդ Ամէնախսին որչափ որ ժպտաէններ ունէր տնապանին և բաճկոնակին վրայ, այսինքն անթիւ անհամար ակնարկներ նետեց։

Թագաւորն իր բարևներն իշխանուհւոյն տալէն, և իշխանուհին ալ նստելու հրաւիրուելէն ետև՝ խսկոյն շրջանակը կազմուեցաւ։

Լուի իր Փիլիպ եղբօրը բաղնիքի վրայ լուրեր հարցուց. կանանց նայելով՝ պատմեց նաև թէ բանաստեղծները զբաղած էին ոտանաւորի վերածել Վալվէնի բաղանեաց վայելուչ զբօսանքը, և թէ ասոնցմէ մին մանաւանդ, Պ. Լօրէն՝ ջրերու յաւերժահարսի մը մտերմական գաղտնիքն ընդունիլ կ'երևէր, այնքան շատ ճշմարտութիւններ ըսեր էր իր յանկերուն մէջ։

Շատ կանայք կարծեցին թէ պէտք էր կարմրիլ։

Թագաւորն այս վայրկենէն օգուտ քաղեց որ անվրդով նայի չորս դին. Մօնդալէ միայն բաւական չէր կարմրեր և կարող էր Թագաւորին նայիլ, և տեսաւ զանի որ աչքը Լա Վալիէր օրիորդը կ'լափէր։

Այս յանդուգն նաժիշտը, զոր Մօնդալէ կ'կոչէին, Թագաւորին աչերը խոնարհեցուց, և այսպէս աղատեց Լուիզ Լա Վալիէրն այս ակնարկէն իրեն թերևս գալիք համակրական կրակէն։ Լուի իշխանուհիէն բռնուեր էր որ իրեն հետզհետէ հարցումներ կ'ընէր, և ոչ ոք անոր չափ հարց ու փորձ ընելու մասին յաջողակ էր։

Բայց Թագաւորը կ'ջանար որ ընդհանուր ձև մը տայ խօսակցութեան, ուստի սկսաւ աւելի խելք թափել և քծնիլ։

Իշխանուհին գովեստներ կ'ուղէր, որոշեց որ և է կերպով գովեստներ գրաւել և Թագաւորին ուղղելով խօսքը.

— Վեհափառ — ըսաւ նա — գուք որ ձեր Թագաւորութեան

մէջ անցած դարձածը գիտէք, գուք կանխաւ պարտիք գիտնալ այն յաւերժհարսէն Պ. Լօրէի պատմուած ոսանաւորները. միթէ Ձեր Վեհափառութիւնը կ'հաճի՞ մեզ մասնակից ընել անոնց։

— Տիկին — պատասխանեց թագաւորը կատարեալ շնորհքով մը — չեմ համարձակիր . . . : Սայց է որ՝ գուք մանաւանդ մեծ շփոթութիւն պիտի զգաք մէկ քանի պարագաներ մոռիկ ընելով. . . : Բայց Սէնդ-Էնյան բաւական լաւ կ'պատմէ և ոսանաւորներ միտքը շատ դիւրաւ կ'պահէ, եթէ միտքը չպահէ, նորունց կ'շինէ։ Կ'երաշխաւորեմ ձեզ, որ պերճայեալ քերթող մ'է։

Սէնդ-Էնյան՝ տեսարան դրուելով՝ սոսկալուեցաւ կարելի եղածին չափ նպաստաւոր կերպարանով երևիլ։ Դժբաղդաբար իշխանուհւոյն համար, Սէնդ-Էնյան միայն իր յատուկ գործերուն հոգ տարաւ, այսինքն իշխանուհւոյն խնդալին սպասած գովեստները տալու տեղ՝ սկսաւ գլուխ բռնել և խրոխտալ այս բարեբաղդութեանը համար։

Ուստի հարիւրերորդ ակնարկ մը նետելէն ետև դեղանի Ամէնախին, որ առջի օրուան դրութիւնը զգուշաբար 'ի գործ կ'դնէր, այսինքն չէր զլջաներ իր պաշտօնարկուին նայիլ,

— Տէր արքայ — ըսաւ — Ձեր Վեհափառութիւնն անտարակոյս ինձի պիտի ներէ որ յաւերժհարսին կողմէ Պ. Լօրէի ներշնչեալ ոսանաւորները լաւ մը միտքս չպահեցի, բայց երբ թագաւորը բան մը պահած չէ իր միտքը, ես ինչ կրնամ պահել, ես վատ արարածս։

Տիկինը նպաստաւոր աչք չնայեցաւ պալատականին այս պարտութեան։

— Ա՛հ, իշխանուհի — յարեց Սէնդ-Էնյան — այսօր խնդիրն անուշ ջուրերու յաւերժհարսանց ըսածին վրայ չէ։ Ճշմարիտը, մարդ պիտի յորդորուէր հաւատալու որ հեղուկ տէրութեանց մէջ հետաքրքրական բան մը չպատահիր։ Ցամաքի վրայ, իշխանուհիս, մեծ գէպքեր տեղի կ'ունենան։ Ա՛հ, ցամաքի վրայ, տիկին, ինչ պատմութիւն լի . . . :

— Լաւ — պատասխանեց իշխանուհին — և ի՞նչ բաներ կ'անցնին ցամաքի վրայ։

— Պէտք է գրիտներու հարցնել այդ բանը — պատասխանեց կոմսը — գրիտներն անտառները կ'բնակին, ինչպէս որ Ձեր արքայական Բարձրութիւնը գիտէ։

— Գիտեմ իսկ որ բնապէս շաղակրատ են, Պ. Սէնդ-Էնյան։

— Իրաւ է, տիկին. բայց երբ միայն սիրուն լուրեր կ'բերեն, ապաշնորհ կ'լինինք եթէ իրենց շաղակրատ զանոնք ամբաստանենք։

— Ուրեմն սիրուն լուրե՞ր ալ կ'հաղորդեն — հարցուց իշխանուհին անհոգութեամբ մը։ — Իրաւ որ, Պ. Սէնդ-Էնյան, իմ հետաքրքրութիւնս կ'շարժես, և եթէ թագաւոր լինիի, անմիջապէս ձեզ պիտի հրաւիրէի որ տիկին գրիտներու ըսած սիրուն բաները մեզի պատմէք, քանի որ կ'երևի թէ գուք միայն անոնց լեզուէն կ'հասկընաք։

— Ո՛հ, այդ մասին, իշխանուհիս, նորին Վեհափառութեան հրամանին պատրաստ եմ — պատասխանեց կոմսն աշխուժիւ։

— Գրիտներու լեզուն կ'հասկընա՞ յ — ըսաւ իշխանը։ — Քանի երջանիկ է այս Սէնդ-Էնյանը։

— Գաղղիարէնին պէս, տէր իմ։

— Ուրեմն պատմեցէք — ըսաւ իշխանուհին։

Թագաւորը շփոթ վիճակի մը մէջ ընկաւ. սարակոյս չկար որ իր մտերիմը ինքը գժուարին գործի մը մէջ պիտի դնէր։

Քաջ կ'զգար այս բանը՝ Սէնդ-Էնյանի յաւաջաբանէն, նոյնպէս իշխանուհւոյն ալ յատուկ ընթացքէն գրգռուած ընդհանուր ուշադրութենէ։ Ամենէն խոհեմները կոմսին ըսելիք մէն մի խօսքը կլլելու պատրաստ կ'երևէին։

Սկսան հաղալ, իրարու մօտենալ, աչքի ծայրով գիտել սկսան քանի մը պատուոյ նաժիշտներ որոնք իրենց կողմէ այս հետաքնին և ծանր ակնարկին ուելի վայելչութեամբ կամ ուելի հաստատութեամբ տոկալու համար, իրենց հովանոցները շտկեցին, և մենամարտի կերպարան մ'առին որ իր հակառակորդին կրակն ընդունելու վիճակին մէջ կ'գտնուի։

Այն ատեններն այնքան սովոր էին հնարիմաց խօսակցութիւններ և փշալի զրոյցներ ընելու, որ ամէն ինչ որ արդի ընկերա-

կան շրջանի մէջ իբրև դայթակղական բանբասանք և ողբերգութիւն պիտի համարուէր և ամէն մարդ սոսկումով պիտի անկիւ խոյս տար, իշխանուհւոյն սրահին մէջ տեղի ունէր և հանդիսականները Պ. Սէնդ-Էնյանի միջոցաւ իրենց զուարճութեան համար հիւսած կատակերգութենէ բառ մը, շարժում մը չկորուսելու մտօք կ'մտենային, ըստ որում Պ. Սէնդ-Էնյանի պատմութեան վախճանը՝ ինչ որ ալ լինէր անոր ոճն ու դաւը, պարտ էր 'ի հարկէ հանդարտութեան և դիտողութեան կողմէ կատարեալ լինիլ։

Կոմսը իբրև մարդավար մարդ և կատարուն վիպաբան ճանչցուած էր։ Ուստի եթէ ոչ իրեն, ուրիշի համար ահարկու խոսքին լուութեան մը մէջ սկսաւ արիաբար.

— Իշխանուհի, թագաւորը կ'ներէ որ Ձեր արքայական Բարձրութեան ուղղեմ խօսքս ամենէն առաջ, քանի որ իր շրջանին մէջ ամենէն հետաքրքիրը կ'հոչակուի. ուստի պատիւ պիտի ունենամ ձեզի ըսելու որ դրիպը սովորաբար կաղնիներու խոռոչներու մէջ կ'բնակի, և որովհետև դրիպները դիցաբանական աղուոր արարածներ են, շատ աղուոր ծառերու մէջ կ'բնակին, այսինքն իրենց գտած ամենէն խոշոր ծառերուն մէջ։

Այս յորդորակին վրայ, որ թափանցիկ քօղի մը ներքև արքայական կաղնիին երևելի պատմութիւնը կ'յիշեցնէր, որ վերջին երեկոյթին ժամանակ այնքան մեծ դեր խաղացեր էր, այնքան սրտեր ուրախութեամբ և անհանգստութեամբ բախեցին, որ եթէ Սէնդ-Էնյան աղուոր և հնչական ձայն մը չունենար, այս սրտերու բախումն իր ձայնէն վեր պիտի լսուէր։

— Անտարակոյս Ֆոնդէնպլօի մէջ դրիպներ պիտի գտնուին — ըսաւ իշխանուհին ամենահանդարտ ձայնով մը — վասն զի իմ կենաց մէջ այս արքայական ծառաստանին մէջ տեսած կաղնիներուն չափ աղուոր կաղնիներ չեմ տեսած։

Եւ այս խօսքն ըսելով՝ շիտակ Կիշին ուղղեց ակնարկ մ'որմէ Կիշ առաջինին պէս գանգատելու տեղի չունէր, քանի որ, ինչպէս ըսինք, առաջինը խիստ տաժանելի անորոշ բան մ'ունէր իրեն սրտին պէս սիրող սրտի մը համար։

— Արդարև, իշխանուհիս, ես ալ Ֆոնդէնպլօի վրայ պիտի խօսէի Ձեր արքայական Բարձրութեան, վասն զի մեր զրուցելիք պատմութեան դրիպը Նորին Վեհափառութեան դղեկին ծառաստանը կ'բնակի։

Պատմութիւնը սկսած էր, պէտք էր շարունակել. ունկնդիր և պատմաբան՝ ոչ ոք կարող էր ետ դառնալ։

— Մտիկ ընենք — ըսաւ իշխանուհին — վասն զի պատմութիւնն ոչ միայն ազգային զրոյց մը լինելու հրապոյրն ունի, այլ և խիստ ժամանակակից տարեգրութեան մը։

— Պարտաւոր եմ սկիզբէն սկսիլ — ըսաւ կոմսը — ուստի 'ի Ֆոնդէնպլօ աղուոր երեկոյթով խրճթի մը մէջ՝ հովիւներ կ'բնակին։

«Մին է Տիրսիս հովիւը՝ որ ծնողացը կողմէն ժառանգած ամենաճոխ կալուածներու տէր է։

«Տիրսիս նորատի է և գեղանի, և իր ձիրքովն երկրին հովիւներուն մէջ առաջինը կ'հանդիսանայ։ Ուստի կրնանք համարձակօրէն ըսել որ անոնց թագաւորն է»։

Հաւանութեան թեթև մրմունջ մը քաջալերեց վիպաբանը, որ շարունակեց.

— Իր ոյժն արիութեանը կ'հաւասարի. ոչ ոք վայրի կենդանեաց որսորդութեան մէջ անոր չափ ճարպիկութիւն ունի, ոչ ոք խորհրդոյ մէջ անոր չափ իմաստութիւն ունի։ Եթէ իր կալուածոյ աղուոր մարգագետիններուն մէջ ձիավարէ, եթէ իրեն հնազանդող հովիւները ճարտարութեան և կորովոյ յայտարար խաղերուն մէջ առաջնորդէ, կարծես թէ նոյն ինքն Արէս աստուածն է որ Թրակիոյ դաշտերուն մէջ իր նիզակը կ'շարժէ, կամ լաւ ևս Ապոլլոնն է, Լուսոյ աստուածը, երբ իր բոցավառ ճառագայթներով երկիրը կ'լուսաւորէ։

Ամէն մարդ կրնայ հասկընալ որ թագաւորին այս դիցաբանական պատկերը յառաջաբան մ'էր որմէ լաւագոյնը չէր կարող ընտրել վիպաբանը։ Ուստի մեծ ազդեցութիւն ունեցաւ թէ հանդիսականաց վրայ, որ՝ պարտաւորութենէ կամ զուարճութենէ մղեալ՝ անհնարինս ծափահարեցին, թէ նոյն իսկ թագաւորին վրայ՝ որու գովեստն ախորժելի կ'դար երբ փափուկ էր, և անհա-

ձոյ չէր թուեր մինչև անգամ եթէ չափազանց լինէր։ Սէնդ-Էնյան շարունակեց.

— Տիկիններ, միայն փառաց խաղերու մէջ չէր որ Տիրսիս հովիւն այս համբաւը վաստակեր և անով հովիւներու թագաւորն եղեր էր։

— Ֆոնդէնպլօի հովիւներուն — ըսաւ թագաւորն իշխանուհոյն ժպտելով։

— Ո՛հ — դոչեց իշխանուհին — բանաստեղծն ըստ հաճոյս ընտրած է Ֆոնդէնպլօն. ես կ'ըսեմ, բոլոր աշխարհի հովիւներուն։

Թագաւորն իր հլու ունկնդրի դերը մոռցաւ և խոնարհութիւն ըրաւ։

Սէնդ-Էնյան դգուելի մրմունջի մը մէջ՝ շարայարեց.

— Հովիւներու այս թագաւորին արժանիքը մանաւանդ դեղանի կանանց մօտ ակն յայտնի կ'երևի։ Հովիւ մ'է որու միտքը նուրբ է ինչպէս որ սիրտը մաքուր. կիտէ դովեստ մ'ըսել այնպէս շնորհքով որ անվրէպ կ'դիւթէ, սիրել կիտէ այնպիսի խոհեմութեամբ որ իր երջանիկ և սիրուն սիրուհիներուն նախանձելի վիճակ մը կ'խոստանայ։ Երբէք անհաւատարմութիւն, երբէք մոռացում չունի։ Ո՛վ որ Տիրսիսը տեսած և անոր ձայնը լսած է, անշուշտ պիտի սիրէ. ո՛վ որ զանի կ'սիրէ և անորմէ սիրուած է երջանկութիւն գտած է։

Սէնդ-Էնյան այս տեղ կանգ մ'առաւ. խնդալին կ'վայելէր իրեն ուղղուած դովեստները, և այս պատկերը, որչափ որ ծիծաղաշարժ կերպով գծած էր, մանաւանդ քանի մ'ականջներու մէջ շնորհ գտած էր, որոց համար հովուին արժանիքն այնքան չափազանց ներկայացուած չէր երևեր։ Իշխանուհին յորդորեց վիպաբանը շարունակելու։

— Տիրսիս — ըսաւ կոմսը — հաւատարիմ ընկեր մ'ունէր, կամ լաւ ևս անձնուէր սպասաւոր մ'որ կ'կոչուէր... Ամինտաս։

— Ա՛հ, նայինք Ամինտասի պատկերը — ըսաւ իշխանուհին նենգամտութեամբ — դու շատ քաջ պատկերհան մ'ես, Պ. Սէնդ-Էնյան։

— Իշխանուհի...։

— Ո՛հ, Սէնդ-Էնյան կոմս, մի, մի զոհեր այդ խեղճ Ամինտասը. այդ զանցառութեան համար քեզ երբէք չպիտի ներեմ։

— Տիկին, շատ ստորին կարգէ է Ամինտաս՝ մանաւանդ Տիրսիսի մօտ, այնպէս որ իր անձը չկրնար բաղդատուելու պատիւն ունենալ։ Կան բարեկամներ որ հին ատենուան սպասաւորներուն կ'նմանին, որոնք իրենց տիրոջ ոտքն ողջ ողջ կ'թաղուէին։ Տիրսիսի ոտքին ներքև, անդ է Ամինտասի տեղը. ուրիշ մը չպահանջեր, և թէ հուչակաւոր դիւցազնը...։

— Հուչակաւոր հովիւը, ըսել կ'ուզես — վրայ բերաւ իշխանուհին Սէնդ-Էնյանի պատասխանել կեղծելով։

— Ձեր արքայական Բարձրութիւնն իրաւունք ունի, կ'սխալէի — պատասխանեց պալատականը — եթէ, կ'ըսեմ Տիրսիս հովիւն երբեմն կ'զիջանի Ամինտասն իրեն բարեկամ կոչել և սիրտն ասնոր բանալ, աննման շնորհ մ'է, և այս շնորհն իրրև չնաշխարհիկ երանութիւն կ'համարի Ամինտաս։

— Այդ խօսքդ կ'հաստատէ միայն որ Ամինտաս բացարձակ անձնուիրութիւն ունէր Տիրսիսին — ընդհատեց իշխանուհին — բայց Ամինտասի պատկերը մեզի չներկայեր։ Կոմս, եթէ կամիս, մի դդուեր զանի, բայց նկարագրէ զայն մեզի. ես Ամինտասի պատկերը կ'ուզեմ։

Սէնդ-Էնյան ոտիպտեցաւ հնազանդիլ, Նորին Վեհափառութեան հարսին առջև խորին խոնարհութիւն մ'ընելէն ետև։

— Ամինտաս — ըսաւ նա — Տիրսիսէն փոքր ինչ աւելի տարուօք է. ընութենէ բոլորովին ապաշնորհ մնացած հովիւ մը չէ։ Կ'ըսեն իսկ որ Մուսայք հաճեցան անոր ծննդեան վրայ ժպտիլ ինչպէս Հեսէ երիտասարդութեան կ'ժպտի։ Փայլելու փառասիրութիւնը չունի, այլ սիրուելու, և թերևս անարժան չէր լիներ սիրոյ եթէ լաւ ճանչցուած լինէր։

Այս վերջին խօսքը՝ մահատու ակնարկով մը զօրացած՝ շտակ օրիորդ Դօնէյ-Շարանդին ուղղուեցաւ, որ այս բախումը կրեց առանց այլայլութեան։

Բայց այս համեստ և ճարտար ակնարկութիւնը լաւ տպաւորու-

թիւն մ՚առաջ բերեր էր. Ամենատաս ասոր պատուղը ծափահարութեամբ վայելեց. նոյն իսկ Տիրսիսի գլուխն ասոր նշանը տուաւ բարեյօժար հաւանութեամբ մը։

— Արդ — շարունակեց Սէնդ-Էնյան — Տիրսիս և Ամենատաս իրկուն մ՚անտառը կ՚պարտէին իրենց սիրային վշտաց վրայ խօսելով։ Զմռունակը որ արդէն դրիադի պատմութիւնն է այս, տիկիններ, թէ ոչ, ով պիտի կարենար իմանալ Տիրսիսի և Ամենատասի ըսածները, որ երկրիս ամենէն խորհրդապահ հովիւներն են։ Ուստի անտառին ամենէն տերևախիտ կողմը կ՚հասնէին առանձնանալու և աւելի ազատութեամբ իրենց յաւերն իրարու հաղորդելու համար, երբ յանկարծ ձայն մ՚իրենց ականջին զարկաւ։

— Հա՛, հա՛ — ըրին վիպաբանին բոլորտիքը։ — Ահա երթալով խնդիրը կարևոր կերպարան մը կ՚առնու։

Այս տեղ, իշխանուհին՝ իր բանակը հսկող արթուն զօրապետին նման՝ մէկ նայուածքովը սիրտ տուաւ Մօնդալէի և Դօնէյ-Շարանդի, որ նկուն կ՚երևէին։

— Այս դաշնաւոր ձայները — վրայ բերաւ Սէնդ-Էնյան — քանի մը հովուհիներու ձայնն էր, որոնք փափաքեր էին նաև ստուերներուն զովութիւնը վայելել, և որ՝ գիտնալով թէ վայրը հեռաւոր գրեթէ անհպելի էր, այն տեղ զումարուեր էին հովութեան վերաբերող քանի մը գաղափարներ իրարու հաղորդելու համար։

Ահագին քահ քահ մը՝ որ Սէնդ-Էնյանի այս խօսքին արդիւնքն էր, Դօնէյ-Շարանդը նայելով Թագաւորին շրթերուն վրայ երևցած աննշմարելի ժպիտ մը, ահա ասոնք եղան սոյն կատակին հետևանքը։

— Դրիադը կ՚հաւատէ — շարունակեց Սէնդ-Էնյան — որ հովուհիներն երեք էին, և թէ երեքնին ալ նորատի և գեղանի էին։

— Իրենց անունը — ըսաւ իշխանուհին հանդարտութեամբ։

— Իրենց անունը — ըսաւ Սէնդ-Էնյան, որ այս անխոհեմութեան դէմ ընդվզեցաւ։

— Անտարակոյս։ Հովիւներդ Տիրսիս և Ամենատաս անուանեցիր, հովուհիներուդ ալ ուղած անունդ տուր։

— Ո՛հ, տիկին, ես գտիչ մը, վիպասան մը չեմ, ինչպէս որ կ՚ըսէին երբեմն. ես միայն դրիադին թելադրութեան վրայ կ՚պատմեմ։

— Քու դրիադդ ինչպէս կ՚անուանէր այս հովուհիները։ Իրաւի՝ ստահակ յիշողութիւն մ՚ունիս։ Ուրեմն այդ դրիադը Մնեմոսինէ դիցուհւոյն հետ աւրուած էր։

— Իշխանուհի, այս հովուհիները . . . : Լաւ. ուշադրութիւն ըրէք, կանանց անուններ յայտնել յանցանք մ՚է։

— Այդ յանցանքիդ կ՚ներէ կին մը, կոմս, սա պայմանաւ որ հովուհիներուն անունը մեզի յայտնես։

— Անոնք Փիլիս, Ամարիլիս և Կալադէ կ՚կոչուին։

— Քաջ է, սպասելով բան մը չկորուսին — ըսաւ իշխանուհին — և ահա երեք հատ չքնաղ անուններ։ Հիմակ, կ՚մնան պատկերները։

Սէնդ-Էնյան նորէն շարժում մ՚ըրաւ։

— Ո՛հ, կարդաւ երթանք, կ՚ազաչեմ քեզ, կոմս — վրայ բերաւ իշխանուհին։ — Վերհափնա, ինչ կ՚ըսէք, միթէ հովուհիներուն պատկերը մեզի պէտք չէ՞։

Թագաւորն որ այս թախանձանաց կ՚սպասէր, և որ սկսեր էր անհանդատութիւն մ՚զգալ, կարծեց թէ խոհեմութիւն չէ այնպիսի վտանգաւոր հարցաքննուհի մը վիրաւորել։ Միւս կողմէ կ՚մտածէր որ Սէնդ-Էնյան՝ իր նկարագիրներն ընելու աաեն, հնար մը պիտի գտնէր քանի մը զոզարիկ նեաեր սահեցնել այնպէս որ մէկ քանի ականջներ ըստ հաճոյս մեկնեն, քանի որ Նորին Վեհափառութիւնը կ՚փափաքէր զմայլեցնել այն ականջները։ Այս յուսով, այս երկիւղով էր որ Լուի հրամայեց Սէնդ-Էնյանի որ Փիլիս, Ամարիլիս և Կալադէ հովուհիներուն պատկերը գծագրէ։

— Շատ լաւ, թող այդպէս լինի — ըսաւ Սէնդ-Էնյան իբրև մարդ մ՚որ իր որոշումը կ՚ընէ։

Եւ ապա սկսաւ։

ԺԸ

ՀԱՀԱՊԵՏԻ ԵՒ ԴՐԻԱԴԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՎԵՐՋԸ

— Փիլիս — ըսաւ Սէնդ-Էնյան՝ Մօնդալէի զրոսիչ ակնարկ մը նետելով, դրեթէ այնպէս ինչպէս որ կ'ընէ զմնավարժ մ'որ իրեն արժանի ոսոխ մը կ'հրաւիրէ 'ի մարտ — Փիլիս ո՛չ թուխ է և ոչ խարտեշ, ո՛չ մեծ և ոչ փոքր, ո՛չ պաղ և ոչ եռանդոտ, նա, որչափ որ հովուհի, դշխոյի մը պէս մտացի և սատանայի պէս պչրասէր է։

« Իր տեսքը պատուական է։ Ինչ որ տեսքը կ'ընդդրկէ, իր սիրտը կ'տենչայ։ Թռչունի մը կ'նմանի որ միշտ գեղգեղելով, մերթ դալարին կ'շոյէ կ'անցնի, մերթ կ'բարձրանայ թռթռելով թիթեռնկի մ'եռևէն, մերթ ծառի մ'ամենէն բարձր կողմը կ'դադարի, և անկից բոլոր հաւորներուն դիմադրաւ կենալով կ'հրաւիրէ որ դան զինքը բռնեն, կամ իրենց ցանցին մէջ նետեն։

Այս պատկերն այնքան նման էր, որ ամենուն աչքը Մօնդալէի վրայ դարձաւ, մինչդեռ նա արթուն աչքով մը, անտարբեր մտիկ կ'ընէր Սէնդ-Էնյանի որպէս թէ իրեն օտար եղող անձի մը վերայ կ'դառնար խօսքը։

— Այս է ամէն ըսելիքդ, Պ. Սէնդ-Էնյան — հարցուց իշխանուհին։

— Ո՛հ, իշխանուհիս, այս պատկերին ուրուագիծն է, և ուրիշ շատ բաներ կայ ըսելու։ Բայց կ'վախնամ որ Ձեր համբերութեան տաղտուկ չպատճառեմ և հովուհիցն համեստութիւնը չվիրաւորեմ, այնպէս որ Ամարիլիս ընկերուհիցն կ'անցնիմ։

— Քաջ է, անցիր Ամարիլիսին, Պ. Սէնդ-Էնյան — ըսաւ իշխանուհին — քեզի կ'հետևինք։

— Ամարիլիս այն երեքէն տարօքն է, և սակայն — փութաց ըսելու Սէնդ-Էնյան — տարիքը քսանի չհասնիր։

Գոնէյ-Շարանդի ունքն որ պատմութեան սկիզբը պրստեր էր՝ թեթև ժպիտով մը պարզուեցաւ։

— Բարձր է նա, անբաւ մազեր ունի և զանոնք յունաստանի արձաններուն պէս կ'հիւսէ. քալուածքը գեղապանծ և շարժումը վէս է. ուստի դիցուհոյ մը տեսքն ունի քան թէ պարզ մահկանացուի մը, և դիցուհեաց մէջ ամենէն շատ այն դիցուհոյն է՝ նմանի որու անունն որսորդուհի Անահիտն է, սա տարբերութեամբ միայն որ անգութ հովուհին՝ օր մը Սիրոյ կապարձը զողցած լինելով՝ մինչդեռ Կուպիտոն վարդեայ թրի մը մէջ կ'ներհէր, փոխանակ անտառին նիւթերուն վրայ իր նետերն ուղղելու, իր աչաց առջևէն անցնող հովիւներուն վրայ կ'արձակէ անգթաբար։

— Ո՛հ, չարակամ հովուհին — ըսաւ իշխանուհին — մթէ օրին մէկն աջ ու ահեակ անխղճօրէն նետած սլաքներէն ինքզինքը չ'պիտի վիրաւորէ։

— Աւ հասարակ բոլոր հովիւներուն յոյսն այս է — ըսաւ Սէնդ-Էնյան։

— Եւ 'ի մասնաւորի Ամինտաս հովուին յոյսը, այնպէս չէ՞ — ըսաւ իշխանուհին։

— Ամինտաս հովիւն այնքան երկչոտ է — վրայ բերաւ Սէնդ-Էնյան իր կրցածին չափ համեստ երես մը դասելով — որ եթէ այս յոյսն ունի, ոչ ոք ասոր վրայ բան մը չիմացաւ, վասն զի սրտին ամենէն խորին խորշը կ'պահէ։

Խիստ զգուշի մրմունջով մ'ընդունեցան հանդիսականները վիպասանին այս հաւատոյ խոստովանութիւնը հովուի մասին։

— Հապա Կալադէ՞ — հարցուց իշխանուհին։ — Անհամբեր եմ տեսնել այդպիսի Ճարտար ձեռքով մը Վիրդիլի կիսկատար ձգած պատկերն սկսիլ և մեր աչաց առջև աւարտել։

— Տիկին — ըսաւ Սէնդ-Էնյան — մեծն Վիրդիլիոս Մարօի մօտ՝ ձեր խոնարհ ծառան խիստ ողորմելի քերթող մ'է։ Սակայն ձեր հրամանէն սիրտ առնելով՝ ձեռքէս եկածը պիտի ընեմ։

— Մտիկ կ'ընենք — ըսաւ իշխանուհին։

Սէնդ-Էնյան ոտքը, ձեռքն ու շրթունքն երկնցուց։

— Կաթի պէս սպիտակ — ըսաւ նա — հասկերու պէս ոսկեզօծ՝ Կալադէ իր դեղձան դիսակին անուշ հոան օդին մէջ կ'սփռէ։ Այն ատեն մարդ կ'ստիպուի իւրովի հարցնելու թէ նա այն դեղանի Եւրոպէն չէ՞ որ Արամազդայ սէր ներշնչեց՝ երբ ծաղկաւէտ մարդերու վրայ իր ընկերուհիներուն հետ կ'խաղար։

«Իր աչունքէն՝ որ ամառուան ամենէն դեղեցիկ աւուր երկնից պէս կապոյտ են, անուշ բոյ մը կ'հոսի, մոմոուքը զայն կ'արծարծէ, սէրը զայն կ'ցրուէ։ Երբ ունքը կ'պուստէ կամ ճակատը դէպ 'ի երկիր կ'խոնարհէ, արևը կ'սքօղի 'ի նշան ոգոյ։

«Ընդ հակառակն՝ երբոր ժպտի՝ բոլոր բնութիւնը կ'հրճուի, և թռչունները՝ պահ մը լռիկ, իրենց դայլայլիկը կ'սկսին ծառերուն ծոցը։

«Այս մանաւանդ — ըսաւ Սէնդ–Էնյան աւարտելու համար — այս արժանի է բոլոր մարդկան պաշտման, և եթէ երբէք իր սիրտը նուիրուի, երջանիկ է այն մահկանացուն որ անոր կուսական սիրով աստուած մը պիտի դառնայ։

Իշխանուհին այս նկարագիրը մտիկ ընելով, ինչպէս որ ամէն ոք իրեն պէս մտիկ ըրեր էր, բաւական համարեց իր հաւանութիւնը ցոյց տալ գլուխը քանի մ'անգամ օրելով՝ ամենէն քերթողական վայրերուն. բայց անկարելի էր ըսել թէ այս հաւանութեան նշանները վիպագրանին տաղանդին տրուած էին թէ ոչ պատկերին նմանութեան։

Ուրեմն այս հետևեցաւ որ իշխանուհին բացէ 'ի բաց չդովեցուն, ոչ ոք ծափահարելու ժամեց, և ոչ իսկ իշխանը, որ սրտին խորէն այնպէս կ'կարծէր որ Սէնդ–Էնյան հովուհեաց պատկերն երկարօրէն նկարագրեց հովիւներուն դոյզն ինչ հարևանցի գծագրելէն ետև։

Ուստի բոլոր ընկերութիւնը սառած երևցաւ։

Սէնդ–Էնյան, որ իր հանրաբարոյական տաղանդն և իր վրձինները մաշեր էր Կալադէի պատկերն ուրուագրելու, և միւս կողմերուն դտած շնորհալի ընդունելութեան վրայ՝ կ'կարծէր թէ այս վերջինին համար տրոփիւններ պիտի լսէ, Սէնդ–Էնյան թագաւորէն և բոլոր ընկերութենէ աւելի սառած երևցաւ։

Պահ մը լռութիւն տիրեց և 'ի վերջէ զայն իշխանուհին խզեց։

— Լաւ ուրեմն, Վեհափառ — հարցուց նա — ի՞նչ կ'ըսէք այս երեք պատկերներուն վրայ։

Թագաւորը Սէնդ–Էնյանի օգնութեան ուզեց հասնիլ առանց իր վրայ կասկած հրաւիրելու։

— Բայց Ամարիլիս դեղանի է իմ կարծեօքս — ըսաւ նա։

— Ես աւելի Փիլիսը կ'սիրեմ — ըսաւ իշխանը — այդ լաւ աղջիկ մ'է, կամ լաւ ևս լաւ, յաւերժհարսի նման մանչ մը։

Եւ ամէնքը սկսան ծիծաղիլ։

Այս անգամ նայուածքներն այնպէս ուղղակի Մօնպալէի վրայ դարձան որ աղջիկն զգաց որ կ'կարմրէր մանիշակագոյն բոցերով։

— Ուրեմն — վրայ բերաւ իշխանուհին — այս հովուհիներն իրարու կ'ըսէին . . . ։

Բայց Սէնդ–Էնյանի ինքնասիրութիւնը վիրաւորուած լինելուն՝ նոր և հանդիսաւոր առած զօրաց յարձակումները վանելու վիճակին մէջ չէր դտնուեր։

— Տիկին — ըսաւ նա — այս հովուհիներն իրենց դաղանիքն իրարու կ'հաղորդէին։

— Շարունակէ՛, շարունակէ՛, Պ. Սէնդ–Էնյան, հովուական բանաստեղծութեան աղբիւր մ'ես — ըսաւ իշխանուհին սիրալիր ժպիտով մ'որ փոքր ինչ սփոփեց վիպագրանը։

— Անոնք ըսին թէ սէրը վտանգ մ'է, և թէ սիրոյ տարակայութիւնը սրտի մահն է։

— Ուստի եզրակացուցին . . . — հարցուց իշխանուհին։

— Ուստի եզրակացուցին որ պարտին սիրել։

— Շատ լաւ. միթէ պայմաններ կ'առաջարկէ՞ին։

— Ընտրելու պայմանը — ըսաւ Սէնդ–Էնյան։ — Պէտք է նաև յարել, խօսողը դրիագն է, որ հովուհեաց մին, Ամարիլիս կարծեմ, կ'դիմադրէր ըսելով թէ պէտք չէ սիրել, սակայն բոլորովին չէր ծածկեր որ հովուի մը նկարը մինչև սիրտը թափանցեր էր։

— Ամենատես թէ ոչ Տիրսիս։

— Ամենատես, տիկին — ըսաւ Սէնդ–Էնյան համեստաբար։ —

Բայց իսկոյն Կալադէ, վՀիա աչՕք անուշ Կալադէն պատասխանեց թէ ոչ Ամինտասը, ոչ Ալֆէսիբէ, ոչ Տիտիր և ոչ երկրին ամենէն գեղանի հովիւներէն մին չէին կրնար բաղդատուիլ Տիրսիսի հետ, թէ Տիրսիս ամէն մարդէ դեր 'ի վեր էր, ինչպէս որ կաղնին դեր 'ի վեր կ'բարձրանայ քան ամէն ծառ, շուշանը վեհափառութեան կողմէ, ամէն ծաղիկներէ։ Մինչև անդամ Տիրսիսն այնպէս նկարագրեց որ Տիրսիս, մինչդեռ անոր միտ կ'դնէր, անտարակոյս մեծապէս գոհ եղած պիտի լինի, իր մեծութեան չնայելով։ Այսպէս Տիրսիս և Ամինտաս Ամարիլիսի և Կալադէի աչքը զարկեր էին, այսպէս երկու սրտերու գաղտնիքը գիշերային մթութեան և գաղտնածածուկ անտառի մը մէջ երևան ելեր էր։

«Ահա այս էր, տիկին, գրիպին ինձ պատմածը, այն որ գիտէ ամէն ինչ որ կ'անցնի կաղնիի խոռոչներու և խիտ թփերու մէջ. այն որ գիտէ թռչուններուն սէրը, գիտէ թէ անոնց երգերն ի՞նչ կ'նշանակեն. այն որ կ'հասկընայ վերջապէս Ճիւղերուն մէջ փչող հովին լեզուն և ոսկի կամ զմրուխտի միջատներու բզզումը վայրի ծաղիկներու պսակին մէջ. նա ըսաւ ինձ և ես կը կրկնեմ։

— Ուրեմն լմնցուցիր, այնպէս չէ՞, Պ. Սէնդ-Էնյան — ըսաւ իշխանուհին ժպիտով մ'որ թագաւորին դող ազդեց։

— Այո՛, լմնցուցի, իշխանուհի — պատասխանեց Սէնդ-Էնյան — երջանիկ եմ եթէ կարող եղայ ձեզ քանի մը վայրկեան զուարճացնել։

— Շատ կարճ վայրկեաններ — պատասխանեց իշխանուհին — վասն զի բոլոր գիտցածդ շատ քաջ պատմեցիր. բայց, սիրելիդ իմ Պ. Սէնդ-Էնյան, դժբաղդաբար միայն մէկ գրիպէն առած ես այդ տեղեկութիւնները, այնպէս չէ՞։

— Այո՛, տիկին, միայն մէկ գրիպէն առի, կ'խոստովանիմ։

— Հետևապէս պզտիկ նայադի մը քովէն անցայ, որ առ ելևոյթս ոգէտ կ'երևէր, բայց քու գրիպէդ շատ աւելի տեղեկութիւններ ունէր, սիրելի կոմս։

— Նայա՞դ մը — կրկնեցին շատ մը ձայներ որ ոկսան կասկածիլ թէ պատմութիւնը շարունակութիւն մը պիտի ունենար։

— Անտարակոյս. այն քու ըսած կաղնիդ մօտ, և որ արքայական կաղնի կ'կոչուի, գէթ այսպէս կարծեմ, այնպէս չէ՞, Պ. Սէնդ-Էնյան։

Սէնդ-Էնյան և թագաւորն իրարու երես նայեցան։

— Այո՛, տիկին — պատասխանեց Սէնդ-Էնյան։

— Լաւ ուրեմն, փոքրիկ սիրուն աղբիւր մը կայ որ գայլախաղներու վրայ կ'խոխոջէ, մկնականջ և մարգարիտ ծաղիկներու վրայ։

— Կարծեմ թէ իշխանուհին իրաւունք ունի — ըսաւ թագաւորը միշտ անհանգիստ և իր հարսին բերանէն կախուած։

— Ո՛հ, կայ աղբիւր մը, ես կ'հաւատամ ձեզի — ըսաւ իշխանուհին — և ասոր ապացոյցը սա է թէ այս աղբիւրին վրայ տիրող նայադն անցնելու ատենս զիս կեցուց, զիս որ ձեզի կ'խօսիմ։

— Վա՜հ — ըսաւ Սէնդ-Էնյան։

— Այո՛ — շարունակեց իշխանուհին — կեցուց զիս որպէս զի շատ մը բաներ պատմէ զորս Սէնդ-Էնյան իր պատմութեան մէջէն հանեց։

— Ո՛հ, գոք պատմեցէք — ըսաւ իշխանը — գոք չքնաղ կերպով մը կ'պատմէք։

Իշխանուհին ծուեցաւ իր ամուսնոյն այս գովեստին վրայ։

— Կոմսին բանաստեղծութիւնն ու տաղանդը պիտի չունենամ բոլոր պարապանքն զգալի կերպով բացատրելու համար։

— Բայց դարձեալ հետաքրքրութեամբ քեզ մտիկ պիտի ընենք — ըսաւ թագաւորն որ իր հարսին պատմութեան մէջ կանխաւ թշնամական բան մը կ'դուշակէր։

— Սակայն ես — շարունակեց իշխանուհին — այն փոքրիկ խեղճ նայադին անուամբը կ'խօսիմ, որ անտարակոյս ամենաչքնաղ կիսաստուածուհի մ'է զոր երբէք տեսած լինիմ։ Արդ՝ պատմութիւնն ըսելու ատեն այնքան կ'ծիծաղէր որ սա բժշկական առածին համեմատ թէ՝ «Ծիծաղը համաճարակ է»։ Ներում կ'խնդրեմ որ ես ալ քիչ մը ծիծաղիմ երբոր իր խօսքերը կ'յիշեմ։

Թագաւորն ու Սէնդ-Էնյան՝ որ իշխանուհւոյն իմացուցած զուարթութեան նման զուարթութեան մը սկիզբը նշմարեցին շատ

մը դէմքերու վրայ՝ 'ի վերջէ սկսան իրարու նայիլ և նայուածքով իրարու հարցնել թէ արդեօք այս բանին մէջ փոքրիկ դաւադրութիւն մը կա՞ր։

Բայց իշխանուհին միտքը գրեր էր դանակը դարձնել ու դարձնել վէրքին մէջ, ուստի իր միամիտ անմեղութեան երեսով մը շարունակեց, այսինքն իր ամենէն վստանդաւոր երեսովը։

— Ուստի անկից կ'անցնէի — ըսաւ նա — և որովհետև իմ քայլերուս ներքև շատ մը նորաբոյս թարմաւէտ ծաղիկներ կը գտնէի, տարակոյս չկար որ Փիլիս, Ամարիլիս, Կալադէ և բոլոր քու հովիւներդ իրենք առաջ նոյն ճամբէն անցած պիտի լինէին։

Թագաւորն իր շրթունքը խածաւ։ Պատմութիւնը հետզհետէ սպառնալի ձև մը կ'առնուր։

— Փոքրիկ նայադը — շարունակեց իշխանուհին — իր փոքրիկ երգը կ'մրմնջէր իր առուակին մէջ. երբ տեսայ որ լնձի կ'մօտենար իմ շրջազգեստիս տուտանին գպելով, չուզեցի անոր դէշ ընդունելութիւն մ'ընել, նա մանուանդ անոր համար որ դիցուհի մը՝ եթէ երկրորդ կարգի անդամ լինէր, դեր 'ի վեր է քան մահկանացու իշխանուհի մը։ Ուստի նայադին մօտեցայ և ահա ինչ ըսաւ ինձ քահ քահ ծիծաղելով,

« — Երեակայէ, իշխանուհի . . . »։

« Կ'իմանաք, Վեհափառ, նայադն է խօսողը։

Թագաւորը հաւանութեան նշան մ'ըրաւ. իշխանուհին շարայարեց.

« — Երևակայէ, իշխանուհիս, որ իմ առուակիս ափունքն այն ինչ ականատես եղան խիստ զբօսալի տեսարանի մը։ Երկու հետաքրքիր հովիւներ, անխոհեմ լինելու չափ հետաքրքիր նշաւակ ծաղու եղան խիստ զուարճալի կերպով երեք յաւերժհարսանց կամ հովուուհեաց կողմէ . . . »։ Ներում կ'խնդրեմ, բայց մոքէս ելած է թէ յաւերժհարսունք ըսաւ թէ ոչ հովուուհիներ։ Բայց փոյթ չէ այս կէտն, այնպէս չէ՞։ Ուստի անցնինք։

Այս յառաջաբանին վրայ՝ թագաւորը յայտնապէս կարմրեցաւ, և Սէնդ-Էնյան բոլորովին շփոթելով՝ իր աչունքն սկսաւ բանալ գոցել խիստ մեծ անձկութեամբ։

« — Երկու հովիւները, շարունակեց իմ փոքրիկ նայադս միշտ ծիծաղելով, երեք օրիորդաց ետևէն կ'երթային . . . »։ Ո՛չ, կ'ուզեմ երեք յաւերժհարսունք ըսել. ներողութիւն կ'խնդրեմ, սխալեցայ, երեք հովուուհիները։ Այս միշտ խոհական ընթացք մը չէ, այս բանս կրնայ նեղել այն անձինքն որոց ետևէն կ'պնդեն։ Այս մասին բոլոր ներկայ տիկնանց կարծիքը կ'հարցնեմ, և հաւատի եմ որ ոչ ոք իմ ըսածս պիտի սուտ հանէ։

Թագաւորը պատահելիքը մտայոյզ դուշակելով՝ գլխոնքն իր կարծիքը յայտնեց։

« — Բայց, շարունակեց նայադը, հովուուհիները Տիրսիսն ու Ամինտասը տեսան որ անտառին մէջ կ'սահէին, և լուսնկային շնորհիւը՝ ծառերուն մէջէն զանոնք ճանչեր էին »։ Ա՛հ, կ'ծիծաղինք — ընդհատեց իշխանուհին։ — Համբերեցէք, համբերեցէք, դեռ չլմնցաւ։

Թագաւորը դեղնեցաւ. Սէնդ-Էնյան իր քրտնաթոր ճակատը սրբեց։

Կանանց ակումբներուն մէջ խեղդուկ ծիծաղներ և զաղտնագողի փսփսուքներ կ'լսուէին։

— Հովուուհիները, կ'ըսէի, երկու հովիւներուն անխոհեմութիւնը դիտելով գայլեն և արքայական կաղնիին ոստը նստան, և երբոր հասկրցան որ իրենց անխոհեմ ունկնդիրներն այնքան մօտ են որ իրենց ըսելիք խօսքերը լսովին պիտի լսեն, միամտաբար, խիստ միամտաբար հրաբորբոք սիրոյ յայտարարութիւն մ'ուղղեցին՝ և ամէն մարդու բնական եղող ինքնասիրութիւնը, նոյն իսկ ամենէն զգայուն հովիւներուն, այնպէս ցոյց տուաւ երկու ունկնդրաց որ մեղրի պէս անուշ էին այս յայտարար խօսքերը։

Թագաւորը՝ այս խօսքին վրայ զոր ներկայ հանդիսականք առանց ծիծաղելու չկրցան մտիկ ընել, իր աչերէն փայլակ մը հանեց։

Իսկ Սէնդ-Էնյան՝ գլուխը կրծքին վրայ ծռեց, և ապա դառն քրքիջի մը ներքև՝ իր զգացած խորին սրտմտութիւնը։

— Ո՛հ — ըրաւ թագաւորը գլուխը բարձրացնելով — ահաւասիկ՝ չքնաղ կատակ մը իրաւի, և դու, իշխանուհի, ոչ նուազ

չքնաղ կերպով կ'պատմես. բայց իրօք, իրօք հասկրցա՞ր նայադներու լեզուն։

— Բայց կոմսը կ'պնդէ թէ ինքն իրօք գրիաղներու լեզուէն կը հասկրնայ — պատասխանեց իշխանուհին աշխուժիւ։

— Անտարակոյս — ըսաւ Թաղաւորը։ — Բայց դիտես որ կոմսը Ճեմարանը մտնելու նպատակ ունի. ուստի այս մտօք քու չդիտցած շատ մը բաներդ յաջողութեամբ սորվեցաւ, և կարելի է որ գեռակին յաւերժհարսին լեզուն ալ քու չսորված բաներէն մին լինի։

— Քաջ կ'իմանաք, Վեհափառ տէր — պատասխանեց իշխանուհին — որ այս տեսակ իրողութիւններու համար՝ մարդս լոկ ինքզինքին չվստահիր. կնկան մ'ականջն անվրիպելի բան մը չէ, ըսաւ Ս. Օգոստինոս, ուստի իմ կարծիքէս տարբեր կարծիքներու դիմեցի լուսաւորուելու համար, և որովհետև իմ նայադս, իբրև դիցուհի, բաղմալեզու է... միթէ այսպէս չէ՞ն անուաներ, Պ. Սէնդ-Էնյան։

— Այո՛, իշխանուհիս — ըսաւ Սէն-Էնյան բոլորովին շուարած։

— Եւ — շարունակեց իշխանուհին — որովհետև իմ նայադս, իբրև դիցուհի բաղմալեզուեան է, նախ ինձի անկլիարէն խօսեր էր, վախցայ, ինչպէս որ կ'ըսէք, որ սխալ լսած չլինիմ, Մօնդալէն, Դենէյ-Շարանդ և Լա Վալիէր օրիորդները կանչեցի, աղաչելով նայադս որ դաղղիարէն լեզուաւ բացատրէ արդէն ինձ անկլիարէն լեզուաւ ըսածները։

— Եւ միթէ բացատրե՞ց — ըսաւ Թաղաւորը։

— Ո՛հ, չափազանց կամակատար դիցուհի մ'է... այո՛, Վեհափառ տէր, բացատրեց, հետևապէս այս մասին կասկած մը չէ կարելի ունենալ։ Միթէ այնպէս չէ՞, օրիորդներ — ըսաւ իշխանուհին իր բանակին ձախ կողմը դառնալով — միթէ նայադը ճիշտ իմ պատմածիս պէս չխօսեցա՞ւ և թէ ճշմարտութեան հակառակ բան մը ըսի։ Փիլիս... ներէ, կ'սխալիմ... օրիորդ Օր Մօնդալէ, միթէ իրաւ չէ։

— Ո՛հ, լիովին, իշխանուհիս — արտաբերեց Մօնդալէ յստակ ձայնով։

— Միթէ իրաւ չէ՞, օրիորդ Դենէյ-Շարանդ։

— Զուտ ճշմարտութիւն է — պատասխանեց Ամէնախս ոչ նուազ հաստատ ձայնով մը, բայց նուազ հասկանալի կերպով։

— Հապա դու ի՞նչ կ'ըսես, Լա Վալիէր։

Խեղճ աղջիկը կ'զգար որ Թաղաւորին հրատապ ակնարկն իր վրայ սևեռած է, չէր իշխեր ուրանալ, չէր իշխեր ստոյգ խօսիլ. գլուխը ծռեց իբրև հաւանութեան նշան։

Միայն գլուխը նորէն վեր չվերցուց, վասն զի մահու սառնութենէ աւելի վշտագին սառնութեամբ մը սառած էր։

Այս եռակի վկայութիւնը Թաղաւորը ճղմեց։ Իսկ Սէնդ-Էնյան և ոչ իսկ իր յուսահատութիւնը ծածկելու փորձ կ'փորձէր, և առանց ըրածն ու ըսածը գիտնալու՝ կ'թոթովէր.

— Պատուական կատակ, շատ լաւ հիւսուած, տիկին հովուհիներ։

— Հետաքրքրութեան արդար պատիժը — ըսաւ Թաղաւորը խստոտ ձայնով մը։ — Ո՛հ, ո՛վ պիտի ժամ՝ Տիրսիսի և Ամինտասի պատժէն ետքը՝ ո՛վ պիտի ժամ հովուհեայ սրտին մէջ անցածը յանկարծուստ իմանալու փորձ փորձել։ Արդարև, ես անպամ չպիտի յանդգնիմ... հապա դո՞ք, պարոնայք։

— Եւ ո՛չ ես, և ո՛չ ես — կրկնեց փաբերան պալատականաց խումբը։

Իշխանուհին կ'յաղթանակէր Թաղաւորին այս սրտնեղութեան վրայ. կ'բերկրէր, կարծելով թէ իր պատմութիւնն ամէն բանի վախճանը պիտի լինէր կամ պարտ էր լինիլ։

Իսկ իշխանն որ այս կրկնակի պատմութեան վրայ ծիծաղեր էր առանց բան մը հասկրնալու, Կիշին կողմը դարձաւ.

— Ի՛հ, կոմս — ըսաւ անոր — դու բան մը չես խօսիր. ուրեմն ըսելու բան մը չե՞ս գտներ։ Միթէ Պ. Տիրսիսին և Ամինտասի վրայ կ'ցաւիս։

— Սրտովին կ'ցաւիմ անոնց վրայ — պատասխանեց Կիշ. — վասն զի, Ճշմարիտը, այնքան անուշ ցնորք մ'է սէրն որ՝ թէև ցնորք, զայն կորուսնելը, քան զկեանս աւելի անգին բան մը կորուսնել է։ Ուրեմն, եթէ այն երկու հովիւները կարծէին թէ

կ'սիրուին, եթէ այս սիրով ինքզինքնին երջանիկ կ'համարէին, և թէ այս երջանկութեան տեղ՝ ոչ միայն մահուան հաւասարող դատարկութիւն պիտի գտնեն, այլ սիրոյ հեգնութիւն մ'որ հազար մահ կ'արժէ . . . : Լաւ ուրեմն, կ'ըսեմ թէ Տիրսիս և Ամինտաս իմ գիտցած երկու ամենադժբաղդ մարդիկն են :

— Եւ իրաւունք ունիս, Պ. Կիշ — ըսաւ թագաւորը — վասն զի մահը վերջապէս շատ ծանր է դոյզն ինչ հետաքրքրութեան համար :

— Ուրեմն ըսել է թէ իմ նայադիս պատմութիւնը թագաւորիդ անհաճոյ եկաւ — հարցուց իշխանուհին միամտօրէն :

— Ո՛հ, սիկին, ուղղէ քու այդ սխալ կարծիքդ — ըսաւ Լուի իշխանուհւոյն ձեռքը բռնելով — քու նայադդ այնքան աւելի շատ հաճելի երևցաւ ինձ որչափ որ ստուգապատում էր, և պարտիմ ըսել, որ իր պատմութիւնը՝ անժխտելի վկայութիւններով հաստատուած է :

Եւ այս խօսքը Լա Վալիէրի վրայ ընկան այնպիսի ակնարկով մը զոր Սոկրատէն սկսեալ մինչև Մօնդէյն չպիտի կարենար կատարելապէս սահմանել :

Այս ակնարկն ու խօսքը լիովին ճշմեցին տարաբաղդ օրիորդն՝ որ՝ Մօնդալէի ուսին յենած՝ կարծես թէ բոլորովին ինքզինքը կորուսած էր :

Թագաւորն ոտք ելաւ առանց այս դիպուածը դիտելու, թէև ոչ ոք անոր ուշադիր եղաւ, և իր սովորութեան ներհակ, վասն զի սովոր էր իշխանուհւոյն քովէն ուշ հեռանալ, հրաժեշտ տալով իր սենեակը քաշուեցաւ :

Սէնդ-Էնյան անոր հետևեցաւ, այնքան յուսահատ կերպով դուրս ելնելով որչափ որ զուարթ էր երբ ներս մտաւ :

Օրիորդ Դօնէյ-Շարանդ՝ որ այլայլութենէն այնքան զգայուն չէր որչափ Լա Վալիէր, բնաւ վախ չզգաց և ամենևին չմարեցաւ :

Սակայն Սէնդ-Էնյանի ծայրագոյն ակնարկը շատ աւելի զեղչանած էր քան թէ թագաւորին յետին ակնարկը :

ԺԹ

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Թագաւորն իր սենեակը մտաւ արագաքայլ :

Կարելի է Լուի ԺԴ այսպէս շուտ կ'քալէր որպէս զի չերեւայ. իր ետևէն իբր խորհրդաւոր սուգի մը հետքը կ'թողուր :

Այն զուարթութիւնը՝ զոր ամէն մարդ անոր բռնած դիրքէն գիտեր և հրճուեր էր, կարելի է ոչ ոք քաջ ըմբռնած և անոր ճշմարիտ նշանակութիւնը հասկրցած չէր : Բայց իր փութորկալի չուն, իր այլայլած կերպարանն ամենուն հասկանալի եղաւ, կամ գէթ ամէն ոք կարծեց թէ դիւրաւ հասկրցաւ զայն :

Իշխանուհւոյն թեթևութիւնը, կասկածոտ մանաւանդ թագաւորին ընաւորութեան համար իր փոքր ինչ ծանր կատակները, այս թագաւորը հասարակ մարդու մը նմանցնելը, ահա այս պատճառները դատաւ ընկերութիւնն և Լուի ԺԴի արտորալի և անակնկալ չուն անոնց վերագրեց :

Սակայն իշխանուհին՝ որ աւելի հետաքրքիր էր, այս պատճառներէն զատ բան մը չտեսաւ 'ի սկզբան : Ինքը բաւական կը համարէր որ փոքր ինչ տանջեց այն մարդուն ինքնասիրութիւնը, որ շուտ մ'իր արդէն որոշած դաշինքը մոռնալով, կարծես թէ միտքը դրեր էր առանց պատճառի արհամարհել ամենէն ազնիւ և նշանաւոր յաղթանակները :

Իշխանուհւոյն համար քիչ կարևորութիւն չունէր, իրաց այս վիճակին մէջ, ցոյց տալ թագաւորին թէ ի՞նչ տարբերութիւն կար բարձրագիր անձեր սիրելու և իբրև դաւաստցի նորեկ զինուոր մը սիրոյ ետևէն վազելու մէջ :

Այսպէս բարձր անձինք սիրելով, որոնք արքայական փայլ և զօրութիւն կ'յայտնեն, և կերպով իրենց քաղաքավարական ու ցուցամիրական ձևերն ունին, ոչ միայն թագաւոր մ'իրեն ասպի-

ճանին անվայել բան մը չէր գործեր, այլև հանգստութիւն, ապահովութիւն, խորհրդաւոր անուշութիւն մ'և ընդհանուր յարգանք կ'գտնէր։

Իսկ՝ ընդ հակառակն՝ երբ թագաւոր մը գռեհիկ անձեր սիրելու կ'զիջանի՝ ամեն ուրեք մինչև իր յետին հպատակայ մէջ բանբասանք և հեգնութիւն կ'լսէր, իր բնութեան անբնաբարելի և անվրիպելի գրոշը կ'կորուսէր, և մարդկային գձուձ թշուառութեան սահմաններն իջնելով՝ անոնց ողորմելի մրրիկներուն ենթակայ կ'գտնուէր։

Մէկ խօսքով՝ թագաւոր աստուածը պարզ մահկանացու մը դարձնել անոր սրտին և մինչև իսկ դէմքին դպելով՝ իբրև յետինն իր հպատակացը մէջ, այս վեհանձն արեան վեհանձնութեան հարուած մը տալ էր. աւելի դիւրին էր Լուի ԺԴն ինքնասիրութեամբը գերել քան թէ սիրով. իշխանուհին իր վրէժխնդրութեան ձևը շատ ճարտարութեամբ ընտրեր էր. ուստի, ինչպէս որ տեսանք, վրէժն աւեր էր։

Սակայն ոչ ոք չկարծէ թէ իշխանուհին միջին դարու դիւցազնուհիներուն ահռելի տուփանքն ունէր և թէ գործերն իրենց մութ կերպարանքով կ'տեսնէր, ընդ հակառակն՝ իշխանուհին, նորատի, շնորհալի, մտացի, պչրասէր, սիրահար էր աւելի քմահաճութենէ, երևակայութենէ կամ փառասիրութենէ քան թէ սրտովին. իշխանուհին, ընդ հակառակն՝ այն դիւրին և վաղանցուկ հաճոյից ժամանակը կ'հաստատէր որ նշանաւոր ըրին ԺԷ և ԺԸ դարուն երեք քառորդի մէջ անցած քսան տարիները։

Ուստի իշխանուհին կ'տեսնէր՝ կամ կարծէր տեսնել ամէն բան իրենց ճշմարիտ լուսով. գիտէր նա որ թագաւորը, իր օգոստափառ տաղը, ամենէն առաջ ծիծաղեր էր հլու Լա Վալիէրի վրայ և թէ՝ իր սովորութեանց համեմատ՝ հաւանական չէր որ պաշտէ այն անձն որու վրայ ծիծաղեր էր, և ոչ իսկ մէկ վայրկեան։

Ասկէ զատ՝ ինքնասիրութիւն չունէր նա, այս թելադրիչ սատանան որ այնչափ մեծ դեր կ'խաղայ կնկան մը կեանք ըսուած տրամական կատակերգութեան մէջ. միթէ ինքնասիրութիւնը

բարձր, կէս և ամէն տեսակ ձայնով չէր ըսեր որ ինքը՝ իբրև նորատի, գեղանի, հարուստ իշխանուհի մը չէր կրնար եղկելի Լա Վալիէրի հետ բաղդատուիլ, որ իրեն չափ նորատի էր, իրաւ, բայց իրմէ նուազ սիրուն, բայց բոլորովին չքաւոր էր։ Եւ այս բանս իշխանուհւոյն վրայ տեսնելով՝ թող ոչ ոք զարմանայ, գիտենք որ ամենէն մեծահոգի անձինք անոնք են որ ամենէն աւելի մեծ արժէք կ'ընծայեն իրենք իրենց երբ ինքզինքին ուրիշներուն և ուրիշներն ինքզինքնուն հետ կ'բաղդատեն։

Կարելի է հարցուի թէ իշխանուհին ինչ կ'ուզէր այսպէս ճարտարութեամբ յարձակում մը պատրաստելովը։ Ինչո՞ւ համար այնքան ճիգ և զօրութիւն 'ի գործ դնէր եթէ իրաք միտք չունէր թագաւորին սրտէն արտաքսել սիրտ մ'ու ինք անոր տեղ անցնիլ։ Միթէ իշխանուհին պէտք ունէր Լա Վալիէրի այդպիսի կարևորութիւն մը տալ, եթէ Լա Վալիէրէն չէր երկնչեր։

Ո՛չ, իշխանուհին չէր երկնչեր Լա Վալիէրէն, այն տեսակիտով որ պատմիչ մ'իրաց վիճակը գիտնալով՝ ապագան կամ լաւ ևս անցեալը կ'տեսնէ. իշխանուհին մարգարէուհի կամ Սիպիլ մը չէր, ինչպէս ուրիշ մը նոյնպէս իշխանուհին չէր կրնար կարդալ ապագային այն գժնդակ և սոսկալի գրքին մէջ որ իր ամենէն ծածուկ թերթերուն մէջ ամենէն ծանր գիպուածները կ'պահէ։

Ո՛չ, իշխանուհին կ'ուզէր միայն պատժել թագաւորն որ իրեն կնային խաղ մը խաղացեր էր, կ'ուզէր յայտնապէս անոր ապացուցանել որ, եթէ այս տեսակ յարձակողական զէնքեր կ'գործածէր, ինքն ալ որ մտացի և քաջատոհմիկ կին մ'էր, անտարակոյս իր երևակայութեան զինարանին մէջ կրնար գտնել պահպանողական զէնքեր որ թագաւորի մը հարուածներուն դիմադրելու չափ իսկ զօրաւոր լինին։

Ասկից զատ՝ իշխանուհին անոր կ'ուզէր ցոյց տալ՝ որ այս տեսակ պատերազմներու մէջ թագաւորներ չկան բնաւ, կամ շատ շատ այնպիսի թագաւորներ՝ որ հասարակ մարդոց պէս իրենց համար միայն մաքառելով՝ կրնան տեսնել իրենց թագին անկումն առաջին բախումով մը. թէ վերջապէս, եթէ 'ի սկզբան յուսացեր էր պաշտուելու, վստահութենէ և միայն 'ի տես, բոլոր

արքունեաց կանանց կողմէ, մարդկային, յանդուգն պահանջում մ'էր այս, և միանգամայն միտներէն աւելի բարձր դիրք ունեցող քանի մը կանանց համար նախատական, և թէ այս դասը յարմար առթիւ այս արքայական ղլխին վրայ ընկնելով, որ շատ բարձր ու դուռոզ էր, արդիւնաւոր պիտի լինէր։

Ահա ասոնք էին իրօք իշխանուհւոյն խորհրդածութիւնները թագաւորին նկատմամբ։

Դէպքն այս նկատումէն դուրս կ'մնար։

Այսպէս՝ ընթերցողը կ'տեսնէ որ իր պատոյ նաժիշտներուն մտքին վրայ ևս ներգործեր էր և բոլոր պարագայիւք պատրաստեր էր քիչ մ'առաջ ներկայացուած կատակերգութիւնը։

Թագաւորը բոլորովին ղլուխը կորսնցուց։ Պ. Մազարէնին ձեռքէն պրծելէն 'ի վեր՝ առաջին անգամ կ'տեսնէր որ իբրև մարդ կ'վարուին իրեն հետ։

Այսպիսի խստութիւն մ'իր հպատակացը կողմէ՝ թերևս առիթ տար իրեն դիմադրելու։ Զօրութիւնները կ'սատկանան պայքարի մէջ։

Բայց կանանց դէմ յարձակիլ, անոնցմէ յարձակում կրել, յատկապէս Պլուայէն եկող փոքր դաւառացի կանանց ծաղր լինիլը, այս բանս անչափ անպատուութիւն մ'էր սնափառութեամբ լի թագաւորի մը համար, սնափառութիւն զոր իրեն կ'ներշնչէին իր անձնական արժանիքն ու միանգամայն իր արքայական իշխանութիւնը։ Չէր կարող բան մ'ընել, ոչ յանդիմանել, ոչ աքսորել և ոչ իսկ դժգոհիլ։

Եթէ դժգոհէր, պիտի խոստովանած լինէր որ վիրաւորուած էր, Համլէդին պէս՝ խաստուտիկ զէնքով մը, ծաղրաբանութեան զէնքով։

Դժգոհիլ կանանց, ի՜նչ պղտիկութիւն, մանաւանդ երբ այս կանայք ծիծաղ կ'դործածեն իբրև վրէժխնդրութիւն։

Ո՜հ, եթէ՝ փոխանակ բոլոր պատասխանատուութիւնը կանանց թողու, այս դաւին պալատական մը խառնուած լինէր, ինչ ուրախութեամբ Լուի ԺԴ այս առիթը պիտի բռնէր որպէս զի Պասդիլի զօրութիւնն զդայնէ։

Բայց այս մասին ալ արքայական բարկութիւնը դադար կ'առնուր՝ բանադատութեամբ ցրուելով։

Բանակ մը, բանտեր, գրեթէ երկնային իշխանութիւն մ'ունենալ և այս ամենակարողութիւնը գձուձ ոխ մը հանելու գործածել, այսպիսի բան մ'անարժան էր ոչ միայն թագաւորի մը, այլ նոյն իսկ մարդու մը։

Ուրեմն կ'մնար միայն այս նախատինքը լռութեամբ մարսել և նոյն զգօնութիւնը, նոյն պարզմտութիւնը յայտնել արտաքուստ։

Հարկ էր իշխանուհւոյն հետ իբրև բարեկամուհի վարուիլ. իբրև բարեկամուհի՞... և ինչո՞ւ չէ։

Կամ իշխանուհին էր այս դէպքին թելադրիչը, կամ դէպքին առջև կրաւորական դիրք մը բռնած էր։

Եթէ թելադրիչն եղեր էր, մեծ յանդգնութիւն մ'էր իր կողմէ, բայց վերջապէս իրեն բնական դերը չէ՞ր այս։

Ո՞վ գնաց զինքը գտնելու ամուսնական լուսնոյ ամենէն անուշ վայրկենին անոր սիրային լեզու մը թափելու. ո՞վ համարձակեր էր շնութեան, և որ մեծն է, ազգապղծութեան վտանգները նկատելու. ո՞վ էր այն՝ որ իր արքայական ամենազօրութեան ետև պատսպարուած՝ այս նորատի կնկան ըսեր էր. «Բանէ մը մի՛ վախնար, Ֆրանսայի թագաւորը սիրէ, դեր 'ի վեր է քան զամէն մարդ, և իր թեւին մէկ շարժումն իր դաւազանով զինեալ՝ ամենուն դէմ քեզ պիտի պաշտպանէ, մինչև անգամ խղճի խայթիդ դէմ»։

Ուրեմն՝ նորատի կինն այս արքայական խօսքին հնազանդեր էր, այս ապականիչ ձայնին ունկնդրեր էր, և այժմ որ իր պատոյն բարոյական զգոյշութիւնն ըրեր էր, այս զգոյշութեան փոխարէն անհաւատարմութիւն մը կ'տեսնէր այնքան նուաստացուցիչ որքան որ պատճառը ստորնագոյն կին մ'էր քան այն որ 'ի սկզբան կարծեր էր թէ կ'սիրուի։

Այսպէս՝ ենթադրելով անգամ որ իշխանուհին այս վրէժխնդրութեան դրդռիչն էր, դարձեալ իրաւունք ունէր։

Իսկ՝ եթէ ընդ հակառակն՝ այս դէպքին անմասն էր, թագաւորն ի՞նչ պատճառ ունէր զանի մեղադրելու։

Պարտաւոր էր, կամ լաւ ևս կարող էր քանի մը գաւառացոց լեզուն զսպելու, պարտաւոր էր, չափէ դուրս անխոհեմ ենռանդէ մղեալ՝ աւելի զրդռելու վտանգն աչք առնելով՝ այն երեք նորատի աղջկանց յանդգնութիւնը պատժել։

Բոլոր այս խորհրդածութիւնները Թագաւորին դառողութեան զգալի խայթեր էին, բայց՝ երբ բոլոր այս զրկանքն իր մտքէն կ՚անցնէր, Լուի ԺԴ՝ կ՚զարմանար, ամէն ինչ կշռելէն, այսինքն վերքը դարմանելէն ետև՝ որ ուրիշ գաղտնի, անտանելի, անծանօթ վիշտեր կ՚զգայ։

Եւ ահա այս բանս չէր կրնար ինքզինքին խոստովանելու ժամել, այսինքն թէ այս կծու ցաւերուն կեդրոնն իր սիրտն էր։

Եւ արդարև՝ պէտք է որ պատմաբանն ընթերցողին խոստովանի, ինչպէս որ Թագաւորն ինքնիրեն կ՚խոստովանէր. Լա Վալիէրի անմեղ սիրոյ յայտարարութենէ ակամայ սիրտը խտղտեր էր, մաքուր սիրոյ, լոկ առ մարդն զգացուած սիրոյ հաւատացեր էր, այսինքն ամէն շահէ մերկացած սիրոյ մը, և իր հոգին որ իր կարծածէն աւելի մատղաշ էր և մանաւանդ միամիտ՝ խայտացեր էր այն հոգւոյն առջև որ իր յատուկ ներշնչութեամբն իրեն յայտնուեր էր։

Սիրոյ այնքան կնճռոտ խնդրոյն մէջ ամենէն անսովոր բանն է երկու սրտերու մէջ սիրոյ կրկնակի պատուաստումը. չկայ անոր մէջ ոչ ժամանակակցութիւն և ոչ հաւասարութիւն. մին գրեթէ միւսէն առաջ կ՚սիրէ. ինչպէս մին գրեթէ միշտ միւսէն ետքը սիրելու կ՚սկսի։ Ուստի ելեքտրական յարակցութիւնը կ՚հաստատուի նոր վառող սիրոյ մեծութեան համեմատ։ Որչափ շատ որ Լա Վալիէր սէր ցոյց տուած էր, նոյնչափ շատ Թագաւորը սէր զգացած էր։

Եւ ահա ճիշտ այս բանն էր Թագաւորին զարմանք պատճառողը, վասն զի քաջ համոզուած էր որ իր սիրտը համակրական զգացում մը չէր կրցած գրաւել, քանի որ աղջկան խոստովանութիւնը սէր չէր, քանի որ այս խոստովանութիւնը մարդուն և Թագաւորին ուղղուած նախատինք մ՚էր, քանի որ վերջապէս, և այս բառը հրաշէկ երկաթի պէս կ՚այրէր, քանի որ վերջապէս այսպանք էր։

Այսպէս այն փոքրիկ օրիորդը՝ որ ամէն բան, դեղեցկութիւն, ծնունդ, խելք չունէր կարելի էր ըսել անաչառապէս դատելով, այսպէս՝ այն փոքրիկ օրիորդը՝ զոր նոյն ինք իշխանուհին ընտրեր էր իր խոնարհութեան համար, ոչ միայն Թագաւորը զրդռեր, այլ և Թագաւորն արհամարհեր էր, այսինքն մարդ մ՚որ՝ Ասիոյ մէկ Սուլթանի մը պէս՝ բաւական էր որ աչքովը փնտռէր, ձեռքը կարկառէր, Թաշկինակը դետին նետէր որպէս զի կամքը կատարուէր։

Եւ առջի իրկունէն 'ի վեր՝ այս պզտիկ աղջիկն իր ուշը դրաւեր էր այն աստիճան որ մինակ անոր վրայ կ՚մտածէր, անոր վրայ կ՚երազէր, առջի իրկունէ 'ի վեր՝ իր երևակայութիւնն ահարոյժ զգացեր էր անոր նկարը զարդարել այնպիսի հրապոյրներով որմէ նա զուրկ էր. վերջապէս առջի իրկունէ վեր այն որ բազմաթիւ գործեր զինքը կ՚կոչէին, բազմաթիւ կիներ իրեն կը տենչային, այն իր բոլոր կենաց վայրկեանները, իր սրտին բոլոր բախումներն այս միակ մոմոտուքին նուիրեր էր։

Արդարև այս չափէն աւելի շատ կամ չափէն աւելի քիչ էր։

Եւ Թագաւորն իր սրտմտութենէ ամէն բան կ՚մոռնար, և թէև Սէնդ-Էնյան ներկայ էր, Թագաւորն իր այս սրտմտութիւնը բուռն անէծք թափելով կ՚յայտնէր։

Իրաւ է որ Սէնդ-Էնյան անկիւն մը քաշուեր էր, և այս անկիւնէն փոթորկին անցնելը կ՚տեսնէր։

Իր պատրանքն արքայական բարկութեան մօտ ոչ ինչ կ՚երեւէր իրեն։

Իր դոյզն ինքնասիրութեան հետ կ՚բաղդատէր այն նախատեալ Թագաւորին անբաւ զոռողութիւնը, և ընդհանրապէս Թագաւորաց և 'ի մասնաւորի զօրաւորներու սիրտը ճանչելովը, ինքնիրեն կ՚ըսէր թէ արդեօք այս կատաղութեան բեռը՝ որ ցայն վայր դատարկութեան մէջ կախուած էր՝ վերջապէս իր վրայ չ՚ընկնի թափէր, սա պատճառաւ միայն որ այլք յանցաւոր էին և ինքն անմեղ։

Եւ իրօք՝ Թագաւորը յանկարծ կանգ առաւ իր անկանոն ընթացքին ժամանակ՝ և Սէնդ-Էնյանի վրայ զայրագին ակնարկ մը նետելով,

— Դու՞ ալ, Սէնդ-Էնյան — գոչեց նա։

Սէնդ-Էնյան շարժում մ'ըրաւ որ կ'նշանակէր.

— Ի՞նչ կայ, Վեհափառ։

— Այո՛, դու ալ ինձի չափ յիմար ես եղեր, այնպէս չէ՞։

— Վեհափառ տէր — թոթովեց Սէնդ-Էնյան։

— Ի՞նչպէս բանուեցար այն կոշտ կատակէն։

— Վեհափառ — ըսաւ Սէնդ-Էնյան որու անդամները սկսեր էին սարսիլ — թող Ձեր Վեհափառութիւնը չբարկանայ. կանայք, ինչպէս որ գիտէք, չարիքի համար ստեղծուած անկատար էակներ են, ուստի անոնցմէ բարիք սպասել անկարելի բան մը պահանջել է։

Թագաւորն որ ինքզինքը յարգել շատ գիտէր, և որ սկսեր էր իր կրից վրայ գործածել այն իշխանութիւնը զոր իր բոլոր կենաց մէջ անոնց վրայ պահեց, թագաւորը զգաց որ իր յարգը պիտի կորսնցնէ եթէ այս չնչին բանին համար չափէն աւելի եռանդ ցուցնէ։

— Ո՛չ — ըսաւ աշխուժիւ — ո՛չ, դու կ'սխալիս, Սէնդ-Էնյան, ես չեմ բարկանար. կ'զմայլիմ միայն որ այնչափ ճարպիկութեամբ և յանդգնութեամբ ծաղր եղանք այն երկու փոքրիկ օրիորդաց կողմէ։ Կ'զարմանամ մանաւանդ որ՝ թէև կրնայինք տեղեկանալ, յիմարաբար մեր սրտին թելադրութեանց հետևեցանք։

— Ո՛հ, սիրտը, Վեհափառ, սիրտը գործարան մ'է զոր պէտք է իր նիւթական պաշտօնին վերածել անպատճառ, բայց պէտք է ամէն բարոյական պաշտօնէ դադրեցնել։ Ես իմ մասիս՝ կ'խոստովանիմ որ երբ Ձեր Վեհափառութեան սիրտն այնքան զբաղած տեսայ այն փոքրիկ . . . ։

— Զբաղա՞ծ, ե՛ն, իմ սիրտս. կարելի է միաքս զբաղած էր, սակայն սիրտս . . . էր . . . ։

Լուի այս անգամ ևս գիտեց որ դատարկութիւն մը ընլու համար ուրիշ մը պիտի բանար։

— Սակայն — յարեց նա — մեղադրելու բան մը չունինք այն խեղճ աղջկան։ Գիտէի որ ուրիշ մը կ'սիրէր։

— Պրաժլօն դերկոմը, այո՛։ Արդէն իմաց տուեր էի այս բանս Ձեր Վեհափառութեան։

— Անտարակոյս։ Բայց չեղաւ առաջինը։ Լա Ֆէր կոմսն իր որդւոյն համար խնդրեր էր օրիորդ Լա Վալիէրը։ Լաւ ուրեմն, Անկլիայէն իր դարձին զանոնք պիտի կարդամ, քանի որ կ'սիրուին։

— Ճշմարիտը, Վեհափառիդ բոլոր վեհանձնութիւնն այդ գործին մէջ կ'տեսնեմ։

— Իրաւ որ, Սէնդ-Էնյան, հաւատա ինձ, այլ ևս այդ տեսակ բաները մէկդի ձգենք — ըսաւ Լուի։

— Այո՛, նախատինքը մարսենք, Վեհափառ — ըսաւ համբերատար պալատականը։

— Ինչ և է, գիւրին բան մը պիտի լինի այդ — ըսաւ թագաւորը հառաչ մը զեղգեղելով։

— Եւ սկսելու համար, ես . . . — ըսաւ Սէնդ-Էնյան։

— Լաւ, ի՞նչ պիտի ընես։

— Լաւ, պիտի երդիծանք մը շինեմ եռաձայն։ Զայն Նոյոդ և Դրէոդ պիտի կոչեմ, իշխանուհին հաճոյք պիտի զգայ այս բանէն։

— Ըրէ՛, Սէնդ-Էնյան, ըրէ՛ — մրմռաց թագաւորը։ — Շինելիք ոտանաւորներդ ինձի պիտի կարդաս, և ասով պիտի սփոփիմ։ Ա՛հ, ի՞նչ փոյթ, ի՞նչ հոգս է, Սէնդ-Էնյան — յարեց թագաւորն իբրև մարդ մ'որ նեղութեամբ կ'շնչէ — դերմարդկային ոյժ մը պէտք է այդ հարուածին արժանապէս դիմադրելու համար։

Եւ մինչդեռ թագաւորն այսպէս կ'ատարտէր հրեշտակային համբերութեան կերպարան մը դասելով՝ սպասաւոր մ'եկաւ և սենեկին դրան մեղմիկ զարկաւ։

Սէնդ-Էնյան առ յարգանս հեռացաւ։

— Ներս մտիր — ըսաւ թագաւորը։

Սպասաւորը կէս մը բացաւ դուռը։

— Ի՞նչ կ'ուզես — հարցուց Լուի։

Սպասաւորն եռանկիւնաձև ծալուած նամակ մը ցցուց։

— Ձեր Վեհափառութեան համար է այս գիրը — ըսաւ նա։

— Որո՞ւ կողմէ։

— Չգիտեմ. սպասաւորող սպաներէն մին յանձնեց ինձ։

Թագաւորը նշան մ'ըրաւ. ծառան բերաւ տոմսակը։

Թաղաւորը մոմերուն մօտեցաւ, տոմսակը բացաւ, կարդաց ստորագրութիւնն և աղաղակ մ՚արձակեց ակամայ։

Սէնդ–Էնյան, թէև ակնածու էր և չէր նայեր, բայց՝ առանց նայելու, կ՚տեսնէր և կ՚լսէր։

Ուստի վազեց։

Թաղաւորը շարժում մ՚ընելով ծառան ձամբեց։

— Ո՛հ, Աստուած իմ— ըսաւ թաղաւորը կարդալով։

— Միթէ Ձեր Վեհափառութիւնն անհանգիստ է — հարցուց Սէնդ–Էնյան բազկատարած։

— Ո՛չ, ո՛չ, Սէնդ–Էնյան, կարդա՛։

Եւ անոր անցուց տոմսակը։

Սէնդ–Էնյան իր աչքը ստորագրութեան վրայ ածեց։

— Լա Վալիէր — գոչեց նա։ — Ո՛հ, Վեհափառ։

— Կարդա՛, կարդա՛։

Եւ Սէնդ–Էնյան կարդաց.

«Վեհափառ, ներում կ՚խնդրեմ այս ձանձրոյթը տալուս, մանաւանդ կ՚խնդրեմ ներել որ նամակս զուրկ է պարտ ու պատշաճ ձևերէ. տոմսակ մ՚աւելի ստիպող և կարևոր կ՚երևի ինձ քան թէ պաշտօնագիր մը. ուստի կ՚համարձակիմ Ձեր Վեհափառութեան տոմսակ մ՚ուղղելու։

«Բնակարանս կ՚մտնեմ վշտահար և վաստակաբեկ, տէր արքայ, և Ձեր Վեհափառութենէ կ՚հայցեմ ունկնդրութեան մը շնորհն որով պիտի կարենամ ճշմարտութիւնն ըսել թաղաւորիս։

«Ստորագրեալ ԼՈՒԻԶ ԼԱ ՎԱԼԻԷՐ»

— Լաւ ուրեմն — հարցուց թաղաւորը նամակն առնելով Սէնդ–Էնյանի ձեռքէն, որ բոլորովին գլուխը կորսնցուցեր էր կարդացածին վրայ։

— Լաւ ուրեմն — կրկնեց Սէնդ–Էնյան։

— Ի՞նչ կ՚մտածես այս մասին։

— Իրաւ որ չգիտեմ։

— Բայց վերջապէս։

— Վեհափառ, փոքրիկ աղջիկն որոտումը լսած և երկնցած պիտի լինի։

— Ի՞նչ բանէ երկնցած — հարցուց Լուի աղնուաբար։

— Ճշմարիտը, ի՞նչ ըսել կ՚ուզէք, Վեհափառ տէր։ Շատ պատճառներ ունիք այն անշահ կատակին հեղինակը կամ հեղինակները մեղադրելու, և Ձեր Վեհափառութեան յիշողութիւնը՝ եղած անպատեհութիւնը չմոռնալովը, անխոհեմ օրիորդին համար յաւիտենական սպառնալիք մ՚է։

— Սէնդ–Էնյան, ես քեզի պէս չեմ դատեր այս բանը։

— Թաղաւորդ իզնէ լաւ կ՚դատէ հարկաւ։

— Լա՛ւ, այս տողերուս մէջ վիշտ կ՚տեսնեմ, և մանաւանդ հիմակ որ իշխանուհւոյն սենեակն այս իրկուն անցած տեսարանին քանի մը պարագաները կ՚յիշեմ... վերջապէս...։

Թաղաւորն այս կիսկատար խմաստին վրայ կեցաւ։

— Վերջապէս — վրայ բերաւ Սէնդ–Էնյան — Ձեր Վեհափառութիւնն ունկնդրութիւնը պիտի շնորհէ, ահա այս ակն յայտնի կ՚երևի։

— Լաւ ես պիտի ընեմ, Սէնդ–Էնյան։

— Ի՞նչ պիտի ընէք, Վեհափառ։

— Ա՛ռ վերարկուդ։

— Բայց, Վեհափառ...։

— Դիտես իշխանուհւոյն նաժիշտներուն սենեակն ուր է։

— Անտարակոյս։

— Միթէ ներս մտնելու հնար մը գիտես։

— Ո՛հ, այդ, այդ չգիտեմ։

— Բայց վերջապէս մէկը կ՚ճանչես անշուշտ այն կողմերը։

— Իրաւի, Ձեր Վեհափառութիւնն ամէն լաւ դաղափարի աղբիւրն է։

— Միթէ կ՚ճանչես մէկը։

— Այո՛։

— Զո՞վ կ՚ճանչես, ըսէ նայինք։

— Երիտասարդ մը կ՚ճանչեմ որ աղջկան մը հետ շատ լաւ յարաբերութիւն ունի։

— Պատո՞յ աղջիկ։

— Այո՛, պատոյ, Վեհափառ։

— Դոնէյ-Շարանդի՞ հետ — հարցուց Լուի ծիծաղելով։

— Ո՛չ, բնաւին, այլ Մօնպալէի հետ։

— Ի՞նչ է անունը։

— Մալիքօրն։

— Լաւ, միթէ կրնաս անոր վրայ վստահիլ։

— Կարծեմ, Վեհափառ։ Անշուշտ բանալի մը պիտի ունենայ . . . ։ Եւ եթէ ունի, որովհետեւ ես անոր ծառայութիւն մատուցի . . . բանալին ինձի պիտի տայ։

— Խիստ յաջող բան։ Մեկնինք։

— Ձեր Վեհափառութեան հրամանին պատրաստ եմ։

Թագաւորն իր յատուկ վերարկուն Սէնդ-Էնյանի ուսին վրայ նետեց և իրենը խնդրեց։ Ապա երկուքնին ալ ներքնադատիթը հասան։

ՎԵՐՋ

ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

ՅԱՆԿ ՆԻՒԹՈՑ

Երես

Ա. Փոնդէնպլօի ծառաստանին յաւերժահարսունք . . 3
Բ. Արքայական կաղնիին ներքև ի՞նչ կ՚անցնէր . . . 14
Գ. Թագաւորին մատանիջուութիւնը 26
Դ. Թագաւորին դաղտնիքը 32
Ե. Գիշերային պատրաք 44
Զ. Իշխանուհին փորձով կ՚իմանայ որ կարելի է՝ մտիկ ընելով, խօսուածը լսել 55
Է. Արամիսի դրակցութիւնը 63
Ը. Կարդապահ գործակատար 74
Թ. Փոնդէնպլօ առաւօտեան ժամն երկուքին 85
Ժ. Լափիւրինթոս 95
ԺԱ. Մալիքօրն ինչպէս Պօ-Բան պանդոկէն դուրս հանուեր էր 105
ԺԲ. Պօ-Բանի պանդոկն իրօք ի՞նչ անցած էր 115
ԺԳ. Մետասաներորդ տարուան մէկ ժէզվիդը 129
ԺԴ. Պետութեան դաղտնիքը 135
ԺԵ. Պաշտօն 150
ԺԶ. Երջանիկ իբրև իշխան մը 162
ԺԷ. Շահապետի և դրիագի մը պատմութիւնը 182
ԺԸ. Շահապետի և դրիագի մը պատմութեան վերջը . . 198
ԺԹ. Արքայական հոդեբանութիւն 209

1909–1912

2713

[illegible]